

ԳԱՆՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆ ԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1880 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Ժ

10 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1880



Կ. ՊՕԼԻՍ

1880

ՏԳԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. Ա. ԳԱՐՈՆԵԱՆ, Ի ՏԳԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

7 Գուճ-Գաբու, Պատրիարքարանի փողոց 7

ՄԱՅՐ ԴԻԻԱՆ

Սէրփիշէն էֆէնտի	Ա. Արեւ-դէր
Յ. Մէրեւէմ-Գուլի էֆէնտի	Բ. »
Միքայէլ էֆէնտի Մամիկոնեան	Գ. »
Ռէթէոս էֆէնտի Պէրպէրեան	Ա. Արեւ-դէր
Մկրտիչ էֆէնտի Մէլիքեան	Բ. »
Միհրան էֆէնտի Չօպանեան	Գ. »

Չեռնաստրեան դիւան

Յարաբերութեան դիւան

Յ. Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեան
Հովհաննէս Քահանայ Մկրեան
Պապի էֆէնտի Պապօեան

Գարեգին էֆէնտի Մէլիքեան
Միհրան էֆէնտի Չօպանեան
Նշան էֆէնտի Օտեան

Դաստիակութեան դիւան

Երեսաստրեան դիւան

Յարութիւն էֆէնտի Թիւրեան
Ռէթէոս էֆէնտի Պէրպէրեան
Յարթոս Ռափաէլեան էֆէնտի

Տ. Ներսէս վարդապետ Ասլանեան
Տեխեմար էֆէնտի Էքսէրճեան
Լօղօֆէթ էֆէնտի Պալեօղեան

Կարուածոց դիւան

Նախաձեռնութեան դիւան

Ա. Ետիս էֆէնտի Կիրաաղեան
Քարսեղ էֆէնտի Հալաճեան
Քրիստոսաուր էֆ. Ղազարուեան

Տիգրան էֆէնտի Եուսուֆեան
Ղազար էֆէնտի Հովուեան

Համարակալութեան դիւան

Խմբագրութեան դիւան

Յակոբ էֆէնտի Արշակ
Չօղոս էֆէնտի Թորգոմեան

Կարապետ էֆ. Խթիւճեան
Մկրտիչ էֆէնտի Մէլիքեան
Արրահամ էֆէնտի Մուրատեան

Ն Ի Ս Տ Ժ

10 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1880

Ն.Ա.Ս.Մ.Ն. — Տ. Սիմէոն Եպիսկոպոս Սէֆէրեան (Ա.ժամեայ կարգեալ)
ԱՏԵՆԱՊԵՏ. — Տիգրան էֆէնտի Եուսուֆեան (» »)

ԱՁԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

Ա. Վ. իմակ	ԵՐԵՍՓՈՒԱՆՔ (Ա. Վ. իմակ) Գումգաբու, Կեռիկ փաշա Է. Գումգաբուի դուրս	47 Յ. Նիշանեան Տօթթօր Բ 9
1 Կարապետ Եպ. Սերոբեան	21 Գրիգոր Պէրպէրեան	48 Իսկիւտար Ս. Կարապետ
2 Սիմոն Եպ. Սէֆէրեան	22 Գէորգ Ստիմարանեան	49 Միհրան Պահճէղափուլեան Բ
3 Ամբրոսիոս Վ. Ռուբինեան Բ 9	23 Խաչիկ Մանկասարեան Բ 10	50 Պօղոս Թորգոմեան Բ 2
4 Կարապետ Ք. Սէթեան	24 Կարապետ Ազարղմանեան	51 Նիկողոս Ալանճանեան Բ 2
Բ. Վ. իմակ	25 Համբարձում Մազպուլեան Բ 4	52 Տրդատ Փափաղեան Բ 2
5 Մատթէոս Եպ. Իզմիրլեան	26 Մինաս Գափամանեան	(Գ. Վ. իմակ)
6 Պօղոս Վ. Խօրատմեան	27 Ն. Մէլիքաբեան Տօթթօր Բ 3	Գասըմ Բաշա
7 Յովհաննէս Ք. Մկրեան Բ 2	28 Սարգիս Ազարկեան Բ 9	53 Գասաբար Զէրաղ Բ 2
8 Գրիգոր » Աճէմեան Բ 2	29 Սահակ Ապրօ Բ 9	Բերա
Գ. Վ. իմակ	30 Սենեքերիմ Մանուկեան Բ 9	54 Արիկ Ունճեան Բ 9
9 Յակոբ » Ա. Փափաղեան	31 Բարթոլ Քիւրճիւլաշեան Բ 2	55 Գրիգոր Սէլիմէճեան Բ 2
10 Սահակ Ք. Տ. Սարգսեան Բ 9	32 Ատովմ Տէրպէնց Բ 10	56 Գրիգոր Օտեան Բ 9
11 Խորէն » Փէշիւլանեան	33 Գէորգ Ապուլաշեան Բ	57 Սէրփիշէն Բ 10
12	34 Յ. Մէրեւէմ-Գուլի Բ 9	58 Ռափայէլեան Տօթթօր Բ 10
Գ. Վ. իմակ	35 Ա. Ետիս Կիրաաղեան Բ 10	59 Միքայէլ Մօմճեան Բ 10
13 Ներսէս Վ. Ասլանեան Բ 10	36	60 Կարապետ Քաղաղեան Բ 10
14 Սուքիաս Ք. Ստեփանեան Բ 8	37	61
15 Վրթանէս » Պալեան Բ 10	(Բ. Վ. իմակ)	62
16	Պէշիկբաղ	Միջագիւղ
Ե. Վ. իմակ	38 Անդրանիկ Կրճիկեան Բ 6	63 Յակոբ Նորատուկեան 2
17 Խորէն Արքե. Նար Պէյ Բ 9	39 Ալիբաճի Խօրատմեան Բ 10	64 Տիգրան Եուսուֆեան
18 Յովհաննէս Վ. Փափաղեան	40 Բարսեղ Հալաճեան	65 Մկրտիչ Գազանճեան Բ 2
19 Գարեգին » Թաթարեան Բ	Եկնիգաբու.	66 Նշան Օտեան Բ 4
20	41 Մկրտիչ Քիւրճիւլանիւրեան	67
Բ Բացակայութիւն առաջին .	42 Սեւոստ Մազաուտեան Բ 10	Պէշոգ Է. Ղաթարիա
Բ. 2 Բացակայութիւն երկրորդ .	43 Մարուգէ Յրէնկեան Բ	68 Միքայէլ Մամիկոնեան
Բ. 9 Բացկ. բանաւոր պատճառաւ .	44 Պօղոս Էքսէրճեան	(Գ. Վ. իմակ)
	Իսկիւտար Ս. Խաչ	Քուզիլմեմուր Է. Իմատիկ
	45 Սիմոն Ֆէլիկեան Բ 1	69 Յովհաննէս Կասեան Բ 10
	46 Ստեփան Ասլանեան Բ 1	70 Ստեփան Պէշիկճեան Բ 2



Գատըզիւղ	ԳԱԻԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Մուշ
71 Կարապետ Շահապետեան Բ 6	Կարին	121 Ստեփան ֆափաղեան
72 Մկրտիչ Մուրատեան Բ 9	101 Սիմոն Մաղսուտեան Բ 3	Տիվրիկ
Նարլըգարու	Քեօրանեա	122 Նշան Գարագալ Բ
73 Յակոբ Եղմէնիճեան	102	Ջէյրուն Է. Մարալ
Եկեմիանայիկ Սամարիոյ	Անդրիանուպօլիս	123
74 Պօղոս Մկրտիչեան Բ 10	103 Վիշէն Ապտուլաճ Բ 3	Տրապիզօն
Թօփգալու	Նիկոմիդիա	124 Տիգրան Տ. Ներսէսեան Բ 10
75 Յովհաննէս Մարգարեան	104 Կարապետ Ս. Իւթիւճեան	Պաղտատ
Էյուպ Ս. Եղիա Է. Ս.	Ակն	125 Մելքօն Իսկէնտէրեան Բ 10
Աստուածածին	105 Աւետիս Պարոնեան Բ 2	Տիգրանակէրտ
76 Գարեգին Յ. Մէլիքեան Է	Ղարանիսար	126 Միհրան Զօղանեան Բ
Գուրուչեյմի	Արաբկիր	Վան
77 Աստիա Իկիտպաշեան Բ 2	107 Կարապետ Իաչիկեան Բ	127 Աղրամար
Հիսար Է. Պօյաճի գիւղ	Բաղէշ	128
78 Յովհաննէս Արշակունի Բ 10	108	Հայկայ Է. Այնրապ
Նոր գիւղ Է. Սրէնիս	Պրուսա	129
79 Ղազար Հովուեան Բ 2	109 Քրիստոստուր Ղազարոսեան	Սեբաստիա
Պալատ	Եղովիս	130 Մկրտիչ Յ. Մէլիքեան
80 Յովհաննէս Կրճիկեան Բ 7	110	Ռուսճուգ
81 Տելեմաք Էջօնեան 82	Ամասիա	131
Քարակեօմքիւկ	111 Համբարձում Ալաճաճեանի Բ	Կարս
83 Սեպուհ Թիւրապեան Բ 2	Բալու	132 Արրահամ Յ. Այվազեան
84	112 Յովհաննէս Ազնաւորեանի 8	Զմշկաձագ
(Ե. Վիճակ)	Եղեսիս	133 Համբարձում Սարգսէ շիշեան Բ 2
Սամարիս	113 Յակոբ Իւթիւճեան	Գաղատիս
85 Ալիքսան Ալիբեան Տիւրքի	114	134 Ատանա
86 Եղիազար Մէլիքեան	Հանըն	135
87 Մինաս Ճաֆճաֆեան	Երզնկա	Սղերդ
88 Նազարէթ Շահապետեան Բ	115	136 Մատթէոս Ալէքսանեան Բ 10
89 Յարութիւն Թիւրքեան Բ 2	Ռէթէոս Պէրպէրեան	Եօզղատ
90 Յակոբ Արշակ Բ 2	Թէրիբուսաղ	137 Լօղօֆէթ Պալեօզեան
91 Սեպուհ Թիւրքեան Բ 8	117 Տիգրան Գ. Սինանեան	Մալաթիա
92	Կեսարիս	138 Գէորգ Վարդանեան Բ
93	118 Գէորգ Գըրճճեան Բ	Իզմիր
94	119	139 Պապի Պապօեան
Իսազիւղ	Պալքրեւեր	Եգիպտոս
95 Առաքել Ալիբեան Տիւրքի	120	140 Արրահամ Մուրատեան Բ
96 Ռէթէոս Պէլիկեան		
97 Սարգիս Արրահամեան Բ 10		
98		
99 Սարգիս Քափուճեան Բ 10		
400 Աթանազիոս Արապեան Բ 10		

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- Ա. Հրատարում Մայր Դիւանի անդամոց և ընտրութիւն .
- Բ. Վաւերացում կանոնադրի Ս. Երուսաղէմի վանուց .
- Գ. Խնդիր տեղափոխութեան և բացակայութեան երեսփոխանաց . — Տեղեկագիր Յանձնախմբին .

ԱՅԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ամենապատիւ Արքայան Պատրիարքն անձնական տկարութեան եւ ձողովին դեր-Ատենապետն Յ. Մէրեճմ-Ղուլի էֆէնտի ուղեւորութեան պատճառաւ բացակայ գտնուելով Նիստէն, ընդ առժամեայ Նախագահութեամբ Գեր Տ. Սիմէոն Եպիսկոպոսի Սէֆէրեան, նոյնպէս առժամեայ Ատենապետութեամբ Տիգրան էֆէնտի Եուսուֆեան՝ առեանը բացուեցաւ ժամ Տին՝ Ինքնակայութեան 28 երեսփոխանաց, որոց թիւն 37ի յանգեցաւ ի վերջէ :

Մայրաքաղաքէս Դիտողութեան է ի Ֆիլիպէ, ուստի բնականաբար Հրատարեալ կը համարուի այլ եւս Երեսփոխանական պաշտօնէն, եւ հարկ կըլայ դաւառին՝ զոր կը ներկայացնէր նա, Հրահանգ յուղարկել նոր երեսփոխան մ'ընտրելու համար :

Եթէ այս մասին դիտողութիւն չկայ, քուէի պիտի դնեմ Տօքթէօն Փափաղեան էֆէնտիի հրատարումը :

Որ եւ է դիտողութիւն տեղի չունենար, հետեւապէս Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ Տօքթէօն Փափաղեան էֆէնտիի հրատարումն Երեսփոխանական պաշտօնէն, եւ ժողովը միաձայն կ'ընտրուի զայն :

1.

2.

Երեսփոխան Տօքթօն Փափաղեան Էֆէնտիի նրաժարումն .

ԱՅԵՆԱԿԵՏ ԷՖ. — Մեր պաշտօնակիցներէն Տօքթէօն Փափաղեան էֆէնտի, ինչպէս ծանուցուած է Դիւանին, իւր բնակութիւնն

Գաւառական Տեղեկագրերէն Մազաթիս դաստիարակութեան վիճակին վրայ :

ԱՅԵՆԱԿԵՏ ԷՖ. — Կը յիշէք որ ասկէ առաջ ժողովը որոշեց տեղեկանալ թէ զաւառ-

ներու մէջ ինչ միջոցներ ձեռք առնուած են Ազգային դատարարակութեան ծաւալման մասին, եւ Սրբազան Պատրիարք Հօր յանձնեց պէտք եղած տեղեկութիւնները պահանջել դաւառներէն: Նորին Սրբազնութեան շրջաբերական գրոյն պատասխանած են Եղեւսիս, Կարնոյ Ս. Խաչ վանք, Նարեկայ վանք, Այնթապ եւ Կարին. եւ Սրբազան Պատրիարքն այս վիճակներէն եւ վանքերէն եկած հինգ տեղեկագրերն յղած է Ազգային ժողովոյս: Այժմ հարկ կը լլայ մեզ նոյն տեղեկագրերը յղել կանխառն նախաքննութիւն ձեռնհաս Դիւանին: Ուստի եթէ կը հաճիք, կը կատարենք յղումն:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՃ. — Կը ցաւիմ որ այս կարեւոր խնդիրն յապաղեցաւ ցարդ ժողովին ներկայանալու, եւ կառավարկեմ այդ Տեղեկագրերն անցնելով Ատենագրութեան մէջ, յղել Դատարարակութեան զիւանին ի նախաքննութիւն: Իսկ միւս դաւառացի որ ցարդ անպատասխանի թողած են Պատրիարքական շրջաբերականն, կրկին պիտի գրուի անշուշտ որ փութացնեն պահանջուած տեղեկագրերն:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՃ. — Կը կրկնեմ:

Հետեւապէս Ատենագրեա էֆէնտին բըւէի կը դնէ խնդիրն եւ ժողովը ըստ առաջարկի Փափաղեան էֆէնտիին նոյն դաւառական Տեղեկագրերն դատարարակութեան զիւանին կը ՅՂԷ ի նախաքննութիւն, որոշելով միանգամայն անցնել զանոնք Ատենագրութեան մէջ:

Ահաւասիկ նոյն տեղեկագրերն թուականաց առաջնութեան կարգաւ:

Ա.

Եղեւսիոյ Առաջնորդին Տեղեկագիրն.

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք

Հայր, Նախագահ Ազգ. Երեւոյնական Ժողովոյ Ի. Կ. Պօլիս.

Ձերդ Սրբազնութեան մէկ շրջաբերական ինչպէս որ ուրիշ ամեն առաջնորդներ, նոյնպէս ալ զիս կը հարկագրէր մեր դպրոցներու վիճակ ներկայել Երեւոյնական Պատրիարքի ժողովոյ:

Ահաւասիկ կու գամ ներկայիւս յայտներու թէ մեր դաւառներու դպրոցաց վիճակը համեմատութեամբ ուրիշ հայրենակ դաւառաց գոհացուցիչ չէ, եւ իւր առաջ չերթալուն արգելիչ գորաւոր պատճառներ ունեցած է ցարդ:

Սակայն այժմ դէպքեր եւ միջոցներ շօշափելի կերպով ցոյց տուին իրեն թէ, առանց սրտի եւ մտաց մշակութեան, չէ կարելի արժանաւոր դիրք մը ունենալ, հանդիստ եւ ապահով ապրիլ: Այս նոր դպրոցումներ (սակաւ բացառութեամբ) բաւական առաջ դնացած է, այնպէս որ, սկսած են իրենց ուստեստէն եւ հազուատէն համառօտելով եւ իրենց շատ պիտանի պէտքեր ետ թողլով դատարարակութեան հոգեւ խնամ տանելու միջոցներ հայթայթել:

Այս նոր եռանդն ինչպէս որ ինձ նոյնպէս ալ Ձեզ կը հաւատամ որ մեծ երաշխաւորութիւն մ'է, այդ ամենապիտանի պէտքն առաջ տանելու համար:

Քաղաքիս մէջ առ ժամն 5 վարժարան կայ, որոց մին օրիորդաց եւ չորսն տղայոց յատկացեալ է:

Ա. Մայր վարժարան, ուր կուսանին 60ի չափ աշակերտներ, չորս դաստուաց միջոցաւ, որոց ուսման առարկաներն են Հայոց պատմութիւն, Ա. դրոց պատմութիւն, աշխարհագրութիւն, կրօնագիտութիւն, թուարանութիւն, եւ

կեղեցական ուսմունք, քերականութիւն, տաճկերէն, գիր, շարագրութիւն, թարգմանութիւն, երաժշտութիւն, եւ:

Բ. վարժարան, աշակերտք 70, դասատու 1. դասերն են, ընթերցարան, նոր կտակարանի պատմութիւն, հայոց պատմութիւն, գիր եւ թուանշան գրել:

Գ. վարժարան, աշակերտք 75, դասերն են նոյնպէս:

Դ. ծաղկոց. աշակերտք 130, դասատուք 2, դասերն են մանր ընթերցարան, հեգարան, քերական, գիր ճանչնալ:

Ե. աղջկանց վարժարան, աշակերտուհիք 150, դասատու 2, դասերն են քերական, հեգերէն, հասարակ ընթերցմունք, քերականութիւն, աշխարհագրութիւն, թուարանութիւն, գիր եւ թարգմանութիւն, ասեղնագործութիւն եւ այլն:

Բացի աղջկանց վարժարանէն վերոյիշեալ չորս վարժարաններ ամէն երեկոց ժամը 12էն մինչև 3, արհեստաւորներու համար բաց է, ուր կը հաւաքուին 200էն աւելի չափահասներ, ոմանք Հայերէն, ոմանք տաճկերէն եւ ոմանք գրել եւ թուարանութիւն սորվելու:

Նաև կիւրակէ եւ տօն օրերը այս վարժարանաց մէջ, չափահասներու համար դասախօսութիւններ կը լինին, բարոյական խրատներ կ'խօսուին, եւ լրագիր կը կարդացուին:

Դպրոցներու ծախքը առայժմ 18000 զրուշի կը հասնի, որոյ մեծ մասը գրեթէ տղայոց ծնողաց կողմէն կ'վճարուի, եւ մընացեալը ուսումնասիրաց նորակազմ ընկերութեան կողմէն կը հոգացուի:

Քաղաքիս դպրոցաց վրայ տալիք տեղեկութիւններս վերջացնելով, կանցնիմ մեր վիճակի վերաբերեալ դաւառաց վրայ խօսելու:

1. Կարմունք

1 վարժարան, 40 աշակերտ, 1 դասատու, հասարակ ընթերցմունք, գիր ու թուանշան են:

2. Սեւերակ

2 վարժարան, 1 տղայոց եւ միւսն աղջկանց. տղայք 50, կուսանին հայերէն, տաճկերէն. աղջիկք 20, կուսանին հասարակ ընթերցմունք:

3. Նիգիլ

1 վարժարան, դասատու տեղւոյն քահանայն, աշակերտ 20, հասարակ ընթերցմունք:

4. Էճեշ

1 վարժարան. դասատուն տեղւոյն քահանայն. աշակերտք 25. հասարակ ընթերցմունք:

5. Ճիպից

1 վարժարան, 1 դասատու, 30 աշակերտ, հասարակ ընթերցմունք:

6. Պիրեճիկ

Այստեղ 150 տուն հայ ունինք, շարունակ յուզման ենթակայ են, հետեւաբար ոչ քահանայ եւ ոչ վարժապետ կըրնայ տեղաւ. ուստի ամէն բան խանդարեալ վիճակի մէջ է եւ իմ ոյժս չ'զօրեց ասոնց բան մը հասկցնելու:

Մեր այս տեղեկագիր այս եղանակաւ վերջացնելով, կը յայտնեմ թէ՛ երկրորդ շրջաբերականի ոգին ի վաղուց հետէ այս տեղ ընդունուած եւ գործադրութեան մէջ է:

Յաւել քան զայս, Մնամ աղօթող Ձեր պատուական կենաց Առաջնորդ Եղեւսիոյ Խորէն Եպիս. Միսիբարեան

22 Մայիս 80
յԱռաջ. Հայոց յեղեւսիս

Թ. Գ. Եթէ թիւ իմանալու պէտք ունիք՝ արդէն 72 ի համարատուութիւն կը ցուցնէ, և հիմայ քիչ առաւելութիւն ունի:

Եթէ հարկ է, ասկէ վերջը հրատարակուած Ազգ. ժողովոյ ատենագրութիւններէն մէկ օրինակ ամէն ամիս փոշթայով մեզ գրկելու շնորհ ըրէք, դրամը տարեգլխոյն կը վճարեմք:

Բ.

Կարնոյ Ս. Խաչ Վանուց Վանահօր Տեղեկագիրք:

Ամենապատիւ Սրբազան Հայր Ազգայինամ Տէր

Խոնարհութեամբ ներողութիւն հայցելով պատիւ ունիմ յայտնել որ սոյն ամսոյ 20 ին ստացայ՝ մարտ 29 ամսաթուով շրջաբերական երկու կոնդակը, յոր մին գրուած էր երկսեռի մանկանց դատախաչակութեան խնդիր և միւսն ևս առաւել հայազանց զհետ միմեանց սիրոյ և միութեան հրահանգ. այս հըրահանգին գործադրութեան անմիջապէս սկսելու պարտաւոր եմ ըստ իմ կարեաց ըստ տրամադրութեան նոյն պատուիրատու կոնդակի վեհի Տեառնդ: Գալով մանկանց դատախաչակութեան խնդրոյն, արդէն տեղւոյս երեք վանք կարնոյ Տընտեսական խորհրդոյն իրաւասութեան ներքեւն է, և մինչ ցարգ վարժարան չը բացուելուն պատասխանատուութիւնը յիշեալ խորհրդոյն է վերաբերեալ:

Իսկ Գալտի գիւղօրէից մասին՝ միայն 1879 նոյ. 12 ին ընդարձակ կոն-

դակ ստացած և ամէն գիւղի եկեղեցւոյ մէջ ըստ օրինի յայտնած եմ ազգային զարգացման նոյն կենսական խնդիր:

Սրբազան Տէր, տեղւոյս գեղջուկ հասակաւոր մանկուծք ձմրան միջոցին ընթերցման կը յանձնուին, դարունն բացուածին պէս երկրագործութեան կը տարուին և վարժարաննին կը դոցուի, հիմայ մշտաբաց վարժարան ունեցող հետեւեալ բաղմահայ գիւղերն են, Մուտուրկայ, Կան, Չիփլիկ, Շինոց, Գիլիկ թարգունի և Օկնի. այս գիւղերու փոքրահասակ երկսեռ մանկանց կարեւոր ընթերցում կ'շարունակուի որոց յայտնութեան երթալը մեր նուիրական պարտքն է:

Ըստ Ազգաւոյս պատուերի յիշեալ կոնդակի փութացայ սոյն համառօտ տեղեկութիւն յայտնել կեդրոնական մեծի յատեան Բարձր Սրբազնութեան Չերում յաւելցնել ևս թէ յարմար է վարժարան բանալու Կարմոյ Սուրբ Աստուածածնայ վանք, սպասելով Կարնոյ վիճակի նորընտիր Առաջնորդի գալստեան:

Մնամ Սրբազան վեհի Տեառնդ խոնարհ ծառայ

Ներսես Վ. Տ. Սարգիսեան
Իբր Վանահայր Ս. Խաչ Վանուց
Կարնոյ

1880 Մայիս 23

Ի Ս. Խաչ վանք

Գ.

Այնքալի կրօնական ժողովին Տեղեկագիրքն:

Ամենապատիւ Ս. Հայր

Մեք զմեզ բարեբաղդ կը համարիմք որ Ձեզի նման քաջ և արթուն հովուի մը

պաշտպանութեան և հսկողութեան տակ գտնուելու պատիւն ունիմք. այո, ասիկա, անուրանալի ճշմարտութիւն մ'է, որ բարեբաղդ եմք այս մասին. զոր աւելի կը հաստատէ Ձեր Ամենապատուութեան զրկած մարտ 29 թիւ երկու յորդորական շրջաբերականքն, որոց մին կը մղէ զմեզ յուսումնասիրութեան պողոտան և ի գլխութեան ասպարէզ և ՚ի միութիւն ընդ եղբարս որք ժամանակաւ բաժնուած են մեր կապակցութեանն. արդ ահա ասիկ կը փութամք ՚ի ճեպ տեղեկագրել և աւել Ձեզ մեր արդի կացութիւնը յիշեալ մասամբք:

Ունիմք մի նախակրթարան և ծաղկոց Ներսէսեան վարժարան անուն 3-400 աշակերտներէ բաղկացեալ և մի նախակրթարան Հայկանուշ վարժարան անուն 100 աշակերտուհիներէ բաղկացեալ, ուր կը դասախօսուին ըստ հրահանգաց Կ. Պօլսոյ Ուսումն. ժողովոյ, ևս և Հայերէն մայրական լեզուն (զի քաղաքիս հայոց մայրենի լեզուն թուրքերէնն է) ասոնց հետ կան նաեւս մի քանի թաղային անձնական դպրոցներ:

Քաղաքիս մէջ երկու մեծ ընկերութիւններ ալ կան գրեթէ 100ական անդամներէ բաղկացեալ, մին Վարդանանց և միւսն Ատենական անուամբ, որոց առաջինը իրեն նպատակ ըմբռնած է աղջկանց վարժարանի մը բարոյական և նիւթական յառաջդիմութիւնը, ինչպէս որ կ'շարունակեն քանի մը տարիներէ ՚ի վեր. իսկ երկրորդը Ուրբանոց դպրոցի մը հաստատութեան կը փոփաքին որք կը ջանան ի փոյթ եռանդն ՚ի լուսաւորութիւն և յուսումն երիտասարդութեան. սոյնպէս կան նաեւս մի քանի փոքրիկ ընկերութիւններ:

Եկեղեցեաւ մնումէ բաժանեալ եղբարց, այն է բողոքական Հայոց հետ քանի մը տարի առաջ մեծ բանակալու և զանազան երկպառակութիւններ, ատելութիւններ ևն. ծագած էին. բայց Կիլիկիոյ վեհափառ Ս. Մկրտիչ Կաթողիկոսի խրատական ազդու քարոզներուն և յորդորներուն միջոցաւ երեք տարիէ հետէ բոլորովին հանգարտեցաւ և ՚ի սպառ ըսպառելով արմատախիլ զօրացած են այսօր բոլոր վրդովմունք և կրօնական անօգուտ վէճք և ատելութիւնք. սիրով և անգորութեամբ կեամք:

Ահա ասիկ այսչափ տեղեկագրելով առ Ձերդ ամենապատուութիւն կրխնդրեմք Ձեր կրկին հովանաւորութիւնը և կը խոնարհիմք Ձեր Ս. աշոյն մատչիլ ՚ի համբոյր խորին ակնածութեամբ:

Ի գիմաց կրօն. ժողովոյ

Ատենադպիր Ատենապետ
Ի. Մովսէս Գճճյ Ա. Ե. Մէլրոն Գճճյ
Ժամկոչեան Կեմիճեան
1880 Մայիս 28
Ս. Առաջնորդ. Հայոց
Այնթապու.

Գ.

Վանայ Նարեկայ Վանուց Վանահօր Տեղեկագիրք:

Ամենապատիւ Սրբազան Հայր Նախագահ կեդր. բարեխնամ Վարչութեան:

Ձեր բարձր Սրբազնութեան 557 և 558 թուահամար և մարտ 29 ամսաթիւ տպագրեալ երկու կտոր շրջաբերական օրհնառաք նամակներն ի միասին ստանալով պարունակեալ իմաստիցն հասու եղանք:

Որուն կը հրամայէք դաւառիս մէջ գտնուած օտարազգեաց և մանաւանդ ազգային բաժանեալ եղբարց հետ սիրով և միաբանութեամբ վարուելու ջանալընդ միշտ և հիւրասէր լինիլ :

Առ այդ՝ Սրբազան Հայր, արդէն ունիմք պարտաւորութիւն և Ձեր բարձր հրամանն ևս կրկին կը պարտաւորցնէ ըզ մեզ և ոչ մի ջանք չխնայել, զայնպիսին սիրաշահել յօգուտ ազգային միութեան և ապագայ յուսոյն, առ որ կը նկրտիմք հասանիլ :

Իսկ գալով վանիցս և թեմական գիւղերուն մէջ աղջիկ և մանչ աղայոց համար դաստիարակութեան համար բացուելիք դպրոցին՝ արդէն վանուցս մէջ ունիմք դպրոց ի վաղուց հետէ բացուած, և թէև անցեալ պատերազմի տազնապալից միջոցին վաքր ժամանակ մի ևս դոցուեցաւ, այլ սակայն ի շնորհս երեսաց Ձերոց և Խրիմեան Սրբազան Հայրիկին, մի լեզուազէտ վարժապետ յառաջ քան զայս ի վանքս տանելով՝ դարձեալ աչակերտներ հաւաքած՝ ըստ կարի կաշխատիմք դաստիարակելու :

Մնամք Ձեր բարձր Սրբազնութեան

Խ. Ե.

Յովսէփ Վ. Վանանայր
Վանուց նարեկայ

Ի Վան՝ ի Վանս նարեկայ

30 Մայիս 1880

Ե.

Կարնոյ Առաջնորդին Տեղեկագիրքն,

Ամեն Ս. Պատրիարք Հայր

Պատիւ ունեցած ևս ստանալ Ձերդ

Բարձր Սրբազնութեան 557 և 558 թըւահամար և մարտ 29 ամսաթիւ երկու շրջաբերականներն՝ որոց առաջնովն հրամայէիք ինձ յորդորելով, քարոզել միշտ ընդ առաջնորդութեամբ իմով գտանող ժողովրդեան բառնալ յիւրեանց սրտից և մտաց հին ժամանակներէ ծնունդ առնող կրօնական ատելութիւնքն ու հակառակութիւնք և սիրով վարուել ու միախորհուրդ գործել ոչ միայն Հռովմէական ու Բողոքական մեր Հայ եղբարց, այլ և ոչ—Քրիստոնեաց ազգաց հետ անգամ. յուչ առնելով անդ թէ դարուս քաղաքակրթութեան ողին և ներկայ ժամանակիս փափկութիւնը զնոյն կը պահանջէ :

Հայր իմ Սրբազան, իմ կոչման և պաշտաման պարտաւորութիւնը արդէն ընդ միշտ սէր քարոզելու յժայ հիմնեալ ըլլալովն հանդերձ, չեմ երկուանար խոտանալ անդրէն թէ ըստ հրամանի Ձերում իմ առաջին հոգն ու գործ ժողովրդեանս բանիւ և գործով ուսուցանել պիտի ըլլայ թէ Ազգին ընդհանուր շահուց և բարոյական զարգացման միութեան կրնայ մեծապէս նպաստել մեր նոյն տեսակ վարմունք :

Իսկ երկրորդիւն, կարեւոր հրահանգներ պարունակող անցեալ 1879 մայիս 11 ամսաթիւ շրջաբերականի մը զրկուածն ըլլալն և ցարդ նորա գործադրութեանն ի պատասխան մի տեղեկագիր հասած չլինելն յիշելով, կը յորդորէիք վիճակիս բոլոր գիւղերուն մէջ վարժարաններ ունենալու հոգ տանիլ և գէթ կարգալ, գրել և թուել ուսուցանել երկսեռ մանկուոյն Հայոց, ինչպէս նաեւ ի կիւրակէ և տօն աւուրս չափահասից :

Ուրախ ևս որ նուաստս թէպէտ նոր

հասած, բայց և այնպէս պիտի կարենամ աւետել Ձեր բարձր Սրբազնութեան թէ վիճակիս գիւղօրէք մեծաւ մասամբ ունին կարգալ, գրել և թուել ուսուցանող վարժարաններ, որոյ մանրամասն տեղեկագրերն հաւաքելով ի մօտոյ առ Ձեզ զրկել պիտի փութամ. իսկ որ գիւղեր որ զուրկ կը գտնուին այդ վարժարաններէն, ներկեցէք որ խոտանամ թէ ինոսա այնոյն գունակ դպրոցներ հաստատել տալու պարտաւորութիւնս երբէք չը պիտի մոռնամ, որչափ պատերազմաց եւ սովու տառապանքներէն երկար ատեն նեղուած և դեռ իսկ բոլորովին չազատած երկրի մը կարողութիւնը պիտի ներէ ինձ բազմանացս կատարումը :

Խոնարհաբար մատչելով ՚ի համբոյր Աստուածաբեալ Ձեր Ս. աջոյն խնդրեմ Ձեր Հայրենի օրհնութիւն ՚ի վերայ իմ և ժողովրդեանս :

Մնամ միշտ Ձեզ և Ազգիս անձնուէր

Մաղաքիս Վրդ. Օրմանեան
Առաջնորդ Կարնոյ

1880 Յունիս 21

յԱռաջ. Հայոց

Կարնոյ

3.

Թիֆլիզի Գայիանեան Հայ օրիորդաց Աստուծաբանի Տեսչութեան նամակը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թիֆլիզի Գայիանեան Հայ օրիորդաց վարժարանի տեսչութիւնն յատուկ նամակով մը առ Ազգային ժողովն ուղղած է, Պ. Զաքարիա նարխմանեանի կողմէ եղած նուիրատուութեան մը պայմանագրին

պատճէնն : Սրբազան Պատրիարքն սոյն կրկին գրերն յանձնած է Մայր գիւանին, եւ ահա առիկ կը ներկայեմ Ձեզ վարժարանին Տեսչութեան նամակն :

յԱզգային ժողովն Հայոց Կ. Պօլսոյ

Սուրբ Գայիանեան Հայ Օրիորդաց միջնակարգ Աւսումնարանի վարչութիւնը պատիւ ունի ընդ սմին ուղարկել Ազգ. ժողովոյդ Պ. Զաքարիա նարխմանեանի նուիրատուութեան պայմանաթղթի պատճէնը և խնդրում է պատճէնի ստանալու մասին յայտնել վարչութեանը :

Նախագահ վարչութեան՝ Տեսուչ
Ուսումնարանի
Ն. Խոսրովեան

17 Մարտ 1880

Թիֆլիս

Իսկ Պայմանագիրն ընդարձակ գրութիւն մ'է, որ նուիրատուութեան պայմաններն կը պարունակէ : Եւ ըստ որում խնդրը նախաքննութեան կը կարօտի, ուստի եթէ կը հաճիք, անցնելով նոյն Պայմանագիրն Ատենագրութեան մէջ, կը կատարենք յղումը :

ՁԱՅՆԵՐ. — Շատ աղէկ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ասկէ առաջ դարձեալ Թիֆլիզէն նուիրատուութեան նմանօրինակ խնդիր մ'ալ եկաւ, զոր նախաքննութեան յղեցինք, սակայն ցարդ տեղեկագիրը չստացանք : Կուզէի գիտնալ թէ արդեօք այս խնդիրն ալ միեւնոյն բաղդին պիտի հանդիպի՞ թէ ոչ պիտի յաջողի խնդրոյն վերագործը տեսնել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը խնդրենք նախաքննիչ Գիւաններէն որ իրենց յանձնուած խնդիրներուն տեղեկագրերը փութացնեն, եւ այս յայտարարութեամբ կը յղենք նաեւ սոյն խնդ

դիրը կառուածոց եւ Գաստարակութեան միացեալ դիւանաց :

2033ՆԵՐ. — Շատ աղէկ :

Հետեւապէս Ժողովը կործէ խնդիրը կառուածոց եւ Գաստարակութեան միացեալ դիւանաց յղել ի նախաքննութիւն :

Պատճեն հայմանագրի :

Թիֆլիզու Սուրբ Գայիանեան Հայ օրիորդաց միջնակարգ ուսումնարանի վարչութեան :

Նոյեմբերի 1 ին իմ նուիրական թղթի հետ առաքեցի ի սեպհականութիւն վարչութեանդ երկու թաղաւորական առաջին փոխառութեան 3 առ 100 վիթիւրիին տոմսակ, որոնցից առաջինն նշանաթուերն են սերի 07,394 Ն. 20 (սերի դրո եօթը հազար երեք հարիւր ինըսուն եւ մէկ, եօթեր քսան), իսկ երկրորդինը սերի 19,804 Ն. 43 (սերի տասն եւ ինը հազար ութ հարիւր չորս, եօթեր քառասուն եւ հինգ) ի յիշատակ իմ հանգուցեալ որդւոյ Սարգսի Զաքարեան նարիմանեանց, իւրաքանչիւրը այս տոմսակներից ունին երեք երեք կուպօն, որոնցից հասանելի տոկոսիքը վարչութիւնդ ունի իրաւունք ստանալ եւ գործածել խղճուկ օրիորդաց Հայ ազգիս կրթութեան համար, ինչպէս եւ կամի գրելով ամենասիրելի որդւոյս Սարգսի անունը գալրոցիդ բարերարաց շարքում յարակցելով եթէ փիճակախաղին ընկնելու իննին յիշեալ տոմսակներէն գումար ինչ, գումարնց գործածելու մասին իմ կամքս գրաւոր յայտնելու եմ վարչութեանդ :

Ահա այս թղթի մէջ զձագրումեմ իմ կամքս. նախ վարչութիւնդ պարտաւոր է անպատճառ ապահովայնել տոմսակները նախ քան փիճակախաղի ժամանակները եթէ տոմսակներն տիրածում գումար դան, նրանց փոխանակ ստացուի այլ տոմսակներ 3 առ 100 վիթիւրիին առաջին կամ երկրորդ փոխառութեան եւ այդ մասին վարչութիւնդ հրատարակէ տեղական լրագիրներին միջոցաւ, յայտնելով նոր տոմսակների թուանշաններն սերի եւ յօմէք :

Երկրորդ՝ եթէ փիճակախաղից երբ ե իցէ, այդ տոմսակներով եւ կամ դոցա փոխարինեալ տոմսակներով տարուի գումար ինչ, թէ 300 (հինգ հարիւր) թէ 1000 (հազար) թէ 8000 (ութ հազար), թէ 3000 (հինգ հազար) թէ 10000 (տասն հազար) թէ 23000 (քսան եւ հինգ հազար) թէ 40000 (քառասուն հազար) միայն վարչութիւնդ իրաւունք ունի ըստանալ այնպիսի գումարներ, որոնք պիտի լինին սեպհականութիւն յիշեալ օրիորդաց միջնակարգ ուսումնարանի իբրև մայր գումար, որոնց տոկոսիքը վարչութիւնդ ունի իրաւունք գործածել ուսումնարանիդ համար օրպէս եւ կամի, յատկացնելով բարի գործ ինչ իմ որդի՝ Սարգսի յիշատակին. օրինակ յանուն նորա որդեգիր սահէլ, կամ գրբեր տպել տալ, կամ գասաղբեր ձրի բաժնել խեղճերուն, կամ նորոնց համար շորեր կարել տալ եւ այլն, ինչ արժան կը համարէ վարչութիւնդ մեր հայոց խղճուկ զուակաց համար, հրատարակելով այն արարքը օրագրներին միջոցաւ :

Երրորդ՝ եթէ տարած գումարն լինի 75000 (եօթանասուն եւ հինգ հազար) գումարնց վարչութիւնդ պարտաւոր է

տալ հինգ հազար բուրլի ի սեպհականութիւն Թիֆլիզի Ներսիսեան Աղդ. հոգևոր դպրոցին, իսկ մնացած 70,000 բուրլին լինելու է մայր գումար օրիորդաց ուսումնարանիդ, որոց տոկոսիքը վարչութիւնդ ունի իրաւունք գործածել ինչպէս վերևը յայտնած է :

Չորրորդ՝ եթէ ընկնի 200,000 բուրլի (երկու հարիւր հազար բրլի) գումարնց, 10000 բուրլի (տասն հազար) վարչութիւնդ պարտէ տալ ի սեպհականութիւն յիշեալ Ներսիսեան դպրոցին, իսկ 100,000 բուրլին (հարիւր հազար) վարչութիւնդ եթէ Գայիանեան ուսումնարանիդ համար չկայ սեպհական յարմար տուն, կարող է շինել եւ կամ շինել տալ Սուրբ Գայիանեան միջնակարգ ուսումնարանիդ համար մէկ յարմար տուն իւր պարտիզով, իսկ եթէ ուրիշ աղբիւրից ունի հարիւր հազարի արժէքով տուն կամ առ ձեռն պատրաստի հարիւր հազար բուրլի գումար տուն գնելու կամ շինելու համար, յայնժամ յիշեալ հարիւր հազար բուրլուց վարչութիւնդ պարտաւոր է 40000 (քառասուն հազար) առաքել Թուրքիոյ մէջ գլխաւորած Ազգ. Ժողովոյն, որ գործածէ Թուրքիայում Հայոց ազգի որդւոց կրթութեան համար, իսկ տասն հազարը գործածուի Պարսկաստանում եղած հայոց մանկանց կրթութեան համար. մնացած 30 հազարից տասը հազարը նուիրել Էջմիածնայ ճեմարանին, տասը հազարը Թիֆլիզու Ներսիսեան դպրոցին, եւ 30 հազարը գործածել Վրաստանի փիճակում գիւղացի հայոց մանկանց կրթութեան համար, ինչպէս տեղւոյս հայոց հոգևոր իշխանութիւնը յարմար կը տեսնի. իսկ մնացած 90,000 (իննսուն հազարը) մնալու է մայր գումար Գալրոցիդ, որոց տոկոսիքը վարչութիւնդ գործա-

ծելու է, ինչպէս վերևը երկրորդ յօդուածում յայտնած է :

Այս յօդուածի համաձայն ինչ օր լինելու լինի վարչութիւնդ յայտնելու է ազգին լրագրաց միջոցաւ :

Հինգերորդ՝ Էջմիածնի ճեմարանի եւ Ներսիսեան դպրոցի վարչութիւններն յիշեալ գումարները ստանալիս պարտաւոր են հինգ հինգ հազարների տոկոսները պահել իրանց մէջ մէկ մէկ օրգել գիր կամ ստիպինդիտտ յանուն Սարգսի Զաքարեան նարիմանեանց յառաջագէժ ազգատ աչակերտներից, որոնք եթէ ուսման ընթացքը աւարտելից յետոյ ցանկանան հոգևորական դասնալ, թէ քահանայ թէ վարդապետ, այդ վարչութիւններն պարտաւոր են տալ նորանց միանագ իւրաքանչիւրին երեք հարիւրական բուրլի, ընդ նմին շարունակել պահել Սարգսի անուամբ օրգեղի իրներ կամ ստիպինիադներ ինչպէս վերը յայտնած եմ :

Վեցերորդ՝ եթէ կրկին եւ կրկին փիճակախաղից տոմսակներով տարուի գումարներ, այն ժամանակներում վարչութիւնդ աղ գումարները ստանալու եւ գործածելու է համաձայն վերոյեւած 2, 3, 4 եւ 5 յօդուածներին միայն այնուբացառութեամբ, որ եթէ երկու հարիւր հազար բուրլի ընկնի, այն ժամանակ աղ գումարից 190,000 հազարները բաժանել Հայոց ազգի չքաւոր ծխական ուսումնարանների վերայ Թուրքաց Հայաստանում 19 (տասինն) ուսումնարանների, Պարսկաստանի միջում չորս եւ Ռուսաստանի միջում հինգ, որոց այս վերջինների թրւում լինելու է եւ Էջմիածնի ճեմարանը, իսկ մնացած տասն հազարները գործա-

ձեռու է այս վեցերորդ յօդուածը կատարելու մասին :

Եօթներորդ՝ վիճակախաղից ընկած յօդուած ուսումնարանից մայր գումարները վարչութիւնը պարտաւոր է շահեցնել ուրում և որքան կամենայ :

Ութերորդ՝ եթէ վարչութիւնը բարեհաճի յիշեալ պայմանները կատարելու, խնդրում եմ անել հետեւեալը, 4. այս իմ նուիրական թուղթը տպել տալ քաղաքիս Հայոց լրագիրներում և ամսագիրներում 2. սորա օրինակներէից վարչութիւնը վաւերացմամբ ուսումնարանից կնքով հաստատած տալ մէկ հատ ինչ, մէկ մէկ հատ թիֆլիզու ներսիսեան հոգևոր ուսումնարանի Հոգևոր Աբեղի, Պարոյանի և թիւրքի Ազգ. Ժողովոյ Սրբազան Սինդիկատի, վասն զի ամենքն էլ ունին իրաւունք հրահելու վերոյիշեալ պայմանների կատարման վերայ, ինչ որ իւրաքանչիւրին կը պատկանի :

Իններորդ՝ եթէ յիշեալ Գայիանեան օրիորդաց դպրոցը որեիցէ պատճառով փակուի, այն ժամանակ կոստանդնուպոլսի Ազգ. Ժողովը իրաւունք ունի յիշեալ տոմսակներով և կամ նորանց փոխարէն նոր ստացած տոմսակներով տարած մայր գումարները կամ տարած փողերով շինած տունը և տոմսակները ստանալ, տունը ծախել, նորա գինը, բոլոր ստացած տոմսակներով գումարները և տոմսակները ստանալ և բաց անել նորանցով թիւրքիայի Հայաստանում մէկ Ազգ. ուսումնարան յանուն որդւոյս Սարգըսի Զարբրեան նարիմանեանց :

Յայտնելով այս իմ կամքը ազաւում եմ վարչութեանը ոչինչ վէճ և անբա-

ւականութիւն չպատահելու համար ապաշայում ճշգրտութեամբ կատարել գծագրեալ պայմանները, որոնք բառ իմ կարծեաց մեծ օգուտ բերելու են մեր խղճայի Հայոց ազգի զաւակաց, ընդ նրմին անմուաց մնայու է ամենասիրելի որդւոյս Սարգսի անունը նորանց սրտերում :

Ստորագրած է վրացերէն
Զարար որդի Սարգսի նարիմանով

1880 Մարտ 17
Թիֆլիզ

Ուղիղ է ընդ իսկականի
Նախագահ

Ս. Գայիանեան Հայ օրիորդաց
միջնակարգ ուսումնարանի վարչութեան

Տեսուչ ուսումնարանի
Ն. Խոսրովեանց

Վաւերացրեց Քարտուղար վարչութեան
Ս. Շիշմանեան

4.

Երեսօրիսան Ս. Փափագեան Էֆենտիի առաջարկը Հայաստանի սովուրն նկատմամբ :

Երեսօրիսան Փափագեան էֆենտիի կողմէ մատուցեալ յետագայ առաջարկը կարգացուեցաւ :

Նկատելով որ յառաջիկայ տարւոյն մէջ Հայաստանի սովիւր աւելի եւս ծանր և աղէտալի կ'երեւի քան նախընթաց տարւոյնը .

Նկատելով որ սովելոց խնամատար կեդր. Յանձնաժողովն աղէկուար նկարագիրներով համայն ազգին օգնութեանը կը դիմէ անընդհատ հրատարակութեամբ .

Նկատելով որ Կ. Պօլսոյ մէջ ամեն թաղ և դաւառներն ամեն կողմ և մինչև իսկ ի Ռուսիա, ի Հնդկիս և ի Ռումանիա, յԱնգղիս և ի Գաղղիս և յայլ ամենայն տեղիս բնակեալ Հայք կը փութան յօգնութիւն մեր տարաբաղդ ազգակցաց, որք ցարդ կը բնակին ի Հայաստան իրենց հայրենի ընկի երկրին վրայ, հարիւրաւոր տարիներէ ի վեր ամենելով ամենայն վշտաց և տոկալով ամենայն հարստահարութեանց .

Նկատելով որ նոյն իսկ մօտաւոր և հեռաւոր օտարազգիք, պետական և իշխանաւոր անձինք Հայաստանի մնացած նահատակ ժողովուրդն սովամահէ ազատելու փոյթ կը տանին և օգնութիւն կը մատուցանեն նոցա .

Կ'առաջարկեմ որ Ազգային Ժողովս հանդիսաւորապէս քուէարկէ հետեւեալը .

« Թուրքիոյ Հայոց ներկայացուցիչ Ազգային Ժողովս ի դիմաց ազգին խորին երախտագիտութիւն և շնորհակալութիւն կը յայտնէ ամենայն հանգանակողաց թէ ազգայնոց և թէ օտարազգեաց թէ պետական և իշխանաւոր անձանց և թէ ամենայն ժողովրդեան . նոյնպէս չընորհակալութիւն կը յայտնէ սովելոց խընամատար կեդր. Յանձնաժողովոյ և այլ ամենայն թաղային և դաւառական օժանդակ Յանձնաժողովոց, և կը յայտարարէ ճանաչել զամենեւին զոսոսա Բորեւր-Հայաստանի . և կը յանձնարարէ Ս. Պարիարք Հօր հրատարակութեան տալ սոյն որոշումն ի պաշտօնէ և պատուիրել կեդրոնական Յանձնաժողովին որ խնամտանի ամենայն հանգանակողաց իրաւունքն և հանգանակութեան քանակութիւնն

և հասած տեղեկագիրքն ամփոփելով ի դէպ ժամու հրատարակել տալ առանձին տուժարով մը ի պատիւ և ի փառս հանգանակողաց՝ բարերարաց Հայաստանի » :

Ազգ. երեսօրիսան
Ս. Պ. Պ. Փափագեան
40 հոկտ. 1880

(Յետ ընթերցման)

ԱՍԼԱՆՅԱՆ Ս. ՓԱՇԱ. — Պարտ կը համարիմ զիտել տալ Դիւանին, թէ ատենական գործողութեանց կարգին մէջ վիճարանութեան չեն կրնար ենթարկուիլ առաջարկութիւններն, այլ նախաքննութեան կը յղուին, կամ նախափճոյ կենթարկուին, եթէ նախափճի խնդրոց ըլլայ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կառաջարկեմ քուէի գնել :

ԱՍԼԱՆՅԱՆ Ս. ՓԱՇԱ. — Գիտէք որ սովելոց օգնելու համար Յանձնաժողով մը կազմուած է, որ տարիներէ ի վեր կաշխատի, և այս Յանձնաժողովը միայն կարող է մեզ լիութի տեղեկութիւն հազորդել հանգանակութեան վրայ, կարծեմ թէ Յանձնաժողովն իւր գործողութեանց տեղեկագիրք չընդունած և իւրաց վիճակին վրայ մանրամասն ծանօթութիւններ չառած, շնորհակալեաց այսպիսի հանդիսական քուէ մը տալ յանուն Ազգին, և Հայաստանի բարեբաբ հրատարակել այս կամ այն դասու հանգանակողներն, կանխահա գործ մ'է և անապարանք մը :

Գուր անտեղեակ չէք որ այս սովելոց խնդրոյն մէջ աշխատութեան երեք ճիւղ կայ, մին մերն է, սովելոց օգնութեան Յանձնախրմբին ձեռք, միւսն Պօլսոյ մեծ սեղանաւորաց և և երրորդն Տէրութեան : Եթէ այս երեք ճիւղերն իրարմէ դատենք, և մեր ճիւղին մէջ կատարուած հանգանակութեանց համար քը-

էլ տանք շնորհակալութեան, եւ «քարերարք» հռչակեն, մեր ճիւղի նպաստամտոյցներն, եւ մեր Յանձնախումբն, միւսներն անբարերար համարած պիտի նկատուինք. ըստ իս վերջապէս ժամանակը չէ հիմայ այս առաջարկին, եւ զայն պատեհ ժամանակին պէտք է վերադարձնել:

Արդ՝ դիտել կուտամ Գիւանին, թէ ըստ կանոնի քանի որ փափազեան էֆէնտի առաջարկին գէ՛մ խօսուեցաւ նախապէս առաջարկէն յետոյ, հարկ կըլլայ այլ եւս խնդիրն նախաքննութեան յղել եւ վերջացնել:

ՁԱՅՆԵՐ. — Քուէ, քուէ:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Կանոնադրական դիտողութիւն մ'ունիմ. ստոյգ է որ մեր ներքին Կանոնադրին մէջ կայ այն տրամադրութիւնն, զոր Ստեփան փաշան յիշեց. սակայն հակառակ է Սահմանադրութեան, որ կը տրամադրէ թէ չկրնար խնդիր մը քուէի զըրուի, մինչեւ որ վիճարանութեամբ չլուսարանուի:

Թերեւս հափազեան էֆէնտի առաջարկը իրաւացի է, կամ թերեւս ոչ, սակայն ինչպէս պիտի յայտնուի, եթէ ոչ վիճարանութեամբ: Աստի ես կ'առաջարկեմ ներքին Կանոնադրին այդ տրամադրութիւնը բարեփոխել:

ԱՏԵՆԱԳԵՏ ԷՖ. — Եթէ ներքին Կանոնադրին այդ կէտին համար բարեփոխում կը պահանջէք, հանցէք զրոյ մատուցանել ձեր առաջարկն, եւ այն ատեն դիւանը պատրաստ է զայն ժողովին նկատառմանը ներկայելու. իսկ այժմ մենք կանոնին այդ տրամադրութեան հպատակելու պարտաւոր ենք, եւ չենք կրնար զայն քննադատութեան ներքեւ թողլով անտես անցնել, մինչեւ որ ժողովը չբարեփոխէ:

Արդ՝ փափազեան էֆէնտի առաջարկը նախաքննութեան յղելու համար՝ ժողովին որոշումը կը խնդրեմ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Այն պարագային

մէջ, ուր նախապէս կարօտ խնդիր մը կայ, ըստ կանոնի պէտք է թեր ու գէ՛մ խօսողները լսել: Ես առաջարկ մ'ըրի, եւ դեռ քան մը չխօսած այս մասին՝ Ստեփան փաշան գէ՛մ խօսեցաւ. ես պէտք է պաշտպանեմ զայն, եւ միշտ վերջին խօսքն առաջարկի հեղինակինն է, կարելի է առաջարկին թերին պիտի լրացնեմ:

ԱՏԵՆԱԳԵՏ ԷՖ. — Կը յիշեցնեմ ձեզ որ արդէն սոյն առաջարկին վրայ թեր ու գէ՛մ խօսուեցաւ, նաեւ Քրիստոստուր էֆէնտին ինչպէս պատ կարծիք յայտնեց, եւ յետոյ Ստեփան փաշան ընդդիմաբանեց:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — (Ընդմիջելով) Ես թեր չխօսեցայ:

ԱՏԵՆԱՏԵՏ ԷՖ. — (Շարունակելով) Կը սխալեք, դուք թեր խօսած եղաք երբ առաջարկին քուէարկուիլը պահանջեցիք. իսկ Ստեփան փաշան դիտողութիւն ըրաւ թէ պէտք չէ անապարել, եւ նախաքննութիւն պահանջեց:

Այժմ մէկ կողմէ քուէ խնդրողներ կըլլան, միւս կողմէ փափազեան էֆէնտի իբր առաջարկի տէր, խօսք կուզէ. ուստի ես ժողովին կ'ամբը պիտի խնդրեմ թէ կուզէ՞ փափազեան էֆէնտին լսել, թէ ոչ՝ առաջարկը նախաքննութեան յղել արժան կը դատէ:

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին խընդիրը քուէի կը դնէ, եւ ժողովը 6 քուէի ընդդէմ 16 քուէով ԿՈՐՈՇԷ փափազեան էֆէնտի առաջարկն յղել ի նախաքննութիւն:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Սխալ գործեցիք, փաշային առաջարկութեան ողին սովելոց օգնութեան Յանձնաժողովէն տեղեկութիւն պահանջել չէր, եւ սակայն նախաքննութեան յղուեցաւ խնդիրը:

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Գանի որ խըն-

դիրը նախաքննութեան կը յղուի, կարծեմ թէ նախաքննիչ գիւանը պիտի պահանջէ պէտք եղած տեղեկութիւններն եւ հողորդէ ժողովին:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Այդպէս չպիտի ըլլայ. սակայն թոյլ շտուիք ինձ որ բացատրէի խնդիրն: Կը ցույց տր մինչեւ ցարչ սովելոց օգնութեան Յանձնախումբէն պէտք եղած տեղեկութիւնները հաղորդուած չեն. ես փափկութեամբ չուզեցի յիշել այս կէտն, Թոյ արձանագրուի այս խօսքս:

ՍՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Այս խնդիրը բացատրել վիճակ մ'ունի, խել մը կէտեր կան, որոց վրայ լուսարանութիւնը հարկաւոր են, սովել խնդիր է, եւ մենք ալ նախաքննիչ գիւաններու սովելն բանուած ենք, ուստի կ'առաջարկեմ Ատենապետաց գիւանին յանձնել առաջարկին նախաքննութիւնն:

Ժողովը ԿԸ ՀԱՒԱՆԻ Ստեփան փաշայի առաջարկին եւ խնդիրը Ատենապետաց գիւանին կը յղուի ի նախաքննութիւն:

5.

Նսիսկին երեսփոխան Տ. Վանան վարդապետի առաջարկն:

ԱՏԵՆԱԳԵՏ ԷՖ. — Նսիսկին երեսփոխան Տ. Վանան վարդապետն՝ որ ասկէ քիչ ժամանակ առաջ առաջնորդական պաշտօնի կոչուելով իւր երեսփոխանի ամբողջ թողուց, դեռ չմեկնած աստի, գաւառական վարչութեանց բարեկարգութեան խնդրոյն վրայ զբաւոր առաջարկ մը մատոյց. իւր գրութիւնն, որ գաւառաց ներքին վիճակին վրայ դիտողութիւններ կը պարունակէ, ընդարձակ է, եւ արդէն խնդիրն նախաքննութեան կարօտ. ուստի եթէ կը հաճիք, Ատենադրութեան մէջ կանցնենք զայն, եւ անոր պարունակութեան հասու լինելէ յետոյ՝ կը յղենք զայն ի նախա-

քըննութիւն, եւ կամ այժմէն կը կատարենք յղումն:

ԱՏԵՆԱՊԳԻՐ ԷՖ. — Ատենապետ էֆէնտի տուած տեղեկութիւններն կամրողջացնեմ, ծանօթութիւն մ'ալ յարելով անոնց: Մինչդեռ ժողովը վարչական կազմակերպութեան օրինաց ծրարը կը քննէր, Տ. Վանան վարչապետն այս ամբիւ կուզէր նաեւ գաւառական վարչութեանց վիճակին վրայ դիտողութիւններ ընել. առարկութիւն եղաւ իրեն գէ՛մ թէ այդ խնդրոյն ժամանակը չէր տակաւին եւ այն ատեն Տ. Վանան վարդապետը, որ արդէն մեկնելու վրայ էր, զրոյ կը մատուցանեմ, ըսաւ, իմ դիտողութիւնս, եւ անաւակ նոյն գիրն է որ կը ներկայանայ այժմ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Առաջարկին հեղինակն դադրած է իւր երեսփոխանական պաշտօնէն, եւ քանի որ խնդիրը տէր չունի հոս այլեւս, չկրնար անշուշտ նախաքննութեան յղուիլ: Սակայն ես կ'ստանձնեմ զայն, բայց ոչ թէ զրոյն պարունակութիւնն իւր ամբողջութեամբ, այլ այն կէտը միայն որ գաւառական վարչութեան կազմակերպութեանը կը վերաբերի, եւ հետեւաբար կը խնդրեմ որ ժողովը հաճի զայն յղել Ատենապետաց գիւանին:

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Գիւանին տրուած տեղեկութիւններն այնպէս ցոյց կուտան որ Վանան վարդապետը տակաւին երեսփոխանական պաշտօնի վրայ գտնուած ատեն՝ այդ խնդիրը ներկայեր է, սակայն եւ իբր անժամանակ, ուրիշ ատենի յետաձգուեր, եւ Տ. Վանան վարդապետն իբր ուրոյն խնդիր՝ զայն զրոյ մատուցանել յանձն առեր է, որով գրեթէ յանձնարարութիւն մ'ընդունած եղեր է այսպէս ընելու համար:

Արդ՝ այս վիճակին մէջ, եւ եթէ նոյն իսկ տարրեր ալ լինին պարագաներն, քանի որ խնդիրն երեսփոխանէ մը ծագած է, չեմ կարծեր որ առաջարկի հեղինակին հրաժարումն արդեւ մ'ըլլայ զայն նախաքննու-

թեան յղելու : Փափաղեան էֆէնտին , իրաւ , տէր կը կանգնի առաջարկին , բայց գրով մ'ե-
րեւան կուգայ այդ առաջարկն կամ խնդիրն .
իսկ Փափաղեան էֆէնտին զայն շտտանձներ
համակ , այլ մէկ կէտը կ'ուրացնէ , ուստի լա-
ւազոյն է խնդիրն նոյնութեամբ եւ ամբող-
ջութեամբ նախաքննութեան յանձնել առա-
ջարկի հեղինակին գրովն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այս մասին բա-
ցատրութիւն մը կարեւոր է : Ժողովն երբէք
չյանձնարարեց Տ. Վահան վարդապետի որ մի
այսպիսի խնդիր կամ առաջարկ գրով բերէ
իրեն , այլ միայն՝ երբ ասկէ առաջ զայն յու-
զել կուզէր , գիտողութիւն եղաւ իրեն թէ՛
անժամանակ կը յարուցանէր այդ խնդիրն , եւ
ինք ալ պատասխանեց թէ՛ գրով պիտի մատու-
ցանէ զայն , ինչպէս որ բերաւ ի վերջէ : Հե-
տեւաբար ժողովն որեւէ յանձնարարութիւն
մը չունի ըրած այս մասին , որ անոր առա-
ջարկը նկատողութեան առնու հարկի մը ներ-
քեւ ինկած լինի : Ասկայն ուրիշ կէտ մը կայ ,
այս խնդիրն Ազգային ընդհանուր Վարչական
կազմակերպութեան մի յարակից մասն է :
Ինչպէս նաեւ թաղային մատակարարութեան
խնդիրն , որով Ատենապետաց զիւանն ար-
գէն կզբազի կարծեմ , կամ ընդհուպ ձեռք
պիտի առնու զայն : Ահա այս նկատմամբ ես
տէր կանգնեցայ Տ. Վահան վարդապետի ա-
ռաջարկի այն կէտին՝ որ գաւառական Վար-
չութեանց կազմակերպութեան կը վերաբերի ,
եւ առաջարկեցի զայն Ատենապետաց իջուա-
նին յղել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ճիշդ է ինչ տեղեկու-
թիւն որ տուաւ Փափաղեան էֆէնտին . խըն-
դիրն Ատենապետաց զիւանին յղելով վնաս
մը չծագիր մեզ , այլ օգուտ , վասն զի ժողո-
վըն արգէն տրամադիր է թէ Գաւառական
վարչութեան եւ թէ Թաղային մատակարար-
ութեան կազմակերպութեան գրութիւնը բա-
րեփոխել :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Կը փափաքէի

զիտնալ թէ այս մասին ինչ որոշում կայ , եւ
ինչպէս հասկցուած է ժողովոյ տրամադրու-
թիւնը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Իրաւունք ունիք տե-
ղեկութիւն պահանջելու , վասն զի դուք ներ-
կայ չէիք մեր մէջ , երբ ժողովը Վարչական
կազմակերպութեան օրէնքը կը քննէր : Ատե-
նապետաց զիւանն այդ օրինաց ծրագիրը բե-
րած ատեն յիշեցուց ժողովին թէ թաղային
մատակարարութեան գլուխն ալ վերաքննել
պէտք էր . եւ ժողովն նախընթաց նիստին մէջ
մի քանի Երեսփոխանաց առաջարկին վրայ
սոյն խնդիրն ալ յանձնեց Ատենապետաց զի-
ւանին , եւ երբ Կեդրոնական վարչութեան
թաղային մատակարարութեան կազմակեր-
պութեան գրութիւնը վերաքննուի եւ բա-
րեփոխուի , գաւառականն ի բաց չպիտի մնայ
անշուշտ , եւ այս տեսութեամբ կրնայ խըն-
դիրն Ատենապետաց զիւանին յղուիլ :

ՄԷԼԻՒՅԵԱՆ Գ. ԷՖ. — Խնդիրն սա պա-
հուս Տ. Վահան վարդապետի առաջարկու-
թեան վրայ է , որ գրով ներկայացեալ է մեզ :
Զգիտեմք այդ գրոյն պարունակութիւնն իւր
ամբողջութեամբն , չզիտեմք լիովին խնդրոյն
ինչ ըլլալն , եւ սակայն կը վիճաբանինք թէ
զայն նախաքննութեան յղել պէ՞տք է կամ ոչ ,
Ըստ իս առ այժմ պէտք է այդ գրոյն Ատենա-
գրութեան մէջ անցնին որոշել , զայն կար-
գալ եւ բովանդակութեանն կատարելապէս
տեղեկանալէ յետոյ որոշել թէ ի՞նչ պէտք է
ընել :

ՉԱՏԱՊԵՏ. — Շատ աղէկ :

Հետեւապէս ժողովը ԿԸ ՀԱՒԱՆԻ Ատենա-
գրութեան մէջ անցնել Տ. Վահան վարդապե-
տի գրաւոր առաջարկն , եւ այնուհետեւ
անօրինել զարժանն :

Ահաւասիկ սոյն առաջարկը :

Երեսփոխան Տեարք

Ես եւս այժմ պիտի խօսիմ մեր ազ-
գային ներքին վարչութեան արդի տը-
խուր վիճակի վրայօք , ախուր կըսեմ եւ
կը յաւելում կոչել զայն ամենատխուր .
վասն զի ես երկար ատեն ազգին մէջ
թափառիկ մի կեանք վարած լինելովս՝
զննած ու քննած եւ համոզուած իսկ եմ ,
թէ արդի մեր վարչական կազմակերպու-
թիւնն անբաւական է բոլորովին ազգին
պէտքերը դոհացնելու , ազգը յառաջա-
դէմ եւ փրկուէտ վիճակի մը հասցնելու :

Ազգի մը քաղաքականապէս յառա-
ջադիմութիւնն ու փրկութիւնն կախեալ
են իւր վարչական ներքին իշխանութեան
կազմակերպեալ եղանակէն . եւ այս կազ-
մակերպութիւնն այնպիսի իմն տարած-
եալ լինելու է , որ ամբողջ ազգն ի մի
նպատակ տանի , այն է ի վերաշինութիւն
Հայրենեաց , եթէ ունի իսկ եթէ չունի ,
պարտի քանի որ աշխարհի մէջ մի առան-
ձին ազգայնութիւն կը կազմէ , ստեղծել
զայն — Հայրենիքը . վասն զի առանց
Հայրենիքի մը գոյութեան , կարելի չէ ազ-
գի մը պահպանել իւր գոյութիւնը ընդ-
երկար :

Քսան տարուան սոյն Սահմանադրա-
կան շրջանի մէջ ի՞նչ ըրաւ գաղթական
կամ բնիկ Հայն իւր հայրենեաց , կամ
աւելի ճիշդն՝ դէթ ազգին Սահմանադ-
րական վարչութիւնն ի՞նչ ըրաւ , ինչո՞ւ
գէթ գաւառներն եւ վանքերն ու կեդ-
րոնն իրարու հետ յարաբերութեան մէջ
չդներ , եւ յանուն Սահմանադրական օրի-
նաց իրարու հետ չկապեր . ազգն ու հայ-
րենիք իրարու չժանթացներ , խրատ ու
օրինակ իրեն չառնէր նոյն իսկ Քրիստո-

սը , որ մեզ նման վշտահար եւ տառապ-
եալ եւ իր փրկութեան յոյսը միայն Մե-
սիայի մը անձին վրայ դնող ժողովրդեան
մը ըսաւ թէ « Արքայութիւնն Աստուծոյ
իներքս ի ձեզ է » : Այո՛ , այն փրկութիւ-
նըն , որուն ազգն այսօր կը տենչայ , որուն
վաղիւ եւ յաւիտեան պիտի տենչայ , ա-
ռաւել մեր մէջ փնտռուելու էր , որով հար-
կաւ այսօր այսքան անպատրաստ եւ ան-
կազմ լինելով մեր ներքին վիճակէն բոլորո-
վին յուսարեկ՝ պիտի չդնէինք բոլոր մեր
յոյսն օտարին վրայ , օտարին՝ որ որքան
վեհանձն ու առաքինի լինի , չօգնէր ու-
րիշին , մինչև արժանի չտեսնէ իւր օգ-
նութեան , կամ օգնելուն մէջ իւր ա-
ռանձին շահը չը տեսնէ , թող որ օտա-
րէն գալիք ու է շնորհ օտարին շա-
հուն ծառայելու միջոց մը եղած է շատ
անգամ :

Չեմ ուզեր երկար խօսիլ եւ նկարա-
գրել այն ամեն միջոցներն , որք ՚ի
գործ գրուեցան ի ճնշել եւ ի ջնջել մեր
հայրենեաց պահապաններն — այն է բնիկ-
ները — : Մարդ կը սոսկայ , երբ ընթեռ-
նու այն տեղեկագիրս , զոր մատուցի հա-
յաստանի Անդր. ընդհանուր հիւպատոս
Պ. Թրօթըրի , որոյ Ֆրանսերէնն ևս՝ արդէն
իսկ հրատարակեալ է . աւա՛ղ , երբ հայ-
րենիքն այս օրինակ կը տառապէր , մենք
գաղթական հայքս , ճիշդ այն ատեն , յա-
նուն Սահմանադրութեան , օրէնսդրական ,
ընտրական , թաղական , վարչական եւ
Պատրիարքական ևն. ևն. սին ու նանիր
վէճերով եւ կռիւներով կ'զբաղէինք :

Բայց այլ եւս , Երեսփոխան Տեարք ,
ժամանակ է , որ անհուն սիրով եւ անդու-
ջանիւք գործեմք , առաջի աչաց ունելով
հայրենիք մը , որ հոգեւարք է , Պատ-

ընտրել, երեսփոխան, եկեղեցական և աշխարհական ամեն կարգէ և աստիճանէ Հայեր պարտին գործել, վասն զի այժմ այնպիսի ժամանակի հասած ենք, յորում ազգը հաղար և բիւր խօսքի գէժ Մէկ ԳՈՐԾՔ Բաւական կը համարի:

Արդ նկարագրեմ ուրեմն մեր արդի ներքին վարչութեան կազմակերպութեան եղանակը, որ բաղկացեալ է կեդրոնական, գաւառական, թաղական և վանական, և ապա նոր կազմակերպութիւն մը ցոյց տամ Ձեզ, ըստ իմ կարծեայ թե՛ ըստ յարմար արդի մեր ազգային վիճակին:

Կեդրոնական իշխանութիւնը կ. Պօլսոյ Պատրիարքարանի շրջանակին մէջ է, բայց այս Պատրիարքարանը մինչև ցարդ օրէնքի մը տակ գրուելով չկրցաւ բարեկարգութեան մը տակ մտնելու, որպէս զի կարող լինէր օրինաւորապէս յարարութեան մտնելով թաղերու, գաւառներու և վանքերու պետերը վարէյօզուտ ազգին, և ոչ թէ թող տալ որ իւրաքանչիւր պետ ըստ իւր քմաց վարէ իւր պաշտօնը. . . թող որ թաղ կամ գաւառ և կամ վանք կայ, որ համարձակ ըմբոստ է կեդրոնական իշխանութեան գէժ, և իր ըմբոստութիւնը կարգարացնէ ալ նոյն իսկ կեդր. իշխանութեան այն մէկ քմահաճ և ապօրինի ընթացքը ցոյց տալով, որ ըրած է ուրիշ թաղի կամ գաւառի և կամ վանքի:

Սոյն կեդր. իշխանութիւնն իւր պատահական և խառնիճուած առօրին գործերէն զատ կարծես ուրիշ զբաղում մինչև ցարդ չէ ունեցած, մինչև իսկ օրինաւոր վիճակագրութեան մը ձեռնարկած չէ, որպէս զի իմանայ թէ այս ինչ տեղ

ինչ ունի, ո՞րքան ազգային կալուած, որք ինչ եղանակաւ կը մատակարարուին, կամ այսինչ տեղ Հայ մարդ կայ, եթէ կայ, բանի՞ տուն են, ինչո՞վ կ'զբաղին, գէթ գարոց կամ եկեղեցի ունին:

Սոյն կեդրոնական վարչութիւնը նաև մինչև ցարդ ազգային արոց հաւաքման գրութիւնը գործադրելով իր ելեմուտքն ևս բարւոքելու ձեռնարկած չէ, թող զայս, նոյն իսկ այն տուրքերն՝ որք ուղղակի թաղական կամ գաւառական անտուկներէն կառնուին հանելուի կամ հարութեան օրինօք, մինչ զի երբ վան 200000 էն աւելի ժողովրդովը հաղիւ 1000 զըշ. կը վճարէ, և Չմիւսին իր բարձր նշանակութեամբը 500 զըշ. եւ գուկիս ևս իր հաղիւ 20000 ժողովրդով 3500 զըշ. իսկ աղբատիկն Գղի 1500 զըշ. կը վճարէ:

Նոյն իսկ կեդրոնական իշխանութեան պաշտօնէից վիճակն անգամ ինկատ առնելով օրէնքի մը տակ գրուած չէ, Պաշտօնեայ մը ո՞րքան ասեն եթէ ազգին ծառայելու լինի հաւատարմապէս, հանգստեան թոյակի արժանի կը լինի այսինչ չափ ամսականաւ: Ո՞րքան պաշտօնեայ պէտք են գործածուիլ Պատրիարքարանի մէջ, և ինչ պարտաւորութիւններով և ո՞րքան ամսականաւ: Թող որ պաշտօնեայ կայ, որ այսօր կեդր. սնտուկէն առնելիք ունի, պաշտօնեայ ալ կայ, որ տալիք ունի. պաշտօնեայ կայ որ սահմանեալ ժամէն ուշ կուգայ և ճիշդ ժամուն կը մեկնի, պաշտօնեայ ալ կայ, որ թէ ուշ կուգայ և թէ կանուխ կը մեկնի. . .

Կեդր. վարչութեան և իր պաշտօնէից վրայ այսչափ խօսիլս անգամ աւելորդ

էր, արդէն ընդհ. ժողովս այս խնդիրն ուշադրութեան առած և նոր վարչական ծրագիր մ' ալ խմբադրել յանձնարարած էր երեսփոխանական ժողովոյս Ատենապետաց գիւանին, որք խմբագրելով մատուցին ալ, ասել է թէ կեդրոնական վարչութեան կազմակերպութեան խընդիրն այլ ևս վերջացեալ կը համարուի կը մնայ տեսնել գործադրութիւնը:

Մեր գաւառական վարչութիւնն ևս իւրաքանչիւր գաւառի Առաջնորդարանի շրջանակին մէջ կ'անդրադառնայ, որոյ գրական վիճակն ևս կեդրոնականէն յոյժ ամենալատթար է, ինչպէս կեդր. վարչութեան համար մարդերու պէտք կը լայ, զոր գտնելը այնքան դիւրին չէ. բայց Գաւառական վարչութեանց համար ոչ թէ մարդերու, այլ մինչև իսկ մէկ մարդու պէտք կայ, զոր գտնելն իսկ ոչ թէ դիւրին, այլ ամենադժուարին և երբեմն անհնարին իսկ, գէթ առայժմ արդէրբ գաւառներն մարդու պէտք ունին, կեդր. վարչութիւնն ըստ իւր սեպուհ պարտաւորութեան երբէք ինկատ առած չէ թէ ինչ կարելի միջոցով ազգին այն հազուադիւտ անձերը գործածելու է այն գաւառներուն, մանաւանդ հայրենի աշխարհին այն գաւառներուն մէջ, յորո նորա իրենց գործունէութեան արձակ և ընդարձակ ասպարէզ պիտի գտնեն:

Յաճախ կեդրոնական վարչութիւնն այս ինչ գործունէայ անձը կը թողու որ գործածուի այնպիսի գաւառի մէջ, որ նոյն անձին անձանօթ է բոլորովին, կամ գաւառին սահմանն այդ անձին գործունէութեան նայելով յոյժ անձուկ է. կամ թէ՛ որ ծիծաղելին է, կեդրոնական վարչութիւնն շատ անգամ այնպիսի ընտրել

եաց ցանկ մը կամ անձ մը ուղղակի կը խրկէ, որ նոյն Գաւառական վարչութեանէն ընտրեալը առաջնորդը կամ վարչութեանէն ուղղակի յղեալը տեղապահը ամենամեծ փորձանք կը լինի նոյն գաւառի ժողովրդեանը. մինչդեռ երկնային նախախնամութիւնը լինելու կոչումն ունէր և պաշտօնն ստանձնած էր:

Հաւատացէք, երեսփոխան տեարք, որ առաջնորդը գաւառին մանաւանդ Հայաստանի մէջ այն միակ պաշտօնական մարդն է, որ ժողովրդեան համար ԱՄԵՆ ԲԱՆ է. նա է որ եկեղեցիներն ու վանքերը շէն կը պահէ, գարոցներ կը հաստատէ և կը յառաջացնէ, ժողովրդեան կեանքն ու ինչք և պատիւ կը պաշտպանէ, նա է որ ազգին պատիւն օտարին առաջը կը բարձրացնէ, նա է որ գաղթական Հայուն սիրտն ու ոգին առ ինքն կը գրաւէ և իրմով առ նոյն հայրենի գաւառն, նա է որ սիրելի կանէ հայրենի հողը նոյն իսկ բնիկ Հայուն, նա է որ քահանայներ կը ձեռնադրէ և ծէսեր կը կարգէ, նա է որ շրջակայ առաջնորդարանաց և վանօրէից ուժ տալով ամբողջ երկիրն իր թեոց տակ առած՝ միութիւնն ու զօրութիւնը հաստատ և տեւական կը պահէ ժողովրդեան մէջ, նա է որ իր հայրական հովանաւորութիւնը կը տարածէ աղբատին հիւղէն մինչև հարուստ Հայուն տունը, նա է որ պէյերու և շէյխերու և փաշաներու համահաւասար պատուով կը գոչէ, բազաբականապէս ևս թէ ազգին և թէ տէրութեան օգտակար լինելով. վերջապէս նա է որ ընդհանրական կապ կը լինի իր յարարութեամբը ազգին ամենամեծ կեդրոնին— կ. Պօլսոյ Պատրիարքարանի հետ և

Պատրիարքարանով ընդհանրական կեդրոնին — Էջմիածնի հետ :

Երբ այս այսպէս է, ի՞նչ կը մնայ ընել երեսփոխան տեսարք, եթէ՛ ոչ մեր բոլոր ոյժն ու մարդերն գաւառներուն տալ : Բայց մեր ոյժն ու մարդերն ինչպէս տանք գաւառներուն, որոց վարչական կազմակերպութիւնն ամենափաստարէ, զորս ստանձնել մարդ ամօթ իսկ կը համարի, ահաւասիկ կան առաջնորդարաններ, որոց իրաւասութիւնն ամենաընդարձակ է, կայ ալ որ յոյժ անհուն է զոր օրինակ . Վանայ ամբողջ նահանգն առանձին մէկ առաջնորդութիւն է, իսկ Կարնոյ նահանգն իր մէջ ըստ իւրաքանչիւր գաւառի կամ գաւառակի ուրոյն, իրարմէ անկախ, փոքրիկ առաջնորդութիւններ ունի տասնի չափ, թող խորբերդի գաւառը, որոյ իւրաքանչիւր քաղաք կամ վանք առանձին առաջնորդութիւն են . բայց զարմանալին կայ, որ նահանգին Կեդր. առաջնորդարանն որքան իրաւասութիւն և ինչ եղանակաւ կազմակերպութիւն ունի, միւս փոքրերն ալ նոյնը ունին : Զոր օրինակ, Կարին ունի առաջնորդ, Երես. ժողով, Կրօն. և Քաղ. ժողովներ, Տնտեսական և Ելմտական, Ուսումնական և Վանական և այլն խորհուրդներ, միևնոյն ժողովներն ու խորհուրդներն ունի Կարինէն հազիւ 6 ժամ հեռի եզոյ Բասէն գաւառը, ուր քանի մը մարդ գտնելն անկարելի է :

Նոյնպէս գաւառի մը այս ինչ գիւղերն կամ գիւղը, որք մերձաւորութեամբ և այս ինչ գաւառի վերաբերելու աւելի յարմարութիւն ունին և քաղաքականպէս ալ արդէն կը շերտերին, ուրիշ հեռաւոր քաղաքի մը կամ վանքի թեմ են,

այնպէս որ մէկ գաւառի մէջ երկու առաջնորդութիւն կը տեսնուին իրարմէ անկախ, և հէզ գեղջու կը երբ քաղաքական գործ մը ունենայ, և ստիպուի քաղաքական իրաւասութիւն ունեցող առաջնորդին գիմելու, կը վաճառուի սոյ՛ խօսքը լակով . « հացդ ու մեղրդ ով որ կուտէ, անոր գնա » : Աւելի ծիծաղելին կայ, սոյն խօսքին նմանօրինակը այդ առաջնորդը քաղաքականպէս իր իրաւասութեան ներքեւ եզոյ և ի հարկին իրեն գիմող առաջնորդին ալ կըսէ, որով և նա կըստիպուի ուղղակի Պատրիարքարանի գիմելու, որ զայն վերստին կը յանձնարարէ նոյն նահանգի Կեդր. քաղաքի առաջնորդին : Աստուած իմ, այս ինչ որորտապտոյտ յարաբերութիւն և գործոց կարգադրութիւնը Արդ. երբ գաւառին Կեդր. քաղաքի առաջնորդն անկարող և անհոգ մէկն ըլլայ, ի՞նչ օգուտ ունի չըջակայ գաւառակի մը առաջնորդին գործունէութիւնը, երբ նա ի հարկին իր գաւառական կեդրոնին գիմէ և ոյժ չը գտնէ . զոր օրինակ Սղերդի առաջնորդը քաղաքականպէս ի՞նչպէս օգտակար կընայ լինիլ, երբ Բաղէջինը ազգասէր և գործունեայ ու խելացի մէկը չէ :

Գաւառական վարչութեանց այս անկարգ գրութեանէն զատ կայ և տեղութեան անկարգութիւնն ալ, վասն զի առաջնորդի մը պաշտօնավարութեանը տեւողութեան չափ բնաւ որոշուած չէ, մինչ զի թէեւ առաջնորդին պաշտօնավարութիւնը ցկեանս սահմանաւ է, բայց գուն ուրեք եղած է առաջնորդ մը, որ այդ բաղդին հասած լինի, ասել է թէ՛ այդ գրութիւնը գործնականպէս անտանելի է, անյարմար ազգի արդի վիճա-

կին : Գաւառական վարչութեանց այս անկարգ եղանակի երեսէն է որ շատ մեծ ու կարեւոր գաւառներ շատ ատենէ ի վեր և ցայսօր իսկ անխնամ մնացած են . զոր օրինակ, Վան, Բաղէջ, Սղերդ, Տիգրանակերտ, Խարբերդ ևն. պաշտօնական մարդ-առաջնորդ — քսան տարիէ ի վեր գրեթէ ունեցած չեն : Հազիւ քիչ անգամ ունեցած են տեղապահ առաջնորդներ, որք՛ ինչպէս յայտ է, չեն կրնար ազդեցիկ և օգտակար լինիլ, վասն զի տեղական կառավարութեան և ժողովրդեան առջև անկարելի է որ սոքա ունենան այն մեծ նշանակութիւնն, որքան կ'ունենան Ֆէրմանով հաստատուել առաջնորդները . թող որ կան իսկ գաւառներ, զորս չեմ ուզեր այժմ յանուանէ յիշատակել, որոց չորպանիներն երբէք չեն ուզեր որ երկրին մէջ առաջնորդ գտնուի, և արդէք լինի իրենց շահերուն : Սոքա են, որ երկիրը տեղապահով կառավարել կուզեն, կամ եթէ կարելի է, առանց պաշտօնական մարդոյ եթէ Պատրիարքարանէն ստիպուին, հազիւ կը զիջանին Երեսփոխանական ժողով գումարելով տեսակ տեսակ յոռի հնարներով ընտրել կամ անպիտան և ապուշ մէկը, կամ այնպիսի մէկը, որոյ չընդունիլը կամ կեդրոնէն չընդունուիլը գիտեն. այսպէս ընտրութիւնը յետաձգելով ժամանակ կը վաստկին և կը պահպանեն իրենց շահերն անիշխանութեան մէջ :

Գաւառական սոյն կերպ վարչութեանէն զատ վանական վարչութիւն մ'ալ կայ, որ տեղ տեղ թատերական երևութիւն հիանալի տեսարան կընծայէ հետաքրքիր անձերու . տեղ կայ որ վանահայրը վարդապետ մ' է, որ անկախ առաջնորդ ալ է քանի մը գիւղերու, որ

կամ վաւերացեալ է Աղդ, Պատրիարքարանէն, և կամ տեղական առաջնորդարանէն, տեղ ալ կայ որ վաւերացեալ չէ, այլ կամ ժառանգական իրաւամբ վանահայր է և կամ բռնական միջոցներով վանահայր եղած է, տեղ ալ կայ որ քահանայ մ' է, կամ քանի մը քահանայներ մէկտեղ ի միասին վանահայր են, և վանական հասոյթներուն տէր են . տեղ ալ կայ որ աշխարհական հայ մ' է, կամ քանի մը հայեր վանահայր են . տեղ ալ կայ որ վանահայրը կին մ' է կամ Քիւրտ մը սոքա ամենեքին և ոչ իսկ երբէք համարատու են և ոչ մէկ դերագոյն իշխանութեան մը : Թող որ վանք ալ կայ, որ վանահայր վարդապետ ունենալով հանդերձ, բնաւ Պատրիարքարանի ծանօթացած չէ :

Տեղ կայ որ վանուց հողերը խաբարեղած են վանահայր վարդապետի վրայ որոյ մահէն յետոյ հաշիւը ինչալու վրտանդին հասած և ուր ուրեմն ազգին մեծ տաղնապ տուած են . տեղ ալ կայ որ բնաւ թափու եղած չեն, և կորսուելու վտանգին ենթակայ են, հողեր ալ կան, որք չըջակայ գիւղերու ուէսներ կամ քահանայներ իրենց վրայ թափու ըրած և սեփականած են, մինչ զի երբեմն ծախած ալ են Քիւրտերու, թող որ Քիւրտերն ալ տեղ տեղ վանական հողեր գրաւած են մերայնոց անհոգութեանէն :

Առաջնորդարանաց և վանօրէից սոյն տխուր գրութեան կը յաջորդէ և թաղականը կամ գիւղականը : Թաղ կամ գիւղ կայ, որ ժողովուրդն ինք կ'ընտրէ ըստ օրինի իւր գիւղի պաշտօնական ժողովրդայ ալ, որ տեղական առաջնորդարանէն կ'ընտրուի այդ ժողովը, առանց պա-

տառխանատու լինելու զինքն ընտրողին :
 Իսկ ՚ի հեռավոր դաւառս առաջնորդն է,
 որ գիւղին վրայ մէկը կը գնէ, որ կը ըս-
 ուի ուէս, որոյ բաձարցակ իշխանութեան
 տակն է ամբողջ գիւղը : Սա արքունական
 տուրքը ըստ հաճոյս կը բաշխէ, եւ իւր
 անուանած քէհեային կը յանձնէ զայն
 հաւաքելը . երբ ոստիկան կամ հիւր գայ
 ի գիւղն, ինք կը հիւրընկալէ, եթէ ակ-
 նածութիւն մ'ունի, եթէ չունի՝ իր չ'սի-
 բած մարդուն կը յղէ իրր ծանրութիւն,
 շատ անգ այս ուէսը չ'տարբերիր քիւրտ
 բանաւոր պէյէ մը, և միւսիւրներու ու
 զապթիէներու հետ ինչ դեր կը խաղայ,
 կը սոսկամ բերան առնուի, և այս ուէս-
 ութիւնը՝ մեր առաջնորդարանէն յաճախ
 աճուրդի կը հանուի, բաւական է որ ա-
 ռաջնորդը մէկ դանգատագիր ընդունի
 ժողովրդէն կամ ազահութեան ակտը
 դրդէ . յաջորդող ուէսը նոյնը կը գործէ,
 ինչ որ ըրած էք իւր նախորդը, այնպէս որ
 շատ անգամ սոյն յաճախակի փոփոխու-
 թեան մէջ ժողովրդեան վճարած արքու-
 նի տուրքը այս ու այն ուէսներու քա-
 կին մէջ կը խաղայ, կուրը կը ծագի, կը
 մեծնայ, երկու կուսակցութիւն կը կազ-
 մուի, մէկը յառաջնորդարան՝ կը վազէ,
 միւսը կառավարութեան կը գիմէ, առաջ-
 նորդարան ու կառաւարութիւն կը զար-
 նուին, հուսկ ուրեմն կը հաշտուին : Բայց
 տոյժն ու վնաս կը մնայ գիւղին վրայ . . .
 Սոյն ուէսին հետ ուրիշ մէկն ալ կայ,
 որ ոչ նուազ դեր կը խաղայ . առաջ երես-
 փոխան կըսուի, և կընտրուի վանահայ-
 րէն, եթէ գիւղը վանքին իրաւասութեան
 տակ է, եթէ չ'է, առաջնորդարանէն
 կընտրուի . իւր պաշտօնն է պահպանել
 առաջնորդարանին կամ վանքին հասոյթ-

ները . եթէ գիւղին մէջ մէկը մեռնի, առ-
 նորա ընչից համեմատ յանուն վանքին
 կամ առաջնորդարանին կողոպուտ կը պա-
 հանջէ, և աւելին կառնու, եթէ մեռ-
 եայն իր չ'սիրած մէկ գերդաստանէն է .
 նոյնպէս եթէ մէկը նշանուի, պսակդը-
 բամ կառնու . եթէ աղջիկը գեղեցիկ է
 և պաշտօնավ ծախուած է, ինքն ալ ըստ
 այնմ չափազանց զին կը պահանջէ . եթէ
 գեղեցիկ աղջիկը վեր պաշտօնավ ծախ-
 ուած չ'է, հրամանին տալու ատեն դրժ-
 ուարութիւններ կը հանէ, աղջկան ու-
 թիշ հետամուտները կը դրդուէ, որք աղ-
 ջրկան զինը կը բարձրացնեն . գործն այն
 աստիճան յառաջ կերթայ, որ նոյն իսկ
 երեսփոխանն աղջիկը դադար առեանգել
 կը տայ և կը հրամայէ գաղտ քահանայի
 մը, որ պսակէ, կանխաւ առեանգչէն
 առնուի իր չափազանց պսակդբամը . այս
 երեսփոխանութիւնն ալ մշտնջենաւոր չ'է,
 առաջնորդը ուզած ատեն աճուրդի կը
 հանէ :
 Ահա այս են, երեսփոխան տեսարք,
 առաջնորդարանաց, վանքից և գիւղո-
 քից վարչական եղանակներն, որք մեծ
 բարեկարգութեան պէտք ունին, մանա-
 ւանդ որ այժմ հիւսադասներ ևս Հայաս-
 տանի մէջ բնակելով յարաբերական նոր
 դուռ մ'ալ բացուած է առաջնորդաց
 առջև . որքան զգուշութիւն պէտք է նո-
 ցա հետ վարուելու մասին . ուստի կեդ-
 րոնական վարչութիւնն, ոչ թէ միայն կա-
 րող մարդերու յանձնելու է կարևոր տե-
 դերը, այլ և միշտ նոցա հետ յարաբե-
 րութիւն ունենալով հրահանգելու է ըզ
 նոսա, և դաւառին կեդրոնի առաջնորդն
 ալ նոյնպէս յարաբերութեան մէջ գնելու
 է իր շրջակայ փոքր առաջնորդաց հետ,

ինչպէս որ սոյն եղանակը թէ կայսերա-
 կան կառավարութիւնը և թէ Անգլիոյ
 հիւսադասարաններն ի գործ դրած են
 նոյն իսկ մեր հայրենի երկրին մէջ :
 Մարդ, դրամ և օրէնք պէտք են մեր
 փրկութեանը համար . երեքէն ալ թէև
 բաւականապէս զուրկ եմք, սակայն կա-
 րող եմք քիչ ու շատ ունենալ : Մարդը՝
 երբ ունիմք, գործածելուն մէջ շարաշար
 կը վարուիմք, մինչև իսկ այդ մարդերուն
 ապագայն ալ բարւոքած չեմք . մինչ զի
 շատեր՝ որք յատկապէս ի Կ. Պոլիս կը կոչ-
 ուին, ոչ Պատրիարքարան կը հիւրընկալէ
 ոչ եկեղեցւոյ թագ . խորհրդարանները,
 այլ կը մնան փողոցներու և պանդոկնե-
 րու մէջ, առանց ապահովութեան ապ-
 րուստի և պատուոյ անկարելի է որ մարդ
 հասնի, անցան այն երջանիկ ժամանակ-
 ներն, երբ մարդիկ յանուն արքայութեան
 երկնից կը գործէին միայն : նոյնպէս դը-
 բամը երբ ունիմք, գործածելուն մէջ շա-
 րաշար կը վարուիմք չեղելով իւր նպատա-
 կէն . առ այս վկայութիւններ մէջ բերե-
 լու հարկ չկայ, եթէ դրամ չունիմք, երբ
 օրինաւոր եղանակաւ ազգին գիմեր եւ
 պէտք եղած փոտահութիւնը տալէ յետոյ
 չեմք հաւաքած . վկայ է Սովետոյ խնամող
 կեդր. Յանձնաժողովը, որ 25000 լիբա
 կըցաւ հաւաքել, մինչ ի սկզբան հազիւ
 5000 լիբայի հաւաքման հանգանակու-
 թիւն կար : Օրէնք ունիմք, և եթէ չու-
 նիմք կրնանք գնել, բայց եղեալ օրինաց
 ճշդիւ գործադրութեան երբ նախանձա-
 յող եղած եմք . . . վկայ է Երուսաղէմը
 որ 30000 ոսկի պարտքին տակ կը հեծէ
 այսօր, Երուսաղէմ, որ Ազգ. երեսփոխա-
 նական ժողովէս օրէնք ընդունեց, որոյ
 մէկ տրամադրութիւնն էր 25000 զրշ. էն
 աւելի պարտք չընել, և տարուէ տարի

համարատու լինիլ Ազգ. կեդր. վարչու-
 թեան . բայց ոչ համարատու եղաւ մինչև
 հերու . ոչ ալ պարտք ի վերայ պարտուց
 գիղելէ զգուշացաւ, և կեդր. վարչու-
 թիւնն իր իշխանութիւնն չգործադրեց .
 բայց եթէ նոյն ապօրինաւոր կերպով գիղ-
 ուած պարտքը վճարելու համար իր իշ-
 խանութիւնը գործադրել, զարմանալի
 վարչական երևոյթ :
 Չեմ ուզեր, երեսփոխան տեսարք,
 եկեղեցական, առաջնորդական, վանական,
 կրթական և այլն խնդրոց վրայօք խօսիլ այլ
 ևս երկարօրէն, պէտքեր շատ կան ան-
 հուն ջանից կարօտ, բայց նկատելով ժո-
 ղովիս ոմանց երեսփոխանաց անձնական
 հանգամանքը, որք չեն հաճիր շարաթը
 կամ երկու շարաթը անգամ մը իրենց
 երեսփոխանական պաշտօնավարութեան
 յատկացեալ ժամերուն համեմատ պար-
 տաւորութիւն կատարելու, որով ժողովս
 ալ ըստ օրինադրեալ ժամուն, այսինքն՝
 ժամը ճիշդ վեցին բացուելով ժամանակ
 լինի ազգին ներքին վիճակին վրայօք եր-
 կար խորհելու և խօսելու, այսչափս բաւ
 համարեցի, զորս ամփոփելով կառաջար-
 կեմ իբրև Ազգ. երեսփոխան :
 Ա. Հայկական դաւառներու գլխա-
 ւոր քաղաքաց առաջնորդարաններու իրա-
 ւասութիւնը բարոյապէս և եթ ընդարձա-
 կել և տարածել ամբողջ նահանգին առաջ-
 նորդարանաց վրայ .
 Բ. Տարուէ տարի այդ կեդրոնական
 առաջնորդարանք համարատու որոշել
 Պատրիարքարանի, և համարառու կար-
 գել բոլոր շրջակայ առաջնորդարանաց,
 առանց նոցաներքին գործոց միջամտելու :
 կեդր. առաջնորդն ատեն ատեն անձամբ
 յայց ելնելու է շրջակայ առաջնորդարա-
 նաց և ժողովրդոց :

Գ. Ազգ. կեդր. վարչութեան կողմէն ի կեդրոնական քաղաքն յղելարժանաւոր առաջնորդներ, 7 տարուան համար. առանց նկատելու թէ ընտրեալն ուրիշ ու է քաղաքաց, մինչ իսկ հայրենի երկրին փոքր դաւառի քաղաքաց մէջ առաջնորդական պաշտօն ունի, եթէ չերթայ ընտրեալը, դատապարտել երեւութանական ժողովոյս քուէով իբր առ հայրենիս ունեցած պարտուցն ԱՆՀԱՒԱՏԱՐԻՄ:

Գ. Բոլոր առաջնորդք և վանահարք երբ ստիպուին ՚ի Կ. Պօլիս գալ, իջեւան տայ նոցա Երուսաղիմատունը, այդ յարկին յատկացնելով նորէն այն 3000 դրուշը, որ յառաջուց կը վճարուէր Պատրիարքարանի խոհանոցէն:

Ե. Խրաքանչիւր նահանգի բոլոր վանքերը յանձնուին ընդ տեսչութեամբ նահանգի մեծ վանքի վանահօր, որոյ պաշտօնը լինի տարւոյն բոլոր եղանակաց մէջ շրջիլ անձամբ ՚ի վանօրէս. հսկել, շէն և բարեկարգ պահել, համար առնուլ, և ՚ի լրանալ տարւոյն բոլոր վանօրէից համարը տալ Ազգային Պատրիարքարանի: Սոյն մեծ վանահայրն ևս կեդրոնական վարչութեան կողմէն ուղղակի յղելու է 8 տարուան համար:

Զ. Կազմել այժմէն մէկ յանձնախումբ, որ վարչութեան կողմէն սոյն առաջարկներս գործադրուած առնն, միւս կողմէն դաւառաց ներքին վիճակը ուսումնասիրելով ծրագրեր պատրաստէ, կեդրոնականը, դաւառականը, վանականը, թագականը, զատ զատ ըստ տեղեաց. վասն զի կարելի է որ այս ինչ տեղ գործադրութեան յարմար մէկ օրէնք՝ անգործադրելի լինի այլուր. ուստի սոյն ծրագիր նախ յղելու է առ դաւառական կամ վանական վարչութիւնս, որոց անկէ, ապա

նոցա գիտողութիւններն ևս առնել յետոյ ներկայել երեւութի ժողովոյս ի վաւրացումն:

Է. Օրինաց գործադրութիւնը ապահովել, պատիժ սահմանելով օրինազանցաց, և պատիւ օրինասիրաց: Ամենայն պաշտօնեայք Պատրիարքէն սկսեալ մինչև գիւղական կղերը կամ տիրացուն, օրինաց անաչառ խստութեանը տակ դնել, վասն զի առանց օրինաց գործադրութեան ապահովութեան անկարելի է, որ ազգ մը յառաջանայ և իր փափաքած երջանկութեանը հասնի: Մեր ազգին մէջ ամենէն եպերելի բանը, որ գրեթէ անբող սովորութիւն դարձած է, օրէնքը արհամարել և իշխանութեան անսաստել, առ այս պէտք է որ ուղղուին մեր բոլոր ուշադրութիւն, կամքն ու զօրութիւն, ապա թէ ոչ այլ ևս հասեալ է ժամը, ժամն ահաւոր, յորում ազգեր կը կործանին, և ազգեր կը կանգնին, և ահաւոր պատասխանատուութիւնը պիտի ծանրանայ նոցա վրայ, որ ազգին վարչական ղեկն ՚ի ձեռին առած՝ յանուն օրինաց պաշտօն ըստանձնած են, որք պիտի լսեն օրմը այս սոսկալի խօսքը թէ « վայ ձեզ, որ ժամանակէս օգուտ քաղել չ'գիտցաք » և աշխարհ պիտի հաւտայ թէ այս ազգին մէջ բարոյական մտրդիկ չ'կան:

Ազգ. Երեւութիւն
Վահան վարդապետ

1880 Օգոստ. 15

4.

Ղալաթիոյ բաղեցւոց հանրագիրը

ԱՏԵՆԱԳԵՏ ԷՖ. — Ասկէ առաջ Ղալաթիոյ թաղեցւոց կողմէ մատուցեալ հանրագիր մը ներկայացաւ, որով բողոք կը բառնային Ղալաթիոյ Կեդրոնական վարժարանի շէնքին եւ անոր յատկացեալ կալուածոց կեդրոնական սեպնականութիւն ըլլալու մասին Ազգային ժողովոյ տրուած որոշման դեմ, եւ կց խնդրէին որ իբր բաղային իրաւունք վերադարձուին անոց բուն բաղային մատակարարութեան: Սոյն հանրագրին խմաստն հաղորդուեցաւ արդէն ժողովին ներկայ տարւոյ բացման Բ. նիստին մէջ, սակայն նախաքննիչ Գիւանաց ընտրութիւնն զեռ կատարուած չլինելուն չկրցաւ նոյն հանրագիրը յղուիլ, որու որ անկէ ևս նոյն օրէն ի վեր կը մնայ մեր սեղանին վրայ: Արդ ըստ որում կատարուած է այլեւս նախաքննիչ Գիւանաց ընտրութիւնն, եթէ կը հանկը, կը յղենք նոյն հանրագիրն Յարաբերութեան գիւանին:

ԶԱՅՆԵՐ. — Շատ աղէկ:

Հետեւապէս ժողովը Ղալաթիոյ թաղեցւոց հանրագիրն Յարաբերութեան գիւանին կ'ընդհատէ ի նախաքննութիւն:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ԱՏԵՆԱԳԵՏ ԷՖ. — Ատենական գործողութիւնը աւարտեցան ևս ահա հասանք Օրակարգին: Ժողովին աշխատութեան առաջին խընդիրն է, ըստ օրակարգի, հրատարում Մայր

ղիւանի անդամոց եւ ընտրութիւնն: Աւստի այդ խնդիրը ձեռք պիտի առնուիք այժմ:

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Իօսք տի օրակարգին նկատմամբ գիտողութիւն մ'ընելու համար: Կը յիշէք որ անցեալ նստին վերջնատեանը փակուելու պահուն՝ երբ յաջորդ նիստին գումարման օրը կը սահմանուէր, գիտել տուի ձեզ որ թերեւս չկարենամ տակաւին այնքան ատեն Պօլիս մնալ եւ Երուսաղիմայ խնդրոյն համար, որ օրակարգն անցնել որոշուած էր, հարկ եղած բացատրութիւնները ձեզ հաղորդել: Այս պատճառաւ նիստն ութ օրէն գումարել պատշաճ զատեցիք. ուստի ընտան էր որ Երուսաղիմայ խնդիրն օրակարգին մէջ առաջնութիւն ստանար, քանի որ ժողովն իւր նիստը կը փութացնէր նոյն խնդրոյն համար: Սակայն չգիտեմ ինչպէս եղեր է որ օրակարգին մէջ Մայր գիւանի անդամոց հրաժեշտի եւ ընտրութեան խնդիրն նախադասուեր ևս միւսն ետ մնացեր է: Սրդ կատաղակեմ Երուսաղիմայ խնդրոյն առաջնութիւն ընծայել, վասն զի իմ ներկայութիւնըս, որ բոլորովին անօգուտ է Մայր գիւանի ընտրութեան խնդրոյն, թերեւս օգտակար լինի Երուսաղիմայ խնդրոյն համար, եւ երբ ժողովն զայն ըստ օրակարգին յետադասէ, թերեւս ընաւ այսօր ժամանակ չը գտնէ անով զբաղելու, և ևս ալ չկարենամ այլ եւս ուրիշ նիստի մը ներկայ գտնուելու:

ԱՏԵՆԱԳԵՏ ԷՖ. — Կը յիշէք որ Երուսաղիմայ խնդիրը զեռ չէր եկած ժողովին, երբ Մայր գիւանի անդամոց հրաժեշտի եւ ընտրութեան խնդիրը կար, եւ օրակարգին մէջ առաջին տեղը զբաւած էր: Այնուհետեւ Երուսաղիմայ խնդիրն օրակարգն անցնել որոշուեցաւ. և ըստ որում բացորոշ հրահանգ մը չուենէինք ժողովին կողմէ զայն նախադասելու համար, ուստի առաջին խնդիրը պահելով իւր տեղ, երկրորդ տեղը տուինք Երուսաղիմայ խնդրոյն: Ահա այս է իրողութիւնն:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ես կատաղար

կեմ մէկ կողմէ՛ Մայր զիւանի անդամոց ընտրութիւնը կատարել եւ միւս կողմէ՛ Կանոնադրին վրայ վիճարանութիւնն սկսել, որով երկու գործ միանգամայն կատարած կը լինինք :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես կընդունիմ փաշային առաջարկն Երուսաղիմայ խնդրոյն առաջնութիւն տալու մասին, այն պայմանաւ սակայն որ յառաջիկայ նիստին առաջին խընդիր ըլլայ Մայր զիւանի անդամոց ընտրութեան խնդիրն :

ԱՏԵՆԱԳԵՏ ԷՖ. — Օրակարգին նկատմամբ եղած զիտողութեանց մէջ թէ՛ Ստեփան փաշան եւ թէ՛ Ատենադպիր էֆէնտին իրենց իրաւունքներն ունին : Երուսաղիմայ խնդիրն ըստուգիւ պէտք է որ օրակարգին մէջ առաջնութիւն զանէ՛ այն պատճառներու առջեւ, զորս Ստեփան փաշան յիշեց, սակայն Գիւանն այս մասին փոշովին կողմէ՛ հրահանգ մը չստանալուն՝ օրակարգին խնդրոց մէջ դասակարգութեան փոփոխում մը չէ ուղեր ընել, եւ անցուցեր է՛ Երուսաղիմայ խնդիրն իւր կարգին : Այժմ ժողովին կը մնայ այս կէտն որոշել, եւ խնդրոց առաջնութեան կարգն յեղաշրջել, ուստի իւր քուէն կը խնդրեմ այս մասին :

Հետեւագլէս Ատենապետ էֆէնտին թըւէի կը զնէ խնդիրն եւ ժողովը միաձայն ըստ առաջարկի Ստեփան փաշայի, ԿՈՐՈՇԷ՛ առաջնութիւն ընծայել Երուսաղիմայ խնդրոյն եւ ձեռք կառնու զայն :



Վաւերացումն Կանոնագրի Ս. Երուսաղիմայ վանուց :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — (Ելնելով ի բեմ) Զեր օրակարգն Երուսաղիմայ կանոնագրին վաւերումը կը պահանջէ, այս գործը՝ կատարելու համար հարկ էր յողուած առ յողուած

զայն ընթեանուլ, բայց որովհետեւ մեր ժամանակը կարճ էր, եւ թերեւս չը բաւեր խնդրոյն լուծման հասնելու, Կանոնագրին ցրուել տուինք կանխաւ եւ սովորականէն շատ աւելի կանուխ, որպէս զի յատենի աստ կըրկին կարգալու պէտք չունենաք եւ կարենաք զայն ուսումնասիրել, քննել եւ կարծիք կազմել : Արդ՝ եթէ կը բարեհաճիք՝ առանց Կանոնագրին կրկին կարգալու, կը կարգամ ձեզ միայն այն բացատրութեան տետրը, որ անոր հիմունքն ու ոգին կը բացատրէ եւ զոր Կանոնագրին հետ յուղարկած եմ :

Այս բացատրութեան տետրի ընթերցումէն յետոյ՝ եթէ զիտողութիւն մ'ունիք կընէք Կանոնագրին վրայ, իսկ եթէ չէք հաւանիր այս ձեւին, այն ատեն Կանոնագրին յողուած առ յողուած կը կարգացուի եւ պէտք եղած բացատրութիւնները կուտամ Ձեզ :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Երուսաղիմայ վանուց համար երկու Կանոնագիր ունինք ի ձեռին, մին՝ 63 թուականին հաստատուած եւ միւսն նոր՝ 80ին կուգայ մեզ վաւերանալու համար : Առաջնոյն մէջ Պատրիարքն ամենայն ինչ էր, իսկ երկրորդին մէջ Միաբանութիւնն, ի հարկէ՛ այս մեծ տարբերութիւնն հիման մը վրայ է, եւ ի՞նչ է այդ հիմն, հարկ է նախ զայն ճանչնալ, եւ ծրագրին ընդհանուր ոգին ըմբռնելով անոր վրայ վիճարանիլ եւ որոշել : Աստի լաւագոյն կը համարիմ որ Ստեփան փաշան հաճի իւր բացատրութեանց տետրին այն մասերն, որ Կանոնագրին հիման կը վերաբերին, մեզ կարգալ եւ լուսաւորել, որպէս զի ըստ այնմ խօսինք :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Ա. ԷՖ. — Ես ալ ճիշդ միեւնոյն զիտողութիւնները պիտի ընէի : Ասկէ՛ առաջ Երուսաղիմայ վանուց համար Կանոնագիր մը հաստատուած եւ գործադրութեան զրուած էր, այսօր ուրիշ մը մեզ կը բերին վաւերացնելու համար : Ժողովը պէտք է զիտայ թէ՛ առաջին Կանոնագրին գործադրութիւնն ոչ եւ կամ ի՞նչ արգելքներու հանդիպեր է անոր գործադրութիւնը եւ կամ ի՞նչ

թերութիւն տեսնուեր է, որ նոր մը չլինելու հարկ ծաղեր է : Ձեմ կարծեր որ ժողովն առանց այս տեղեկութիւններն ունենալու կարենայ նոր Կանոնագրին վրայ վիճարանիլ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես չեմ ուղեր նախորդ Կանոնագրին նկատմամբ վիճարանութեան մտնել, այլ նորին վրայ կամփոփեմ ուշադրութիւնս : Բայց այս նորն ինչո՞ւ եկած է հոս, Երբազան Պատրիարք շօր մէկ նամակը կարգացուեցաւ նախորդ նստին մէջ, որմէ՛ իմացանք որ այդ Կանոնագիրը վաւերացուեր է : Եթէ վաւերացեալ է Երբազան Պատրիարքին ստորագրութեան ներքեւ, ինչո՞ւ կը ներկայանայ ժողովին, եւ այս պարագային մէջ ի՞նչ ունինք մենք ընելիք : Իսկ եթէ ի վաւերացումն կը ներկայանայ, այդ ուրիշ խնդիր է, եւ այն ատեն կրնանք Կանոնագիրն ի քննին առնուլ, սակայն այս կէտը նախ պարզել պէտք է :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Երուսաղիմայ Կանոնագրին իբր վաւերացեալ՝ անցեալ նիստին մէջ ներկայացուեր է Երբազան Պատրիարք շօր մէկ նամակաւն, եւ ես թէեւ նոյն պահուն ներկայ չէի, եւ չզիտեմ ինչ որ խօսուեր է այս մասին, սակայն լսեցի որ ժողովն զայն իւր կողմէ՛ քննել եւ վաւերել պատշաճ դատեր է, եւ ի վերջէ՛ խնդիրն օրակարգին մէջ անցած տեսայ սա բաւերով «վաւերացում կանոնագրի Ս. Երուսաղիմայ վանուց» : Այս պարագան բաւական է հաստատելու թէ՛ արդէն կատարուած վաւերացումն իւր նշանակութիւնը կորուսած է :

ԱՏԵՆԱԳԵՏ ԷՖ. — Ճիշդ է Տ. Մատթէոս Եպիսկոպոսի տուած տեղեկութիւնն խնդրոյն այդ կէտն անցեալ նիստին մէջ յուղուեցաւ եւ պարզուեցաւ արդէն : Ժողովը կանոնագիրը պիտի քննէ եւ վաւերէ, եւ այս տրամադրութեամբ ընդունած է զայն իւր օրակարգին մէջ :

ՄԵԼԻՔԵԱՆ Գ. ԷՖ. — Երկու եղանակ ցոյց

կուտայ Ստեփան փաշան Կանոնագրին նկատման ձեւին նկատմամբ, կամ յողուած առ յողուած կանոնագրին կարգալ եւ իրմէ՛ պէտք եղած բացատրութիւնները լսել, եւ կամ վասն զի արդէն ամենքը կարգացած են զայն, իւր բացատրութեան տետրին ընթերցումն լսել, որ Կանոնագրին ոգին ու հիմունքը կը լուսարանէ : Մատթէոս Սրբազան այս երկրորդ ձեւն կընդունի եւ ես ալ կը համաձայնիմ իրեն :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Ես առաջարկիս վրայ չեմ պնդեր, եւ եթէ ժողովը յարմար դատի յողուած առ յողուած կարգալ, կը համակերպիմ, վասն զի արդէն երկու պարագայից մէջ ալ փաշան պէտք եղած բացատրութիւնները պիտի տայ :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — (Միշտ բեմին վրայ) Նախ ժողովին ներողամտութիւնը կը խնդրեմ որ չպիտի կրնամ խօսիլ յոսանկայս, զի տկար եմ անձամբ :

Կանոնին քննութեանն ինչ եղանակաւ եւ ինչ կերպով ալ մասնակցիք, միշտ հոն պիտի յանդի գործն որ ամեն բացատրութիւն ստանաք, ձեր զիտողութիւններն ընէք եւ յետոյ վաւերէք կանոնագրին : Խնդիրն ինքնին փափուկ է, փափուկ ճամբէ՛ մը եկած է, եւ փափուկ կերպարանքով մը կը ներկայանայ, զուք ալ զժուարութեանց մէջ կը զտնուիք եւ զձեզ անկէ՛ ազատելու համար ամեն բան պիտի բացատրեմ, եւ պիտի ըսեմ թէ՛ ինչու եկաւ այս կանոնագրին ձեզի, սակայն քիչ մը համբերատար պէտք է լինիք եւ թոյլ տաք որ խօսիմ : Եթէ հարկ լինի, ամեն մանրամասնութեանց կը մտնեմ, կը կրկնեմ որ համբերութիւնը երկու ձեռքով պէտք է բռնենք այս պարագային մէջ :

ԷՔՍԷՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — Ես խնդրոյն հիման զէ՛մ պիտի խօսիմ : Խնդիր մ'եկեր մտեր է ժողովին մէջ, ոտքը կայ, գլուխը չկայ : Գիտենք որ Երուսաղիմայ վանք մ'ունինք, գիտենք որ երեսուն հազար սկի պարտք են ըրեր, բայց ի՞նչ եղաւ այս պարտքը, ի՞նչ պատիժ ա-

ոքն այդ պարտքն ընդունեն, միտարանութիւն կա՞յ թէ ոչ, ո՞ւր է հաշիւը, բան մը չգիտենք: Այս ամեն պարտակաները մինչև որ չը պարզուին, մինչև երուսաղիտայ վիճակը չը պարզուի, ոչ կրնանք կանոնադիրը վաւերել, եւ ոչ ուրիշ որ եւ է գործադրութիւն մ'ընել: Ահա իմ կարծիքս:

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՅ. — Կուզէի գիտնայ թէ երբ կանոնադիրը վիճարանութեան ենթարկուի, եւ ժողովն անոր այս կամ այն կէտը բարեխօսել հարկ անեն: Այլապէս կրնա՞յ ըստ այնմ զայն սրբազրել: Աւրիշ անգամ պատահած է որ ժողովին միայն ի տեղեկութիւն հաղորդուած են այս տեսակ գործեր, այս ալ այն կարգէն է արդեօք:

ՊԱԼԵՕԶԵԱՆ Է. ԷՅ. — Կանոնադիրն քննութեան ձեւին վրայ Ստեփան վաշայի եւ Մատթէոս Սրբազանի ըրած առաջարկներն առաջին հայեցումով նոյն կերեւին. սակայն ես անոնց միջեւ բաւական մեծ տարբերութիւն մը կը նշմարեմ: Մատթէոս սրբազան կուզէ նախ կանոնադիրն ողւոյն եւ ընդհանրութեան վրայ տեղեկութիւն անուել եւ կատարել որ Ստեփան վաշայի բացատրութեան տեսրին այն մասերը, որք կանոնադիրն ողւոյն կը վերաբերին, կարգացուին նախ: Բայց այնուհետեւ հարկ պիտի լինի գարձեալ կանոնադիրն յողուած առ յողուած կարգալ, եւ մասնաւոր կէտերու վրայ եւս բացատրութիւն խնդրել: Իսկ Ստեփան վաշային առաջարկութեան նպատակն այն է որ բացատրութեանց տեսրը կարգացուի, բայց այնուհետեւ այլ եւս յողուած առ յողուած ընթերցում չըլինի, այլ վաւերացումը տեղի ունենայ, եթէ կը ներէ ժողովն՝ եւ ուրիշ առաջարկ մ'ընեմ, որ գործադրութիւնը կը կարճէ եւ ժողովին ժամանակին կը խնայէ, եւ այն է փոխանակ բացատրութեանց տեղեկագիրը կարգալու, յողուած առ յողուած կոկոսներ կանոնադիրը կարգալ, իւրաքանչիւր յողուածի վրայ պէտք եղած բացատրութիւնն եւ տեղեկութիւնն կուզենք, եւ այսպէս կը կատարենք վաւերացումը:

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Ամէն կողմէ մէկ մէկ ձայն կը լսուի եւ խնդրոյն վիճակը գանազան մեկնութիւններ կընդունին, կազալեմ թոյլ տուէք որ հասկցնեմ Ձեզ ամէն ինչ որ պէտք է, բացատրեմ Ձեզ թէ ի՞նչու եկեր է այս խնդիրն, ի՞նչ որոշեր էք դուք կանխաւ, եւ ի՞նչ պէտք է ընել այժմ: Իմ բացատրութիւններս ամէն բան պիտի պարզէ եւ նոյն իսկ ձեր ընելիքն:

ՉԱՅՆԵՐ. -- Շատ աղէկ, շատ աղէկ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Ներեցէք որ փոքրիկ դիտողութիւն մ'ընեմ: Սոյն կանոնադիրը կրնայ անշուշտ միակ քուէով եւ որոշմամբ վաւերիլ, սակայն նախ պէտք է որ ժողովը անոր ստիպողութիւնն որոշէ:

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Յայտնի է որ երբ երուսաղէմի խնդիր մ'Ազգային ժողովոյ առեանը կը ներկայանայ, իրաւունք ունիք հարցնելու թէ ուստի՞ կուզայ սա, եւ ո՞ւր է տեղեկագիրը, եւ իրաւունք ունիք շուտաւերեբ կը լսէք թէ տեղեկագիր մը կայ, բայց առ այժմ հրապարակ հանել պատշաճ չէ դատուեր: Եւ մանկամայն կանոնադիր մը կը հաղորդուի ձեզ, որուն ճակատը « Մատուցեալ ի վաւերացումն Ազգ. Երեսփոխանական ժողովոյ » գրուած է, եւ սակայն կրնն թէ արդէն իսկ վաւերացեալ է եւ Ձեզմէ միայն գործադրութեան հրամանը կը խնդրուի: Այո՛, կատարեալ իրաւունք ունիք շփոթելու, եւ ասկէ ծընունդ տաին անտարակոյս դանազան հարցմունք զոր կը տեղար իմ վրայ, եւ գործանալի յայտարարութիւնը զոր կը կատարէք խնդրոյն վերայ, յառաջ վարելով զանա մինչև իսկ « մենք զերուսաղէմի միտարանութիւնը չենք ճանչնար » ըսելու:

Ես բնին ելայ աշխատելու համար ՚ի լոյս տիտել այս փափուկ ու զարմանալի կերպիւներկայացող խնդրոյն վրայ. փորձե՛նք, թե՛րեւս պիտի կարենամ պարզել զայն, եւ համոզում գոյացնել ձեր մտաց մէջ թէ՛ ամեն կողմ ողջամտութեամբ եւ օրինաւորութեամբ գոր-

ծած են, եւ թէ այս վայրկենիս ձեզմէ խնդրուածն ուրիշ բան չէ՛ այլ ձեր լիակատար իշխանութեամբ ըրած մէկ անօրինութեան վրէժնական գործադրութիւնը: Բայց կը կասկածի՞ որ թերեւս երկար խօսելու պիտի պարտաւորիմ, ուստի կանխաւ կը մատչիմ խնդրել ձեզմէ որ համբերութիւննիդ երկու ձեռքով ըրանելով ուշադրութիւն ընծայէք խօսքերուս՝ ներողամտաբար:

Ասկէ մէկ քանի տարի յառաջ Ս Երուսաղէմի միտարանութիւնը՝ զոր ճանչցած էք միշտ, եւ զեռ կը ճանչնաք, զի մեր պատիւն է, եւ մեզ պատիւ զայն ճանչնալ, ստիպողական եւ պաղատական գրեւ ուղղելով Ազգ. Վարչութեան, ծանուցեր էր թէ Աթոռն Սրբոց Յակովբանց պարտուց յորձանքի մէջ խնկած է, եւ թէ անմիջական օգնութեան պէտք ունի փասնողէ ազատ մնալու համար: շԱյս պաղատանք քանիցս կրկնուելով, եւ վերջերս նաեւ Ս. Աթոռոյ կողմէն զրկուած Հաշուետուարներուն քննութեանէն հասկցուելով թէ պարտքը մինչև 30000 ռուբլոյ բարձրացեր է, Ս. Պատրիարք Հայրն անցեալ տարի Ձեզ պաշտօնապէս խնդիրն հաղորդեց, եւ կարճ բայց ամենազգուխօսքերով անոր անմիջական լուծման կարեւորութիւնն զգացունելով առաջարկեց, եւ դուք ընդունեցիք որ լիազօր Յանձնախումբ մը կարգուի ընդ նախադաշութեամբ Ս. Պատրիարքի, եւ խնդրոյն լուծման կարեւոր անօրէնութիւններն ի գործ գրուին ստիպողաբար: Ըստ ձեր յանձնարարութեան՝ Սրբազան Պատրիարքն վարչական ժողովոյ խորհրդակցութեամբ սոյն Յանձնախումբը կազմեց, եւ ան կատարեալ լրջմտութեամբ խնդրոյն ողւոյն թափանցելով, փութացաւ երկու անօրէնութիւն ընել, որոց առաջինը անցելոյն ուղղեալ էր, եւ երկրորդն՝ ապագային. առաջինն էր ընդհանուր հանգանակութիւն մը զոր բացաւ Ազգին մէջ՝ նոր եւ յուսալից եղանակաւ մ'օրոյ վրայ խօսելու իրաւունք շուտիմ իսկ երկրորդն էր պատուիրակութիւն մը զոր առաքեց իՍ. Երուսաղէմ, ամենայն ինչ ի տեղում անդ քննելու, եւ անցելոյն խորագնին քննութեանէն օգուտ քաղելով, Ս. Աթոռոյ ներկայ վիճակը բարեօրելու, եւ ապագայն երաշխաւորելու լիազօր պաշտօնով:

Չիտէք արդէն որ սոյն պատուաւոր պաշտանն նոյն միջոցին այն կողմերը ճանապարհորդելուս առթիւ ինձ յանձնուեցաւ. եւ ես ըստ կարի զայն ի գլուխ հանելով Տեղեկագիրս մատուցի Պատրիարք Նախադաշի ձեր լիազօր Յանձնախումբին, որոյ հրահանգաւը գործեցի. միանգամայն Ս. Աթոռոյ միտարանութեան գործակցութեամբ ծրագրած կանոնադիրս՝ զոր ի գլուխութիւն ձեզ ապեալ զրկեցի առտ:

Արդ սոյն Յանձնախումբը՝ որոյ լիազօր իշխանութիւնը ձեր զերազոյն իրաւանց մէկ որոշումէն ծնունդ առած է, իր հրահանգաւը վարուող լիազօր պատուիրակին տեղեկագիրն առ այժմ իրեն կը սրահէ, եւ ծրագրած կանոնադիրը՝ վկնի քննութեան՝ պարագայից յարմար եւ Ս. Աթոռոյ ապագային ապահովութեան բաւական, եւ վաւերացման արժանաւոր դասելով ձեզ կը մատուցանէ, եւ կը խնդրէ որ ընդունելով անմիջական գործադրութեան հրամանը շնորհէք: Կը տեսնէք, Տեառք, ուստի՞ կուզայ խնդիրը եւ ինչո՞ւ այսպէս կուզայ: Դուք Ս. Երուսաղէմի խնդրոյն լուծումն շտապաւ յառաջ վարելու համար կամեցեր էք՝ արտաքոյ սովորական վարչական շաւղի մասնաւոր Յանձնախումբի մը ձեռօք զայն կարգադրել, եւ լիազօր իշխանութեամբ զնա օժտեր էք. եւ նա գործոյն մէկ մասն՝ եւ կարեւոր մասը լիազօր պատուիրակի մը յանձներ է, որ այսօր կը ներկայանայ ձեզ կանոնադիր ի ձեռին, զոր ինք ծրագրած է Միտարանութեան գործակցութեամբ, եւ Յանձնախումբն ընդունած է. ձեզ կը մնայ վաւերացման կնիքը գործմել եւ օրինաց կարգը դասելով զայն՝ գործադրութեան հրամանը տալ այն աշխատութեան՝ որ ձերն է, զի անուղղակի կերպիւն ձեր անօրէնութեանէն ծագում առած է:

Ես սա՛ վայրկենիս խնդիրնքս իբր ձեր մէկ Յանձնախումբին տեղեկաբերը կը նկատեմ, եւ պատրաստ եմ ձեր հարցմանց գոհացնելու պատասխաններ տալ. բայց կը խնդրեմ որ նախապէս ներէք ինձ ընդհանուր տեղեկութիւններ տալ իմ կատարած պաշտօնիս վրայ, որպէս զի Տեղեկագիրս բացակայութեան՝ անտեղութիւնները մասամբ իւրք թեթեւան:

Երուսաղէմի խնդրոյն ամենէն կարեւոր կէտը ելմտական վիճակն էր անշուշտ, որով

մէջ 20—30 հազար ոսկւոյ պարտք մը ամենէն մեծ տեղը կը բռնէր, ասի մեզ համար մեծ գումար մ'էր, բայց Երուսաղէմի համար ոչ այնքան. Երուսաղէմ 20—30 տարին անգամ մը 20—30 հազար ոսկւոյ պարտքեր ունեցեր է, եւ Ազգը միշտ վճարեր է անմատչւած պատմութիւնը կը վկայէ ասոր, ուստի կրնանք ըսել թէ ասի նոր բան չէր Ազգին համար. նոր խնդիր՝ պարտուց պատճառները քննել, եւ առաջայնն սնունդ ազդեցութիւնն արդիւնէր. համար բանաւոր միջոցներ դանկու մէջն էր, եւ ասոր ձեռնարկեցինք մենք ալ:

Քննութեան մասին նախ Ս. Աթոռոյ միաբանութեան կազմակերպութիւնը եւ ապա վարչութեան ձեւը աչքէ անցունել պարտաւորեցանք, ետքը անցանք յարաբերութեանց կէտին, զոր Ս. Աթոռն ունեցած է եւ ունի տակաւին Ազգայնոց եւ օտարաց, Վարչութեան եւ Տէրութեան հետ. անկէ ետքը կարգըն եկաւ Երմոսական վիճակին՝ որոյ կրկին հաստիք ազդիւրներն են կալուածական եւ բարեպաշտական արդիւնք, եւ բնականաբար թէ ասոնց եւ թէ բազմազիմի ծախուց տրնաւետութեան եւ հաշուակալութեան եղանակը քննեցինք, վերջապէս միաբանութեան կոչմանը նկատմամբ խուզարկութիւն ըրինք թէ ինչպէս պահեր եւ պահպաներ են մեր նախնեաց թողած յիշատակարաններն, եւ թէ ինչ ծառայութիւն մատուցեր են ազգային դատարարակութեան եւ լուսաւորութեան ի նըպաստ: Այս ամէն կէտերը մանրազնին քննութեամբ պրպտելով ստացած տեղեկութիւններս, ահաւասիկ ձեզ կուզամ յայտնելու անաշուտապէս: Քննութիւն՝ զոր միաբանական Յանձնախմբի մը հետ եւ յանուն ձեր լիազօր Յանձնախմբին կատարեցի Ս. Երուսաղէմի մէջ:

Սրբոց Յակոբրեանց Միաբանութիւնը գեղեցիկ կազմակերպութիւն մ'ունի. Եկեղեցականք զանազան աստիճաններէ եւ աշխարհական արք եւ կանայք անգամ են սոյն միաբանութեան, եւ ազատ անկէ դատուելու եւ երբ ուզեն մեկնելու: Ասի Միաբանութեան հիմնադիրներուն ազատամիտ եւ լուսաւոր գաղափար ունենալին ցոյց կուտայ, բայց ազատ չէ անտեղութենէ. կղեր են անարժան

անձինք որ Միաբանութեան մէջ ընդունուելով՝ դատարարակութիւն ասեր, եւ մինչեւ իսկ գերագոյն աստիճաններու բարձրացեր եւ ձգեր. զնացեր են՝ առանց որեւէ ծառայութիւն մատուցանելու Ս. Աթոռոյ, յորմէ այս ամենայն շնորհ ընդունել են, եւ երբեմն նաեւ քնաս եւ վտանգ հասցունելով Միաբանութեան եւ Ազգին: Ուստի այս անպայման ազատութեան մեղմացուցիչ չափ դնել հարկ էր՝ օրինաւոր եւ արդար պայմաններով Միաբանութեան ելլոց եւ մտից դռները ամրապընդելու համար որպէս զի անարժանք ներս մտնելու զիւրութիւն չունենան, եւ արժանաւորք Ս. Աթոռին շնորհաց առանց փոխարինելու չի ձգեն երթան:

Երուսաղէմի Միաբանութեան Վարչութիւնն ալ զարմանալի դրութեան մէջ մտեր էր, սա ի վաղ ժամանակաց միահեծան իշխանութիւն մը ըլլալով, թէպէտ եւ 1863ին Սահմանադրական նոր օրինօք բարեփոխել ուղուեր է, բայց սոյն կանոնը պարագայից բերմամբ Միաբանութեան վրայ ճիշդ չձեւուելով սոճապարանօք կարճ երկան շինուած ըլլալուն պատճառաւ, թէպէտեւ անոր գործադրութիւնը եւ հսկողութիւնը նորնտիր Պատրիարքի մը յանձնուեր է հանդիսական երդմամբ, բայց չէ կրցեր գործադրուի կատարելապէս. եւ Աթոռոյ Վարչութիւնը հին ձեւը կորուսնելով եւ նորին չհամակերպելով, անկերպարան վիճակի մէջ մտեր եւ շարունակեր է մինչեւ ցվերջին ժամանակներս: Եթէ ես Յճի կանոնադրին վրայ այսպէս քննադատութիւն կրնեմ, չկարծէք, կաղաչեմ, որ ուրիշին գործը պախարակելու զիտմամբ կը շարժիմ, որպէս զի իմս ի փայլ գայ, ոչ երբէք, ես իսկ Երեսփոխան էի Յճին, եւ թեբեւս ամենէն առաւել ես իրաւունք ունիմ պակասութեան պատասխանատուութիւնը կըրելու. բայց ճշմարտութիւնը կը պահանջէ որ խոստովանիմք թէ Յճի կանոնը մենք թերի յօրիներ ենք, Միաբանութիւնը թերի գործադրեր է, եւ Ազգն հսկողութեան մասին կատարեալ զանցառութիւն ըրեր է: Հարկ էր երբեմն այս կէտին վրայ ալ մասնաւոր ուշադրութիւն դարձունել, եւ կանոնը գործադ

րական ընելու եւ կատարելագործելու զիտմամբ բարեփոխումներ ընել:

Գանք Յարաբերութեանց: — Նախ պէտք է զիտնալ որ մենք Ս. Երուսաղէմի մէջ այնպիսի գիրք մ'ունինք, որոյ նմանը չկայ Ազգին մէջ ուրիշ տեղ: Անդ զիսաւոր վեց ազգ կան որ Գրիստոսի Տնօրինական Ս. Տեղեաց բողոքօրքը շարուած, հանապազօրեայ պաշտաման հետ, իւրաքանչիւրն իր սեպհակա՞նութիւններն եւ առանձնաշնորհութիւններն կը պահպանէ ծայրագոյն նախանձախնդրութեամբ: Ասոնցմէ մէկը Լատինացիք, զանազան ազգէ կրօնական հասարակութիւն մը կը կազմեն. հասարակութիւն բազմաթիւ, ճոխ եւ զօրաւոր, զի Կաթոլիք տէրութիւնք իրենց պաշտօնական կանոններէն զատ ահազին Պապութիւն մը վրանին հովանի եղած է ամենայն զօրութեամբ: Միւսը Յունաց ազգին է որ ի վաղուց Ս. Տեղեաց տիրապետելով, եւ իր դաւանակից Ռուս, Արքայ, Վալաք, Կիւրճի եւայլն Ազգաց բարեպաշտական նուէրները վայելելով հանգերձ, ամենայն իրաւունք ամենէն մերկանալով, ամենայնի բռնացեր է եւ շարունակ կը յոխորտայ եւ կը գործէ՝ բողոքովին բռնակալելու համար Ս. Տեղիքն: Երեք ուրիշ ազգեր, Իսպիք, Ասորիք եւ Հայկէք մեզ դաւանակից ճանչցուած են եւ քաղաքականապէս միացեալ են ընդ մեզ եւ հետեւակ մեզ: Կը հասկնանք հիմայ թէ ի՞նչ է մեր զիրքը այս հնգեակ ազանց շարքին մէջ եւ թէ ի՞նչ փափկութիւն ունի այս զիրքը: Մենք ի Ս. Երուսաղէմ անընդհատ Լատինական յանդուգն ձեռնարկութեանց եւ Յունական գոռոզ պահանջմանց դէմ մրցիլ պարտաւորեալ ենք, դէմերնիս ունելով Կաթոլիկ տէրութիւններն եւ Պապութիւնն մէկին պաշտպան, եւ Ռուսական Կայսրութիւնն միւսին, եւ ետեւեւուս երեք օտար Ազգեր տեսնելով որ մեր պաշտպանութեանը կարօտ ըլլալով հանգերձ, ոչ այնքան սիրով կը տանին մեզ միացման եւ հպատակութեան լուծը:

Այս վիճակին մէջ շատ մը յարաբերութիւններ կը ծնին, եւ մեծամեծ ծախքեր յառաջ կուզան, մե՞ք պարտաւորեալ ենք ճարտարութեամբ մշակել առջինները, եւ իմաստ

տութեամբ տնտեսել վերջինները, ապա թէ ոչ մեր հակառակորդաց մեքենայութեանց եւ անխնայ ծախուց եւ նոյն իսկ մեր հետեւողաց զժկատակութեան առջին վերջապէս խոնարհիլ կը պարտաւորինք, եւ թերեւս կորնչիլ: Բայց մենք կորուսեալ չենք ի Ս. Երուսաղէմ, եւ ոչ իսկ նուստացեալ: Ազգն անդ արժանաւոր զիրք մը բռնած է, եւ վայելչապէս կը ներկայանայ առաջի աշխարհի, շնորհիւ աւանդական քաղաքադիտութեան մերայնոց եւ օժանդակութեամբ ամենայն Ազգայնոց որ ի Ռուսաստան, ի Պարսկաստան, ի Հնդկիս եւ այլուր:

Այս տեղ անդալապէս կը մտնենք ելեւմտից խնդրոյն մէջ, ուր մեծամեծ ծախուց պիտոյքն բարձրաձայն կը գոչեն, եւ չեն կրնար զանցառութեան մասնուիլ, զի ասի Ազգին եւ նոյն իսկ Ազգութեան թանկագին յիշատակարանաց կորստեան կ'առաջնորդէ ըզմեզ. եւ պէտք է աստ զօգութեամբ հրատարակել որ Սրբոց Յակոբրեանց Միաբանութիւնը այս մասին անհողութիւն չէ ըրեր, տկարութիւն չէ ցոյց տուեր, ամենայն աշխատութիւն կրեր է, ամէն զոհողութիւն յանձն առեր է, ծախքէ երբէք չէ փախեր, նոյն իսկ իր առ Ազգն պատասխանատուութիւնը վտանգի ենթարկելով, Ազգին իրաւունքն վտանգէ դերձ պահեր է, եւ այսօր 30000 ոսկւոյ պարտուց ներքեւ հեծելով, բարձր ի գլուխ կը ներկայանայ առաջի Ազգին, զի պատուաւոր կերպով կը ներկայացնէ զնա առաջի աշխարհի:

Բայց միթէ ի Ս. Երուսաղէմ ամենայն ծախք միշտ պէտք եղած չափով եւ ճշգրտութեամբ կատարուե՞ր են. միթէ ամենայն ինչ օրինաւոր արձանադրութեամբ կանոնաւոր հաշուակալութեան ենթարկուե՞ր են, վերջապէս ելեւմտից երկու հիմունքն Առեւտուր եւ Հաշիւ՝ ըստ արժանւոյն եւ միշտ խոստապահանջ ճշտութեամբ ի գործ դրուե՞ր են. չեմ գիտեր, չեմ ալ կրնար հաւատար, զի ասոնց ամէնը այնպիսի մարդոց ձեռքովն եղած են որ աշխարհի զանազան կողմերէ Յուգայի լեռներն ապաստանելով, վանքի մէջ կապրին, եւ իրենց մէջ կը դատարարակութիւն եւ յաճախ օգնութեան տեղ հակառակութիւն

կը վայելեն անոնց կողմէն որք իրենց օժանդակելու եւ առաջնորդելու պարտականութիւն ունին, ուստի չէ արդար պահանջել որ այս մարդիկն անտեսադիտութեան եւ հաշուակալութեան մէջ ալ այնքան ճարտարութիւն ունենան, որչափ ունեցեր են Ազգին իրաւունքը անկորուստ պահելու եւ յաջողեր են մինչեւ մէկ աստիճան ամենայն զոհողութեանց տոկայով:

Կը հակնաք արդէն որ Ս. Տեղեաց բընական պահանջուներ եւ ստելի եւ անասելի ծախք եւ կորուստք, եւ միաբանից տնտեսական եւ հաշուադիտական թերութիւնք ձեռք ձեռքի տուած Ս. Աթոռոյ կիւմտից խանդարում պատճառած են, ինչպէս քննութեանս արդեամբք կրնամ վկայել եւ ես:

Բայց ճշմարտութիւնը կը պահանջէ որ խոստովանիմ թէ խարդախութիւն, գողութիւն, յափշտակութիւն չէ եղած եւ չէ տիրած, գէթ պաշտօնական մարմնոյ մէջ, եւ եթէ մասնաւոր անձանց կողմէն երբեմն այսպիսի պակասութեանց մէջ ինկնողներ զըտնուեր են, յաճախ՝ գրեթէ միշտ ինչ որ ձախ ձեռքը խլեր է ի կենդանութեան, զնոյն՝ աջն Ս. Աթոռոյ նուիրեր է ի ժամու մահուան: Հարիւրաւոր արձանագրութիւնք եւ բազմաթիւ կտակագրութիւնք կը վկայեն ըսածիս ի Ս. Երուսաղէմ, եւ բազմամեայ ելեւմտից հաշիւներն եւ հաշուետուարներն՝ թէ եւ խիստ նախնական եւ յոյժ պակասուոր, սակայն կան եւ մեան ի Ս. Աթոռն, հանդերձ արդարացուցիչ գրութեամբք ամենայն ծախուց, բաց ի 2500 սուկոյ չափ դուրսը մը որ 1863էն մինչեւ 1873 վասնուած են եւ չունին ոչ արձանագրութիւն եւ ոչ արդարացուցիչ փաստեր, բայց Պատրիարք եւ Միաբանութիւն միաբան են այս մասին հաստատելու թէ սոյն դուրսն Ս. Աթոռոյ պիտոյից գործածուած է վասն բազուն ծախուց, եւ թէ անոր մանրամասնութիւնքն չէին կրնար արձանագրուիլ Պաշտօնական տուարաց մէջ, ինչպէս որ Պատրիարքին եւ այլոց հաղորդած մէկ քանի տեղեկութիւններէ հասկցայ եւ համոզուեցայ եւ ես բանին ճշմարտութեան, եւ ըստ որում չկայ տէրութիւն մը, չկայ հասարակութիւն մը, կրնամ

ըսել նաեւ պաշտօնական մարմին մը որ քիչ շատ իր թաղուն ծախքը չունենայ, ես ալ Միաբանութեան հետ համաձայնեցայ հաւատարմութեամբ որ այս դուրսն տուողպէս ծախս եղած է եւ մեծաւ մասամբ Սաղիմական գործոց անասելի եւ աննահանջելի պահանջուները գոհացունելու ծառայած է: Եւ կը կարծեմ նաեւ թէ չէ իսկ պահանջելի, վասն զի Պատրիարքին անձնական հարստութեան վիճակն կատարելապէս ապարդիւն ընելէն դատ, մեր 15 տարուան հնօրեայ անհողութիւնը անիրաւ կացուցանէ այսօր մեր կողմէն այսպիսի մէկ պահանջ:

Այս ասթիւ կուղեմ ձեզ ընդհանուր տեսութիւն մը ներկայել սոյն 15 տարուան միջոցին վրայ, ելեւմտից տեսակէտով, որպէս զի բաջ խելամուտ ըլլաք թէ ինչպէս այն մեծագումար պարտքը գոյացեր է որ այսօր մեր եւ բոլոր Ազգի ուշադրութիւնը կը դրուէ, եւ թէ այս մասին պատասխանատուութիւնը ո՞ր կողման վրայ կը ծանրանայ:

1863ին, երբ Երուսաղէմի նորընտիր Պատրիարք Եսայի վարդապետ Կ. Պօլիս եկաւ Ս. Եջմիածնէն Եպիսկոպոսութիւն եւ Ազգ. ժողովէն Պատրիարքութիւն ընդունելու համար, մենք ոչ միայն Ս. Աթոռոյ վիճակը չը քննեցինք, յանցելու մն եւ ի ներկային, թէպէտ եւ ժամանակին դարձուածքները սոյն քննութիւնն զժուարին ըրած էին, այլ եւ նոր կանոն մը եւ Սահմանադրական կանոն մը շինելու միջոցնիս, զայն Միաբանութեան վիճակին վրայ ճշդիւ չձեւեցինք, անկէ առաջ Ս. Երուսաղէմ տարին 120000 դուրսը կը նըւերէր Կեդրոնական վարչութեան, զոր ժամանակէ մը ի վեր դադարեցուցած էր, մենք փոխտնակ ասոր պատճառը որոնելու Ս. Աթոռոյ Ելից եւ Մտից վիճակն ստուգելու, շարունակեցինք սոյն տարեկանը պահանջել, վերջապէս մեր այս ընթացքին առջին նորընտիր Պատրիարքը մէկ կողմէն մեր խմբագրած կանոնը՝ հանդերձ մէկ քանի դիտողութեամբք որ մեր ընդունած արամագրութեանց ոգւոյն զէմ կը մարտնչէին, ստորագրելով, եւ միւս կողմէն Ս. Երուսաղէմի փոխանորդին վերջին փոխառութեանց մուրհակներն ստորագրելով,

ձգեց զնաց ի Ս. Երուսաղէմ: Այս մուրհակներն կորիզ մ'էին որոյ վրայ հետզհետէ պարտուց խաւերն բարդուելով բազմացան, բազմապատկեցան, եւ ասոր պատճառ պակաս չէր. 1. Պատրիարքը Արդարապէս էր, Ս. Եջմիածին ուղեւորեցաւ Եպիսկոպոսանալու համար, մեծկակ ծախք, — 2. Չորս տարիէ ի վեր Ս. Երուսաղէմի ուխտաւորք Պատրիարք չէին տեսեր, Զատիկը մերձ էր, Պատրիարքը կուղէր փութով հասնիլ Ս. Աթոռն գէթ Զատիկէրկրորդ օրն, ուստի մասնաւոր շողենաւ մը վարձուեցաւ, եւ աստի մեծ ծախք. — 3. Պատրիարքը նոր կանոնի գործադրութեանըն ուխտեալ ըլլալով, անոր ամենէն փայլուն մասերն գործադրելու կը վաղվաղէ, վասն զի Կեսարացի ըլլալով բնական սրամտութեամբ կը հասկնայ որ ասով կրնար կեդրոնին համակրութիւնը գրաւել եւ Միաբանութեան զըժգոհ մասին կուսակցութիւնը ջախջախել, ուստի կանապարէ Տսլարան հաստատել, զիրք եւ լրագիր հրատարակել, ժառանգաւորաց վարձարան հիմնել եւ այլն. որով բազում ծախք. — 4. Ս. Աթոռոյ մուտք եւ հաք բարեպաշտական եւ կալուածական արդիւնք ըլլալով, Պատրիարքը կը տեսնէ որ ժամանակին պարագայից բերմամբ ուխտաւորաց թիւը տարուէ տարի կը պակսի եւ նուէրք, ողորմութիւնք եւ կտակք կը նուազին, ուստի կը մըտածէ Ս. Աթոռոյ կալուածական հարստութիւնը ճոխացնել, որպէս զի բարեպաշտականին պակասն անով լցուի, աւելի հաստատուն եղանակաւ, ուստի կը ձեռնարկէ մէկ կողմէն նուիրակութիւններ առաքել ի Հրեղիկս եւ ի Ռուսաստան, միւս կողմէն զանազան քաղաքներ եւ ի մասնաւորի Եգիպտոս գտնուած Ս. Աթոռոյ կալուածներն յափշտակիչներու ձեռքէն խլելու դատ վարել, անձամբ ի Պահիրէ ճանապարհորդելով, յորմէ՝ մեծամեծ ծախք. — 5. Վերջապէս Ս. Աթոռոյ ամենէն շատ եւ ամենէն արդիւնաւոր կալուած գտնուած Յոսպէլի կալուածական շէնքերն նորոգելու կելնէ, որպէս զի հասոյթը կրկնապատկի, դարձեալ ծախք. — Բայց ոչ Պահիրէի կալուածներուն ամենը կրնայ կողոպտել յափշտակողներէն, որոց ձեռքերը ճան-

կերու կը նմանին որոց վրայէն բուրգն ու բամպակը որքան քաշես ազատես, դարձեալ մէկ մասը վրան կը մնայ պըլլուած, ոչ Յոսպէլի կալուածներն զինի մեծածախ նորոգութեան մեծ արդիւնք բերեր են, զի ամենը մէկէն նորոգութեան մասնուած ըլլալով վարձակալք ուրիշ տեղեր տեղաւորուեր են եւ մեր կալուածոց մէկ մասն պարագայ մնացերէ, ոչ տարանը իր ծախքը գոցեր է. վասն զի անվարժութեամբ դրեր եւ գործիքներն թանկ ծախու առնուեր են, գրքերն աժան գնով չեն տպուիր, միշտ ծախուելու գրքեր չեն տպուիր, եւ այլն. ոչ վարժարանը բաւական մարդ հասուցեր է վասն զի անփորձութեամբ այնպիսի ընթացք ուսման մը ընդունուեր է որ 15 տարուան մէջ հազիւ 11 Եկեղեցական հասեր է, ամէն մէկը 60 հազար դուրսը չէն աւելի ծախքով. եւ այսպէս ամեն ձեռնարկութիւնք, թէ եւ բարեմիտ եւ բարենպատակ բայց անյաջող զնալով Ս. Աթոռոյ արդիւնքն ո՛չ միայն չեն ճոխացեր եւ ծախքը ծածկեր, այլ ընդհակառակն ծախուց նժարը բեռնաւորելով պարտուց կողմը ծանրացեր է. տարօրինակ եւ անժամանակ ծախուց փոխառութիւնք յաջորդեր են, փոխառութեանց տոկասիք աւելցեր են, եւ վերջապէս պարտքը եւ լեր հասեր է այն պատկանելի քանակութեան որ մեզ ծանօթ է եւ ցաւոց պատճառ: Բայց այս Հնդկաստանամեայ ծախորդ ընթացից մէջ ինչ հողածութիւն ըրեր է Կեդրոնական վարչութիւնը եւ ինչ միջոց գործածեր է Ս. Երուսաղէմի Պատրիարքը՝ ելեւմտից հաւասարակութեան թէկն անելու դիտամբ. — Կեդրոնական վարչութիւնը, ցաւալի է ըսել, ժամանակ մը ստակ պահանջելէն, ժամանակ մ'ալ նոր կանոնի գործադրութիւնը պահանջել եւ գոռալ գոչելէն ետքը, դադարեր է եւ կատարեալ զանցառութեան ճամբան բռներ, շարունակեր է մինչեւ վերջին ժամանակներս ուր գրեթէ ի խոր քնոյ սթափելով արթնցեր է Միաբանութեան եւ ի մասնաւորի Եսայի Պատրիարքի ազդակներէն, որ փոխառութիւնէ ի փոխառութիւն, դատէ ի դատ, շինութիւնէ ի շինութիւն տատանելով, պարտուց գէթ տոկոսիքն թեթեցնելու բազում ճիգ եւ աշխատ-

տուժիւն թափելէ ետեւ, տեսնելով որ չը-
 յաջողիր ուղածին շափ, եւ վախնալով որ մի
 դուցէ յորձանքին բռնութենէն փտանդի ինք
 եւ իրեն հետ ազգն համօրէն, ազադակ բարձեր,
 եւ մէկ քանի տարի շարունակ աղիւղորմ գրու-
 թեամբք կեդրոնին գուժը շարժելու աշխա-
 տելով, վերջապէս յաջողեր է անոր ուշը գը-
 րաւելու անկէ ետքը գիտէք սլատահած ե-
 դելութիւնները :

Ձեզ կը թողում հիմայ քննադատել եւ
 գնահատել թէ ո՞ր կողմին կը պատկանի այս
 վիճակին պատասխանատուութիւնը կամ աւելի
 ճիշդ խօսելով ո՞ր կողմինը մեծ է քան զմի-
 ւորն :

Բայց միայն գնահատութեամբ գործ չի
 լիննար, պարտք մը կայ, լեռնացեալ պարտք
 մը, որ կործանում կ'սպասնայ մեր ազգային
 եւ հնաւանդ յիշատակաց ի Ս. Երուսաղէմ,
 զայն աճապարելու վճարելու է, եւ ասոր
 համար նախ տեսնել եւ հասկնալ պէտք է թէ
 արդի վիճակին մէջ Ս. Աթոռն ինչպէ՞ս կ'ապ-
 րի այս պարտուց բեռան ներքեւ : Ես լաւ
 հասկցայ այս կէտը եւ անա ձեզ բացատրեմ,

նախ Միաբանութիւնն իւր ելեւմտից ըս-
 պառնալից վիճակին խելամուտ ըլլալով մէկ
 քանի տարիէ ի վեր ո՛չ միայն շափ եւ սահման
 դրեր է իր ծախուց, զանոնք նուազեցունե-
 լով մինչեւ ի զրկումն, այլ եւ կարգ եւ ճըշ-
 տութիւն մտցուցեր է իր հաշուակալութեան
 մէջ, մինչեւ աստիճան մը :

Պատրիարքն ո՛չ միայն հաւատար արդոց
 միաբանից անանելու եւ աշխատելու յանձնա-
 ութիւն ըրեր, այլ մեծ մասամբ իր ձախող
 ձեռնարկութեանց արդիւնքն եզող պարտուց
 գեթ տոկոսեաց օր աւուր թեթեւալուծն մեծ
 մասամբ ինք աշխատեր եւ մասամբ իմն յա-
 ջողեր է :

Պատրիարք եւ Միաբանութիւն մէկտեղ
 աշխատեր են Ս. Աթոռոյ իրաւանց պահպա-
 նութեան համար ըստ պարագայից ծախք չը
 խնայելով հանդերձ, դուրսը Ազգին վարկն ի
 յարդի պահել եւ ո՛չ միայն մասնաւոր անձանց
 փտահութիւնը յաջողեր են գրաւել, այլ եւ
 հզօր դրամատանց ամենէն զօրաւորին ի Ս.
 Երուսաղէմ. այնպէս որ այսօր Յունական

Միաբանութեան անդամոց մեծ մասն իրենց
 խնայողութեամբ աւելցուցած ստակնին իրենց
 Պատրիարքին չեն հաւատար, մերթնին կը բե-
 րեն եւ թեթեւ տոկոսեօք կը յանձնեն մեզ ի
 շահ, ինչպէս մեծ դրամատուն մ'ալ, պայ-
 մանագրութեամբ յանձնառու եղած է հաշ-
 ուընթաց առեւտրով փոխ տալ մերոնց եւ այս-
 պէս կ'ապրին այսօր մեր ներկայացուցիչներն
 ի Ս. Երուսաղէմ :

Այստեղ, աւելի առաջ չգացած, ձեր
 ազգասիրութեանը, ձեր խոհեմ եւ նրահայ-
 եաց իմաստութեան գիմելու կը պարտաւորիմ
 եւ կը խնդրեմ որ այս խօսքերն մեր մէջը մը-
 նան, եւ ո՛չ միայն մեր մէջը մնան, այլ եւ
 մեր մէջը մտցունին իսկ, եւ մենք Ս. Աթո-
 ռոյ պարտքը վճարելու ամենայն ջանք ընենք,
 ամենայն զոհողութիւն յանձն առնունք, զի
 այս է մեր նուիրական պարտաւորութիւնը,
 եւ ասկէ կախում ունի Ս. Աթոռոյ մտալուտ
 վտանգէ ազատութիւնը. "դուք գիտէք որ
 վարկ ըսածդ շատ փափուկ բան է եւ կա-
 տարեալ երկշտ, ամենափոքր պատճառ մը
 զանի կարող է տկարացնել, ոչընչացնել իսկ,
 եւ ձեզ կը թողում մտածել թէ այսպիսի ար-
 կած մը ի՞նչ աղետալի հետեւանք կուեննայ
 Ազգիս համար :

Ստուգ է որ Ս. Երուսաղէմ հարուստ է,
 եւ առաւել հարուստ է եղեր ի Հնումն, փան
 զի պատմութիւնը ցոյց կուտայ թէ մինչեւ
 72 վանք ունեցեր ենք մենք անդ, ուր այժմ
 մէկ քանի հատ միայն մնացեր են, եւ վերջին
 ժամանակներս Զիթենեաց լերան վրայ Ռու-
 սաց արքեպիսկոպոսին ծախու առած եւ շէնք
 շինել տուած մէկ պարտիզին մէջ երեւան ե-
 լած սքանչելի մօզայիք Հայերէն արձանագը-
 րութիւններն ցոյց կուտան թէ ասոնք փոտա-
 ւոր շէնքեր են եղեր եւ մեր մեծագործ նա-
 խահարց բարեպաշտութեան շինութիւնք : Ա-
 սոնք անշուշտ վալուածներ ունեցեր են որ
 օտար աշխարհակալութեանց շնորհիւ ո՞ գիտէ
 որո՞յ ձեռքը մնացեր են : Այսօր ալ դեռ Ս.
 Աթոռն կալուածներ ունի ի զանազան տեղիս,
 որ ծախուելով կրնայ թերեւս պարտքը վճար-
 ուիլ, բայց նախ ասոնց մէկ մասն մեր իսկ
 Ազգայնոց, այն Ազգայնոց որ Ս. Աթոռոյ չը

նորհաց պարտին իրենց գոյութիւնը, դեռ այ-
 սօր Ս. Աթոռոյ բարիքը կը վայելեն, ա՛յն ազ-
 գայնոց, կ'ըսեմ, շահախնդրութեան զո՞ զը-
 նացած են. Երուսաղէմ, Գահիրէ, Ազէքսանդ-
 րիա եւ այլուր Ս. Աթոռոյ բազում կալուածք
 Ազգայինք յափշտակած են եւ դեռ այսօր իբր
 իրենց սեպհականութիւնը կը հրատարակեն.
 Սիմէօն Սրբազան որ վերջին ժամանակներս
 այս տեսակ խնդրոյ մը համար Ազգքսանդրիա
 ճանապարհորդեց, կրնայ ձեզ տեղեկացու-
 նել թէ ի՞նչ են այս մասին մերոց իսկ պա-
 հանջմունք եւ անիրաւութիւնք, ես այսքան
 միայն կրնամ ըսել ձեզի որ Ս. Աթոռն սա՛
 վերջին օրերս իր Ազէքսանդրիոյ կալուածին
 ամբողջութիւնն ազատելու համար 35000
 կանգուն տեղ թողուլ պարտաւորեցաւ սեղա-
 նակագուտ ձեռաց ճանկերուն մէջ :

Երկրորդ՝ Ս. Աթոռոյ կալուածներն ամե-
 նէն ազէկ տեղեր եւ աղւոր շէնքն չեն, զուք
 լաւ կը հասկնաք որ ասոնց ամենամեծ մասը
 նուէր ըլլալով, Ս. Աթոռն ընդուներ է զանոնք
 ինչպէս որ են, ուստի ամենը արդիւնք չեն
 կրնար բերել, եւ ծախուելու ալ ըլլան մեծ
 ստակ չգոյանար, ուր թողունք որ շատն ալ
 անվաճառելի պայմանաւ յանձնուած են Ս.
 Աթոռոյ ի բարեպաշտ կտակողաց :

Արեւմն մեզ ուրիշ ճար չի մնար այլ պար-
 զապէս հանդանակութեամբ ջանալ վճարել
 այս պարտքը, այսինքն ոյժ տալ Յանձնախըմ-
 բին որ այս եղանակն ընտրեր է եւ ամենայն
 հոգածութեամբ յառաջ տանելու կը ջանայ :

Կարձեմ բաւական խօսեցայ ելմտական
 մասին վրայ, ժամ է արդ անցնիլ կրթական
 խնդրոյն եւ վերջացնել խօսքս որ երկարեցաւ :

Ճշմարիտը խօսելով Երուսաղէմ երբէք
 այս մասին մեծ արդիւնք ցոյց տուած չէ,
 թէ եւ ընտիր եւ ճոխ մատենագարան մ'ունե-
 նալով եւ բաւական տարիներէ հետէ նաեւ
 Տպարան մը որ վերջերս ընդարձակեր է եւ
 ճոխացեր, կրնար նա մինչեւ աստիճան մը
 Վենետիկ մ'ըլլալ մեզ համար, բայց Միա-
 բանից հանապազօրեայ Եկեղեցական պաշտա-
 մունք, օտար ազգաց հետ անընդհատ կազ
 եւ կոխք, քիչ մ'ալ մեծաւորաց անուս եւ
 անուսումնասէր վիճակն արդեւք եղեր են որ

Ս. Յակոբ Ս. Ղազար մ'ըլլայ, փառարան
 մ'ըլլայ ազգային լուսաւորութեան : Բայց ար-
 դի Պատրիարքի օրով այս մասին փորրիկ շար-
 ժում մը տեղի ունեցեր է, նախ քաղաքացի
 մանկանց երկսեռ նախակրթարաններ հաս-
 տատուեր են ջանիւք եւ ծախիւք Միաբանու-
 թեան, եւ ժառանգաւորաց վարժարանը բա-
 ւական թուով ուսեալ աշակերտներ հասուցեր
 է, որոնցմէ աննշան թուով եւ մեծագուժար
 ծախքով մէկ քանի Եկեղեցական միաբաններ
 ալ ելեր են եւ որ միտիթարութեան առիթ է
 մեզ, ասոնցմէ մէկ քանիին շնորհիւն բաւա-
 կան բարեկարգութիւն մտեր է Ս. Աթոռոյ
 ելեւմտից, տնտեսութեան եւ դաստիարակու-
 թեան վերաբերեալ վարչական ճիւղերուն մէջ :

Մտոնանք յիշելու եւ երախտապարտ ոգ-
 ւով յիշատակելու որ հանգուցեալ Յօհաննէս
 Պատրիարքի օրով Ս. Երուսաղէմ Իւսկիւտարի
 ճեմարանին ոչ միայն տեղը տուեր եւ շինու-
 թեանն օժանդակեր էր, այլ նաեւ բաւական
 ժամանակ 120000 դուրուշ տարեկան նուէ-
 րով մը մեծ ծառայութիւն մատուցեր է Ազ-
 գային դաստիարակութեան սկզբնաւորու-
 թեան :

Արդ հասկցաք, Տեարք, որ Ս. Երուսաղէմի
 Միաբանութիւնը թէ եւ ոչ մեր ակնկալու-
 թեան շարիով, բայց աշխատեր է կատարել
 միշտ իր պարտաւորութիւնը, դարձեալ կ'ը-
 սեմ, ամեն ջանք ըրեր, ամեն զո՞ յանձն ա-
 ռեր, ծեծեր, ծեծուեր է, բայց անկորուստ
 պահեր է Ս. Տեղեաց մէջ Ազգին իրաւունք-
 ներն եւ առաջի աշխարհի Ազգին պատին,
 եւ այն ամենահարուստ եւ բազմաթիւ ազ-
 գաց մէջ եւ անոնց հետ մրցելով, որոց մէ-
 կուն նյիւսն 100000 ոսկոյ կը մերձենայ,
 եւ միւսինը կանցնի իսկ այս գուժարը, ուր
 մերիններունը 10000 ոսկին հազիւ կը շօշա-
 փէ տարուէ տարի : Այսպիսի պարագայից մէջ
 սոյնպիսի արդեանց առջին ես պարտաւորե-
 ցայ կակղնալ, եւ անցելոյն քննութենէն օ-
 գուտ քաղել փութալով, մէկ կողմէն աճա-
 պարեցի ներկային ստիպողական բարեկարգու-
 թիւնները տնօրինել, խորհրդակցութեամբ
 նոյն իսկ Միաբանութեան անդամոց եւ մասնա-
 ւորաբար Ս. Պատրիարքի եւ Սիմէօն Սրբազանի

որ շնորհակալութեամբ կը յայտարարեմ, փութաց զայ իմ կոչմանս պատասխանելով ինձ աջակցել բարենորոգմանց ձեռնարկութեան: Այսպէս բոլոր հին հաշիւներուն քննութիւնն եւ մանրամասն խուզարկութիւնն կատարելով շնորհիւ հաշուագէտ եւ աշխատասէր երիտասարդ միաբան վարդապետի մը որ զարդն է Ս. Աթոռոյ եւ յոյսն ապագային, վանօրէից խորհրդոյ հաշուական հարցմանց պատասխանները պատրաստեցինք եւ 1878-79ի եւ 79-80ի կատարեալ ելմտացոյցներէն զատ, 80-81 ենթացիկաւ պիւնիկ ալ զրկեցինք ի Պօլիս միանգամայն մասնաւոր Դիւանատուն մը հաստատեցինք իբր մէկ ճիւղ, մէկ սենեակ Պատրիարքական Դիւանատան, եւ անդ ժողովեցինք հին եւ նոր բոլոր հաշուետու մարք եւ հաշուակալ նորոնախի պաշտօնակալք անդ սկսան իրենց պաշտօնն անկախաբար կատարել ըստ տօմարական օրինաց: Բոլոր պարտուց մանրամասն ցուցակը գրի առինք, երկուքի բաժնելով զանոնք, մէկը արտաքին, որ մեծ մասն է եւ տոկոսաւոր, միւսը ներքին որոյ տոկոսիքն ալ Ս. Աթոռոյ ծախուց յատկացեալ է, եւ զանոնք զարձեալ իրենց վրձարման ստիպողականութեան կարգով շարադասելով Կ. Պօլիս զրկեցինք ցուցակը:

Միւս կողմէն ապագային անդորրութեան եւ երաշխաւորութեան համար 65ի Կանոնագիրը բարեփոխելով, ապակեղրոնացման արդասաւոր գրութեամբ Տեղական վարչութիւնն ամբողջովին Միաբանութեան յանձնեցինք եւ Կեղրոնական վարչութեան թողուցինք ազատ եւ կատարեալ հսկողութիւն, պարտաւորելով զՄիաբանական վարչութիւն ամեն տարեգումն ամենայն մանրամասնութեամբք Ազգ. Ժողովոյդ առաջի առնել անցելոյն հաշիւներն եւ եղելութիւններն եւ առաջիկայ տարուոյ պիւնիկ եւ առաջագրութիւններն, որպէս զի ազգը ժամանակին ամենայնի տեղեկանալով պէտք եղած միջոցները ի գործ գնէ օգտակար կերպով: Ասի Ելեւմտից եւ Վարչական այլ գործոց համար, իսկ կրթութեան խընդրոյն համար ժառանգաւորաց վարժարանին աշակերտներն որ գրեթէ ամենն ալ հասեր էին ուսման ընթացից լրման, եւ որ միայն անունը

կը կրէին ժառանգաւորութեան Եկեղեցւոյ, որոշեցինք տարեգումն զրկել իրենց հայրենիք, եւ առաջիկայ տարիէն սկսեալ, այսինքն այս տարիէն, որոյ մէջը մտած ենք, վարժարանը 16էն մինչ 18 տարեկան նախակրթեալ աշակերտներ առնել առաջին տարին 20, իսկ անկէ ետքը կանոնաւորապէս ամեն տարի տասնական, եւ զանոնք իբր ժառանգաւոր կրթել եւ արժանաւորներն Եկեղեցւոյ եւ Ս. Աթոռոյ ժառանգութեան կոչել յԵկեղեցականութիւն: Իսկ Ազգ. ընդհանուր դատարանակութեան օժանդակելու մասին, որոշեցինք ձգել Ազգին որ յարմար գատած տեղը ուսումնարան բանայ եւ Երուսաղէմ զանի տնտեսէրք պարտքէ ազատելով իր հասոյթը ծախուց հակակշռէ եւ ներէ Ս. Աթոռոյ իր այս կոչմանն ալ պատասխանել:

Աս սոյն տնօրէնութիւններէն եւ որոշումներէն ծագումն առաւ այն կանոնը որ այժմ ձեռքերնիդ է եւ զոր յանուն ձեր Յանձնախումբին, յանուն Ձեր, յանուն Ազգին ծրագրեցի Միաբանական յանձնախումբին գործակցութեամբ եւ զոր բազում վիճարանութեամբ Միաբանական ընդհանուր ժողովն բարեփոխած եւ ընդունած է եւ ձեր լիազօր Յանձնախումբն գործադրելի եւ վաւերացման արժանի դատելով ձեզ մատուցած է ի վաւերացումն:

Կը տեսնէք, Տեառք, որ Կանոնագրիս մատուցումն կանոնաւոր է եւ ես անոր ողին եւ տրամադրութիւններն բացայայտ մեկնելու զիտմամբ ընդարձակ բացատրութեան տեսք մը զրկած եմ կանխաւ, որոյ օրինակն Դիւանի կաւանդեմ այժմ եւ եթէ վաւերացման ձեռնարկէք, պատրաստ եմ նաեւ բերանացի ամենայն բացատրութիւն տալ ձեզ, եթէ հարկ տեսնէք:

Խորին ապաւորութիւն ժողովին վրայ. — Բազմաթիւ Երեսփոխանաց խնդրանօք ժողովը պահ մը դադար կառնու, եւ յետոյ նիստը կը շարունակուի:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՅ. — Խօսք ուղեցի մասնաւոր կէտի մը վրայ բացատրութիւն

խնդրելու համար: Փաշային տուած տեղեկութիւնները ըստ բաւականին գո՛ր ըրին զիս, միայն թէ կուզեմ որոշակի գիտնալ թէ այն կալուածներն, զորս ազգայինք ունանք գրաւեր են, վերագարձած են արդեօք Երուսաղեմայ վանուց, թէ ոչ կը մնան դեռ յափըշտակիչներու ձեռքը եւ ի՞նչ պատճառաւ:

Կը խնդրեմ որ Նորին վսեմութիւնը շնորհնէ այս պարագան ալ պարզել:

Մէլիբեան Գ. ԷՅ. — Կարծեմ թէ այսպիսի մասնաւորութեանց վրայ տեղեկութիւններ պահանջելու ժամը չէ այժմ. եւ եթէ Ստեփան փաշան իրաց վիճակին ընդհանուր նկարագիրն ըրաւ մեզ, աւելի Կանոնագրին պէտքը, անոր վաւերացման ստիպողութիւնը հաստատելու եւ մեր գործը զիւրելու նպատակաւ էր ըստ իս առ ժամս մեր առաջին գործը պիտի լինի այս Կանոնագիրը վաւերել, եւ ետոյ անցեալին վրայ ընդարձակ տեղեկութիւններ պահանջել եթէ հարկ է:

ԳԱԼԵՕՋԵԱՆ Լ. ԷՅ. — Ես ալ կուզէ՛մ գիտնալ թէ ինչ տնօրէնութիւն եղած է յափըշտակեալ Ազգային կալուածոց նկատմամբ. որոց վրայ փաշան անորոշ կերպով խօսեցաւ իւր ատենաբանութեան մէջ:

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Հարցումը կըրկնուեցաւ, կուզեմ կարճ ի կարճոյ պատասխանել որ խօսքն աւելի չբերկարի: Երուսաղեմայ մէջ գտնուած ազգային կալուածներն ձեռք բերուեցան, բայց ոչ առանց զօհողութեանց, կը բաւէ ձեզ այսքանն ըսել որ մինչեւ իսկ այդ կալուածներէն տուն մը քակեցին եւ զայն ի նորոյ կառուցանել հարկ եղաւ: Իսկ անոնց մէկ մասն ալ վարձակալութեան պայմանագրով ձրի տրուեցաւ, սակայն այս զօհողութեան ձեւով անոնց սեպհականութեան իրաւունքն ապահովութեան ներքեւ գրուեցաւ:

Իսկ թէ ինչ եղան Ազէքսանդրիոյ կալուածներն, Սիմէօն Սրբազան կրնայ այս մասին լիուրի տեղեկութիւն տալ ձեզ, վասն զի

ինքն էր որ Երուսաղեմայ սեպհականութեան իրաւունքն ձեռք բերելու համար հոն գնաց, եւ այսքան ըսեմ ձեզ թէ Երուսաղեմայ սեպհականութենէն երեսուն երկու հազար կանգնոյ չափ գետին մը կայ գրաւուած: Եզիպտոսի մէջ գտնուած կալուածներէն նալ յետ բազում դատաստանական գործողութեանց, Երուսաղեմայ վանայ ձեռքը տասն եւ հինգ հատ տուն մնացած է, եւ անոնք ալ կիսաւեր վիճակի մէջ: Հոս պէտք է յայտարարեմ որ Երուսաղեմայ վանքն իւր բնիկ ժողովուրդէն նիւթապէս միշտ վնաս տեսած է քան օգուտ:

Ինչ բացատրութիւն եւ տեղեկութիւն որ տուի ցարդ, կը ծառայէին պարզելու սա կէտն թէ՛ Երուսաղեմայ Կանոնագիրն ի՞նչպէս եւ ինչո՞ւ այս կերպարանքով կուգայ ժողովիդ: Բուն խնդրոյն ողին այս կէտն էր, եւ կարծեմ թափանցեցիք զայն: Ստոյգ է որ Կանոնագրին հետ իմ տուած տեղեկագիրս չկրցիք տեսնել, բայց անոր պարունակութիւնը գրեթէ անձանօթ չմնաց ձեզ, եւ թերեւս օր մ'ալ երբ ժամանակը գայ, տեղեկագիրն ալ կարենաք տեսնել: Այսու ամենայնիւ եթէ հարկ դատիք, կրնաք նաեւ Յանձնախումբ մը կարգել որ երթայ ձեր կողմէ ամեն զիր աչքէ անցնէ, ամենայն ինչ քննէ, եւ ձեզ տեղեկութիւն բերէ իրաց վիճակին վրայ:

Իսկ այժմ Կանոնագիրն է միայն խնդրոյ նիւթը, եւ անոր քննութեամբը պիտի գրաւինք. ինչպէս յայտարարած եմ արդէն, բացատրութեան տեսք մը կայ այդ Կանոնագրին կցեալ, եթէ պէտք կզգաք կը կարդամ ձեզ, բայց եթէ զայն ալ տեսնելէ յետոյ տակաւին Կանոնագիրն անմիջապէս վաւերելու պիտի դեղեւիք, այն ատեն այս ընթերցումն ալ անօգուտ պիտի լինի, եւ ժողովին ժամանակը, որ շատ կարճած է, պիտի խլէ միայն: Ուստի եւ ի որ այս վերջին պարագային մէջ՝ որպուի այդ բացատրութեան տեսքն, եւ այնուհետեւ Կանոնագիրը վիճարանութեան ենթարկենք ընդարձակ կերպով. իսկ ես ալ ըստ որում այլ եւս չեմ կրնար յապագել իմ ուղեւորութիւնս, իմ հրաժեշտի հուսկ ողջոյնս կը մատուցանեմ ձեզ, եւ կը մեկնիմ աստի:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Սոյն գիտողութիւններէն յետոյ, որ տրուեցան ցարդ իրաց վիճակին վրայ, կը կարծեմ թէ արժան է այդ կանոնադիրը ամբողջապէս ընդունիլ: Երուսաղիմայ խնդիրը ծագած վայրկեանն մեր բովանդակ ուշը գրաւող կէտն այն էր թէ ինչու եւ ինչպէս այդ երեսուն հազար ոսկւոյ պարտքը գոյացեր է, կանոնադիրն որ կը ներկայանայ մեր վաւերացմանը, մի թուժք կը զընէ Երուսաղիմի Միաբանութեան կամացն առջեւ, եւ իրաց այս վիճակին շարունակութիւնը կարգելու: Ահա այս նկատմամբ կառավարկեմ որ կանոնադիրն անմիջապէս ընդունինք իւր ամբողջութեամբն, եւ 80-81 տարւոյ եւամտացոյցը որ զրկուեր է Երուսաղէմէն, Համարակալութեան դիւանին յանձնուի ի քննութիւն: Այս կերպով կը կնքենք խնդիրն, իսկ եթէ կարելի չպիտի լինի այս, այն ատեն բացատրութեանց անտրն կը սպուի, եւ կանոնադիրն երկար վիճարանութեան մը բովէն կանցնի:

Կը կրկնեմ զարձեալ թէ իմ կարծիքս խընդիրն այսօր վերջացնել է:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես այդ կանոնադիրն ապօրէն կերպով ներկայացուելուն համար բողոքած եմ, սակայն ուշի ուշով կարգացի զայն, եւ բաւական թուեցաւ ինձ նոր պարտքերու գոյացումն արգիլելու համար: 65ի կանոնադիրն ալ եթէ գործադրուած լինէր, այս պարտքը չպիտի գոյանար, ինչ երաշխաւորութիւն կայ այժմ որ նոր կանոնադիրն անթերի պիտի գործադրուի: Ազգային մէջ զայն ալ իւր նախորդին վիճակին չենթարկելու համար, կարծեմ թէ պէտք չէ որ բոլորովին լռենք այս վիճակին վրայ, այլ մեր ցաւը յայտնելու ենք որ այսպիսի մեծաքանակ պարտք մը գիգեր են:

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Իրաւացի կը գտնեմ Քրիստոստուր էֆէնտիի գիտողութիւնն, եւ շնորհակալ եմ իրեն որ այս խնդիրը կը յուզէ: Ստուգիւ այս կանոնադիրը սահմանուած է ամեն հաւանական զեղծմանց եւ քմահաճո-

յից գէժ թուժք մը լինելու, բայց երբ գործադրուի եւ խզի մտօք գործադրուի: Այժմէն պէտք է գիտնալ որ եթէ այս նոր կանոնադիրն գործադրութիւնն ալ Միաբանութեան կամաց թողուի, կրնայ 65ի կանոնադիրն զըժբաղդութեանը հանդիպիլ, եւ անոր պէս նախաճանաչ: Ես արդէն համարձակեցայ միանգամ լայտարարել որ զուք եղած էք պատճառ այս վիճակին, կանոնադիրն գործադրութեան զըսպանակը ձեր ձեռքն է, եւ պէտք է զայն ամբարայնք բռնէք: Այս կանոնադիրն մէջ յօդուած մը կայ որ Միաբանութիւնը կը հարկադրէ վանքին նիւթական եւ բարոյական վիճակն ի ծանօթումն բերել ձեզ եւ իւր ընթացքին համարը տալ. ահաւասիկ այդ յօդուածը:

« 3օդ. 41. — Ամեն տարեգլուխ Միաբանական Ընդհանուր Ժողովն Տնօրէն խորհրդոյ « համարատուութեան տեղեկագիրն եւ ելմը « տացոյցն ընդունելով ստուգելէն եւ վաւերացնելէն յետոյ իւր կողմէ համարատուութեան Տեղեկագիրը կուղղէ առ Ազգ. Երեսօրինական կանոնադիրը, մասնաւոր խնամով « նշանակելով ի նմա,

« Ա. Տարւոյն մէջ Միաբանական անդամաց ընդունելութեան, պաշտօնավարութեան « հաւատարիմ ծառայութեան համար եղած վարձատրութեանց, ձեռնադրութեանց, հրաժարման, արտաքսման եւ մահուան վերաբերեալ տնօրէնութիւնքն:

« Բ. Տարւոյն ենթադրեալ ելմտացոյցին « նկատմամբ ելումտից կատարեալ վիճակն, եւ ի մասնաւորի՝ փոխատուութեանց եւ կալուածական գնմանց եւ վաճառմանց վերաբերեալ տնօրէնութիւնքն, եւ պարտուց վճարման նկատմամբ ի գործ դրուած միջոցներն « եւ արդիւնք նոցին:

« Գ. Յաջորդ տարւոյն ենթադրեալ ելմը « տացոյցն եւ ելումտից հաւատարակչութեան « համար որոշուած միջոցներն:

« Դ. Միաբանական անդամաց ուսումնական յառաջադիմութեան եւ ընդհանրապէս « Ազգային դաստիարակութեան նկատմամբ « գործադրուած միջոցներն եւ արդիւնք նոցին: « Եւ

« Ե. Տնօրինական Ս. Տեղեաց եւ այլ Աւիս. « տատեղեաց մէջ օտարաց հետ ընկերոյի եւ « առանձինն ազգային արածուութեանց եւ « սեպհականութեանց մասին պատահած նշանաւոր գէտքերն, եւ ասոնց նկատմամբ ընդ « ազգային կեդրոնական վարչութեան, ընդ « տեղական կառավարութեան, ընդ Քրիստոստու « եայ օտարազգիս եւ ուղղակի ընդ նախարար « բն Տէրութեան կամ այլ պաշտօնակալս տե « ղի ունեցած յարաբերութիւնք եւ արդիւնք « նոցին »:

Անշուշտ ձեր պարտքն է հսկել որ այս յօդուածը անխափան գործադրուի եւ Միաբանութիւնն իւր համարատուութիւնը կատարէ: Թէ այս հսկողութեան կէտն պարտաւորիչ գործելու եւ թէ Սահմանադրութեան մէջ Երուսաղիմայ Ս. Աթոռոյն վերաբերեալ ինչ ինչ կէտերն բարեփոխելու համար տասն յօդուածէ բաղկացեալ առաջարկ մը պատրաստեցի՞, զոր իբր երեսփոխան ժողովոյ կը մատուցանեմ:

Այս առաջարկեալ յօդուածոց մին իւր մէջ կը կրէ կանոնադիրն գործադրութեան զսպանակն կամ երաշխաւորութիւնն, զոր Քրիստոստուր էֆէնտի կը խնդրէր: Ահաւասիկ նոյն յօդուածն:

« 3օդ. 42. — Եթէ Միաբանութեան համարատուութեան տեղեկագիրը ճիշդ տարեգլխոյն « Մայիս 1 էն մինչեւ վերջ կամ առ առաւելն « մինչեւ Յունիս վերջ Կ. Պօլիս չղրուի, Ազգ. « Ժողովն մի անգամ ազգարարութիւն կրնէ եւ « կրկին պայմանաժամ կորուչէ, եւ եթէ զարձեալ « չյաջողի տեղեկագիրն ընդունելու, ան « միջապէս ամբաստանութեան կենթարկէ ըզ « Պատրիարք Երուսաղէմի եւ զՏնօրէն խորհուրդ « եւ պէտք եղած միջոցներն ձեռք կառնու Ս. « Աթոռոյ ելմտական վիճակն սպառնովելու համար:

« Եթէ ընդհակառակն համարատուութեան « տեղեկագիրն ժամանակին հասնի Պօլիս, բայց « Ազգային Ժողովն զայն քննութեան չենթարկէ « Եւ Միաբանութեան չպատասխանէ, Միաբանութիւնը կրկին խնդրազրով իւր տեղեկագրին նկատառումը կը խնդրէ եւ եթէ զարձեալ « անյախելի մնայ, սոյն խնդրազրին մատու « ցումէն ամիս մ'եաքը իւր հայրեններն ընկալեալ

« Եւ իւր պիւտճէն վաւերացեալ նկատելու իւր « բաւուր կատանայ եւ ըստ այնմ կը վարուի »:

Ինչպէս կը տեսնէք, այս յօդուածին առաջին հասն Միաբանութեան կողմէ տեղի ունեցող զանցառութեան գէժ նախազոյժ միջոցներ կը սահմանէ, եւ երկրորդն տեղեկագրին գալէն յետոյ զմեզ կը հարկադրէ պէտք եղած տնօրէնութիւններն ընելու, եւ յապագման պարտադրից մէջ Միաբանութեան բռնելիք ընթացքը կը գծէ:

Երբ այս յօդուածն ընդունինք եւ Սահմանադրութեան մէջ անցնենք, այն ատեն զուք պիտի հարկադրիք ստիպելու Միաբանութիւնը կանոնադիրն գործադրելու եւ իւր վիճակը մեզ ծանօթացնելու, իսկ երբ անոր համարատուութեան տեղեկագիրն զայ հասնի, կրնանք քննութիւն բանալ, նոր առաջարկութիւններ բերել եւ վերջապէս ինչ որ արժան է տնօրինել: Ես կը կարծեմ եւ այժմէն կը հրապարակեմ թէ լուսագոյն որ Ազգ. Ժողովոյ կողմէ գոնէ հինգ տարին անգամ մը քննիչ մ'երթայ Երուսաղէմ. այս ալ ինչանակեցէք:

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Ստեփան փաշան իբր պատուիրակ Երուսաղէմայ խընդրոյն, իւր համարատուութիւնը ներկայացոյց գոն եղանք իւր բացատրութիւններէն եւ տեղեկացանք թէ ինչ պատճառներու ներքեւ 65ի կանոնադիրն լռեր եւ նոր մը շինել հարկ եղեր է: Այժմ պատրաստուած ենք կանոնադիրն ընդհանրութիւնն ընդունելու, իսկ այնուհետեւ կը մնայ յօդուած առ յօդուած քննութիւնն: Բացատրութեանց անտրն, որ կը ըլլուած է կանոնադիրն, կը յուսամ թէ այս քննութիւնը պիտի գիւրէ եւ զմեզ գոհացնէ: Բայց այդ անտրն ընթերցումը չլսած թերեւ թեր ու գէժ խել մ'երկար գիտողութիւններ լինին, որք տեղի չպիտի ունենային անշուշտ եթէ բացատրութեանց անտրը կարգացուէր եւ գիտողութիւն ունեցողներն անոր մէջ գտնէին իրենց գոհացուցիչ պատասխանն: Աւստի կառավարկեմ նախ կանոնադիրն ընդհանրութիւնը քուէարկել, եւ երկրորդ յօդուածոց քննութեան անցնելու համար բացատրութեան անտրը լռեր:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՖ. — Պատմական սր-
խալ մը կայ, պէտք է ուղղել: 71 ի Աար-
չութեան օրով՝ Տնտեսական խորհուրդն՝ որու
անդամ էի ես, առաջարկեց համար պահան-
ջել Երուսաղէմայ միաբանութենէն, ասոր
միայ Աարչութիւնը հաշիւ ուզեց եւ այդ հա-
շիւը 74ին հաղիւ տրուեցաւ:

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Քրիստոստուր
էֆէնտին իրաւունք կունենար այդ դիտողու-
թիւնն ընելու, եթէ ես իւր ըսած կերպով
լստած լինէի: Ես չըտի թէ Երուսաղէմայ
միաբանութիւնը ժամանակին իւր հաշիւը տը-
ւած է: 73 թուականին Երուսաղէմայ Պատ-
րիարքէն ծրագիր մ'եկած է կալուածական
խնդրոյ մը միայ, եթէ այն ատեն պատաս-
խան մը տրուեր, այսօր թերեւս պարտքը
10000 ոսկիի իջած էր, զի Աղէքսանդրոյ այն
դեպիներն որ 150 հազար ոսկի կարծէին
այն ատեն, այսօր 10 հազար կարծեն:

ԱՏԵՆԱԳԵՏ ԷՖ. — Երուսաղէմայ վիճակին
եւ այս կանոնագրին պատրաստութեան պատ-
ճառներուն վրայ Ստեփան փաշայի կողմէ
տրուած բացատրութիւններն պարզեցին խըն-
դիրն: Եւ Տ. Մատթէոս Եպիսկոպոս կանո-
նագրին ընդհանրութեանը համար քուէ առա-
ջարկեց: Աւստի ժողովին որոշումը պիտի
խնդրեմ այս մասին:

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին ըստ
առաջարկութեան Տ. Մատթէոս Եպիսկոպոսի
կանոնագրին ընդհանրութիւնը քուէի կը դնէ
եւ ժողովը միաձայն կ'ընդունի զայն:

ԱՏԵՆԱԳԵՏ ԷՖ. — Ժողովն առաջին որոշ-
մամբ ընդունեց կանոնագրին ընդհանրութիւ-
նը, կը մնայ այժմ անոր յօդուած առ յօդուած
քննութիւնն ու քուէարկութիւնն, ժողովը
կուզէ՞ արդեօք նոյն բացատրութեանց տեսրին
ընթերցուող լսել:

ԷՔՍԵՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — Ստեփան փաշան
յայտնեց թէ ինք Երուսաղէմ գտնուած ատեն

յանուն երեսփոխանութեան ընդունել տուեր
է այդ կանոնագրին եւ իւր տեղեկութեանց
համաձայն կը գործադրուի եղեր արդէն անոր
կլմտական մասն: Մենք ալ արդէն կանոնա-
գրին ողին ընդունեցինք, ըսել է որ այլեւս
անապարելու բան չունինք, ուստի կը կար-
ծեմ թէ լաւագոյն է որ բացատրութեան տես-
րը տպուի, զայն կարգանք, եւ այնուհետեւ
կանոնագրին յօդուած առ յօդուած քննելք,
եւ եթէ բարեփոխում մը պէտք է կատարենք,
առանց ողւոյն գպչելու: Այս կերպով մենք
մէկ կողմէ մեր գործը կը կատարենք, միւս
կողմէ կանոնագրին գործադրութիւնը կը շա-
րունակէ:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ես ալ բա-
րեփոխում պիտի յաւելցնեմ կանոնագրին
յօդուած առ յօդուած քննելու առաջարկին
միայ: Ես կառաջարկեմ առանց յօդուած առ
յօդուած վիճարանութեան ենթարկելու:
Կանոնագրին գործադրութեան դնել առ
ի փորձ, բայց երկամեայ պայմանաժամաւ:
Վասն զի մենք որքան ալ ուշադրութեամբ
զայն քննել ուզենք, տարակոյս չկայ թէ անոր
թերութիւնն պէտք է փորձով ստուգուի եւ
չենք զիտեր թէ ինչ բարեփոխում պէտք է,
մեր դիտողութիւններն այն ատեն կրնան հա-
տունալ, երբ պայմանաժամաւ մը կանոնա-
գրը գործադրութեան գրուի եւ անոր բարե-
փոխելի կէտերը երեւան ելնէ: Այս երկամ-
եայ գործադրութեան փորձէն յետոյ կանոնա-
գրին յօդուած առ յօդուած քննութեան կառ-
նունք եւ կը բարեփոխենք:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՖ. — Կը ձայնակցիմ:

ՄԵԼԻՔԵԱՆ Գ. ԷՖ. — Կանոնագրին ընդ-
հանրութիւնն ընդունուեցաւ եւ մնայ յօդ-
ուած առ յօդուած քննութիւնն: Ժողովին մէջ
միտում մը կայ, որ առանց այս քննութեան
մտնելու՝ ամբողջապէս կուզէ ընդունիլ զայն
առ ի փորձ գործադրութեան դնելու պայմա-
նաւ, եւ ուրիշ միտում մ'ալ կայ որ յօդուած
առ յօդուած քննութիւն կուզէ: Ես կը կար-
ծեմ թէ առ ժամս մեր ընելիք միակ գործն է

բացատրութեանց տեսրը լսել, եւ այնուհետեւ
որոշել թէ ինչ պիտի ընենք: Թերեւս այդ բա-
ցատրութիւններն հարկ չթողուն մեզ կանո-
նագրին յօդուած առ յօդուած վիճարանու-
թեան ենթարկելու եւ վերջապէս կտրենանք
զայն քուէարկել:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Էքսէրճեան եւ
Գափամաճեան էֆէնտիներու առաջարկներն
զիրար կը շօշափեն, միայն մա կէտին վրայ է
տարբերութիւնն որ Գափամաճեան էֆէնտի
երկամեայ պայմանաժամաւ կուզէ կանոնագրին
առ ի փորձ գործադրութեան դնել, ինչպէս որ
արդէն նոյն իսկ կանոնագրին մէջ ալ վերա-
քննութեան կէտը տրամադրուած է, թէ եւ Ե-
ռամեայ պայմանաժամաւ: Ես ալ կընդունիմ
Գափամաճեան էֆէնտիի առաջարկած եղանա-
կըն եւ կառաջարկեմ վերաքննութեան պայ-
մանաժամն 3էն 2ի ղեղչել եւ այսօր քուէար-
կել կանոնագրին:

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Ես բանի մը
դիտողութիւն պիտի ընեմ կանոնագրին վրայ,
բայց նախ կուզեմ գիտնալ թէ Փաշան պիտի
հաճի բացատրութեանց տեսրը կարգալ. վա-
սըն զի թերեւս անոր մէջ պարզուած տես-
նեմ այն կէտերն՝ որոց վրայ դիտողութիւն
ունիմ, եւ այն ատեն հարկ չմնայ ինձ խօսելու:

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Բացատրու-
թեանց տեսրն ինչպէս պարտաւոր էի աւանդեցի
Դիւանին, ինչպէս նաեւ աւանդեցի անոր Հեւ
այն առաջարկն՝ որ կանոնագրին քուէարկու-
թենէն յետոյ՝ Սահմանադրութեան Երուսաղէ-
մայ վերաբերեալ դիտոյն մէջ տեղի ունենա-
լիք վերաքննական փոփոխութիւնները կը նը-
շանակէ: Վասն զի ինչպէս որ ասկէ առաջ
Վարչական կազմակերպութեան օրէնք մը
քուէարկեցիք եւ այնպէս Սահմանադրու-
թեան վարչական դուրսն վերաքննած եղաք,
նոյնպէս ալ այս անգամ երբ այս նոր կանո-
նագրին ընդունիք, Երուսաղէմայ մասը վերա-
քննած կը լինիք:

Ի հարկէ այդ երկու գրերն ալ պիտի տըպ-
ուին առանադրութեան մէջ եւ պիտի կտր-
դաք զանոնք, բայց եթէ խնդիրն ուրիշ նիս-

տի մնայ, կը ցաւիմ որ ես չպիտի կրնամ ներ-
կայ դանուիլ ձեր քննութեանց միջոցին, իսկ
եթէ կուզէք վերաքննութեան պայմանաժամն
որ կանոնագրին մէջ երեք տարի սահմանուած
է, կարճել տարի մը եւ այնպէս կանոնագրը
գործադրութեան դնել առ ի փորձ, այս մա-
սին դիտողութիւն մը չունիմ ես, կը բաւէ
որ կանոնագրին Ազգ. Ժողովոյ կողմէ վաւերա-
նայ եւ այնպէս գործադրութեան գրուի:

ԷՔՍԵՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — Երբ ժողովն եր-
կու տարուան պայմանաժամաւ կանոնագրին
գործադրութիւնը կը հրամայէ, կը նշանակէ
թէ զայն վաւերացուցած է:

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Ես չեմ պըն-
դեր որ անսլատնա բացատրութեան տեսրը
կարգացուի, այլ իմ դիտողութիւններս կը
ներկայեմ եւ դո՛ւ կըլլամ երբ բացատրութիւն
տրուի ինձ: Ահաւասիկ դիտողութիւններս:

Առաջին, կանոնագրին 18րդ յօդուածը կը
տրամադրէ որ եկեղեցական արտաքսեալ միա-
բանից անուններն եւ արտաքսման պատճառ-
ներն անմիջապէս տեղեկագրուին Ազգ. Պատ-
րիարքարանի եւ Արարատեան Մայր Աթոռոյ
եւ ի հարկին ի լուր ազգայնոց հաշակուին լրա-
դրութեան միջոցաւ: Բայց խնդիր է թէ այդ
արտաքսեալ եկեղեցականաց վիճակն ի՞նչ պի-
տի լինի: Այս խնդիրն ժամանակաւ ալ յուղ-
ուած է, եւ պարագայ մը յիշեմ ձեզ, երբ Ե-
րուսաղէմայ Ս. Պատրիարքն իւր Պատրիար-
քական ուխտն ընելու համար Պոլիս եկած
էր, զանգատեցաւ թէ երբ Միաբանութենէն
մէկն արտաքսուի, Պոլիս տէր կը կանգնի հոգե-
լոյս Պօղոս Պատրիարքն պատասխանեց, թէ ի՞նչ
կրնար ընել ինք եւ ո՞ւր կրնար պահել զանոնք:

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Երուսաղէմայ
փանքէն արտաքսուող միաբանները բաւական
չատ են թուով, ասոնցմէ քսան եւ հինգին
պատմութիւնը դրած եմ քննութեան տեղե-
կագրին մէջ, եւ խնդիրն այն չէ թէ այսպիս-
եաց արտաքսումն յետոյ ի՞նչ պէտք է ընել,
այլ այն թէ, ի՞նչ բան պէտք է չընել: Մինչեւ
ցարդ այս արտաքսեալներէն շատեր ոչ միայն
դուրսը չեն ճանչցուեր ինչ որ են, այլ եւ

բարձի եւ պատուոյ հասեր են : Մին Պոլիս եկեր եւ զինքը Պատրիարքական Խորհրդական են կարգեր , միւսն էլ զմիւսին գացեր եւ զինքը ծախսարար են անուաներ , ուրիշ մը զաւառի մ'առաջնորդ է եղեր , եւ վերջապէս ամէնքն ալ փառաց ի փառս են բարձրացեր :

Կանոնն Ազգին կողմէ այսպիսեաց արժանաւոր ընդունելութիւն մը պատրաստելու համար բացարձակապէս տրամադրեց որ միաբանից արտաքսման պարագաներն ոչ միայն տարեկան համարաւարտութեան մէջ Ազգ. Երեսփոխանական ժողովոյ ծանուցութիւն , այլ եւ ամեն անգամ անմիջապէս Արարատեան Մայր Աթոռոյ , Ազգ. Կեդրոնական Վարչութեան եւ ի հարկին նաեւ հասարակութեան ծանուցութիւն հրատարակութեամբ , եւ այն ատեն զիւրին կը վինի որոշել իւրաքանչիւրին յանցանաց աստիճանին համաձայն թէ ինչ ընդունելութիւն պէտք է ընել եւ ինչ անօրէնութիւն ի գործ դնել անոնց նկատմամբ : Աւելորդ է բնել թէ երբ արտաքսուող մ'անիրաւութեան զոհուած է , վերաքննութեան դռներն դոցուած չեն իւր առջեւ , կրնայ զայ անշուշտ բողոքել եւ իւր ընդունած դատավճարն վերաքննութիւնը խնդրել , եւ եթէ անպարտ է , իւր անմեղութիւնը հաստատել : Այսպիսի պարագայի մը մէջ Ազգ. Երեսփոխանական ժողովը կերպով մը վճռաջինջ ատենի դերը պիտի կատարէ :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Իմ երկրորդ զխտողութիւնս սն կէտին վրայ է : Կանոնագրին Յրդ եւ 23րդ յօդուածոց համաձայն Երուսաղիմայ Պատրիարքը կրնայ եօթն միաբանից կողմէ ամբաստանութեան ներքեւ իյնալ , եւ ըստ 26րդ յօդուածոց իւր պատիժն ընդունիլ , երբ ամբաստանութիւնն հաստատուի : Սակայն երբ ամբաստանութիւնը չկարենան հաստատել , բողոքարկու միաբանաց նըկատմամբ ինչ պատիժ պիտի սահմանուի : Կանոնագիրը լրու է այս մասին :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Կանոնն այդ պարագաները չէ կարող սահմանել , այլ պարզապէս դատաւորին զիտնալիք բանն է որո-

շել թէ ինչ պէտք է ընել երբ ամբաստանողը չկարենան արացուցանել ինչ որ կըսեն : Ընդհանուր օրէնքներ կան դատակերպի , եւ մենք ի նորոյ շարի հնարներ զայն , որ մտածենք այս մասին , ուստի այսպիսի պարագայի մը մէջ ինչ որ հարկ է ընել , դուք իւր դատաւոր կորոշէք եւ կը գործադրէք :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Ուրիշ զխտողութիւն : Կանոնագրին Կիրդ յօդուածին տրամադրութիւնն արածութիւնն կուտայ Երուսաղիմայ Պատրիարքին ուղղակի Տէրութեան նախարարաց հետ բանակցել , մինչդեռ ասկէ առաջ երբ Երուսաղիմայ վանքը Բ. Կրան հետ բանակցութիւն մ'ընելու պէտք ունենար , եւ զիր մ'ուղղէր , նոյն գիրը Պատրիարքարանի կը հաղորդէր , եւ անոր միջոցաւ կը մատուցուէր Բ. Կրան :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Այդ յօդուածը չը նշանակեր թէ Երուսաղիմայ յարարերութեան արածութիւնը չունէր , եւ մենք զայն կընծայենք իրեն : Երուսաղիմայ Պատրիարքն հըրովարտակի տէր է , եւ միշտ ունեցած է նոյն իրաւունքն , սակայն երբեմն գործադրած է , երբեմն ոչ : Ժամանակ եղած է որ Պօլսոյ եւ Երուսաղիմայ Պատրիարքունք իրարու հետ մարտնչած են եւ մինչեւ իսկ երկու աթոռներն միեւնոյն անձն զահակալ ունեցած են իրենց : Այսպիսի շփոթութեանց մէջ յարաբերութիւններն ալ խանգարուած են , բայց ինչ որ ալ ըլլայ , երբ հարկը պահանջէ եւ Երուսաղիմայ Պատրիարքը ուղէ յարաբերութիւն ունենալ , արգելք մը չունի որ զայն չկարենայ կատարել : Գէպք մը յիշեմ ձեզ , իւր օրինակ մեթլեհէ մի մէջ աւելի խնդիր մը կայ , փոքր իշատէ գիտէք , սակայն աւելորդ խնդիր մը չկարծէք զայն , զի աւելորդ տէր կը լինի սեպակահանութեան : Կուղեն այդ աւելը մեր ձեռքէն կորդել , եւ շատ տարիներ կաշխատուի ազգին սեպակահանութեան իրաւունքն յափշտակութենէ վերկելու համար , բայց անկարելի կը լինի : Անգամ մը երբ ազգեցութեան տէր գեւապան մը կերթայ յԵրուսաղիմ , կայցելէ մեր վանքն , եւ Պատրիարքն մի փառաւոր ընդունելու-

թեամբ կը պատուասիրէ զայն : Գեաղանը շատ զո՛ կը լինի , եւ կուղէ փոխարինել այդ պատիւն : Ուստի կը հարցնէ Պատրիարքին թէ կրնայ իրեն ծառայութիւն մ'ընել : Պատրիարքն խեղոյն Բեթլեհէ մի խնդիրը կը պարզէ եւ դեպքանք Մայրաքաղաքս վերադարձին նախարարաց հետ կը խօսի , խնդիրը խեղոյն կը կարգադրուի , եւ արդիւնքը Բ. Կոնէն ուղղակի Երուսաղիմայ Պատրիարքին կը հաղորդուի :

Արդ ինչ ընէր Պատրիարքն այս պաշտպանին մէջ : չընդունէ՞ր միթէ եկած ծանուցակիրն եւ Պօլսոյ Պատրիարքին հաղորդեցէք զայն ըսէր : Անկարելի էր այսպիսի խօսք մ'ընել : Նախ վաւարն զի իշխանութեան հեղինակութեանը զէմ էր , երկրորդ՝ վասն զի մեր ազգային իրաւանց զէմ էր :

Գուք հոս ձեր գործադիր իշխանութեան զրիսին միջոցաւ ամեն պաշտօնական անձանց հետ կը խօսիք , ամեն բանի վրայ կը խօսիք , թողէք որ Երուսաղիմայ Պատրիարքն ալ իւր շրջանին մէջ իւր գործերուն համար խօսի , եւ ձեզ տարեգրին համար տայ իւր ըրածներուն եւ խօսածներուն վրայ : Հարցուցէք իրեն թէ ինչու այս ինչ կամ այն ինչ խնդրոյն մէջ այս կամ այն կերպով վարուեր , այս կամ այն խօսքն ըրեր է , հարցուցէք , ձեր իրաւունքն է այդ , բայց մի պահանջէք որ ամեն բան կանխաւ կեդրոնին հարցնէ , եւ այնպէս գործէ կամ խօսի , զի անկարելին պահանջել է այդ :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Ուրիշ զխտողութիւն մ'ալ : Կանոնագրին Կիրդ յօդուածը կըսէ :

« Իւրաքանչիւր լուսարարապետ իր մամանակին համար մասնաւոր ժառանգութեամբ մը կընդունի Տնօրէն խորհրդէն եւ անոր մէջ կարձանագրէ մանրամասնաբար՝ Ա. Ինչ անօթ , զգեստ , զարդ եւ այլն որ կը յանձնուի իրեն յատենի Տնօրէն խորհրդոյ , եւ Բ. Ինչ փոփոխութիւն որ հարկ կը տեսնուի եւ Տնօրէն խորհրդոյ որոշմամբ կը կատարուի Աւանդատան մէջ գտնուած անօթոց , զգեստոց եւ այլն , վրայ (նորոգութիւն , ձեւի փոփոխու-

թիւն , ջնջումն եւ այլն) եւ ամէն մէկ արձանագրութեան ներքեւ թէ ինքն կատարագրէ եւ թէ Տնօրէն խորհրդոյ ղիւանին ստորագրել կուտայ : »

Այս յօդուածէն կը տեսնուի որ աւանդատան մէջ գտնուած զոյից նկատմամբ ամեն փոփոխութիւն Տնօրէն Խորհրդոյ որոշմամբ միայն պիտի կրնայ կատարուիլ : Ես կը մտածեմ որ միթէ աւելի լաւագոյն չէ որ այդ փոփոխութիւններն Տնօրէն Խորհրդոյ կողմէ ստաջարկուին , եւ Միաբանութեան Ընդհանուր ժողովով որոշուին :

Պէտք է յարեմ նաեւ որ այս գ'ատողութիւնը չպիտի ընէի , եթէ զէթ ստիպողական պարագայից համար տրուած լինէր այդ արածութիւնը Տնօրէն Խորհրդին :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Ինչ կէտի վրա զխտողութիւն որ ունենաք , բացատրութեանց , տեսրին մէջ պարզուած կը գտնէք : Նոյն իսկ այդ կէտն ալ անյիշատակ չէ անցած , եւ կը բաւէ կարծեմ կարգալ ինչ որ գրուած է այդ մասին : Ահաւասիկ :

« Հնաւանդ սովորութիւն է յԵրուսաղիմ , Երբ Սրբոց Յակոբեանց Աթոռոյ ամենայն անօթք , զգեստք , զարդք եւ եկեղեցական գորեանք եւ կահք ու կարասեք , Աւանդատան մէջ կը պահուին , եւ բանալին լուսաբարապետին կը յանձնուի , կամ աւելի ճիշդ «խօսելով , լուսարարապետի ընտրութեան ժամանակ Աւանդատան բանալին Ս. Գլխողի՛ ալիսինքն Ս. Յակոբայ զլուսն անփոփուած գեթեգմանի փոսին մէջ կը դրուի , եւ ընտրեալը ասնկէ իր ձեռքը կ'առնու , կուխտէ , եւ կ'ալ այ ասնկախ տ'օրէն Աւանդատան իրմէ զատ մարդ շչունի իշխանութիւն մանել այն տեղ ինք ինչ որ ուղէ զայն կը հանէ դուրս , զգեստ , զարդ Եւն . ի գործածութիւն եկեղեցեաց . ո՛չ որ շչունի իրաւունք նմա հրամայելու , եւ ինք Եոյ ումք է պատասխանատու , եւ իր պաշտօնը կը տեսէ մինչեւ ցմա՛ն :

« Մեծ է Լուսարարապետի պաշտօնը , մասնաւոր որ ինչպէս Աւանդատան՝ նոյնպէս « եւ եկեղեցեաց մէջ աստուածային պաշտա-

սման նա է Տնօրէն եւ վերատեսուչ, եւ Մի-
«արանութեան բոլոր եկեղեցական անդամք,
«անոր իշխանութեանը կենթարկեալ են ի մա-
«սին ժամակարգութեան:

«Կան թէ պէտ է կեղեցականաց պաշտօնավա-
«րութեան կարգ մը, եւ զգեստուց, անօթից
«եւն. համար աւանդական ստորութիւններ,
«որոց կը հետեւի Լուսարարացեալ եւ միա-
«բանք՝ մեծ մասամբ գիտակ այն կարգի եւ
«ստորութեանց, նախանձայնոյ կը հսկեն ա-
«նոնց պահպանութեանը վրայ, այնպէս որ եւ
«թէ եպիսկոպոս պատարագելու, որը պատա-
«քազը վարդապետի մը տրուի, կամ ամսօր-
«եալ ժամարարութեան կարգը այսինչին ըլ-
«լալով ուրիշ մը զրկուի անոր տեղ, եւ կամ այս
«սինչ տօնին այնինչ շուրջադը կամ դաւաղանք
«զորոճածուելուն տեղ ուրիշներ հանուին Աւան-
«զատուէն, շշուէ կսկսի միաբանութեան մէջ
«եւ կերպով մը Լուսարարացեալ կազմարար-
«ութի յաւանդապահութիւն, բայց ոչ ոք չունի
«իրաւունք նմա գիտադրելու, եւ ոչ համարա-
«տութիւն ընել մտաբերելու, զի զԼուսարա-
«րացեալը հաշուով ինչ չընդունիր, եւ հաշիւ
«եւ համար տալու կանոնական արամադրու-
«թեան մը կամ զէթ աւանդութիւն մը չկե-
«նայէն զատ, անկախ անհաշիւ եւ անդիմա-
«զորելի իշխանութեան մասին ոչ միայն աւան-
«դական արամադրութիւն կոչ միաբանից մա-
«սին մէջ, այլ եւ այնպէս մնալուն նախան-
«ձախնդրութիւն կը տրի: Գեւ այսօր մեծ մա-
«սին սրտին մէջ:

«Այս տեսակ Լուսարարացեալութիւն մը
«կամ նմանօրինակ պաշտօնավարութիւն չեմ
«կարծեր որ ուրիշ ազգաց մէջ, եւ նոյն իսկ
«ամեր ազգին մէջ ուրիշ տեղ գտնուի. եւ թէ-
«պէս սա մերոնց բարոյական եւ բարեպաշ-
«տական զգացմանց մեծութեան եւ սրտի
«ճարտութեան պատկառելի նշան մ'է, եւ
«թէ պէտ մինչեւ ցայսօր Լուսարարացեալի մը
«կողմէն անհուսաարմութեան նշան մը չէ
«պատահեր, բայց ըստ որում մարդ է Լու-
«սարարացեալը, կրնայ սխալիլ, կրնայ կո-
«ւրտաննել, բնական էր եւ բանական՝ որ թող-

«լով եկեղեցական պաշտօնականց վերատեսուչ-
«թիւնը ինչպէս որ է, զէթ Աւանդատան ար-
«ձնօրէնութեան մասին բարեփոխում մ'ընել
«մտաբերէինք, եւ ջանայինք լուսարարացե-
«ալութիւնն ալ ուրիշ պաշտօններու նման
«պատասխանատուութեան ենթարկել, եւ
«ձեռնպէս Ա. Աթոռոյ վարչական բոլոր պաշ-
«տօնները ներդաշնակութեան մէջ դնել:

«Բայց ասոր ո՛չ ժամանակը եւ ո՛չ սյա-
«քազայները ներդաշնակ չգտանք, ուստի պար-
«զատորեցանք բաւականանալ, եւ այն՝ բա-
«ւական յուզմանց տեղի առլով, 47 եւ 48րդ
«յօդուածներն սահմանելով, որոց առաջինը՝
«անցելոյն կարգադրութեան հիմ մը ձգելու
«կը ծառայէ, եւ երկրորդը՝ ապագայն երաշ-
«խաւորելու կառաջնորդէ, եւ թողուցինք
«ժամանակին աչ սերմունքը պտղաբերել, եւ
«միաբանից մարջին հետ Աւանդատան դաներն
«ալ բանալ, ըսել է որ բարեկարգութեան
«առաջին քայլն ապինք, որ աւելի թանկա-
«զին է, եւ հիացանք:

ՁԱՅՆՆԻ. — Հասկցանք:

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Ծնորակալ
«եմ բոլոր այն բացատրութեանց համար, զորս
«ստացայ գիտողութեան նիւթ եղող կէտերուն
«վրայ: Վերջին գիտողութիւն մ'ալ պիտի ը-
«նեմ:

«Երբ ասկէ առաջ Եսայի Սրբազանը Պատ-
«րիարք ընտրուեցաւ, եկեղեցեաց մէջ սկսաւ
«անմիջապէս իւր անուան յիշատակութիւնն
«եւ այնուհետեւ իւր ուխտն ըրաւ, եւ կը կար-
«ծեմ թէ պէտք է նախ ընտրեալն իւր ուխտը
«կատարէ, եթէ եպիսկոպոսաց դասէն է, երու-
«սաղէմի մէջ յատենի միաբանութեան Ընդհա-
«մուր ժողովոյ, իսկ եթէ Վարդապետ, էջ-
«միածնէն ուր պիտի երթայ եպիսկոպոսանալու,
«վերադարձած ատեն՝ յատենի Ազգային ժողո-
«վոյ, եւ այնուհետեւ տեղի ունենայ անուան
«յիշատակութիւնն: Այս բարեփոխումը 30րդ
«յօդուածին կը վերաբերի:

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Ծառ ազէկ, բայց

«կարծեմ այդ կէտը կանոնադրին վերաբերեալ
«խնդիր մը չէ, ալ նոյն իսկ մեր Սահմանադ-
«ութեան մէջ հարկ է անցնել. ապկայն եթէ
«կուղէք, կանոնադրին մէջ կրնայ մուտ գտնել:

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Տակաւին
«գիտողութեան շորս կէտեր ալ ունէի, սակայն
«ցարդ ընդունած գործադրիչ բացատրութիւն-
«ներէս համոզուեցայ որ այդ կէտերուն վրայ
«ալ բացատրութեան տեսին մէջ համոզիչ
«լուսարանութիւններ պիտի գտնեմ, ուստի
«մեկուսի թողուցի զանոնք:

ԷՔՍԷՐՃԵԱՆ Տ. ԷՃ. — Ըստ կանոնադրի,
«երուսաղիմայ վանքը Միաբանական Ընդհա-
«մուր ժողով մ'ունի, որու մեծ գործեր արք-
«ուած են: Բայց եթէ պատահի որ անոր ան-
«դամոց թիւն 10 կամ 15ի իջնայ, այն ատեն
«ինչպէս կրնայ այսպիսի աննշան թուով մը
«այդ ժողովն այդ մեծ գործերը անօրինել, եւ
«միթէ շփոթութիւն չծաղի՞ր ասկէ:

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Ասկէ առաջ
«միաբանական այդ Ընդհ. ժողովոյ գործութիւ-
«նըն անգամ կասկածի տակ էր, սակայն այժմ
«նոր կանոնադրով որոշ կազմակերպութիւն
«մ'ստացած է, եւ ամեն ամսավերջ պիտի գու-
«մարուի կանոնաւորապէս: Այս ժողովին ան-
«դամ են բոլոր եկեղեցական միաբաններն,
«մինչեւ սարկաւազներն ալ ի միասին համա-
«բերով, անկարելի է որ անոնց թիւն այդ
«աստիճան նուազի, հետեւաբար Տելեմաք
«էֆէնտիի երկիւղն չկրնար իրականութիւն
«գտնել:

ՁԱՅՆՆԻ. — Քուէ, քուէ:

ՊԱԼԵՕԶԵԱՆ Լ. ԷՃ. — Ես ալ քանի մը
«գիտողութիւն ունէի, բայց ժողովը հակամէտ
«գտնելով կանոնադիրը քուէարկելու, զանց
«կառնեմ, միայն մէկ կէտի մը վրայ բացա-
«րութիւն խնդրելով:

«Կանոնադրին 100րդ յօդուածը կը տրա-
«մադրէ որ կանոնադիրը վերաքննելի է վաւե-

«բացման թուականէն երեք տարի յետոյ, եւ
«թէ վերաքննութիւնը միաբանական Ընդհ. ժո-
«ղովով կը կատարուի եւ Ազգ. երեսփոխանա-
«կան ժողովոյ կը մատուցուի ի վաւերացումն:

«Կուղէի գիտնալ թէ երբ Ազգ. ժողովն պէտք
«տեսնէ վերաքննելու, չէ՞ կարող արդեօք, զայն
«կատարել մինչեւ որ միաբանական Ընդհ. ժո-
«ղովը չառաջարկէ:

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Ամեն տեղ Ազգ.
«ժողովներն գերիշխանութիւն ունին, բայց չեն
«կարող իրենց հաստատած օրէնքներն ալ առա-
«թուր կոխել: Ես կը յիշեմ որ ասկէ առաջ Յրան-
«սայի մէջ եօթը տարուան պայմանաժամաւ
«հանրապետութեան Նախագահ մ'ընտրեցին, եւ
«ուղեցին զեղչել այդ պայմանաժամը, բայց
«չկրցին: Արդ՝ երբ մենք ալ վերաքննութեան
«համար պայմանաժամ մը կորոչեմք, պէտք է
«համբերենք, ուրիշ խնդիր որ, եթէ երեք
«տարին երկար կերելի, կրնանք երկուքի զէջ-
«չել: Դաշն: Այսքան պայմանաժամովն նկատ-
«մամբ: Իսկ գալով՝ բուն իսկ վերաքննութեան
«եղանակին, երբ պայմանաժամն հասնի, կը
«պահանջէք անմիջապէս միաբանութենէն որ
«վերաքննութիւնը կատարէ, եւ եթէ մասնա-
«ւոր այս ու այն կէտը բարեփոխելու պէտքը
«կզգար դուք, ցոյց կուտայք զայն, որ բարեփո-
«խէ. եթէ չըրաւ, կը պատժէք:

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Կարճ պա-
«տասխան մ'ունիմ Պալեստինայի էֆէնտիի գի-
«տողութեան: Օրէնքի մը թերութիւններն փոր-
«ձը կատարէ, եւ վերաքննութեան պէտքը
«ցոյց կուտայ: Եստ գիւրին պիտի լինի մեզ Ն-
«բուսաղիմայ կանոնադրին թերութիւնն ըմբռնել,
«վասն զի միաբանութիւնն ամեն տարեգլուխ
«իւր համարատուութեան տեղեկագիրը պիտի
«մատուցանէ մեզ, այդ տեղեկագրին քննու-
«թիւնը բաւական պիտի լինի երեւան հանելու
«թէ միաբանութիւնը գժուարութեան մը հան-
«դիպած է կանոնադրին գործադրութեան ա-
«ստնն եւ թէ ո՞ր կէտերուն մէջ:

«Եթէ գժուարութիւն մը կայ, այն ատեն
«վերաքննութեան պէտքն անժխտելի կը դառ-
«նայ եւ միաբանութեան իմաց կը տրուի որ

սկսի վերաքննել, բայց ինչպէս կանոնադրին մէջ ալ յիշուած է, մինչեւ վերաքննեալ կէտերուն վաւերացումը, ՚ին տրամադրութիւնը անսխալօրէն կը տիրէ:

ԲԱԶՄԱԹԻԻ ԶԱՅՆԵՐ. — Քուէ, քուէ:

ԱՏԵՆԱԳԵՏ ԷՅ. — Ամեն կողմէ քուէի ձայներ կը բարձրանան, եւ ժողովը կերելի թէ ստիպողութիւն կընծայէ Երուսաղիմայ կանոնադրին: Այս կէտին վրայ հարկ է որ իւր որոշումը խնդրեմ, սակայն նախ վիճարանութեան փակումը քուէի պիտի դնեմ:

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին վիճարանութեան փակումը քուէի կը դնէ եւ ժողովը միաձայն կ'ընտրուի զայն:

ԱՏԵՆԱԳԵՏ ԷՅ. — Վիճարանութիւնը փակուած է այլ եւս, կը մնայ այժմ գիտնալ թէ ժողովը ստիպողութիւն կընծայէ՞ Երուսաղիմայ կանոնադրին, եւ կուզէ՞ զայն վերջնական քուէի ենթարկել, ըստ ներք յօդուածոց ներքին կանոնադրի:

Ահա այս կէտին վրայ ժողովին կամքը պիտի խնդրեմ:

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին սոյն կէտը քուէի կը դնէ եւ ժողովը միաձայն կ'ընտրուի Երուսաղիմայ կանոնադրին ստիպողութիւնը:

ԱՏԵՆԱԳԵՏ ԷՅ. — Ահա ասիկ ժողովն ըստ ստիպողութիւն ընծայեց կանոնադրին, եւ զայն պարզ որոշման եղանակին ենթարկեց ըստ կանոնի: Կլխաւոր բար երկու բարեփոխութիւնք առաջարկուեցան, առաջինն է վերաքննութեան պայմանաժամը երեք տարիէն երկուրի զեղջել, եւ երկրորդ՝ եկեղեցեաց մէջ Պատրիարքին անուան յիշատակութիւնն ուխտին կատարումէն յետոյ կատարել: ահա այս կրկին բարեփոխութեամբ ձեր քուէին կենթարկեմ կանոնադրին:

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին Երուսաղիմայ կանոնադրին քուէի կը դնէ, եւ ժողովն հանդերձ առաջարկեալ կրկին բարեփոխումներով կ'ընտրուի զայն միաձայն, եւ ժողովը քուէի կը հրամայէ:

ԱՏԵՆԱԳԵՏ ԷՅ. — Երուսաղիմայ կանոնադրին Ազգային ժողովին ընդունուած է եւ ժողովը միաձայն կ'ընտրուի զայն:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՅ. — Առաջարկ մ'ունիմ ժողովին մատուցանելու: Ազգը շատ անգամներ զանազան պաշտօններով պատուիրակներ կարգած է, բայց ոչ ոք անոնցմէ ցարդ եկած եւ Ստեփան վաչային նման իւր համարը մատուցած է Ազգ. ժողովին: Այս առաջին անգամն է որ այս ժողովն այսքան գոհացուցիչ կերպով համարատուութիւն մը կը լսէ պատուիրակի մը կողմէն, որ այսքան մեծ ծառայութիւն մատուցած է: Ուստի շնորհակալութեան քուէ պիտի առաջարկեմ:

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Ես ալ միւսնոյն առաջարկը պիտի ընէի. կը ձայնակցիմ:

ԶԱՅՆԵՐ ԱՄԵՆՈՒԹՏ. — Այդ առաջարկը մերն ալ է:

ԲԱԶՄԱԹԻԻ ՆՍՏԱՐԱՆՆԵՐԷ՛: — Կընդունինք:

(Համակրանաց եւ գոհունակութեան եռանդուն ցոյցեր առ Պատուիրակն)

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին հրաւիրանաց վրայ երեսփոխանք միահամուռ յոտն կը կանգնին, եւ ժողովը միաձայն շնորհակալեաց քուէ կուտայ առ Պատուիրակն Երուսաղէմի, Ստեփան վաչա Աւանեան:

ԱՍԷՆՆՆ Ս. ՓԱՇԱ. — Շնորհակալ եմ ձեր տուած քուէին համար, որ մեծ մխիթարութիւն մ'է ինձ եւ միանգամայն քաջալեր

մը: Մխիթարութիւն մ'է, վասն զի պատուիրակութեան պաշտօնիս մէջ վէրք մ'առած եմ, եւ ձեր բուէին մէջ կը գտնեմ անոր սպեղանին, քաջալեր մը, վասն զի հանրական ժողովը ծառայութեան կոչուողները սէտք է գիտնան թէ ազգը կը հսկէ իւր ժողովը վրայ, եւ խղճի մտօք աշխատողները կը ճանչէ:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՅ. — Երուսաղիմայ պարտուց բարձման Յանձնաժողովին աշխատութիւններն ալ առիթ ունեցած եմ ի մտայ ճանչնալու, ուստի անոր համար ալ շնորհակալութեան քուէ կ'առաջարկեմ:

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Դեռ եւս անժամանակ է այդ քուէն, եւ այն ատեն կըրնայ տրուիլ, երբ պարտուց բարձման Յանձնաժողովն իւր համարը ներկայէ:

ԶԱՅՆԵՐ. — Իրաւացի է:

Նախարանիչ Դիւանք


ԱՏԵՆԱԳԵՏ ԷՅ. — Նախաձեռնութեան եւ

Համարակալութեան գիւաններէն մէկ մէկ անդամ պակասած են, Քօլօլեան եւ Պօյանեան էֆէնտիներն, որ երեսփոխանական պաշտօնէ հրաժարած ըլլալով՝ բնականաբար Նախաքննիչ Դիւաններէ ալ հրաժարեալ կը համարուին: Ուստի Դիւանն ըստ կանոնի ձեռ ընտրելի կ'առաջարկէ Նախաձեռնութեան գիւանին համար՝ փոխանակ Քօլօլեան էֆէնտի Միւսա էֆէնտի Գալիստանեան եւ Համարակալութեան գիւանին համար՝ փոխանակ Պօյանեան էֆէնտի Ստեփան էֆէնտի Փափաղեան:

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ սոյն ընտրութիւնն եւ ժողովը միաձայն կ'ընտրուի զայն, որով Միւսա էֆէնտի Գալիստանեան, Նախաձեռնութեան գիւանին եւ Ստեփան էֆէնտի Փափաղեան, Համարակալութեան գիւանի անդամ կանուանուին:

Յառաջիկայ նիստն երեք շաբաթէն գումարուելու որոշմամբ ատենը կը փակուի:

Ատենաղապիւր Մ. Յ. ՄԷԼԻՔԵԱՆ Ատենապետ Տ. ԵՆՈՍՈՒՅԵԱՆ



Կ Ա Ն Ո Ն

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՈՒԻՏԻՆ

Ս Բ Բ Ո Ց Յ Ա Կ Ո Վ Բ Ե Ա Ն Ց

Ի Ս. ԵՐՈՒՍԵՂԷՄ

ԾՐԱԳՐԵԱԼ Ի ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱՅԷ ԱՍԼԱՆԵԱՆ

ԵՒ ՎԱԻԵՐԱՅԵԱԼ ԿՐԿԻՆ ԲԱՐԵՓՈՒՌԻՔԵԱՄԲԲ

ՅԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՐԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Ի ՆԻՍՏ Ժ ԲԱՑՄԱՆ 1880 ԱՄԻ. — 10 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1880

ԳԼՈՒԽ Ա.

Ա. ԸՆԴՈՒՆԵԼՈՒՅԻՆ ԵՐԵՍՓՈՐԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Յօդ. 1. Սրբոց Յակովբեանց Միաբանութիւնը կը կազմուի Սրբոց Յակովբեանց Առաքելական Աթոռոյ Գահակալ Պատրիարքէ՝ որ գլուխ է Միաբանութեան եւ Եկեղեցական եւ Աշխարհական անդամներէ՝ որք են, առաջինները՝

Եպիսկոպոսք	Թուով 5
Վարդապետք	» 50
Սարկաւազք	» 48
Եւ վերջինները՝	
Դպիրք	» 46
Ժառանգաւոր աշկերտք	» 40
Քրձաղգեաց եղբարք	» 82
Եւ Մայրապետ քորք	» 34

Յօդ. 2. Սրբոց Յակովբեանց Միաբանութեան անդամ ընդունուելու համար պայման է 1.—առողջ ըլլալ մարմնով, 2.— 16էն մինչև 18 տարեկան հասակաւ՝ եթէ ժառանգաւորաց Վարժարանի աշակերտութեան կ'ուզէ մտնել ներկայացողը, 18էն մինչև 40 տարեկան՝ եթէ Քրձաղգեցից կարգը ընդունուիլ կը փափաքի. և 30էն մինչև 40՝ եթէ մայրապետ է. 3.— բարեբարոյ վկայեալ, և 4.— Միաբանութեան մէջ ո՛րևէ գործով մը Ս. Աթոռոյ ծառայութիւն մատուցանելու կարող և պատրաստական ըլլալ:

Յօդ. 3. Երկրորդ յօդուածոյ մէջ նշանակեալ հանգամանք մասնաւոր վկայագրով ստուգուելէն, և բժշկական քննութեամբ հաստատուելէ ետքը՝ ընտրելիին վարքն ու բարքը և յաջողակութիւնը

հասկացուելու համար Տնօրէն խորհրդոյ կողմէն փորձոյ կենթարկուի վեց ամիս :

Յօդ. 4. Ձկնի վեցամսեայ փորձոյ, ընտրելիին վկայադրերը և փորձոյ ժամանակ իր վրայ հսկող պաշտօնակալին Տեղեկագիրը յաստիճակ Տնօրէն խորհրդոյ կարգացուելով, եթէ ընդունելութիւն որոշուի, «Միաբանութեան կանոնաց հնազանդութեամբ Ս. Աթոռոյ հաւատարմաբար ծառայելու» խոստմնագիր կառնուի ձեռքէն, Միաբանութեան Մայր-Տոմարին մէջ անունը կարձանագրուի և անմիջապէս պաշտօնը սահմանուելով կը յանձնուի Տեսչութեան խնամոց ում կը պատկանի :

Յօդ. 5. Եթէ անդամակցութեան խնդրարկուն արդէն Եկեղեցական դասէ է՝ Սարկաւագ կամ Բահանայ և կամ վարդապետ, առողջական և բարոյական եւ Եկեղեցական վիճակը կանոնաւոր ըլլալն ստուգուելէն ետքը երկու տարի ամբողջ փորձոյ կենթարկուի, և ապա նախընթաց յօդուածին համեմատ խոստմնագիր կառնուելով ձեռքէն, կը վճուուի ընդունելութիւնն Միաբանական Ընդհանուր Ժողովով :

Բ. Պարտք եւ իրաւունք Միաբանից

Յօդ. 6. Միաբանը պարտին իր քանակութիւն իւր կարողութեան չափով ծառայութիւն մատուցանել Ս. Աթոռոյ : Այն Միաբանը որ պաշտօնի մը կը կոչուի, և առանց օրինաւոր արգելք ունենալու, զոր պէտք է յառաջ բերէ, կը մերժէ զայն և կը զլանայ իր ծառայութիւնը, պարտազանց կըլլայ և պատժապարտ :

Յօդ. 7. Միաբանը իրաւունք ու

նին Ս. Աթոռէն ընդունել Ս. Բնակարան, անանդ, և ժառանգաւորք, Դպիրք, Սարկաւագութիւնը և Քրձաղգեացը նաև հագուստ և իւրաքանչիւրն իւր անձնական մանր ծախքն հոգալու, և մնացեալ Եկեղեցական Միաբանք նաև հազուսանին ըտր ընչալ արհալ իրենք պատրաստել տալու համար՝ Միաբանակի անունով տարեկան լույսի մը, որ անձնիւր կարգի և աստիճանի յատուկ բաժանում ունի, և Պաշտօնակի անունով արհալ մը, որ իւրաքանչիւր պաշտօնի յատկացած ըլլալով կը արուի պաշտօնակալաց՝ առանց նկատաւան կարգի և աստիճանի : Սոյն նիւթական բարիք Միաբանական իրաւանց ամեն տարեկան շաշուեցոյցի պատրաստութեան ամիս Տնօրէն խորհրդոյ առաջարկութեամբ՝ Միաբանական Ընդհանուր Ժողովով կը սահմանուին, չափով և թուով և կը ղուով, ըստ չափու կարողութեան Ս. Աթոռոյ. — Բ. Հիւանդութեան ժամանակ արհալ, և ծերութեան ժամանակ ինչ : — Գ. Ուսուցիչ և Դասարանապետներն. — անունը միայն որ յարձարութիւն ունին և իմաստաւորի անունը որ Եկեղեցականութեան կը պատրաստուին : — Դ. Եկեղեցական կարգի և Ս. արհալ — անունը միայն որ Արժանաւորութիւն և Իմաստ ունին, և որոց զանազան աստիճանի բարձրացումն Տնօրէն խորհրդոյ առաջարկութեամբ եւ Լուսարարապետի եւ Ուսումնապետի վրկայադրոց վրայ Միաբանական Ընդհանուր Ժողովով կորոշուի :

Յօդ. 8. Միաբանը ազատ են իրենց անձնական դրամով, ուր որ ուզեն և ինչպէս որ ուզեն, իրենց անձին յատուկ կալուած գնելու, պայմանաւ որ սեփականութիւնը Ս. Աթոռոյն ընծայեն պաշտօն

նական կտակագրով և միայն վարձքը կամ արդիւնքը վայելեն իրենք՝ ըստ պայմանաց կտակագրոյն : Տեսուչք և Պատրիարքական ֆոխանորդ ի Պօլիս չեն կրնար առանց հրամանի Տնօրէն խորհրդոյ՝ անձնական կալուած գնել իրենց պաշտօնավարութեան միջոցին և երկրին մէջ :

Գ. Ամբաստանութիւն

Յօդ. 9. Որ և է Միաբան կրնայ ամբաստանութեան ենթարկուիլ, բայց ամբաստանութիւնը նկատողութեան առնուելու համար պէտք է որ՝ Ա. գրաւոր, և Բ. բացորոշ ըլլայ, և Գ. ստորագրեալ գէթ երկու Միաբաններէ՝ եթէ ամբաստանեալն աշխարհական կարգէ է, երեք Եկեղեցական Միաբաններէ՝ եթէ Սարկաւագ կամ վարդապետ է, հինգ՝ եթէ Եպիսկոպոս է, եթէ ամբաստանութիւնը Պատրիարքին վրայ է :

Աշխարհական Միաբանից համար եղած ամբաստանութիւնը Տնօրէն խորհրդոյ մէջ կը քննուի և կը վճուուի : Իսկ Եկեղեցականաց վրայ եղած ամբաստանութիւնը Միաբանական Ընդհանուր Ժողովոյ կողմէն կը քննուին. բայց վճիռ՝ միայն Սարկաւագաց, վարդապետաց և Եպիսկոպոսաց համար կրնայ տրուիլ սոյն ժողովոյ մէջ : Պատրիարքի ամբաստանութեան խնդիրը Միաբանական Ընդհանուր Ժողովոյ Տեղեկագրով կը ներկայանայ Ազգ. Երեսփոխանական Ժողովոյ և անդ կ'ընդունի իւր վճիռն :

Դ. Հրաժեշտ ի Միաբանական կեանց

Յօդ. 10. Որ և է Միաբան իրա

ւունք ունի հրաժեշտ տալ միաբանական կեանքէ հետեւեալ պայմաններով : Ա. Երբ միաբանը այնպիսի հիւանդութեամբ մը կախտանայ որ չներեր նմա այլ ևս շարունակել Միաբանական կեանքը :

Բ. Երբ Միաբանը արդէն ծառայութիւն մատուցած է Ս. Աթոռոյն՝ առնալու երեք տարի՝ եթէ Քրձաղգեցից կամ Դպրաց դասէն է, և կամ ժառանգաւորաց վարժարանի աշակերտելով ուսմունքն աւարտած է և չէ ուղեր կամ յարմար չէ դատուեր Եկեղեցական կարգը մտնելու. և հինգ տարի՝ եթէ Եկեղեցական դասէն է : Սոյն պարագայից մէջ Միաբանից ծառայութեան տարիները կը հաշուին Քրձաղգեցից և Դպրաց համար՝ զկնի փորձոյ Միաբան ընդունուած օրէն սկսեալ. ժառանգաւորաց համար՝ վարժարանէն ելնելով Քրձաղգեցից կամ Դպրաց կարգը մտած օրէն սկսեալ. իսկ Եկեղեցականաց համար դտնուած աստիճանն ընդունած օրէն սկսեալ :

Յօդ. 11. Մի և միւս պայմաններով հրաժարել ուզող Միաբանք խնդրագիր կը մատուցանեն Տնօրէն խորհրդոյ, որ առաւելն մէկ ամսուան մէջ պէտք եղած հետադատութիւնն ընելով, եթէ իրաւացի դտնէ խնդիրը՝ ինքն կը վճուէ հրաժարումը՝ եթէ հրաժեշտ տուողն քրձաղգեաց ոք է կամ դպիր. իսկ եթէ Եկեղեցական դասէն է՝ տեղեկագրութեամբ կը ներկայէ խնդիրն Միաբանական Ընդհանուր Ժողովոյ, որ կը լուծէ զայն վճարաբար :

Յօդ. 12. Հրաժարեալ Միաբանը պարտի իր հայրեններն ու պաշտօնավարութեան համարը կատարելապէս տալ Տեսչութեան՝ ում կը պատկանի, և ապա

իր անձին սեպհական գոյքն առնելով
բաժանուիլ Միաբանութենէն:

Յօդ. 13. Հրաժարեալ Միաբաններէն
անոնք որ կը խնդրեն մնալ միշտ ան-
դամ Միաբանական ուխտին Սրբոց Յա-
կովբեանց, պարտին խոստմնագրով յան-
ճըն առնուլ. 1. Ս. Աթոռոյ կողմէն որ և
է պարագայի մէջ իրենց յանձնարարեալ
ժառայութիւնները յօժարակամ կատարելը
պայմանու որ սոյն ժառայութիւնք չը
պարտաւորեն զիրենք վերստին Միաբա-
նական կենաց լուծի ներքեւ մտնելու յոր-
մէ հրաժարած են, և կարենան համա-
ձայնիլ իրենց վերջէն ընդունած Ազգա-
յին հրապարակական պաշտօնի կատար-
ման հետ եթէ ունին. և 2. առանց Ս.
Աթոռոյ հրամանին Եկեղեցական աստի-
ճանի բարձրացում չ'ընդունիլ. և նոյն
ժամանակ կ'ստանան վկայագիր մը, որ
իրաւունք կուտայ իրենց՝ Ա. ստորագրել
միշտ « ՚ի Միաբանական ուխտէն Սրբոց
Յակովբեանց ». Բ. գալ վերստին Միա-
բանական կենաց մէջ մտնելու երբ և կա-
մին, պայմանաւ որ գուրսն անցեալ կե-
նաց համար պատուաւոր վկայական ու-
նենան ՚ի ձեռին, և անարատ ներկայա-
նան բարոյապէս և նիւթապէս. և Գ. բուէ
ընդունիլ Միաբանական Ընդհանուր Ժո-
ղովէն՝ Պատրիարքական ընտրելութեան՝
և Աւագ Լուսարարութեան համար, եթէ
ունին օրինական հանգամանք սոյն պաշ-
տօններու ընտրելութեան:

Յօդ. 14. Նախորդ Յօդուածոց հա-
մանման տնօրէնութիւն կըլլայ և միևնոյն
իրաւունք կը տրուի նաև Միաբանութեան
այն անդամներուն, որք ժառայութեան
պայմանեալ ժամանակը չ'ըրացուցած (Տես
Յօդ. 10) Ս. Աթոռոյն թոյլտուութեամբ
պաշտօնի կը կոչուին Ազգ. կեդրոնական

վարչութենէն, և յանձն կ'առնուն խոստ-
մնագրով Ա. մատուցանել Ս. Աթոռոյ,
--վերջին պարագայից Բէջ՝ այն ամէն ծա-
ռայութիւնք որ կը խնդրուին իրենցմէ,
և որք չեն հակառակիր իրենց Ազգային
նոր պաշտօնին կատարման հետ. և Բ.
պարտոյ կորովի պարագայից Բէջ՝ ձգել զըր-
սի պաշտօնն և դառնալ գալ ՚ի Ս. Աթո-
ռն, երբ սա՛ անհրաժեշտ կարօտու-
թիւն զգալով կը կոչէ զնոսա առժամա-
պէս իր անմիջական ժառայութեան:

Ե. Արտաքսուսմն ի Միաբանութենէն

Յօդ. 15. Այն ամեն Միաբանք,
որ կանոնաց անաստելով անվայել վարք
կունենան կամ անհաւատարիմ կը զըտ-
նուին և կամ առանց օրինաւոր պատ-
ճառի իրենց յանձնուած պաշտօնը կը մեր-
ժեն կամ խոյս կուտան անկէ, կ'արտաք-
սուին Միաբանութենէն հետեւեալ պայ-
մաններով.

Ա. Սոյն տեսակ յանցապարտ Միա-
բանը՝ նախ իր անմիջական մեծէն և ընդ-
իշխանութեամբ գանուած Տեսչէն յուղ-
ղութիւն կը յորդորուի երկիցս և երկիցս
և եթէ անուղղայ մնայ, գանդատագրով
կը ներկայուի Տնօրէն Խորհրդոյ, որ առ-
աւուելն մէկ ամսուան մէջ պէտք եղած
քննութիւնն ընելով կուտայ իր վճիռը և
յորդոր կամ պատիժ ինչ որ արժան է և
պատշաճ՝ ՚ի գործ կը դնէ զնա ՚ի կարգ-
բերելու:

Բ. Իսկ եթէ յանցապարտը դարձ-
եալ շարունակէ իր ընթացքը, Տնօրէն
Խորհուրդը դատաստանաւ կը վճռէ անոր
արտաքսումը՝ եթէ քրձազգեաց կամ գը-
պիր կամ մայրապետ է. իսկ եթէ Եկե-
ղեցական ոք՝ մասնաւոր տեղեկագրու-

2. Վախճան Միաբանից

Թեամբ անոր արտաքսումը կ'առաջարկէ
Միաբանական Ընդհանուր Ժողովոյ, որ
քննութեամբ և վիճարանութեամբ վճիռ
կ'արձակէ:

Յօդ. 16. Արտաքսեալ Միաբանը
նախ պա՛րտի իր հաշիւն ու համարը կա-
տարելապէս տալ Տեսչութեան ում կը
պատկանի, և ապա իր անձին սեպհական
գոյքն առնելով, հեռանալ Միաբանական
Ուխտէն, և նաև Ս. Երուսաղէմէն՝ եթէ
Եկեղեցական կարգէ է:

Յօդ. 17. Այն Միաբանները որք կամ
օրինաւորապէս հրաժարելով Միաբանա-
կան կեանքէ և կամ Ս. Աթոռոյ թոյլտը-
ւութեամբ Ազգային պաշտօնի կոչուելով
անդամ մնացած են Սրբոց Յակովբեանց
Ուխտին (Յօդ. 13. 14) բայց իրենց խոստ-
ման դրժելով չեն կատարեր խոստմնա-
գրով յանձն առեալ պայմաններն, և կամ
իրենց վարուք և գործովք անպատուու-
թիւն կը պատճառեն Ուխտին՝ որոյ ան-
դամ են, և յետ երկիցս և երկիցս յոր-
դորուելոյ անուղղայ կը մնան, Տնօրէն
Խորհրդոյ կողմէն ամբաստանութեան կեն-
թարկուին առաջի Միաբանական Ընդ-
Ժողովոյ, որ քննութեամբ զարժանն կը
տնօրինէ և արտաքսումը կը վճռէ:

Յօդ. 18. Արտաքսեալ Միաբանից
անունները և պատճառները կը նշանակ-
ուին Միաբանութեան Մայր Տուժարին
մէջ և առ Ազգ. երեսփոխանական Ժողով
մատուցած տարեկան Տեղեկագրութեան
մէջ. և Եկեղեցական արտաքսելոց հա-
մար ամեն անգամ և անմիջապէս Տեղե-
կագիր կը տրուի նաև Ազգային Պատրի-
արքարանի և Արարատեան Մայր Աթո-
ռոյ, և ՚ի հարկին՝ ՚ի լուր Ազգայնոց կը
հաշակուի լրագրութեան միջոցաւ:

Յօդ. 19. Որ և է Միաբան վախ-
ճանած ժամանակ՝ թէ՛ վանքին մէջ և
թէ՛ գուրս օտար երկիր, բոլոր գոյքը
գրի կառնուին Տնօրէն Խորհրդոյ միջո-
ցաւ՝ եթէ վախճանեալն աշխարհական
Միաբան է կամ Սարկաւազ, կամ վար-
դապետ կամ Եպիսկոպոս՝ և հաշիւները
տեսնուելով, և գոյքը կնքոյ տակ գըր-
ուելով, Տեղեկագիր կը տրուի Միաբա-
նական Ընդհանուր Ժողովոյ:

Յօդ. 20. Վախճանեալ Միաբանից
օրինաւոր ժառանգն Ս. Աթոռն ըլլալով
անոնց գոյքէն Ս. Աթոռոյն և այլոց վե-
րաբերեալ և պատահապէս իրենց քով
գտնուած անօթ, զգեստ, գիրք և այլն
իրենց տեղը յանձնուելով, հաշիւն նախ
վախճանելոյն պարտքը կը հատուցուի՝ ե-
թէ ունի, բնականաբար Ս. Աթոռոյ ու-
նեցած պարտքէն սկսելով, և ինչ որ ա-
ւելնայ՝ ստակի վերածուելով՝ դարձեալ
Ս. Աթոռոյն կը յանձնուի ՚ի յիշատակ ան-
ուան նորա, որոյմամբ Միաբանական Ընդ-
Ժողովոյ, և ամենայն ինչ կանոնաւորա-
պէս արձանագրուելով Ատենագրութեանց
մէջ, Միևնոյն տնօրէնութիւնը կըլլայ
նաև Պատրիարքի վախճանման ատեն,
վախճանելոյն գոյից քննութիւնը՝ Միաբա-
նական Ընդհանուր Ժողովով ընտրեալ
Յանձնախմբի մը գործակցութեամբ կա-
տարուելով (Յօդ. 27):

ԳԼՈՒԽ Բ.

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՄԻԱՐԱՆՈՒԹԵԱՆ

Յօդ. 21. ՄԻՐՈՑ ՅԱԿՈՎԵՆԱՆՑ Միարանութեան վարչութիւնն յանձնուած է Առաքելական Աթոռոյ Գահակալ Պատրիարքի նախագահութեամբ Տնօրէն Խորհրդոյ մը, որ համարատու է առ Միաբանական Ընդհանուր Ժողով, և սա՛ առ Ազգային Երեսփոխանական Ընդհանուր Ժողով:

Ա. Ս. Պատրիարք

Յօդ. 22. Պատրիարքը Սրբոց Յակովբեանց Առաքելական Աթոռոյ ցկեանս Գահակալն է, Գլուխ համանուն Միաբանութեան, նախագահ Միաբանական Ընդ-ժողովոյ և Տնօրէն Խորհրդոյ, և Գործադիր վարչական որոշմանց:

Յօդ. 23. Պատրիարքին պաշտօնն է միանգամայն և պարտաւորութիւնը՝ Միաբանութեան Կանոնադրին ճշդիւ հետևողութեամբ:

Ա. Կառավարել հայրաքար Միաբանական Ուխտն Սրբոց Յակովբեանց, և օրաուր բարեկարգութեամբ և դիտութեամբ առաւել զարգացման հոգ տանել:

Բ. Տնօրինական Ս. Տեղեաց և այլ ուխտատեղեաց նկատմամբ Ազգային սեպհականութեանց և արտօնութեանց անկորուստ և պայծառ պահուելուն հսկել:

Գ. Ս. Աթոռոյ Թեմական Ժողովրդոց Առաջնորդական խնամք տանել:

Դ. Ս. Աթոռոյ սեփական վանօրէից և կայուածոց պահպանութեան և բարգաւաճման հոգ տանել, և

Ե. Սոյն հաստատութեանց շնորհիւ և

Ս. Աթոռոյ կարողութեան չափով՝ Ազգային Դաստիարակութեան ծաւարմանն օժանդակել:

Յօդ. 24. Պատրիարքն՝ եթէ հակառակ վարուի Միաբանութեան Կանոնադրին, ամբաստանութեան ներքե կընկնի:

Յօդ. 25. Ամբաստանութիւնը կըրնայ Միաբանութեան մէջ տեղի ունենալ, և կը քննուի Միաբանական Ընդհանուր Ժողովով (Յօդ. 9), և կամ՝ Ազգային Երեսփոխանաց կողմէն կարտասանուի: Մի և միւս պարագայից մէջ՝ Միաբանական Ընդհ. Ժողովոյ ամբաստանական Տեղեկագիրն կամ Երեսփոխանական ամբաստանագիրն Ազգային Երեսփոխանական Ժողովոյ Ատեանը կընէ, և անդ կը քննուի և վճիռ կառնուի: Գօլքոյ Պատրիարքի ամբաստանութեան նկատմամբ հաստատեալ կանոնաց համեմատ:

Յօդ. 26. Եթէ Ազգ. Երեսփոխանական Ժողովոյ վճռով ամբաստանեալ Պատրիարքը Ս. Աթոռէն հեռանալու դատարարուի, անմիջապէս Միաբանական Ընդհանուր Ժողովն Տեղակալութեան համար Ընդհանուր Ընդհանուր Ընդհանուր Ժողովն Տեղակալութեան համար (Յօդ. 29) և Տեղեկագրութեամբ կը ներկայէ Ազգ. Երեսփոխանական Ժողովոյ, որ անոր մէջէն կ'ընտրէ զՏեղակալն և Բ. Դանէն հաստատութեան պաշտօնագիրն ընդունելով կը յանձնէ նմա Պատրիարքական իշխանութիւնը մինչև ցնորումն և վերահաստատութիւն Պատրիարքին կամ մինչև ցմահ նորին:

Յօդ. 27. — Երբ Պատրիարքի վախճանմամբ Առաքելական Աթոռը թափուր մնայ, Պատրիարքական փոխանորդ Յա-

րարերութեանց՝ Տեառնը՝ որ Պատրիարքի հիւանդութեան ժամանակ միայնակ կը փոխանորդէր անոր Պաշտօնին, անմիջապէս կը հրաւիրէ Լուսարարապետն և Ընդհանուր Ժողովոյ Ատենապետն առժամեայ Յանձնախումբ կազմել Պատրիարքական փոխանորդութեան, և սա՛ Միաբանական Ընդհանուր Ժողով գումարել վուժալով նախ եօթն անձերէ բաղկացեալ քննիչ Մասնախումբ մը ընտրել կուտայ, որ պաշտօն ունի Տնօրէն Խորհրդոյ հետ Պատրիարքի գոյքն և ընդհանրապէս Պատրիարքարանի մէջ գտնուած ամեն բան գրի առնուլ և կնքոյ ներքե պահելով Տեղեկագիր մատուցանել Ընդհանուր Ժողովոյ Միաբանութեան (Յօդ. 19 և 20) և ապա Պատրիարքական Տեղակալը, որ քուէից բացարձակ առաւելութեամբ կ'ընտրուի միանուն քուէով, և որ մինչև իր ընտրութեան հաստատութեան պաշտօնագրոյն Կ.Պօլսէն գալը՝ վերոյիշեալ առժամանակեայ Պատրիարքական փոխանորդութեան Յանձնախումբին իբր անդամ կը գործէ, բայց պաշտօնագրոյն հասնելէն ետքը՝ իշխեալ Յանձնախումբին պաշտօնը կը վերջանայ, և անդամները իւրաքանչիւրն իր մասնաւոր պաշտօնին զբաղելով Տեղակալը կը վարէ Պատրիարքին իշխանութիւնը ըստ 28 Դժոգուածոյ:

Յօդ. 28. Պատրիարքի վախճանման պատճառաւ ընտրուած Տեղակալին պաշտօնն է Պատրիարքի ընտրական գործողութեանց նախագահել, և մինչև ցգահակալութիւն նորնտիր Պատրիարքի՛ն որ պաշտօնը վարել ըստ Կանոնագրի Միաբանութեան:

Յօդ. 29. Սուրբ Երուսաղէմի Առաքելական Աթոռոյ Պատրիարքը Ազգային

Երեսփոխանական Ժողովով կ'ընտրուի Միաբանութեան ներկայած Ընդհանուր մէջէն, որոց ցուցակը կը պատրաստուի հետևեալ կերպով:

Նախ՝ միաբանական Ընդհանուր Ժողով կը գումարի՝ Միաբանութեան մէջից Եկեղեցական անդամոց կէսէն գէթ մէկ աւելի թուով, և ընդ նախագահութեամբ պատրիարքական Տեղակալի, որ կը յիշեցնէ Ժողովականաց Պատրիարքական ընտրելութեան արժանաւորութեան հանգամանքը և կը հրաւիրէ զնոսա խղճի մը սօք կատարել իրենց ընտրութիւնը:

Իւրաքանչիւր ընտրող թղթի մը վրայ կը գրէ այն ամեն Միաբան Եպիսկոպոսաց և վարդապետաց անունները, որք երեսուն և հինգ տարին լրացուցած, և Օսմանեան Տէրութեան հպատակ ըլլալով, ըստ իւր խղճի կրօնական, բարոյական և ուսումնական բարեմասնութեամբ արժանի են Պատրիարքական գահը բարձրանալու:

Քուէհամար կը կատարուի սոյն քուէից, և առաւելագոյն քուէ ստացող անուններէն քուէից առաւելութեան կարգաւ եօթն անձինք որոշուելով Առաջին ցուցակ մը կը պատրաստուի Եօթնէից ընդհանուր:

Ժողովականք երկրորդ անգամ քուէարկութեան կը հրաւիրուին՝ սոյն եօթն ներքին ընտրելեաց ցուցակին մէջէն միայն երեք անձի վրայ քուէնին ամփոփելու պայմանաւ, և քուէհամար կատարուելով երկրորդ ցուցակ մը կը պատրաստուի երեքից ընդհանուր իւրաքանչիւրին ընդունած քուէից առաւելութեան կարգաւ. իսկ եթէ երկու ընտրութեանց ժամանակ հաւասար քուէներ պատահին՝ վիճակաւ կ'որոշուի ընտրելին, և սոյն երեքին ընտրելեաց

ցուցակն իբր արժանաւորագրելից ընդելե
 Էոյ ցոյցով հանգերձ առաջին Եթեքերին
 ընտրելեաց ցուցակաւ, և իւրաքանչիւր
 ընտրելեոյ բարեմասնութիւնքն և արդիւնքն
 նկարագրող Տեղեկագրով կը ներկայուի
 Ազգային Երեսփոխանական Ընդհանուր
 Ժողովոյ, որ անոնց մէջէն կ'ընտրէ
 զՊատրիարքն Ս Երուսաղէմի, Կ.Պօլսոյ
 Պատրիարքի ընտրութեան տրամադրութեանց
 համեմատ:

Յօդ. 30. Նորընտիր Պատրիարքը
 Եթէ վարդապետ է, Միաբանական Ընդհանուր
 Ժողովոյ վկայականով և Կ.Պօլսոյ Պատրիարքի
 յանձնարարութեամբ (ինչպէս օրէն է Ս. Երուսաղէմի Աթոռէն 'ի Ս. Էջմիածին
 զրկուած բոլոր Եպիսկոպոսացու վարդապետաց
 համար,) Ս. Էջմիածին կ'ուղեւորի և
 Եպիսկոպոսութեան աստիճան կը բարձրանայ
 և վերադարձին 'ի Կ. Պօլսոյ յատենի
 Ազգ. Ժողովոյ ուխտ ընելով «Հաւատարիմ
 մնալ Տէրութեան, Ազգին և Սրբոյ Աթոռոյն
 Երուսաղէմի, և հսկել անթերի գործադրութեան
 Կանոնագրի Միաբանութեան» և ընդունելով
 Կայսերական Հրամանագիր կը դառնայ 'ի Ս.
 Երուսաղէմ և կը գահակալէ իր Աթոռն:

Իսկ եթէ Եպիսկոպոս է, ընդունելով իր
 Ընտրութեան և Հաստատութեան պաշտօնագրերն,
 յատենի Միաբանական Ընդհանուր
 Ժողովոյ կը կատարէ վերոյիշեալ ուխտն
 և կ'անցնի յաթոռն Պատրիարքական
 և ապա կը յիշատակուի անունը
 Եկեղեցեաց մէջ:

Բ. Տնօրէն խորհուրդ

Յօդ. 31. Տնօրէն խորհուրդը կը կազմուի
 Ս. Աթոռոյ մեծ պաշտօնականներէն,
 որք են,

1. Լուսարարապետ
2. Յարարերութեանց Տեսուչ կամ Պատրիարքական փոխանորդ
3. Ելեւմտից Տեսուչ
4. Ուսումնապետ
5. Տնտեսապետ, և
6. Կալուածապետ

Յօդ. 32. Տնօրէն խորհուրդոյ անդամ
 սոյն մեծ պաշտօնականաւ կ'ընտրուին Միաբանական
 Ընդհանուր Ժողովէն, անձնիւր անդամ
 իր պաշտօնի որոշմամբ, և Լուսարարապետը
 ցկեանս իր պաշտօնը վարելու,
 իսկ միւսներն միայն երկու տարի
 ծառայելու պայմանաւ: Սոյն վերջիններն
 անմիջապէս վերընտրելի են:

Յօդ. 33. Սոյն պաշտօնականաւ կը գործեն
 անհամարժեք իւրաքանչիւր պաշտօնի
 համար սահմանեալ Կանոնագրութեան
 համեմատ, առնելով նաեւ 'ի հարկին
 իրենց օգնական գործակից Մասնախմբեր,
 և պարբերաբար Բիւրէլ Գործակալ
 Տնօրէն խորհուրդը կը կազմեն, որոյ
 կը նախագահէ Պատրիարքը կամ իր
 փոխանորդը, և կառաջնորդէ իր Դիւանը
 կազմեալ մէկ Ատենապետէ և մէկ Ատենադպրէ,
 զոր ինքն իր մէջէն կ'ընտրէ՝ երկու
 տարի պաշտօն վարելու պայմանաւ:

Յօդ. 34. Տնօրէն խորհուրդոյ պաշտօնն
 է Ս. Աթոռոյ մեծ պաշտօնականաց ընթացիկ
 սովորական գործերէն դուրս՝ մասնաւոր
 պարագայից մէջ ընելու տրնօրինութիւններն
 սահմանել, հանրական խնդիրները
 լուծել, և վարչական զանազան
 ճիւղերու պաշտօնականներն իւրաքանչիւր
 ճիւղի գլուխ մեծ պաշտօնականին
 առաջարկութեամբ ընտրել, պաշտօնավարութեան
 ժամանակը սահմանել:

հրահանգներն ին տալ և կանոնաց պահպանութեանը
 հսկել:

Յօդ. 35. Տնօրէն խորհուրդը 4 ամիսն
 անգամ մը Աթոռոյ ելեւմտից վիճակը
 կը ստուգէ, ինչպէս նաեւ վարչական բոլոր
 ճիւղերու վրայ մասնաւոր Տեղեկագիր կ'
 առնու Պաշտօնականներէն. և ամեն տարեգլուխ
 անցելոյն հաշիւները կը փակէ, և յաջորդին
 ելմտացոյցը կանխաւարդաբերով
 բացատրական Տեղեկագրութեամբ
 կը ներկայէ Միաբանական Ընդհանուր
 Ժողովոյ:

Յօդ. 36. Տնօրէն խորհուրդը պատասխանատու
 է առ Միաբանական Ընդհանուր Ժողով,
 անձնիւր անգամ անձնիւր իր պաշտօնին
 և բոլոր անգամ անձնիւր խորհուրդոյ
 տնօրէնութեանց նըկատմամբ: Սոյն
 պատասխանատուութիւնը կը կատարուի
 Միաբանական Ընդհանուր Ժողովոյ
 մէջ կանոնաւորապէս տեղի ունեցած
 հարցմանց պատասխանելով և տարեկան
 համարատու Տեղեկագրութեամբ
 խորհուրդոյ:

Յօդ. 37. Տնօրէն խորհուրդոյ անդամը
 չ'են կրնար ուրիշ պաշտօն ստանձնել
 ո՛չ իրենց անդամակցաց յատուկ և ո՛չ
 անոնց ստորակարգեալ պաշտօններէն.
 Ինչպէս նաեւ չ'են կրնար միանգամայն
 Տնօրէն խորհուրդոյ անդամ և Ընդհանուր
 Ժողովոյ Ատենապետ դառնալ:

Գ. Միաբանական Ընդհանուր Ժողով

Յօդ. 38. Միաբանական Ընդհանուր
 Ժողովոյ անդամ են Միաբանութեան բոլոր
 Եկեղեցեական անդամներն, մինչեւ 'ի
 Սարկաւազս 'ի միասին համարեալ:

Յօդ. 39. Պատրիարքը կը նախա-

գահէ Ընդհանուր Ժողովոյ, և Ս. Աթոռը
 թափուր եղած ժամանակ Պատրիարքական
 Տեղակալը: Բայց Ընդհանուր Ժողովը
 իր Դիւանն ունի մասնաւոր Ատենապետ
 և Ատենադպիր և Փոխանորդներէ կազմեալ,
 զորս երկու տարի պաշտօն վարելու
 պայմանաւ կ'ընտրէ իր մէջէն գաղտնի
 քուէարկութեամբ:

Յօդ. 40. Ընդհանուր Ժողովը կը գումարուի
 Ս. Կանոնագրութեամբ ամեն ամսագլուխ,
 ցորչափ որ խնդիր կայ իր Օրակարգին
 մէջ և

Բ. Պատրիարքը կամ Տնօրէն խորհուրդն
 մասնաւոր խնդրոյ մը համար հարկ
 տեսնեն, և կամ Ընդհանուր Ժողովոյ
 Ս. Երուսաղէմի մէջ գլխունոց անգամոց
 մէկ երրորդ մասն բացորոշ խնդրոյ
 մը համար ստորագրեալ խընդրագրով
 հայցեն անոր գումարումը:

Յօդ. 41. Պատրիարքը կամ Ս. Աթոռոյ
 պարագ ժամանակ Տեղակալը և Պատրիարքի
 ամբաստանութեան ժամանակ Պատրիարքական
 Փոխանորդը կ'հրաւիրէ զանգամայն
 ի Ժողով, ամեն անգամ Օրակարգի խնդիրը
 գէթ երկուտասան ժամառաջ գրով
 ծանուցանելով ամեն մէկուն:

Յօդ. 42. Ս. Երուսաղէմի Գործակալ Միաբանական
 Ընդհանուր Ժողովոյ անգամոց թուոյն
 կէսէն մէկ աւելին բաւական է օրինաւոր
 ատեն կազմելու և ամեն խընդիր լուծելու
 և ընտրութիւններն ընելու բաց 'ի
 Պատրիարքական ընտրելեաց և Աւագ
 Լուսորարի ընտրութիւններէն՝ որոց
 համար Ընդհանուր Ժողովոյ Բարձր
 դասոց կէսէն գէթ մէկ աւելի անգամոց
 ներկայութիւնն անհրաժեշտ է:

Յօդ. 43. Միաբանական Ընդհանուր
 Ժողովոյ պաշտօնն է,

Ա. Պատրիարքական ընտրելիներն ,
և Ս. Աթոռէն Պատրիարքի հեռացուց-
ման ժամանակ՝ Տեղակալութեան ընտրե-
լիներն , և Ս. Աթոռոյ թափուր մնացած
ժամանակ Տեղակալն , և Տնօրէն Խորհրդ-
ոյ անդամ՝ Ս. Աթոռոյ մեծ Պաշտօնա-
կալներն ընտրել :

Բ. Միաբանական վարչութեան զա-
նազան ճիւղերու և նոյն իսկ իրեն հա-
մար մասնաւոր կանոնադրութիւններ հաս-
տատել , կամ պայմանեալ ժամանակին
բարեփոխել , հանրական ծանրակշիռ խըն-
դիւնները լուծել , փոխառութեանց և Ս.
Աթոռոյ սեփական կալուածոց վաճառ-
ման կամ գնման պէտքը վճռել և պայ-
մաններն սահմանել , Եկեղեցական Միա-
բանից անդամակցութեան ընդունելու-
թիւնը որոշել , աստիճանի բարձրացման
արժանաւորութիւնը քուէարկել , ամ-
բաստանութիւնը դատել , Միաբանական
կեանքէ հրաժարումը վճռել , արտաք-
սուսն արտասանել , և ի դէպս մահուան
անօնց ինչպէս նաև Պատրիարքի , սեփա-
կան դոյից վրայ կանոնական Տնօրէնու-
թիւնը կատարել , և վերջապէս Միաբա-
նական վարչութեան վրայ հսկողութիւն
ընել , և համար առնուլ Տնօրէն Խորհրդ-
դէն :

Յօդ. 44. Ամեն տարեգլուխ Միա-
բանական Ընդհանուր Ժողովն Տնօրէն
Խորհրդոյ համարատուութեան Տեղեկա-
գիրն և Ելմտացոյցն ընդունելով ստու-
գելէն և վաւերացունելէն յետոյ՝ իր
կողմէն Համարադրութեան Տեղեկագիր
կուղ-
ղէ առ Ազգ. Երեսփոխանական Ժողով ,
մասնաւոր խնամով նշանակելով ի նմա :

Ա. Տարւոյն մէջ Միաբանական ան-
դամոց ընդունելութեան , պաշտօնաւա-

րութեան , հաւատարիմ ծառայութեանց
համար եղած վարձատրութեանց , ձեռ-
նադրութեանց , հրաժարման , արտաք-
սուսն և մահուան վերաբերեալ տնօրէնու-
թիւնքն :

Բ. Տարւոյն Էնթրէ-ու Ելմտացոյցին
նկատմամբ Ելմտից կատարեալ վիճակը
և ի մասնաւորի՝ փոխառութեանց և կալ-
ուածական գնմանց և վաճառմանց վերա-
բերեալ տնօրէնութիւնքն , և պարտուց
վճարման նկատմամբ ի դործ դրուած մի-
ջոցներն և արդիւնք նոցին :

Գ. Յաջորդ տարուան ենթադրեալ
Ելմտացոյցն և Ելմտից հաւասարակը-
ռութեան համար որոշուած միջոցներն :

Դ. Միաբանական անդամոց ուսում-
նական յառաջագիմութեան , և ընդհան-
րապէս Ազգային Դաստիարակութեան նը-
կատմամբ գործադրուած միջոցներն և
արդիւնք նոցին : Եւ

Ե. Տնօրինական Ս. Տեղեաց և այլ
Ուխտատեղեաց մէջ Օտարաց հետ ընկե-
րովի և առանձինն Ազգային արտօնու-
թեանց և սեփականութեանց մասին
պատահած նշանաւոր դէպքերն , և ա-
սոնց նկատմամբ ընդ Ազգային կեդրոնա-
կան վարչութեան , ընդ տեղական կա-
ռավարութեան , ընդ Բրիտանոնեայ Օտար-
ազգիս և ուղղակի ընդ նախարարս Տէ-
րութեան կամ այլ Պաշտօնակալս տեղի
ունեցած Յարաբերութիւնքն : Եւ արդիւնք նոցին :

Դ. Վարչական պաշտօնը և պաշտօնակալը

1. Լուսարարապետ

Յօդ. 45. Լուսարարապետին պաշ-
տօնն է՝ Ա. Տնօրինական Ս. տեղեաց և

այլ ուխտատեղեաց և բոլոր եկեղեցեաց
մէջ աստուածային պաշտաման ըստ կա-
նոնաց եկեղեցւոյ կատարուելուն վերա-
տեսչութիւն , և

Բ. Ս. Աթոռոյն սեփական բոլոր եկե-
ղեցական անօթոց , զարդուց , զգեատուց ,
գրեանց և այլ կահուց և կարասեաց ան-
կորուստ և անեղծ պահպանութիւնն :

Յօդ. 46. Լուսարարապետին իշ-
խանութեան ենթարկեալ են՝

Ա. Ի մասին եկեղեցական պաշտաման ,
Միաբանութեան բոլոր եկեղեցական ան-
դամներն , և ի մասնաւորի ժամօրհնող ,
ժամասաց , ժամարար , եւ թոստովանա-
հայր վարդապետք , Սարկաւագունք և
Դպիրք , Մասագործ և ժամակոչ քրձազ-
գեացք , և

Բ. Ի մասին աւանդապահութեան ,
բոլոր Լուսարարք և այլ սպասարկութե-
կեղեցւոյն :

Յօդ. 47. Ս. Աթոռոյ Աւանդատան
մէջ ինչպէս նաեւ զանազան Ուխտատեղ-
եաց և Սուրբ Տաճարաց մէջ գտնուած
բոլոր եկեղեցական անօթոց , զարդուց ,
զգեատուց , գրեանց և այլ կահուց և կա-
րասեաց մանրապատում Մայր Տուժարն
Ս. Աթոռոյ Աւանդատան մէջ պահուելով ,
Լուսարարապետն՝ Միաբանական Ընդհա-
նուր Ժողովով ընտրուելէն , և սովորական
արարողութեամբ Աւանդատան բանալին
Ս. Գլխադրէն իր ձեռօք առնելէն ետքը ,
նոյն տուժարն ինչպէս նաև իր նախորդի
մասնաւոր տուժարն՝ Աւանդատան վիճա-
կին հետ բազդատելով , անոնց մէջ կ'ար-
ձանագրէ իր գիտողութիւնքն և կը ստ-
րագրէ :

Յօդ. 48. Իւրաքանչիւր Լուսարա-
րապետ իր ժամանակին համար մասնա-

ւոր ժապաւինեալ Տուժար մը կ'ընդունի
Տնօրէն Խորհրդէն , և անոր մէջ կ'արձա-
նագրէ մանրամասնաբար՝ Ա. Ինչ անօթ ,
զգեատ, զարդ, և այլն որ կը յանձնուի ի-
րեն յատենի Տնօրէն Խորհրդոյ , և Բ.
Ինչ փոփոխութիւն որ հարկ կը տեսնուի
և Տնօրէն Խորհրդոյ որոշմամբ կը կատար-
ուի Աւանդատան մէջ գտնուած անօթոց ,
զգեատուց և այլն , վրայ (նորոգութիւն ,
ձեւի փոփոխութիւն , ջնջումն , և այլն) ,
և ամեն մէկ արձանագրութեան ներքե
թէ՛ ինքն կը ստորագրէ և թէ՛ Տնօրէն
Խորհրդոյ Դիւանին ստորագրել կուտայ :

2. Յարաբերութեանց տեսուչ
կամ Պատրիարքական Փոխանորդ

Յօդ. 49. Յարաբերութեանց տես-
չին՝ որ միանգամայն Պատրիարքական Փո-
խանորդի տիտղոս կը կրէ , պաշտօնն է
վերատեսչութիւն յարաբերութեանց Ս.
Աթոռոյն ընդ Ազգային կեդրոնական վար-
չութեան , ընդ Մայր Աթոռոյ Արարատ-
եան , ընդ կառավարութեան , ընդ թէ-
մական ժողովրդեան , և ընդ օտարազ-
գի քրիստոնեայս :

Յօդ. 50. Յարաբերութեանց տես-
չին իշխանութեան ենթարկեալ են թարգ-
մանն և օգնականք , ի դիմաց Ս. Աթո-
ռոյ թեմական ժողովրդեան առաջնորդ-
կամ առաջնորդական տեղակալ կարգեալը
և տեղական կառավարութեան ժողովոց
անդամ ցուցուած անձինք , պահակք և
գոնապան :

Յօդ. 51. Յարաբերութեանց տես-
չին պարտաւորութիւնն է՝ Ս. Աթոռոյ յա-
րաբերութեանց մէջ անկորուստ պահել
ազգին իրաւունքն , և անտրտա՝ Միաբա-

նութեան պատիւը . չը ներելով օտարաց՝
որ և է կերպով ազգային իրաւանց սահ-
մաններն զանցանելու թեւակոխել , և ոչ
ազգայնոց՝ անխորհուրդ նախանձայուզու-
թեամբ օտարաց իրաւունքը զանալու-
փորձ փորձել . և առաջնորդ ունելով ին-
քեան՝ Ա . տնօրինական Ս . տեղեաց և այլ
ուխտատեղեաց նկատմամբ՝ պաշտօնական
հրամանագրովք հաստատուած ազգային
իրաւունք , սեփհականութիւնք և արտօ-
նութիւնք և վաւերական հնաւանդ սովո-
րութիւնք . (Տե՛ս Բովանդակութիւն ազ-
գային իրաւանց Սրբոց Յակովբեանց Ա .
աւարեղական Աթոռոյն յերուսաղէմ) :

Բ. Ազգային կեդրոնական վարչութեան
յարարեցութեանց մասին՝ Սուրբ աթո-
ռոյն իրաւունք և պարտիք որք բովան-
դակեալ են ի կանոնագրիս և յԱզգային
Սահմանագրութեան :

Գ. Արարատեան Մայր աթոռոյ նկատ-
մամբ՝ ամենայն Հայոց կաթողիկոսութեան
իրաւունքն և պարտուպատշաճ պատկա-
ռանքն :

Դ. Տեղական կառավարութեան հետ ,
և ՚ի մասին առաջնորդական վարչութեան
թեմական ժողովրդոց , Ազգային Սահմա-
նագրութեան հաստատած Առաջնորդա-
կան իրաւունք և պարտք :

Ե. Թեմական ժողովրդոց հետ , պար-
տաւորութիւնն զոր ունի Ս . Աթոռն ա-
նոնց հոգեւորական և կրթական պիտոյ-
քը ինամելու , օգնելու նաեւ նիւթապէս՝
մէջերնուն ազբատութեամբ տառապեալ
անտերունչ որբոց և այրեաց , մանաւանդ
Ս . Երուսաղէմի մէջ , չը ներելով երբէք
որ սոյն ժողովուրդք փոխանակ օգնական
լինելու Ս . աթոռոյն , անոր օգնութեան
իրաւունք ունեցածի պէս վարուելով բեռ-

ըլլան անոր նիւթապէս և բարոյապէս :

Յ. Գ . 32. Երարեցութեանց Տե-
սուչն բաց յընթացիկ և կանոնովք նախա-
տեսեալ գործերէն զոր ինքնին կը տնօրինէ ,
ամեն պարագայի մէջ Տնօրէն Խորհրդոյ
կը դիմէ և անոր Խորհրդով կը գործա-
դրէ ինչ որ արժան է իր պաշտօնին կա-
տարմանը , ջանալով միշտ իրաւագիտա-
կան և քաղաքացիական նախազգոյշ
միջոցներով տեղի չը ձգել ՚ի վերջոյ դը-
րամական աւելորդ ծախուց կամ պաշա-
պանողական նիւթական դիմադրութեան :

3. Ելեւմտից Տեսուչ

Յօդ. 33. Ելեւմտից տեսչի պաշտօ-
նըն է Ս . Աթոռոյ ելեւմտից կանոնաւոր
անտեսութեան և համարակալութեան
վերատեսչութիւնը :

Յօդ. 34. Ելեւմտից Տեսչին իշխա-
նութեան ենթարկեալ են Ս . Աթոռոյ
զանձապետն ու համարակալն , և ՚ի մա-
սին ելմտական գործողութեանց՝ բոլոր
պաշտօնակալք Միտրանութեան . ինչ-
պէս Ս . Պատրիարքն՝ կանդակադրանոց ,
Տղայանուէրի և այլ բարեպաշտական
նուիրաց համար , Դարպասընկալը՝ դար-
պասական և իւղադնի ողորմութեանց
համար , բոլոր Հայտընակ դաւառաց Ե-
կեղեցեաց մէջ Ս . Աթոռոյ յատուկ ե-
ղած գանձանակաց Հոգարարձուք՝ հա-
ւաքուած նուիրաց համար , և այլն համա-
րատու են նմա :

Յօդ. 35. Աթոռոյ ելեւմտուք ամեն
տարի Տնօրէն Խորհրդոյ առաջարկու-
թեամբ՝ Միտրանական ընդհանուր ժո-
ղովով կը սահմանուին կանոն , և ըստ
նոյն ելմտացոյցի կը տնօրինուին Ելմտա-
կան անտեսութեան զանազան ճիւղերու
պաշտօնակալաց ձեռք , որոց ամենուն

4. Ուսումնապետ

գործաւնութեանց կանոնաւորութեանը
կը հսկէ Ելեւմտից տեսուչն , և պարբե-
րաբար համար կ'առնու , և չորս ամիսն
անգամ մը Ս . Աթոռոյ ելմտական վիճակը
կը ներկայէ Տնօրէն Խորհրդոյ :

Յօդ. 36. Ելեւմտից Տեսուչն ինքնին
կը հրամանէ բոլոր ուղորակն և Ելմտա-
ցուցով նախասահմանեալ ծախուց վրձա-
րումն՝ Գանձապետին , և իր հրամանաւ
կը յանձնուին նմա՝ բոլոր հասկ և արգիւնք
Ս . Աթոռոյ բարեպաշտականք և կալ-
ուածականք , իսկ արդարեւ կ'արգի ծախուց
համար , մինչեւ տարեկան 36,000 դրուշ՝
Տնօրէն Խորհրդոյ , և անկէց աւելի գու-
մարաց համար՝ ընդհանուր Ժողովոյ ու-
շահ և պաշտօնագիրն հարկ է որպէս զի
Ելեւմտից տեսուչն կարողանայ վճարումն
հրամանել :

Յօդ. 37. Ելեւմտից տեսուչը կը նա-
խագահէ փոխառական գործողութեանց
Ս . աթոռոյն . բայց անոնց շէրտը և շոյ-
հանէրը Տնօրէն Խորհրդոյ առաջարկու-
թեամբ Միտրանական ընդհանուր ժողո-
վով կը վճարուին և կը սահմանուին :

Յօդ. 38. Գանձուց պահպանութիւ-
նը և մասնաւոր հաշուակալութիւնը Գան-
ձապետին յանձնուած է , որ առանց հրա-
մանագրի Ելեւմտից տեսչին ոչ ինչ կը վը-
ճարէ և ոչ ինչ կ'ընդունի , և համարատու
է նմա :

Յօդ. 39. Ս . Աթոռոյ բոլոր ելմը-
տական գործողութիւնք կրկնատումարի
օրինօք կ'արձանագրուին Համարակալի
ձեռք , որ ընդ հսկողութեամբ Ելեւմտից
տեսչին կը գործէ , և հաշիւ կը տեսնէ
բոլոր պաշտօնակալաց հետ և համարա-
տու է նմա :

Յօդ. 60. Ուսումնապետին պաշտօ-
նըն է Ս . Աթոռոյ գաստիարակութեան ,
գիտութեանց և գեղարուեստից վերա-
բերեալ բոլոր գործոց վերատեսչութիւ-
նը , և ՚ի մասնաւորի՝ Ժառանգաւորաց
վարժարանի տնօրէնութիւնն :

Յօդ. 61. Ուսումնապետի իշխա-
նութեան ենթարկեալ են Ժառանգաւո-
րաց վարժարանի , Գայրաց գաստրանի ,
Քաղաքացւոց երկսեռ նախակրթարանաց
բոլոր Պաշտօնակալք , և Տպարանի , Գը-
րաւաճառութեան սենեկի , Թանգարա-
նի և Լուսանկարի գործակալք :

Ա. Դաստիարակութիւն

Յօդ. 62. Ուսումնապետը կը տնօ-
րինէ , ըստ որոշման Տնօրէն Խորհրդոյ ,
ինչ որ արժան է Դաստիարակութեան մա-
սին՝ Ս . Աթոռոյ պարտականութիւնը կա-
տարելու համար առ Թեմական ժողովուր-
դըս , առ Միտրանութիւն Սրբոց Յակով-
բեանց և առ Ազգն :

Յօդ. 63. Թեմական ժողովրդոց
նկատմամբ Ս . Աթոռը պարտի նախակրթ-
թական՝ և ըստ տեղւոյն նաև երկրորդա-
կանով խառն գաստիարակութիւն տալ
մանկանց , յի կարօտելոց , և Գիւրախ-
չիւի իւրախան՝ անոնց որք կարողութիւն
ունին վճարելու : Ուսումնապետը կը կար-
գադրէ ըստ այնմ ամեն տեղ պէտք եղած
երկսեռ Գայրոյներն , և Ազգային կեդ-
րոնական վարչութեան ընդունած Դաս-
տիարակութեան ընթացից համաձայն՝ ա-
մենուն կանոնաւոր անտեսութեան և յա-
ռաջադէմ զարգացմանը կը հսկէ :

Յօդ. 64. Ս . Աթոռն իւր Միտրա-

նութեան նկատմամբ Եկեղեցական և Ուսումնական կատարեալ Դաստիարակութիւն տալու պարտաւորեալ ըլլալով, Ուսումնաստեալ կը կարգադրէ ժառանգաւորաց Վարժարանն այնպէս որ աշակերտք արդէն նախակրթեալ, հասակաւ 16 էն մինչ 18, և իբր ժառանգաւորք Եկեղեցւոյ ընտրութեամբ ընդունուելով, ուսանին մէկ կողմէն՝

1. Լեզուագիտութիւն—Հայերէն, Գաղղիերէն և Տաճկերէն :
2. Կրօնագիտութիւն :
3. Քանակագիտութիւն—Թուարանութիւն կատարեալ, Գրահաշիւ և Տարեք Երկրաչափութեան :
4. Պատմութիւն—Սրբազան, Ազգային և Արտաքին :
5. Երգեցողութիւն—ձայնագրութեամբ Եկեղեցական և Ազգային :
6. Աշխարհագրութիւն :
7. Տիկերադրութիւն :
8. Գծագրութիւն և Գեղագրութիւն :
9. Տարեք թնական Պատմութեան և Գիտութեանց :

Եւ միւս կողմէն՝ վարժուին Կրօնաւորական կենաց, կանոնաւորապէս դըպրութիւն ընելով Եկեղեցւոյ մէջ. և փափաքոյ արժանաւորներն՝ դեռ յընթացս Դաստիարակութեան՝ մինչ ՚ի կիսասարկաւագութիւն, և յաւարտ ուսման՝ Սարկաւագութեան աստիճան բարձրանալով, ընդունուին ՚ի ծառայութիւն Ս. Աթոռոյ և մնացածներն իրենց կարողութեան համեմատ՝ Դպրաց կամ Քրճագրեցից դասուն մէջ դորձածուին ըստ կանօնագրի Միաբանութեան :

Ուսումնաստեալ կը կարգադրէ նաև

մասնաւոր Դասարան՝ Դպրաց, Քրճագրեցից և ուսմունքին անկատար Եկեղեցական Միաբանից յարմարաւոր ուսմունք ււանդելու համար. և թէ՛ այս Դասարանն և թէ՛ ժառանգաւորաց Վարժարանն իւր անձնական Տնօրէնութեան ներքե կը կառավարէ :

Յօդ. 65. Ընդհանուր Ազգին նըկատմամբ՝ Ս. Աթոռն Դաստիարակութեան զարգացման և ծաւալմանն օժանդակելու պարտաւորեալ ըլլալով, իր Ելևմտից հաւասարակշռութիւնը գտնելէն ետքը, բարձրագոյն ուսմանց Վարժարան կը հիմնէ ՚ի Կ. Պօլիս կամ ՚ի Հայաստան. եւ ուսումնաստեալ Ս. Աթոռոյ կարողութեան չափով զայն կարգադրելով, Տեսչութեանը վրայ կը հսկէ :

Բ. Թանգարան

Յօդ. 66. Ս. Աթոռոյ Թանգարանը՝ ձեռագիր և տպեալ մատեաններով, հնագիտական նիւթերով և թնական Պատմութեան և Գիտութեանց և Գեղարուեստից վերաբերեալ առարկաներով օժտեալ : Թանգարանաստի մը տնօրէնութեան ներքե կը տնտեսուի՝ Ազգին և Միաբանական Ուխտին օգտակար ըլլալու դրութեամբ. և Ուսումնաստեալ կը հսկէ անոր ըստ օրինի պահպանութեան և տնտեսութեանը վրայ :

Գ. Տպարան եւ սենեակ գրավածառութեան

Յօդ. 67. Ս. Աթոռոյ Տպարանը՝ Գրավածառութեան սենեակով հանդերձ Տպարանաստի մը տնտեսութեան յանձնուելով, Ուսումնաստեալ կը հսկէ երկու-

քին ալ կանոնաւորապէս, և Ազգին եւ Միաբանական Ուխտին բարոյապէս և նիւթապէս օգտակար ըլլալու կերպով տընտեսուելուն :

Յօդ. 68. Սոյն նպատակաւ Ուսումնաստեալը՝ միշտ Տնօրէն Խորհրդոյ որոշմամբ, միայն այն դրքերուն կուտայ Հրման Կրթութեան որ կրօնից եւ բարոյականի դէմ ոչ ինչ չեն պարունակէր. և որ՝ եթէ դրսէն ծախքը վճարելով ապստըրուած չեն, դիւրամատչելի գնով կրնան չափաւոր ժամանակի մէջ ծախուիլ, եւ Տպագրութեան ծախքն հանդերձ տուկուեօք հատուցանել :

Նմանապէս Ս. Աթոռոյ հաշւոյն տըպեալ պատրաստի դրեանց համար՝ Ուսումնաստեալ կը տնօրինէ դիւրութեամբ վաճառուելուն միջոցները, եւ անվաճառելիներն Դաստիարակութեան ծաւալման համար հիմնեալ Ընկերութեանց բաշխել կուտայ ըստ որոշման Տնօրէն Խորհրդոյ :

Դ. Լուսանկար

Յօդ. 69. Ս. Աթոռոյ Լուսանկարի դորձարանը՝ ամեն տեսակ անտեղութեանէ ազատ տեղ մը զետեղուելով, աշխարհական գասէ ճարտարարուեստի մը կը յանձնուի մասնաւոր պայմանագրութեամբ, և Ուսումնաստեալ կը հսկէ սոյն պայմանաց ճշգիւ դորձագրութեան :

Ե. Տնտեսապետ

Յօդ. 70. Տնտեսապետին պաշտօնըն է՝ Միաբանութեան անդամոց սնընդեան, հագուստի և բնակութեան, և Եկեղեցեաց մօթի և ձէթի տնտեսութեան,

և Միաբանական անդամոց և Երուստղէմի բնիկ Թեմական Ժողովրդեան կարօտելոց հիւանդութեան ժամանակ պէտք եղած խնամարկութեան վերաբերող խնամք :

Յօդ. 71. Տնտեսապետին իշխանութեան ենթարկեալ են՝ Ա. Մատակարար, Հանդերձապետ, Ամբարապետք, Հացագործք, Խոհարարք, Սեղանապետք, Սրճեփ և այլ հասարակաց սպասաւորք : Բ. Մոմագործ և Մոմալաճառ : Գ. Բժիշկ, Դեղագործ և Հիւանդապահք :

Ա. Տնտեսապետի

Յօդ. 72. Միաբանութեան սնունդի, հագուստի և բնակութեան հանգամանք (չափ, թիւ, տեսակ, և այլն) ամեն տարեգլուխ Տնօրէն Խորհրդոյ առաջարկութեամբ, և ողջապահիկ կանոնաց հետեւողութեամբ Միաբանական Ընդհանուր Ժողովով որոշուելով (Յօդ. 7) Տնտեսապետը ըստ այնմ կը տնտեսէ ըզ Միաբանութիւնն :

Յօդ. 73. Տնտեսապետը հոգ կը տանի սննդեան և հագուստի վերաբերեալ նախնական գլխաւոր նիւթերն (ցորեան, իւղ, կտաւ, և այլն) ինչպէս նաև Եկեղեցեաց և Մոմարանի և Դեղարանի պիտոյքն (ձէթ, մեղրամօմ, դեղ և այլն) ժամանակին և պէտք եղած չափով և Տնօրէն Խորհրդոյ որոշած պայմաններով առնել և ամբարելու. և Մատակարարին, Ամբարապետաց, Խոհարարին և Հանդերձապետին առեւտրական դորձողութեանց մէջ հաւատարմութիւնը երաշխաւորող միջոցներ ՚ի դորձ գնելով, հսկել որ իւրաքանչիւր որ իր պաշտօնն ըստ օրինի

կատարէ, և ճշգրտութիւն և մաքրութիւն տիրէ յամենայնի և ամենուրեք :

Բ. Մումարան և մումալաճառութեան սեկեակ

Յօդ. 74. Մումադործութիւնն և Մումալաճառութիւնն մասնաւոր պայմանադրութեամբ Տնօրէն Խորհրդով մասնաւոր պաշտօնակալաց կը յանձնուին . և Տնտեսապետը կը հսկէ սոյն պայմանաց ճշգրի գործադրութեան, և պարբերաբար համար առնելով հաշիւ կը ներկայէ իր կողմէն՝ Ելեւմտից Տեսչին :

Գ. Խնամակալութիւնն հիւանդաց և ծերոց

Յօդ. 75. Միաբանական Հիւանդաց յատուկ Այցելարանի և Հիւանդարանի, ինչպէս նաեւ Քաղաքացի աղքատ հիւանդաց Այցելութեան հոգն ու խնամք և Դեղարանի փութակները բժշկին, և Դեղարանի և Հիւանդարանի տնտեսութիւնը՝ Քեղադործին կը յանձնուի Տնօրէն Խորհրդով և մասնաւոր պայմանագրութեամբ, և Տնտեսապետը կը հսկէ անոնց ճշգրի գործադրութեան և ուղղակի համարառու է սոյն պաշտօնակալաց, նոյնպէս Տնտեսապետը կը տնօրինէ ծեր և անկար Միաբանից մասնաւոր խնամքը :

6. Կալուածապետ

Յօդ. 76. Կալուածապետին պաշտօնն է Ս. Աթոռոյ սեփական Երուսաղէմի մէջ գտնուած կալուածոց Տնփութանը, և Երուսաղէմէ դուրս գտնուածներուն տնտեսութեան վերաբերելով :

Յօդ. 77. Կալուածապետին իշխանութեան ենթարկեալ են Շինուածապետ և խր գործաւորք, և ի մասին վերատեսչութեան, դրսերը գտնուող կալուածական Պաշտօնեայք (ձապի, և այլն) Ս. Աթոռոյ :

Ա. Ս. Երուսաղէմի մէջ գտնուած կալուածոց Տնտեսութիւնն

Յօդ. 78. Կալուածապետը վարձու կուտայ Ս. Երուսաղէմի մէջ գտնուած կալուածները, իւրաքանչիւր վարձակալի հետ ըստ որոշման Տնօրէն Խորհրդոյ պայմանագիր կնքելով ըստ քաղաքական օրինաց, և ինք կը ժողովէ վարձքերը և կը հսկէ հաստատեալ պայմանաց գործադրութեան :

Յօդ. 79. Ս. Երուսաղէմի կալուածներէն մի միայն անտերունչ այրի և որք Քաղաքացեաց կը տրուի անվարձ ի բնակութիւն, իւրաքանչիւրին համար Տնօրէն Խորհրդոյ որոշած պայմաններով, և կալուածապետը անոնց հետ ալ պայմանագրութիւն կը կնքէ ըստ քաղաքական օրինաց՝ իբր ընդ վճարող վարձակալի :

Յօդ. 80. Կալուածապետը կը ստուգէ կալուածոց և նոյն իսկ վանուց նորոգութեան պէտքը և ըստ որոշման Տնօրէն Խորհրդոյ կը կատարէ իր հսկողութեան ներքեւ :

Յօդ. 81. Կալուածապետը կալուածոց վարձքէն բնաւ ստակ չը պահեր իր քով, ընդունածն անմիջապէս կը յանձնէ Ելեւմտից Տեսչին հրամանաւ՝ Գանձապետին, և ստիպողական նորոգութեանց պարագայից մէջ արտօնութիւն ունի ընդունել յիշեալ Տեսչութեանէն մինչեւ հազար զուրուշ, առանց սպասելու Տնօրէն Խորհրդոյ որոշման :

Բ. Դրսերը գտնուած կալուածոց տնտեսութեան վերատեսչութիւնն

Յօդ. 82. Կալուածապետը կանոնաւոր յարաբերութիւն կ'ունենայ Ս. Երուսաղէմէ դուրս կալուած գտնուող տեղերու կալուածական Պաշտօնակալաց հետ (ձապի, և այլն), և ուր մասնաւոր պաշտօնակալ չը կայ՝ Տեսչաց հետ . և ամեն տեղի կալուածոց վիճակի վրայ տեղեկութիւն առնելով և հաշիւ ընդունելով, կը ստուգէ և կը ներկայէ Ելեւմտից Տեսչութեան :

Յօդ. 83. Ամեն ծախք ելնելէն ետքը՝ տարեկան դէժ 3 առ 400 արդիւնք չը բերող կալուածները, և հեռաւորութեան կամ այլ պարագայից պատճառաւ կանոնաւոր տնտեսութիւնը դժուարին կալուածները՝ ի բաց առեալ անոնք որ չը ծախուելու պայմանաւ կտակեալ են Ս. Աթոռոյ, Միաբանական Ընդհանուր Ժողովով ծախուելու, և անոնց տեղ արդիւնաւոր կալուածներ գնուելու, և կամ նոր գետին գնելու կամ նոր շէնք շինելու որոշում տրուած ժամանակ, կալուածապետը կը հոգայ անոնց ծախուելու գնուելու կամ շինուելու պարագայները, և կը հսկէ կանոնաւոր գործադրութեան որոշմանց Միաբանական Ընդհանուր Ժողովոյ :

7. Դարպասընկալ

Յօդ. 84. Դարպասընկալին պաշտօնն է Ուխտաւորաց դարպասական ուղորմութիւններն և նուէրներն հաւաքել, և կանոնաւոր հաշիւ բռնելով յանձնել Ելեւմտից Տեսչութեան միջոցաւ՝ Գանձապետին, և հսկել Ուխտաւորաց պատշաճապէս հիւրընկալուելուն :

Յօդ. 85. Դարպասընկալի իշխանութեան ներքեւ են դարպասական Դրամընկալ և Տօմարակալ և Հիւրընկալ վարդապետք, և այս վերջնոյն միջոցաւ՝ Ուխտաւորաց Սենեկապանն, Շորապահ և պղնձեղէն Անօթապահ :

Յօդ. 86. Դարպասընկալն Դրամընկալ և Տօմարակալ ընկերներով և Հիւրընկալով մէկտեղ իբր Դարպասական յանձնախումբ՝ մէկ տարուան համար Տնօրէն Խորհրդով կ'ընտրուին և ամենն ալ անմիջապէս վերընտրելի են :

Յօդ. 87. Դարպասընկալն իր կրկին պաշտօնները կը վարէ մասնաւոր կանոնադրութեան մը համաձայն, որոյ հիմնական սկզբունքն են,

Ա. Իւրաքանչիւր ուխտաւոր պարտական է դարպասական նուէր և ողորմութիւն ընծայել Ս. Աթոռոյ, փոխարէն այն ամեն բարեաց զոր կ'ընդունի անկէ նիւթապէս (սենեակ, կարասիք, երեք անգամ կերակուր, և այլն) և բարոյապէս՝ (պայծառութիւն Ուխտատեղեաց, որ Ս. Աթոռոյ ծախիւքն ձեռք կը բերուի) : Դարպասական յանձնախումբը ջանք կրնէ յորդորանօք պարտադանցութեանէ ազատ պահել զուխտաւորս :

Բ. Ուխտաւորաց յատկացեալ բընակարաններն մաքուր, և կարասիք և պղղընձեղէնք մասնաւոր Տօմարներու մէջ արձանագրեալ՝ Ուխտաւորաց մեկնելէն ետքը խնամով կը պահուին Շտեմարաններուն մէջ, և Շորապահ և Պղընձապահ համարառու են անոնց համար առ Հիւրընկալն և սա՝ Դարպասընկալի միջոցաւ առ Տնօրէն Խորհուրդն :

8. Դիւանապետ

Յօդ. 88. Դիւանապետին պաշտօնն է Պատրիարքական Դիւանատան տեսչութիւնը :

Յօդ. 89. Դիւանապետին իշխանութեան ենթարկեալ են՝ Ա. Քղթակցութեան , Բ. Համարակալութեան և Գ. Կարևոր գրութեանց բնագրին և բոլոր դրութեանց օրինակներուն պահպանութեանը յատկացեալ Գրագարանի պաշտօնակալք , որոց ամենն ալ Տնօրէն Խորհրդէն կ'ընտրուին , Դիւանապետը՝ Պատրիարքական ֆոխանորդի , Քղթակցութեան և Գրագարանի սենեկայ պաշտօնակալք՝ Դիւանապետի , և Համարակալութեան սենեկիններն՝ Համարակալի առաջարկութեամբ :

Յօդ. 90. Դիւանապետը կը հսկէ Դիւանական պաշտօնակալաց կանոնաւոր պաշտօնավարութեան , և կը անտեսէ Դիւանատան ծախքը , (թղթատար , հեռագիր , թուղթ և այլն) , պատասխանատու է առ Պատրիարքական ֆոխանորդ թղթակցութեան կանոնաւորութեան և Գրագարանի պահպանութեան մասին , և առ Ելեմտից Տեսուչ՝ Դիւանական ծախսը նկատմամբ :

9. Պատրիարքական ֆոխանորդի Կ.Պօլիս

Յօդ. 91. Պատրիարքական ֆոխանորդն՝ Ս. Աթոռոյ ներկայացուցիչն է ՚ի Պօլիս , և միջնորդ յարարերութեանց ընդերկուս ակտուս Պատրիարքական :

Յօդ. 92. Պատրիարքական ֆոխանորդն կը նստուի Տնօրէն Խորհրդէն Յարա-

բերութեանց Տեսչին առաջարկութեամբ . սոյն Խորհրդէն կը նշանակուի իր հրահանգը և պատասխանատու է նմա :

10. Տեսուչք

Յօդ. 93. Տեսուչներն Ս. Աթոռոյ ներկայացուցիչներն են իրենց պաշտօնավարութեան յատկացեալ տեղումք , և կը վարուին մասնաւոր հրահանգաց համեմատ զոր Տնօրէն Խորհրդը կուտայ պաշտօնի կոչած ժամանակ :

Յօդ. 94. Տեսուչներն իրենց տեսչութեան ենթարկեալ Միաբանից և Պաշտօնակալաց (Ժամարար , Դպիր , Ծառի , Թարգման , Պահակ և այլն) պաշտօնավարութեան հսկող և պատասխանատու են առ Ս. Աթոռն որոյ ամսական տեղեկագրով կանոնաւորապէս կը հաղորդեն՝ Ա. իրենց Տեսչութեան յանձնեալ կրօնական խնդրոց վիճակը , Բ. Ելեմտից հաշիւները , և Գ. թէ՛ ուղղակի իրենց իշխանութեան պատկանեալ խնդրոց վրայ , և թէ իրենց հետ և իրենց քով ՚ի գիւմաց Ս. Աթոռոյ մասնաւոր պաշտօնով գործող Պաշտօնակալաց (կալուածապետ , շինուածապետ , և այլն) ընթացքին վրայ գիտողութիւններ՝ եթէ ունին :

11. Այցելուք եւ նուիրակք

Յօդ. 95. Այցելուք և նուիրակք մասնաւոր Պաշտօնակալք են , որ կը զըրկուին առ Ժամայ պաշտօնով պէտք եղած տեղումք , և կը վարուին ըստ հրահանգաց զոր կը նշանակուին Տնօրէն Խորհրդէն՝ պաշտօնի կոչուած ժամանակ :

Ե. վարքական ընթացք

Յօդ. 96. Պատրիարքն իրեն եկած

խնդիրները՝ գրաւոր և թուահամարեալ ընդունելով Դիւանատանէն , կը յանձնէ ի տնօրինութիւն

Ա. Լուսարարապետին՝ եթէ Եկեղեցական պաշտաման և կամ Աւանդատան վարարեալ է :

Բ. Պատրիարքական ֆոխանորդին՝ եթէ Գաղաքական , Գաղաքավարական , Աղղային կամ Ռիտաւորական Յարարերութեանց կը պատկանի :

Գ. Ելեմտից Տեսչին՝ եթէ Ելեմտից .

Դ. Ուսումնապետին՝ եթէ վարժարանաց , Թանգարանի , Տպարանի , Գրաւիճառի , Լուսանկարի , և ընդհանրապէս ինչ որ ուսմանց և դեղարուեստից կը վարարերի :

Ե. Տնտեսապետին՝ եթէ Միաբանական Ուխտին սննդեան , հանդերձից և բնակութեան , Եկեղեցւոյ մոմի , ձէթի , և այլն , Միաբանից և Գաղաքացւոց հիւանդաց դարմանի , այսինքն , Հիւանդարանի , Այցելուարանի և Դեղարանի կը պատկանի :

Զ. Կալուածապետին՝ եթէ կալուածոց վարձուց , նորոգութեան , նորոգ շինութեան , դնման կամ վաճառման կը վերաբերի :

Է. Տնօրէն Խորհրդոյ՝ ուղղելով առ Աւանապետն , եթէ հանրական է խնդիրն , կամ մի և եթէ Տեսչի որոշմամբ չը կը նստուի տնօրինուիլ :

Ը. Միաբանական Ընդհանուր Ժողովոյ՝ ուղղելով առ Աւանապետն , եթէ ըստ կանոնի անոր իրաւասութեանը կը պատկանի (Յօդ. 42) :

Յօդ. 97. Իւրաքանչիւր Տեսուչ իրեն յանձնուած խնդիրը իր պաշտօնին յատուկ կանոնադրութեան համաձայն կը

տնօրինէ . և խնդրագրոյն վրայ ըրած տընօրէնութիւնը և գործադրութեան համար հարկ եղած պաշտօնագրոյն իմաստը նըշանակելով և թուական դնելով կը դարձունէ Պատրիարքին :

Այսպէս կը վաշուի նաև Տնօրէն Խորհուրդը՝ իրեն յանձնուած խնդրոց նըկատմամբ , և յանուն իւր՝ Աւանապետ և Աւանագալի կ'ըստորագրեն խնդրագրոց վրայ , որոշուած տնօրէնութիւնները քաղելով Աւանագրութեանէն :

Յօդ. 98. Պատրիարքը՝ Տեսուչներէն և Տնօրէն Խորհրդէն ընդունելով խնդրագրերը՝ հանդերձ պատշաճ դատուած տընօրէնութեամբ , եթէ համալորժի Գրանի , կը հրամայէ Դիւանապետին՝ պատրաստել պէտք եղած պաշտօնագիրը (որոյ մէջ եղած տնօրէնութիւնը այսինքն Տեսչի կամ Տընօրէն Խորհրդոյ որոշմամբ ըլլալն կը յիշատակուի) , և ստորագրելով կը յանձնէ ՚ի գործադրութիւն :

Իսկ եթէ Գրանի Գրանի , որոշող Տեսուչը կը հրաւիրէ իրեն հետ Խորհրդակցելու , կամ եթէ որոշումը Տնօրէն Խորհրդէն կուգայ , հրաւեր կը կարգայ նմա անգամ մ'ալ Խորհրդածելու անոր վրայ . և եթէ Գրանի համալորժի չը Գրանի , խնդիրը կը յանձնէ Տնօրէն Խորհրդոյ տնօրէնութեան՝ եթէ անհամաձայնութիւնը Տեսչի մը հետ է . կամ Միաբանական Ընդհանուր Ժողովոյ՝ եթէ Տնօրէն Խորհրդոյ հետ է անհամաձայնութիւնը :

Պատրիարքը պարտաւոր է ընդունիլ և գործադրել Միաբանական Ընդհանուր Ժողովոյ որոշումները , ընդունելով դանոնք օրինաւորապէս արձանագրեալ և ստորագրեալ անոր Դիւանի անդամներէն :

Յօդ. 99. Բաց ՚ի կառավարութեան կամ Օտարագրեաց ուղղեալ գրութիւններէն, որոց օրինակին վրայ միայն կ'ըստորագրէ Տեսուչն Յարարերութեանց, ամենայն պաշտօնական գիր Պատրիարքի՝ պէտք է կրէ անօր ստորագրութեան և կնքոյն հետ՝ նաեւ անօրինող Տեսչին կամ Տնօրէն խորհրդոյ և կամ Ընդհանուր Ժողովոյ Ատենապետաց ստորագրութիւններն :

ըաքննելի է, Ազգային Երեսօխոսանական Ժողովով վաւերացման օրէն հաշուելով երկու տարի ետքը, և վերաքննութիւնը Միաբանական Ընդհանուր Ժողովով կը կատարուի, և Ազգային Երեսօխոսանական Ժողովոյ կը մաստցուի ի վաւերացումն: Յօդ. 101. Մինչեւ վերաքննեալ կէտերուն Ազգային Երեսօխոսանական Ժողովով վաւերացումը՝ հին տրամադրութիւնք անփոփոխ ՚ի դորձագրութեան կը պահուին :

ԳԼՈՒԽ Գ .

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Յօդ. 100. Սոյն կանոնագիրը վե-

ՑՈՒՑԱԿ

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱԼԱՑ

ՄՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՅ ՈՒԽՏԻՆ

ՈՐ Ի Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄ

ՊԱՇՏՕՆԱԿԱԼԻՔ

ՄՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԱՐԲ

Գաւաղանակիր
 Փիլոնատու
 Սպասաւորք
 Լուսարարպետ
 Ժամօրհնող
 Ժամարարք
 Դասապետք
 Խոստովանահարք
 Սարկաւազք Ս. Յակովբայ համար 6, Ս. Յարութեան, Մնընդեան և Աստուածածնի 6
 Դպիրք Ս. Յարութեան 4, Ս. Աստուածածնի 4,
 » Ս. Մնընդեան 4
 Լուսարար Ս. Յակովբայ՝ Առաջին
 Լուսարար Ս. Յակովբայ՝ Երկրորդ
 Լուսարար Ս. Յակովբայ՝ Երրորդ
 Մասագործ
 Ժամակոչ
 Փոքրաւոր Լուսարարպետի

տղկաւոր	ճարտար	Ստորագրող	Պատրիարք	Պատրիարքի օգնական	Ստորագրող
	1				
		1			3
	1				
	1				
	2				
	2				
		12			
				12	
					12
		1			
					1
					1
					1
					1


ՊԱՇՏՈՆԱԿԱԼՔ	Եպիսկոպոս	Վարդապետ	Սարկաւագ	Դպիր	Փառանգաւոր	Քրմազգեսց	Մայրապետ
Տնտեսուհի Գլուխ Մայրապետաց							1
Տնտեսուհի Խոհարանի Միաբանութեան							1
Մայրապետք (*)							30
Տեսուչ Ս. Յարութեան	1						
Լուսարար 2 Առաջին և Երկրորդ						2	
Փոքրաւոր						1	
Սրճեփ						1	
Սեղանապետ						1	
Տեսուչ Ս. Փրիջի	1						
Լուսարար						1	
Դռնապան						1	
Սպասաւոր						1	
Տեսուչ Ս. Աստուածածնի]]	1						
Լուսարար						1	
Լուսարարի օգնական						1	
ՏԵՍՈՒՉ Ս. ԾՆՆԴԵԱՆ (ի Բերդեհեմ)	1						
Լուսարար 2 Առաջին և Երկրորդ						2	
Փոքրաւոր						1	
Խոհարար						1	
Սեղանապետ						1	
Սենեկապան						1	
Թարգմանական Գործակալ						1	
Սպասաւոր						1	
Դռնապան						1	
Տեսուչ ի Բեմի:	1						
Թարգմանական Գործակալ						1	
Խոհարար						1	
Սպասաւոր						1	

(*) Մայրապետք Եկեղեցական և Լուսարանական Միաբանից լուսացրի և Զիւանդապա-
հուծեան և Երոց խնամարկութեան կը գործածուին, մնալով միշտ առանձինն Հրեշտակա-
պետի Վանուց մէջ:

ՊԱՇՏՈՆԱԿԱԼՔ	Եպիսկոպոս	Վարդապետ	Սարկաւագ	Դպիր	Փառանգաւոր	Քրմազգեսց	Մայրապետ
Տեսուչ ի Յոպալ:							1
Ճամբար							1
Դպիր					2		
Կալուածապետ							1
Թարգմանական Գործակալ							1
Պահակ							1
Սենեկապետ							1
Խոհարար							1
Սեղանապետ							1
Տեսուչ Վերիտոնի	1						
Սպասաւոր							1
ՏԵՍՈՒՉ ԴԱՄԱՍԿՈՍԻ Որ և Բուսօցնորդ Քաղաքացւոց	1						
Ճամբար							1
Սպասաւոր							1
Խոհարար							1
Տեսուչ Լաւողիկի	1						

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Վերոնշանակեալ դաւազանաց մէջ ցոյց տրուած Պաշտօնէից աստիճանները կրնան ի
հարկին փոփոխել, Եպիսկոպոսի տեղ՝ Վարդապետ, Վարդապետի տեղ՝ Սարկաւագ, Սար-
կաւագի տեղ՝ Դպիր, և Դպրի տեղ՝ Քրմազգեսց գործածելով: Ինչպէս նաև պաշտօնի
մը յարմար Միաբան չը գտնուած ժամանակ առժամայ կերպով օտար կը գործածուի:
Նոյնպէս Միաբանական Պաշտօնակայաց թիւը կրնայ պակսիլ, մի և նոյն անձին ի հարկին
մէկ քանի պաշտօն միանգամայն յանձնուելով, բաց ի Տնօրէն Խորհրդոյ Անդամներէն և
Ընդհանուր ժողովոյ Ատենապետէն:




ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Ի ՎԵՐԱՅ ՆՈՐՈՅ ԿԱՆՈՆԻ

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՈՒԽՏԻՆ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ

Ի ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԷՄ



Սրբոց Յակովբեանց Միաբանական Ուխտին նոր կանոնը ձեռք ի վաւերացումն մատուցած միջոցիս, հարկ կը համարիմ մէկ քանի բացատրութիւն ներկայել միանգամայն անոր ոգւոյն եւ զլիաւոր պատմագրութեանց վրայ:

Սոյն կանոնը Միաբանական վարչութեան ձեւն ու պայմանները սահմանելէն առաջ Միաբանութեան կազմութեամբը կըրարի, զի սոյն մարմնոյ վարչական ձեւն անոր կազմութեան տիրարէն կախում ունի, եւ այս վերջինը Միաբանութեան վրայ Ազգային ժողովոյ պայծառ գաղափար մ'ընծայելէն զատ, Միաբանից իրաւունքն ու պարտիքը ճշդելով, ապագային բազում շփոթութենէ եւ անտեղի պահանջներէ ազատ կը պահէ ամեն կողմ:

ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Միաբանութեան կազմութեան վրայ բնաւ նոր սնորհնութիւն ըրած չէ կանոնը, ինչ որ կայր արդէն, ինչ որ ընդունուած էր զանազան ժամանակ, ամբողջապէս առած եւ զետեղած է իր տրամադրութեանց մէջ, ամենայն ինչ ճշգրտելով, եւ օրինաւորապէս կապակցելով իրարու հետ, եւ այս է անոր առաւելութիւնը:

Կեննք մէկ քանի օրինակ:

1. Միաբանութեան մէջ գրեթէ միշտ եկե-

ղեցական եւ աշխարհական արք եւ կանայք ընդունուած են, բայց ամենն ալ անղամ նըկատուած չեն, միշտ եւ հաւասար իրաւունք չեն վայելած: Եղեր է ժամանակ որ աշխարհական եղբարք (որ կայսերական հրովարտակաւ քրձէ սպիտակ վերարկու հագնելու արտօնեալ ըլլալուն համար քրձազգեաց կը կոչուին), ոչ միայն եկեղեցականաց համար նման իրաւամբք անդամ ճանչցուեր են, այլ եւ մէջերնուն ընտրեալք Միաբանական վարչութեան Տնօրէն Խորհրդոյ եւ Ընդհանուր ժողովոյ անդամ ընդունուեր են: Ասոր հակառակ երբեմն նաեւ սարկաւազուք դուրս ձգուեր են Ընդհանուր ժողովէն: Կեռ շատ ժամանակ չէ որ մայրապետք Միաբանական իրաւամբք ընդունուեր են կերակրիլ Միաբանական խոհանոցէն: Կանոնն՝ զարդարութիւն ուզղեցոյց ունելով, ասոնց ամենուն, այսինքն ամեն անոնց՝ որք կանոնաց հնազանդութեամբ Ս. Աթոռոյ ծառայութիւն մատուցանել յանձն առած են, ճանչցաւ Միաբանական իրաւունքը, եւ սահմանեց կատարուած պարտեաց փոխարէն՝ վայելումն բարեաց հաւասարապէս:

2. Միաբանութեան անդամոց թիւը միշտ փոփոխուած է, եւ հարկաւ փոփոխական, բայց երբէք սահմանափակ չըլլալուն, երբ բազմացեր է, Ազգն սկսեր է տրանջալ եւ երբ նուազեր է, Միաբանք տրտունջ բարձեր են,

զի առաջին պարագայի մէջ՝ բնապէս Ս. Աթոռոյ ծախքը շատցեր է, եւ երկրորդին մէջ՝ բազմաթիւ զբաղմունք սակաւաթիւ Միաբանից վրայ ծանրացեր են: Կանոնը նախ Միաբանական բազմաթիւ պաշտօններն ճշդելով, իւրաքանչիւրի անհրաժեշտ պէտք եղած Միաբանից թիւն եւ տեսակը որոշեց, եւ ըստ այնոր սահմանեց Միաբանական Ուխտի անդամոց թիւը, որ կրնայ մինչեւ աստիճան մը պակսիլ, երկու եւ երբեմն առաւել պաշտօններ միւսնոյն անձի յանձնուելով (ինչպէս հիմայ եղած է, թիւ մը ջափազանցօրէն զի 243ի փոխանակ միմիայն 130 Միաբան մնացեր, եւ բոլոր պաշտօնները մէջերնին բաժնել պարտաւոր են), բայց չունի աւելնալիք բաց ի այն պարագայէն՝ ուր միաբանից մէջէն ձերոց եւ անկեղոց խումբ մը՝ որ միայն խնամք ունին վայելել եւ չեն կրնար որ եւ իցէ ծառայութիւն մատուցանել, սոյն թուոց վրայ փոքրիկ յաւելուած մը կընեն, զոր պէտք է Տ առ 100 հաշուել, բնական օրինաց հետեւելու համար:

3. Միաբանութեան մէջ միշտ Եպիսկոպոսք, Վարդապետք եւ այլ զանազան կարգի Եկեղեցական աստիճանաւորք գտնուեր են, բայց ասոնց համեմատական թիւերը երբէք սահմանուած չըլլալուն, եղեր է ժամանակ որ բազմաթիւ Եպիսկոպոսունք գտնուեր են, եւ ընդհակառակն երբեմն բնաւ մէկ Եպիսկոպոս չէ մնացեր մէջերնին, ալապէս ալ սարկաւազուք եւ զպիքք: Կանոնը՝ Միաբանութեան զանազան պիտոյքը նկատողութեան առնելով, վճարար սահմանեց եկեղեցականաց եւ աշխարհականաց զանազան դասուց համեմատական թիւերը, որպէս զի Միաբանք կանոնաւորապէս յառաջանան իրենց դասակարգութեան մէջ, Միաբանական գործերն պատշաճապէս տեսնուին եւ Ազգը գտնէ Միաբանութեան մէջ ո՞րքան ո՞ր կարգէ մտրդ որ պէտք ունի գտնել ի նմա:

4. Միաբանք միշտ ընդունած են Ս. Աթոռէն բաց ի կերակրոյ եւ հագուստի վերաբերեալ նիւթերէ, նաեւ զբամական նուէր, իբր պարզեւ կամ նպաստ, բայց ասոնց քանակութիւնը եւ ոչ պայմաններն որոշուած

չըլլալով, պատահած է որ երբեմն վատտակաւորք կամ արժանաւորք չեն վարձատրուեր, եւ ընդհակառակն ուրիշներ յաջողած են պարզեւ կամ նպաստ ընդունելու, որոյ թերեւս չէին արժանի: Կանոնը վերջ տուաւ ամեն կարելի զեղծմանց, երկու տեսակ տարեկան թոշակ սահմանելով: Ա. ը Միաբանական, որ իւրաքանչիւր դասու, աստիճանի եւ կարգի համար որոշակի սահմանուած ըլլալով, Միաբանք կընդունին զայն, թէ եւ օրինաւոր պատճառաւ որ եւ է պաշտօն վարելէ արգիւտուած ըլլան: Եւ Բ. ը Պաշտօնական, որ իւրաքանչիւր պաշտօնի որոշ քանակութեամբ յատկացեալ ըլլալով, պաշտօն վտրոզք կընդունին, ինչ որ ալ ըլլայ իրենց միաբանական աստիճանը:

Այստեղ պէտք է բացատրութիւն մ'աւելցնել որպէս զի քաջ հասկցուի թէ ի՞նչ է այս տարեկանաց նշանակութիւնը:

Երբ Միաբանութեան մը վրայ խօսք կըլլայ եւ անոր անդամոց պաշտօն կը սահմանուի, մէկէն ի մէկ այնպէս միտք կուգայ թէ քանի որ պաշտօնակալք միաբան են եւ միաբան ըսելը կրօնական կամ բարոյական կոչմամբ Եկեղեցոյ եւ Ազգին ծառայութեան կամօյին նուիրեալ անձ մ'ըսել է, բաւական է որ սնունդ եւ հագուստ մատակարարուի իրենց, որպէս զի ամեն ծառայութիւն ձրի մատուցանեն մինչեւ ցլախճան: Ասի ճշմարիտ է սկզբամբ, բայց գործնականի մէջ արդար ըլլալու համար պէտք է Միաբանից ո՞չ միայն սնունդ եւ հագուստ տալ բաւականապէս, այլ նաեւ անձնական մանր ծախուց, կամ եթէ իրենց օգնութեան կարօտ ծնողք ունին, անոնց նպաստելու համար պէտք եղած ստակն ալ ընձեռել, որպէս զի ուրիշ տեղէ հայթայթելու կարօտութիւն չմնայ: Եւ ըստ որում Սրբոց Յակովբեանց Ուխտին մէջ ասոնց ամենը ամեն միաբանից տրուիլ սովորութիւն եղած չէ, եւ տրուիլն այլ ազատ չէ անտեղութենէ, ուստի զեղծմանց տեղի չձգելու համար՝ Միաբանական անուն թոշակը սահմանուեցաւ, որ առ այժմ տարին Եպիսկոպոսաց համար չորս, Վարդապետաց երկու, Սարկաւազաց մէկ, Դպրաց եւ Քրձազգեցից եւ Մայրապետաց հա-

մար կէս Օսմանեան սոկի ըլլալով, վարձք չը կրնար համարուիլ, մանաւանդ որ Սրբոց Յակոբեանց ուխտին մէջ, իրրեւ հագուստ մայրապետաց ոչինչ, բրձադղեցից եւ Գրպրաց եւ Սարկաւազաց միայն մէկ մէկ ձեռք պարզ զգեստ եւ ձերմակեղէն, իսկ վարդապետաց եւ Եպիսկոպոսաց միայն մէկ մէկ վեղարցու կը տրուի մի անգամ ի տարւոյ, եւ այս վերջիններն ինչպէս նաեւ մայրապետք իրենց քսակէն պարտաւորեալ են շինել հագուստին ըստ որոշեալ տարազու:

Գալով պաշտօնէական տարեկանին, այս ալ փոքրիկ վարձատրութիւն մ'է պաշտօն վարողաց, զոր Ս. Աթոռը պիտի տայ չէ թէ ի փոխարէն աշխատութեան, զի ամենէն բարձր թոշակը (զորօրինակ Լուսարարապետին եւ միւս անդամոց Տնօրէն Խորհրդոյ) ամիսն 250 զուրուշը չանցնիր, այլ անաւել ի խրատոյս վաստակաւորաց եւ ի գրգիռ այլոց միանգամայն պաշտօնակալաց անհրաժեշտ մանր ծախքն ալ ասով պիտի հոգացուին, եւ այս կարգի նուէրներուն մէկ մասն ալ որ ծամուց անունով կը տրուի Պատարագիչներուն, վաղեմի կտակաց արդիւնք ըլլալով, չը կըրնար չը տրուի անոնց որոց յատկացեալ է:

5. Միաբանութեան մէջ միշտ գտնուած են անձինք որ իրենց ընդունած ժամուց կամ այլ նուէրներէն եւ կամ անտեսադիտական խնայողութեամբ կամ ճարտարութեամբ փոքրիկ գումար մը դանձնը են, եւ իրենց սեպհական կալուած գներ են: Ասոնցմէ ամենամեծ մասը իրենց կալուածներն վերջէն Ս. Աթոռոյ կտակեր են, կամ մահն ըրեր է իրենց սեպ սոյն անօրէնութիւնը: Ետտեր նաեւ իրենց կենդանութեան կալուածներն յանուն Ս. Աթոռոյ կանգներ կամ գներ են, եւ վարձք կամ արդիւնք բնաւ չընդունելով, բաւականացեր են յիշատակարանով մը որ շինուածին ճակատը իրենց բարերար անունը անմահացընելու համար զրոյնուեր է:

Ասոնք Միաբանից անձնական կալուած գներու խնդրոյն գեղեցիկ կողմն են, բայց ասոր արտուր կողմն ալ կայ: Զանազան դիտմամբ կալուած գներու փափուկ եւ զայն յա-

գեցնելու համար (գեղձմուկ, կալուածատէր ըլլալով եւ ուրիշներէն աւելի հասք եւ բարիք վայելելով Միաբանութեան մէջ նախանձու եւ զեղխութեան գրգիռ, կալուածն անձին վերապահելով Աթոռէն շահածը վերջէն ի վնաս Աթոռոյն գործածելու վտանգ, եւ ասոր առաջն առնելու համար կտակարարութեան ճնշում եւայն, ասոնց ամէնն ալ պատահած են չկրնար ըսուիլ, բայց ապագային արգիլելու համար, կանոնը մասնաւոր տրամադրութեամբք երաշխաւորեց Միաբանից եւ Աթոռոյ իրաւունք եւ փոխադարձ պարտք, այնպէս որ Միաբանից ազատութիւնն յարգելով հանդերձ, կալուածատէր ըլլալու համար զեղձմանց ձգտելու եւ վերջէն անկարգութեանց եւ անիրաւութեանց տեղի տալու առիթներն անհետացոյց:

6. Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը միշտ ազատութիւն պահած է իր անդամներուն միաբանական ուխտի մէջ մտնելու եւ ելլելու մասին, գովելի ազատամտութեամբ, բայց ինչպէս ամեն բարիք շարեաց կրնայ առաջնորդիլ չափազանցութեամբ, այս ազատութիւնն ալ յաճախ զեղձմանց տեղի տուեր է իր անտահման համեմատութեամբ, այնպէս որ բազում անձինք՝ որ ուրիշ տեղ թերեւս պիտի չ'կարենային յաջողիլ, Սրբոց Յակոբեանց ուխտին մէջ մտնելով, եւ անոր բազմադիմի պաշտօններու համար շարունակ մարդ հասցնելու կարօտութենէն օգուտ քաղելով, միաբանական կենաց կարճատեւ միջոցի իր մէջ Սուրբ աստիճան ընդունել, սարկաւազ ձեռնադրուեր, վարդապետ եղեր, մինչեւ իսկ եպիսկոպոսութեան աստիճան բարձրացեր են, երբեմն նաեւ սոյն կրօնական մեծ բարեաց վրայ նիւթաւ կան փոքրիկ գումար մ'ալ բարդելով, անոնք ձգեր գնացեր են, կամ անոնք իրենց ընթացից շահագործելով, իրմէ հեռացնել պարտաւորեր է: Ասոնցմէ մէկ քանին Ս. Աթոռոյ ծառայութեանէն գուրս նետուելէ ետքեւ ալ Միաբանական ուխտէ Սրբոց Յակոբեանց՝ որիս զոն կրելու մասնաւոր խնամք տարեր են: անչուշտ Աթոռոյ Պատրիարքութեան կամ Լուսարարապետութեան ժառանգութիւն թացուած

ժամանակ՝ ընտրելութեան յուսալի բախտէն ալ չի գրկուելու զիտմամբ, եւ ճարտարագոյնք ի նոսա նոյն իսկ Միաբանութեան կողմէ իբր թէ ճնշման տեղի տալով սոյն փտուող ընդունելու ստիպուեր են:

Կանոնն այս ամեն շարեաց վերջ տալու համար մասնաւոր խնամով ամրացոյց միաբանական կենաց մէջ մտնելու եւ ելնելու գրուները, եւ ճշգրեց հրաժարման եւ արտաքսման պարագայները եւ միաբանական կեանքէ զատուելէ հետեւ Միաբան մնալու պայմանները, զի սոյն վերջին պարագայն այնքան կարեւորութիւն ունի Ազգային Երեսփոխանական ժողովոյ համար, որքան Միաբանական ուխտին համարէն: Վասն զի Ս. Աթոռոյ Պատրիարքը Ազգային Երեսփոխանական ժողովով կրնար տրուի, եւ հարկ է որ Երեսփոխանք գիտնան թէ ո՞վ է անգամ Միաբանութեան, եւ ո՞վ է անհատեալ անկէ, եւ ո՞վ հրաժարեալ ի միաբանական կենաց՝ բայց ոչ յուրեւն Սրբոց Յակոբեանց:

Վերջին պարագայ մ'ալ յիշենք, եւ վերջացնենք Միաբանական կազմութեան վերաբերեալ բացատրութիւններն:

7. Ամեն ժամանակ Սրբոց Յակոբեանց Միաբանութենէն բաժնուողներ գտնուեր են Եկեղեցականք թէ աշխարհականք: Ասոնք ընդհանրապէս ազատութեան ասպարէզի մէջ վերջէն երեւան հաներ են ինչ վարք կամ կիրք որ պատճառ եղած են իրենց միաբանական ուխտէն զատուելուն կամ զատուիլ ստիպուելուն: Բայց հակառակն ալ պատահած է զժբաղդարար յաճախ: Եղած են միաբաններ որ Ս. Երուսաղէմէն պարզապէս արտաքուսելով, կամ անպատիժ մնալու համար խոյս տալով, ոչ միայն դուրսը չեն ճանչցուեր ինչ որ են, այլ եւ բարեպատեհ առիթներէ օգտուելով, կամ անձին ճարտարութեան շնորհիւ հաւատարիմ, օգտակար եւ զո՞ն այլոց նախանձալից հակառակութեան նկատուեր են, եւ Ս. Երուսաղէմի արձանագրութեանց մէջ իրենց վնասակարութեան եւ յանցանաց յիշատակարանները կենալով հանդերձ, Պօլիս կամ ի Ս. Եջմիածին կամ այլուր՝ պատուով ընդունուեր, եւ երբեմն նաեւ փառաց ի փառս բարձրացեր են:

Կանոնն այսպիսեաց արժանաւոր ընդունելութիւնը պատրաստելու եւ աղբիւն պարզամիտները եւ անզոյն պաշտօնակալները ասոնց ապագայ վնասակարութենէ զերծ պահելու, եւ Ս. Աթոռոյ հաւատարիս մնացողները յուսահատութեան չը մատնելու համար՝ բացարձակապէս տրամադրեց որ Միաբանից հրաժարման պարագայներն ոչ միայն տարեկան համարատու տեղեկագրութեամբ Ազգային Երեսփոխանական ժողովոյ ծանուցուին, այլ եւ ամեն անգամին եւ անմիջապէս Սրբաբան Մայր Աթոռոյ, Ազգային Կեդրոնական Վարչութեան, եւ ի հարկին նաեւ հասարակութեան իմաց տրուի մասնաւոր Տեղեկագրութեամբ կամ լրագրական հրատարակութեամբ:

Վարչութիւն Միաբանութեան

Ինչ որ ըսինք Միաբանութեան կազմութեան մասին, նոյնը գրեթէ կրնանք կրկնել անոր Վարչութեան նկատմամբ: Բնաւ նոր բառ չ'նարեցինք, կազապարն անգամ չ'խոխեցինք, ինչ որ գտանք, զայն ստինք եւ միայն բարեփոխելով եւ յստակելով բաւականացանք:

Սրբոց Յակոբեանց Միաբանութեան Վարչութիւնը զարաւոր ժամանակ Պատրիարքին միահեծան իշխանութեան, եւ երբեմն անոր հակառակ Միաբանական փոքրիկ խումբի մը սակաւապետութեան ձեռքը մնալէ ետքը, հուսկ յետոյ 1865ին Ազգային Երեսփոխանական ժողովն անոր Սահմանադրական կազմութիւն տուեր, եւ մասնաւոր կանոնադրով պաշտօնակալաց ընտրութեան եղանակըն եւ պարտիքն ու իրաւունքը սահմանել, եւ Ազգային Կեդրոնական Վարչութեան հետ շաղկապեր է:

Եթէ ուզենք վերլուծել այս կանոնագիրը, կը տեսնենք որ Ազգային ժողովն անով Սրբոց Յակոբեանց Միաբանութեան վարչութիւնն՝ անոր զուխն եղող Սրբոց Յակոբեանց Աթոռոյ գահակալ Պատրիարքին յանձնէր է, եւ ազակից տուեր է նախ Տնօրէն Խորհուրդ մը (տե՛ս նոյն կանոնագրի Թօղ. 4), եւ յերկու-

քին մէկէն ընտրող եւ վարչական տարեկան հաշուոց քննող սահմաններ է: Միաբանից Ընդհանուր ժողովն (Յօդ. 28), Բայց մէկ կողմէն Պատրիարքին ձգեր է Ս. Տեղեաց բարձր սնորէնութիւնը (Յօդ. 4), Միաբանից վերին հրահրութիւնն, եւ զանոնք պատժելու կամ նիւրապէս եւ բարոյսպէս վարձատրելու իրաւունքը (Յօդ. 44), եւ ստիպողական պարագայից մէջ առանց Տնօրէն Խորհրդոյ գործակցութեան եւ առանց Ընդհանուր ժողովոյ գիտութեան՝ քաղաքական գործեր սնօրինելու եւ կալուածներ գնելու արտօնութիւն տուեր է նմա (Յօդ. 42 եւ 38) եւ միւս կողմէն կեդ. Վարչութեան վերապահեր է մատակարարի ընտրութիւնը (Յօդ. 46), տարեկան 50,000 զուրուշէն աւելի փոխառութեանց թոյլտուութիւնը (Յօդ. 36), ժառանգաւորաց դպրոցի ուսման հիմնագրին վաւերացումը (Յօդ. 30), Կալուածոց վաճառման եւ ստիպողական պարագայից մէջ նաեւ գնման հրամանը (Յօդ. 31), եւ վերջապէս տարուէ տարի հաշիւները տեսնելու իշխանութիւնը (Յօդ. 8):

Բայց թողունք որ սոյն օրինակ տրամադրութեամբք Վարչական պատասխանատուութիւնը ճապաղ եւ խիստ տկար յարգարուեր է եւ կեդրոնական Վարչութեան յաճախ միջամտութեամբը համարառութեան իրաւունքը ջլատուեր է, հնգետասանամեայ միջոցի մէջ ոչ կեդրոնական Վարչութիւնը սոյն կանոնագրի հետեւողութեամբ ի գործ դրեր է իր իրաւունքը, եւ ոչ Միաբանական Վարչութիւնը իր պարտքը կատարեր է, վասն զի կեդրոնական Վարչութիւնը նոյն միջոցին մէջ բազմադիմի աղէտից եւ տաղնապներու հանգիստելով, պատեհութիւն չէ ունեցեր զէթ միանգամ մատակարար ընտրելու, կամ հաշիւ տեսնելու, եւ ոչ գոնէ կալուածական խնդրոց կամ փոխառութեանց համար իրեն զիմուած ժամանակ պատասխան տալու: Միւս կողմէն Միաբանական Ընդհանուր ժողովոյ անդամք՝ մասամբ, անգէտք իրենց իրուանց, երբեմն բնաւ ժողովի չկոչուելով, երբեմն անժամանակ, եւ միշտ յանպատրաստից հրաւիրուելով, շնն կրցեր խնդիրներն իմաստաւ լրել, եւ օրինաւոր միճաքանութեամբ լու-

ծել, կամ չեն համարձակեր, եւ հարցման եւ հարցապնդման իրաւունք չվայելելով, վարչական մարմնոց վրայ չեն կրցեր բնաւ հսկողութիւն ընել:

Հետեւաբար Սահմանադրական կանոնի հաստատութենէն ետքն ալ Միաբանութեան Վարչութեան բեռը բոլորովին Պատրիարքի վերայ ծանրացեր է, որ եթէ 13 տարուան մէջ երբեմն Տնօրէն Խորհրդոյ մը աջակցութիւնը վայելելով յաջողեր է փոքր ինչ թիւեցնել իր պատասխանատուութիւնը, յաճախ նաեւ անոր հակառակաւ որդւոյն ընդհարկանելով, զգուեր հեռացեր է անկէ, կամ զգուելով հեռացուցեր է զայն իրմէ, եւ գրեթէ միշտ միայնակ վարեր է իշխանութիւնը, մանաւանդ կարեւոր պարագայից մէջ, համարառու ըլլալով առաջի օրինական տառից, բայց համարառու չգտնուելուն համար յարածամ ազատ ասպարիզի մէջ գործելով, եւ ասկէ ծագում առած է արդի փիճակն Ս. Աթոռոյ, որոյ պատասխանատուութիւնը կեդրոնական վարչութիւնէն առ Պատրիարքն Ս. Աթոռոյ, Պատրիարքէն առ Միաբանութիւնն, եւ Միաբանութիւնէն առ երկոսին եւս կը տարուերի, եւ որոյ ամենէն ցաւալի արդիւնքն եղած է այն կասկածը որ ամենուն մտաց մէջ սպրդեր է Սահմանադրական սկզբանց օգտակարութեանը վրայ:

Մենք սոյն փիճակին դարման տանելու համար հարկ տեսանք 63 ի կանոնագիրը վերաքննել, եւ կազապարը պահելով գործադրութիւնն ապահովելու գիտամբ 1. վարչական հոգն ու պատասխանատուութիւնը Պատրիարքի նախադահութեամբ Տնօրէն Խորհրդոյ յանձնեցինք, պաշտօնեական դրութեամբ, գրութիւն՝ որ վերջին ժամանակներս գործուեալ եւ կարող Միաբանից թուոյն նուազութեան պատճառաւ բնական բերամբք ինքնին մտեր էր Ս. Աթոռոյ վարչութեան մէջ եւ 2. հսկողութիւնն եւ անմիջական համարառութիւնն հանդերձ ծանրակշիւ խնդրոց վճառութեան իրաւամբ անփոփոխելիք Միաբանական Ընդհանուր ժողովոյ վրայ, պայմանաւ որ մէկ կողմէն համար առնու Տնօրէն Խորհրդէն եւ միւս կողմէն համար տայ Ազգային Երեսփոխանական

ժողովոյ եւ 3, զսա՛ ազատ կացուցինք ամենայն վարչական մասնակի միջամտութիւններէ, որպէս զի ընդհանուր համարառութեան իրաւունքը ազատութեամբ եւ արդարապէս կարող ըլլայ գործադրել:

Անցնինք մանրամասնութեանց:

Պատրիարք

Յօդ. 23. Պաշտօն Պատրիարքի. — 65 ի Կանոնագրին մէջ Ս. Երուսաղէմի Աթոռոյ թեմի եւ փիճակային ժողովրդեան խօսք չ'կար: Բայց ըստ որում Ս. Երուսաղէմի, Բեթղէ՛նէ մի, Յոսիպէի, Վերիտոնի եւ Գամաակոսի մէջ Հայկազն Լուսաւորչական ժողովուրդք կան, եւ ասոնց առաջնորդական Տեսուչներն Ս. Աթոռէն կը զԲԲԿուին, սոյն ժողովրդոց հովուութեան խնդիրն ալ Պատրիարքի պաշտօնավարութեան մէկ կարեւոր կէտն ըլլալով, նկատողութեան առնուեցաւ, եւ այս յօդուածոց մէջ յիշատակուեցաւ, ուրիշ տեղ ալ Ս. Աթոռոյ սոյն ժողովրդոց նըկատմամբ ունեցած պարտաւորութիւններն եւ անոնց փոխադարձաբար առ Ս. Աթոռն ունեցած պարտիքն մասնաւոր տրամադրութեամբք սահմանուեցան:

Յօդ. 25. Ամբաստանութիւն. — Պատրիարքի ամբաստանութիւնը կամ Միաբանութեան կողմէն եւ կամ կեդր. Վարչութեան ժողովոց կողմէն ըլլալ տրամադրուած էր 63 ի կանոնագրով: Մենք քանզի Միաբանական Վարչութեան պատասխանատուութիւնը ուղղակի առ Ազգային Երեսփոխանական ժողովն վերածեցինք, հարկ տեսանք ամբաստանութեան իրաւունքն ալ Միաբանութեան եւ Ազգային Երեսփոխանութեան վերապահել, Միաբանք ի մօտոյ անոր արարքք տեսնելով կրնան ձայն բառնալ եւ ամբաստանել զնա առաջի Միաբանական Ընդհանուր ժողովոյ, որ այս պարագայի մէջ Պատրիարքական Փոխանորդի կողմէն կը հրաւիրուի ՚ի նիստ (Յօդ. 44). Երեսփոխանութիւնն ալ համարառու ըլլալով Միաբանական վարչութեան, կրնայ համարառութիւն չ'կատարուած, կամ անով անկար-

գութիւն երեւան ելած ժամանակ՝ ամբաստանութեան ենթարկել Վարչական մարմնոց զԲԲԿու Պատրիարքը, եւ իբրեւ Պատրիարք՝ իրաւունք ճանչցանք ասոր՝ դատուիլ յատենի Ազգային Երեսփոխանական ժողովոյ, եւ միեւնոյն օրինօք, որովք կը դատուի և Չօլտոյ Պատրիարքը:

Յօդ. 26. Պատրիարքական տեղակալ ի զէպս հեռացուցման դատապարտեալ Պատրիարքի. — Ամբաստանեալ եւ դատապարտեալ Պատրիարքի հեռացուցման ժամանակ ընտրուելու Տեղակալը՝ պարզապէս Պատրիարքութիւն ընելու կոչուելուն պատճառաւ՝ անոր ընտրութիւնն ալ Ազգային Երեսփոխանական ժողովոյ վերագրեցինք, եւ Պատրիարքի ընտրութեան համանման արարողութեանց ենթարկեցինք:

Յօդ. 27. Վախճան Պատրիարքի. — Պատրիարքի վախճանման ժամանակ Պատրիարքարանը փակեալ եւ կնքեալ պահուելու, եւ անոր գոյքը Ս. Աթոռոյ կամ աւելի ճիշդ խօսելով յաջորդին յանձնուելու մասին աւանդակաճ կանոն մ'ըլլալն իմացանք. բայց իբր կանոն օրհնողրեալ չըլլալուն՝ ամեն ժամանակ գործադրութեան հօգ չատրուած ըլլալն ստուգեցինք եւ սոյն պատճառաւ հազար եւ մէկ զայթակղական տարածայնութիւնք եւ երբեմն նաեւ Միաբանից մէջ կասկած, խեղ, ատելութիւն եւ մինչեւ իսկ կազ եւ կոխ տեղի ունենալուն տեղեկացանք: Ուստի ապագային ասոնց առաջին առնելու համար հարկադրեցանք սոյն յօդուածոց մանուածոյ տրամադրութիւնը օրինադրել:

Յօդ. 28. Պատրիարքական տեղակալ ՚ի զէպս շմահուան Պատրիարքի. — Սոյն պարագայի մէջ ընտրիլի Տեղակալն բոլորովին առժամանակեայ ըլլալուն, ընտրութիւնը Միաբանական Ընդհանուր ժողովոյ թողուցինք եւ Ազգային Երեսփոխանական ժողովոյ վաւերացմամբ բաւականացանք:

Յօդ. 29. Ընտրութիւն Պատրիարքի. — Պատրիարքի ընտրութեան մասին էապէս փոփոխութիւն չընդունեցինք: Բայց միաբանական ուխտին իրաւունքը յարգելու, եւ ձեռնհասութեանն օգուտ քաղելու համար՝ ոչ

միայն Ս. Աթոռոյ Պատրիարքութեան արժանաւորները ջոյց տարու, այլ եւ արժանաւորացոյցները մատուցանող ընկու արտօնութիւն տրուինք նաեւ, եւ Ազգային Երեսօխոսանական Ժողովոյ ձգեցինք ազատօրէն ընտրել ջոյցուած եւ ամէն մէկուն հանգամանքը նկարագրուած ընտրելեաց մէջէն՝ զՊատրիարք Երուսաղէմի, հետեւողութեամբ ընտրական կանոնաց ընտրութեան 4. Պոլսոյ Պատրիարքի ԅօդ. 30. Ուխտ նորնոյն Պատրիարքի Կանոնադր Պատրիարքը՝ եթէ Նպիտկոպոս է, հարկ չ'տեսնանք 4. Պոլիս քերել եւ անդ ուխտ ընել տալ յատենի Ազգային Երեսօխոսանական Ժողովոյ, զի սոյն ճամբորդութիւնը անպիտան գումարներ ծախս ընելու դուռն բանալէն զատ ուրիշ բանի չ'կրնար ծառայել: Բնականապէս եղած ժամանակ ըստ որում Երեսօխոսանական Կանոնադրութեան համար Ս. Էջմիածին ուղեւորելն անհրաժեշտ է՝ եւ՝ մենք այս կէտը բացորոշ նշանակեցինք, որպէս զի երբէք ուրիշ կերպով Նպիտկոպոսանալու մտադրութիւն չ'ըլլայ, ընականապէս ընտրեալն 4. Պոլսէն պիտի անցնի եւ դառնայ, եւ դիւրին է յայնժամ յիշեալ ուխտի արարողութիւնը ի 4. Պոլիս կատարել, ուստի մենք ալ այնպէս ստանձանեցինք:

Տնօրէն Խորհուրդ

ՅՅի կանոնադրը վեց անդամէ բաղկացեալ Տնօրէն Խորհուրդ մը սանձաներ, եւ զայն անկեղծ տալով Պատրիարքին, անոր յանձնելու էր Միաբանութեան կրօնական, քաղաքական ուսումնական եւ ելմտական գործոց տեսչութիւնը՝ ընդ հսկողութեամբ Պատրիարքի:

Մեր ալ վեց անդամով Տնօրէն Խորհուրդ մը սանձանեցինք, ընդ նախագահութեամբ Պատրիարքի տնօրինելու համար Ս. Աթոռոյ վարչական բոլոր գործերն, անձնիւր անդամ մասնաւոր պաշտօն մ'ունենալով եւ իւր ճիւղի ընթացիկ գործերն ստանձին անտեսելու արտօնութիւն մայելելով եւ հանրական խնդիրներն համազումար խորհրդով լուծելու պայմանաւ:

Սոյն խորհրդոյ անդամոց առանձինն ընտ-

րութիւնը Միաբանական Ընդհանուր Ժողովոյ վերապահելով, Ս. Աթոռոյ միւս բոլոր պաշտօնակարաց ընտրութիւնը իրեն յանձնեցինք, վեց կարգի բաժնելով դամնը եւ իւրաքանչիւր կարգն խորհրդոյ վեց անդամոց մէկուն իշխանութեան ենթարկելով, թէ ի մասին ընտրական առաջարկութեան եւ թէ ի մասին պաշտօնական պատասխանատուութեան:

Սոյն խորհուրդը պատասխանատու կարգեցինք Միաբանական Ընդհանուր Ժողովոյ, որ իր ամսական նիստերուն մէջ հարցումն ընելով եւ տարեկան գումարմանց մէջ Տեղեկագիր ընդունելով, վարչական գործոց վրայ հսկողութիւն ընելու եւ համարառութիւն կատարելու դիւրութիւն կրնայ ունենալ:

Այս տրամադրութեամբ Տնօրէն Խորհուրդը պաշտօնակար ձեւ մ'առաւ, որ վարչական առօրեայ գործոց անտեսութիւնը, եւ ստորակարգեալ պաշտօնակարաց հսկողութիւնը դիւրացնելէն զատ, վարչական պաշտօնութեան յարմար անձանց հազուադիւրս եղած ժամանակ վարչութեան կազմութիւնը դիւրացնելու ամենամեծ առաւելութիւնն ունի:

Միաբանական Ընդհանուր Ժողով

Միաբանական Ընդհանուր Ժողովոյ նկատմամբ եւս կական փոփոխութիւն չ'ըրինք միայն անոր իրաւունք եւ պարտաւորութիւնները յստակ տրամադրելու հոգ տարինք, որպէս զի իր կողմէն Միաբանական վարչութեան վրայ եւ Ազգային Երեսօխոսանական Ժողովոյ կողմէն իր վրայ ըլլալու հսկողութեան եւ համարառութեան իրաւունքն ապահովուին:

Սոյն Ժողովոյ վերաբերեալ յօդուածոց մէջ մասնաւոր բացատրութեան կարօտ կէտերն հետեւեալներն են:

Յօդ. 38. Անդամը Ժողովոյ. ՅՅի կանոնադրին մէջ Միաբանական Ընդհանուր Ժողովոյ անդամ ջոյցուած են նաեւ կիսատարակաւորներ, բայց մենք զանց ըրինք զանոնք յիշել, վասն զի ի բազում ժամանակաց ճեպէ կիսատարակաւոր պահելու սովորութիւնը վերցեր է Աթոռէն:

Այս առթիւ պարտք կը համարուիք նշանակել որ ի վաղ ժամանակս երբեմն աշխարհական միտքաններ ալ հրաւիրուեր են Միաբանական Ընդհանուր Ժողովոյ ներկայ գրտնուելու, հարկու ընտրանօք, եւ պատահեր է որ ասոնք ալ մասնակցին ընտրական քուէարկութեանց Պատրիարքի, եւայլն: Բայց այս անգամ հակառակ մէկ քանի անդամոց եւ նշանաւոր անդամոց կարծեաց եւ ջերմ փաստաբանութեան, մեծագոյն մասն ընդհանուր Ժողովոյ մերժեց աշխարհական միաբանից անդամակցութիւնը:

Յօդ. 40, 41 եւ 42. Ատեմակահ կանոնը. Սոյն յօդուածներն Ընդհանուր Ժողովոյ ներքին կանոնադրութեան վերաբերեալ տրամադրութիւններ կ'պարունակեն, եւ թէպէտ սոյն կանոնադրութիւնը անանձինն պիտի պատրաստուի եւ Ընդհանուր Ժողովոյ քննութեան ենթարկուի, բայց ըստ որում յիշեալ տրամադրութիւններն անմիջական կարեւորութիւն ունին, այժմէն որոշուեցան, եւ կանոնին մէջ զետեղուեցան:

Յօդ. 43. Պաշտօն Ընդհանուր Ժողովոյ. Սոյն յօդուածը Ընդհանուր Ժողովոյ պաշտօնի գլխաւոր պարագայները կը թուէ, որոց մէջ նշանակութեան արժանի եւ մասնաւոր բացատրութեան կարօտ են Ա. փոխառութեան եւ Բ. կալուածական վաճառմանց եւ դնմանց պէտքը լինելու եւ պայմանները սահմանելու իրաւունքը. Գ. եկեղեցական միաբանից ընտրութեան, վարձատրութեան, աստիճանի բարձրացման, դատապարտութեան, հրաժարման, արտաքսման եւայլն, նկատմամբ վճիռ արձակելու, եւ Դ. Միաբանական վարչութեան վրայ հսկողութիւն ընելու տրամադրութիւններն:

Իսպինք ասոնց վրայ:

Ա. Փոխառութիւն

Փոխառութեան խնդիրը ծանր խնդիր է, եւ Ս. Աթոռոյ համար մեծ կարեւորութիւն ունի, զի պատեհապէս եւ օրինաւորապէս կատարուած ժամանակ մեծ ծննդաբերութիւն կըր-

նայ մատուցանել, ինչպէս զեղծմամբ կրնայ մեծամեծ շարեաց դուռն բանալ: Ուստի Ազգրն ամեն ժամանակ այս խնդիրը կանոնադրելու հոգ տարած է իրաւամբ: Բայց դժբաղդաբար մինչեւ ցայսօր հաստատուած կանոններն եւ ձեռք առնուած միջոցներն չեն պատասխանած կէտ եղեալ նպատակին, եւ չեն յաջողեր յուսացեալ արդիւնքն արտադրելու: Թողունք նախկին կանոնադրութիւնները. որոց մէկուն մէջ հետաքրքրական է Ս. Աթոռոյ կնքոյ վրայ գրոշմել տրուած սախօսքը թէ (կնքոս այս ոչ է պարտուց այլ օրհնութեան) որպէս զի Պատրիարքներն այլ եւս կնք չունենան յանուն Ս. Աթոռոյ մուրակ կնքելու եւ փոխառութիւն ընելու: Քննենք ՅՅի կանոնադրին ընդունած տրամադրութիւնը եւ տեսնենք թէ ի՞նչու չէ յաջողեր:

ՅՅի կանոնադրը ճանչցեր է Ս. Աթոռոյ փոխառութիւն ընելու իրաւունքը. բայց մինչեւ տարեկան 50,000 դրու ինքնին ընելու, եւ անկէ աւելի գումարաց համար կեղքոնական վարչութեան հաւանութիւնն ստանալու պայման սահմաներ է:

Թէպէտեւ սոյն տրամադրութիւնը դժուար գործադրելի եւ անտեղութիւնէ ազատ չէ, զի կրնայ պատահիլ որ ծանրակշիռ պարագայի մը մէջ կեղքոնէն սպասուած հաւանութիւնը ժամանակին չհասնի, եւ կամ բոլորովին զլացուի ուրկէ վնաս Աթոռոյ վարկին կամ անտեսութեան, եւ կամ միաբանական վարչութիւնը ոչ այնչափ օգտակար գործի մը համար փոխառութիւն ընել ձեռնարկէ, եւ ամեն միջոց ի գործ զնէ կեղքոնէն հաւանութիւնը կորզելու, եւ սա՛ միջոց կամ պատեհութիւն չ'ունենայ ճշմարտութեան վերահասու ըլլալու, եւ տայ ուղուած հրամանը, ուրկէ զեղծում եւ Աթոռոյ անօգուտ պարտապանութիւն: Բայց աստի՛ ՅՅ է ի վեր երբէք չէ կրցեր ի գործ դրուել, վասն զի կեղքոնէն իրեն զիմուած ժամանակ խնդրոյն լու տեղեկանալու համար նախաքննական հարցումներ ուղղեր է միաբանութեան, բայց կամ պատասխան չէ կրցեր առնուլ, եւ կամ ստանձին վրայ ինք չէ կրցեր որոշում ընել, եւ խնդիրն այս տարտամ վիճակին մէջ տարուերած ժամանակ անցին

փոխառութիւնը կատարուել է, եւ անկէ ետքը ձախորդութիւն ձախորդութեանց յաջորդելով, եւ փոխառութիւնն փոխառութեանց բարդուելով ո՛չ միաբանութիւնն հոգ տարեր է կեդրոնին իմաց տալու, եւ ո՛չ կեդրոնը պատեհութիւն ունեցել է կամ կամք ըրեր է հարցնելու:

Մենք այս խնդիրն հիմնապէս լուծելու համար Միաբանութեան Վարչութիւնէն կայտեցինք փոխառութիւն ընելու իրաւունքը, եւ կեդրոնական Վարչութիւնն ազատ կացուցինք մասնակի անտեղի միջամտութենէ, եւ պայման սահմանեցինք Ա ամեն տարեկէս յաջորդ տարուան Եւրոպայի պատրաստութեան առթիւ՝ Միաբանական Ընդհանուր Ժողովով Եւրոպայից հաւասարակշռութեան համար պէ աք եղած միջոցները որոշել, եւ համարատու տեղեկագրութեամբ Ազգային Երեսփոխանական Ժողովոյ ներկայել, եւ Բ տարուան մէջ ամեն անգամ փոխառութիւնն հարկ ծագած ժամանակ՝ Միաբանական Ընդհանուր Ժողովով աւտոր պետքը վճռել եւ պայմաները սահմանել:

Ըստ որում Ա Աթոսոյ եկամուտներն կալուածական արդիւնք են կամ բարեպաշտական նուէրք, ամեն տարեկէս Եւրոպայոցի հաւասարակշռութեան համար ձախուց հաւասար չափով կամ կալուածական եկամուտ պէտք փնտառել, եւ կամ բարեպաշտական արդիւնք յուսացուի, եւ ասոնց երկուքին որ եւ է պատճառաւ պակսելու ժամանակ՝ փոխառութեան զիմելու հարկն զգացուի: Եւ ըստ որում Միաբանական Ընդհանուր Ժողովն ասոնց ամենը Տեղեկագրութեամբ պիտի առաջի առնէ Ազգային Երեսփոխանական Ժողովոյ, ըսել է որ Ազգային Ժողովն կանխաւ պիտի տեղեկանայ յաջորդ տարուան մէջ Միաբանութեան փոխառութիւն ընելու կարօտութեան եւ եւրադրեալ քանակութեան, ուստի կրնայ ժամանակին գիտողութիւն ընել, բարեփոխութիւն առաջարկել, քննութիւն բանալ, արգելք դնել, ուրիշ միջոց անորինել, վերջապէս ամենայն ինչ կանխաւ կարգադրելով զեղծմանց առաջքն առնուլ եւ միասուց ծագումը արդիւնել:

Միւս կողմէն բաւական չհամարելով Ազգային Ժողովոյ կանխաւ արուած տեղեկութիւնը, եւ անոր կողմէն ըլլալիք նախազոյշ անորէնութիւնը, պայման զրոնք տարուան մէջ կալուածական եւ բարեպաշտական հասից պակսած ժամանակ, Միաբանական Ընդհանուր Ժողովով որոշել փոխառութեան պէտքն եւ պայմաններն, եւ ըստ որում սոյն Ժողովը Ա Աթոսոյ շահուց եւ միասուց ի մտոյ մասնակից եւ ամենայն ինչ ի տեղեկ անդ եւս պարագայիք ստուգելու կարող ըլլալով, որ եւ է պաշտօնական մարմնէ աւելի աղէկ կրնայ հակակշռել Միաբանութեան Վարչական մարմնոյ արարքը, նմա յանձնելով փոխառութեանց մասնաւոր որոշումը, ազգային կատարելապէս երաշխաւորեալ կարծեցինք Ա Աթոսոյ եւ Ազգին շահերը, ի մասին փոխառական գործողութեանց:

Բ. կալուածական վաճառումն էւ զնումն

կալուածական վաճառման եւ գնման խնդրոյն վրայ 65 ի կանոնագիրը մէկ կողմէն կը պահանջէ որ ասոնց կեդրոնական վարչութեան հաճութիւնն առնելու, Պատրիարքը եւ ո՛չ իսկ Միաբանութիւնը կալուած մը ձեռքէ հանելու եւ կամ գնելու իրաւունք չ'ունենան, եւ միւս կողմէ կը ներէ որ ստիպողական պարագայս մէջ Պատրիարքն արտօնութիւն ունենայ կալուած գնելու, պայմանաւոր գնելէն ետքը իմաց տայ թէ՛ Միաբանական Ընդհանուր Ժողովոյ եւ թէ՛ կեդրոնական վարչութեան:

Այս տրամադրութիւնն ալ փոխառութեան վերաբերելոյն նման՝ կանոնագրի հաստատութենէ ՚ի վեր ՚ի գործ չէ զրուեր: Թէպէտեւ Միաբանութիւնը այսրան ժամանակի մէջ զրեթէ բնաւ կալուած չէ վաճառեր, բայց մէկ քանի կալուած գներ է, եւ թէպէտ զընած կալուածներուն համար կեդրոնին կանխաւ իմաց չէ տրուեր, բայց 1873 ի հետաւոր եւ ապարդիւն կալուածոց վրայ մասնաւոր տնօրէնութիւն մ'ընելով կեդրոնին զիմեր է հաճութիւն առնելու համար զանոնք

հետզհետէ ծախել եւ տեղը մօտաւոր եւ արդիւնաւոր կալուածներ գնելու կամ շինելու բայց պատասխան չէ կրցեր առնուլ, որով եւ գործադրութեանը չէ համարձակեր. թերեւս կեդրոնական Վարչութիւնը հապճեպով որոշում չ'ընելու, եւ ամենայն ինչ կանխաւ ստուգելով հասուն եւ օգտակար տնօրէնութիւն մ'ընելու գիտամար ՚ի սկզբան իր պատասխանը երկարածներ է, եւ վերջը զբաղմանց բազմութենէն կամ բոյորովին մտացեր եւ կամ պատեհութիւն չէ գտեր որոշում մը տալ խնդրոյն եւ հաղորդել Միաբանութեան: Բայց սա՛ ստոյգ է որ նոյն հետաւոր կալուածոց օր աւուր արժէքի նուազման, եւ արդիւնաւոր մօտաւոր կալուածոց ընդ հակառակն օր աւուր սղութեան պատճառաւ, Միաբանութեան խնդրոյն անլոյծ մնալը Ա Աթոսոյ միասակարեղան է:

Մենք այս անտեղութեան առջին առնելու համար կալուածական վաճառման եւ գնման մասին պարզապէս Պատրիարքէն ալ վերուցինք արտօնութիւնը, Տնօրէն Խորհրդէն ալ, ինչպէս նաեւ կեդրոնն ազատ կացուցինք Ա Աթոսոյ Տնտեսական գործոց մասնակի միջամտութենէ, եւ ասոնց ամենուն տեղ սահմանեցինք Միաբանական Ընդհանուր Ժողովոյ ձեռնհասութիւնը վաճառման կամ գնման պետքը վճռելու եւ պայմանները որոշելու մասին ազատ ի միջամտութենէ կեդրոնին, բայց լիովին պատասխանատու նմա, որ ամեն տարեկէս եղածին եւ ըլլալիքին մանրամասն տեղեկութիւն առնելով, կրնայ իր հաճութիւնը ցոյց տալ կամ տհաճութիւնը յայտնել, գիտողութիւն, առաջարկութիւն ընել, դատել եւ դատափետել, մէկ բառով իր իրաւասութիւնը ի գործ գնել ազատօրէն, զի կանխակալ միջամտութեամբ իր համարատութեան իրաւունքը իր ձեռք կաշկանդած չէ:

Գ. Եկեղեցական միաբանից ընդունելութեան արտաքսման եւն. եւն. վճռատուութիւն.

Այս կարեւոր գործն մինչեւ ցայսօր Պատրիարքի ազատ իշխանութեան յանձնուած,

եւ միայն մէկ քանի պարագայից նկատմամբ խոստովանա՛օր եւ ուսումնասպետի, եւ երբեմն նաեւ Միաբանական Ընդհանուր Ժողովոյ միջամտութիւնն իբր սեղմիչ ընդունուել է նոյն իսկ 65 ի կանոնագրով (տես Յօդ. 41, 42 եւ 43 նոյն կանոնի):

Մենք այս տրամադրութիւնը բաւական չ'համարեցինք: Միաբանից ընդունելութիւնն, յատաջացումը կամ արտաքսումը՝ որ Միաբանական ուխտին բաղձանալուն կամ նուազելուն, բարգաւաճման կամ տկարացման կ'առաջնորդեն, Ա Աթոսոյ եւ ընդհանրապէս Ազգին համար մեծ կարեւորութիւն ունեցող պարագայներ են, մանաւանդ Միաբանական կեանքէ հրաժարելով դարձեալ եւ միշտ Միաբան մնալու կամ բոյորովին Միաբանից տուժարէն պարզապէս կամ դատապարտուելով ջնջուելու խնդիրը, որ չարաչար զեղծմանց կրնայ տեղի տալ, եւ մասնաւոր պարագայից մէջ մեծամեծ շփոթութիւններ յարուցանել ազգին մէջ:

Մենք խոչեմութիւն չ'համարեցինք այս ծանրակշիւ խնդիրներն միմիայն Պատրիարքի կամաց եւ վճռոյն յանձնել, եւ ոչ իսկ Տնօրէն Խորհրդոյ գործակցութեան, մանաւանդ որ անցեալը սպառազային երաշխաւորութիւն ընծայելու չափ խրախուսիչ չգտանք:

Ուստի ամենայն ինչ Միաբանական Ընդհանուր Ժողովոյ իրաւասութեան վերադարձեցինք, եւ ամենայն ինչ տարեկան համարատուութեամբ Ազգային Երեսփոխանական Ժողովոյ գիտողութեան ենթարկել որոշեցինք:

Դ. Հսկողութիւն Վարչական մարմնոյ.

Թէեւ Միաբանական Ընդհանուր Ժողովը միշտ հսկող եւ համարատու ճանչուած է Վարչական պաշտօնակալաց, բայց նոյն իսկ 65 ի կանոնագիրը բացորոշակի պարտաւորած ըլլալով զՏնօրէն Խորհուրդ կանոնաւոր համարատուութիւն ընել ամէն տարեկէս իրեն ամեն ըրածին վրայ, Ընդհանուր Ժողովն երբէք կանոնաւոր հսկողութիւն եւ հակակշիւ չ'է կրցեր ընել վարչական մարմնոյ գործառնութեանց, այլ պարզապէս ընտրող մարմին մը

դառնալով, միայն պատահմամբ այս ինչ կամ այն ինչ օրէնսդրական կամ վարչական խնդրոյ վերայ ի խորհրդածութիւն հրաւիրուած ժամանակ իր կարծիքը յայտնելու եւ դիտողութիւն կամ քննադատութիւն բնելու առիթ ունեցեր է : մէկ բառով իր իրաւունքը մասամբ միայն գործադրել յաջողեր է :

Մենք Ընդհանուր Ժողովոյ այս մեծ իրաւունքը որոյ գործադրութիւնը միակ երաշխաւոր է վարչական ուղիղ ընթացից, կատարելապէս նուիրագործեցինք, եւ առ առաւելութիւն ոչ միայն քայքայեցաւ պատշաճապէս նախադրեցինք որ Տնօրէն Խորհուրդն ամէն տարեկան համար տայ իր ամէն գործոց Ընդհանուր Ժողովոյ Ընդհանուր տեղեկագրութեամբ, այլ եւ Ընդհանուր Ժողովոյ բոլոր անդամոց իրաւունք ճանչցանք թէ պարբերական եւ թէ պատահական գումարմանց մէջ հարցում ուղղել վարչական պաշտօնէից եւ տեղեկանալ ամենայնի, գեո յընթացս գործադրութեան :

Հարկաւ սոյն իրաւանց գործադրութիւնը ամէն պարագայներով պիտի կարգադրուի Ընդհանուր Ժողովոյ ներքին Կանոնադրութեան մէջ, որպէս զի Ատենական բարեկարգութեան խանդարում չպատահի, եւ ամբնանդամ մը վարչական տաքնայ չծագի, եւ սոյն Կանոնադրութիւնը պատրաստելու վերայ է Ընդհանուր Ժողովոյ արդի զիւանի շնորհիւ :

Ընդհանուր Ժողովոյ վրայ բացատրութիւնները չվերջացուցած, հարկ կը համարիմք նաեւ անոր համարառութեան վրայ քանի մը խօսք ընել :

Յայտնի է որ Միաբանական Ընդհանուր Ժողովն նոր կանոնով մեծամեծ իրաւանց տիրացած եւ իր իշխանութիւնը ճոխացած է : Մենք զնա շահակցորդ եւ բնական պաշտպան գտնելով Միաբանական իրաւանց, հակաշին եւ գէտ կազմեցինք վարչական մարմնոյ վրայ, եւ մինչեւ իսկ Պատրիարքի եւ Տնօրէն Խորհրդոյ անհամաձայնութեան ժամանակ բարձրագոյն դատաւոր զնա ցոյց տուինք եւ պարտաւորութիւն զրինք ամենուն, հնազանդի անոր որոշմանց եւ վճար (Յօդ. 98) :

Բայց անոր ալ հակակշռող իշխանութիւն մը պէտք էր, եւ այս իշխանութիւնը գտանել ազգին վրայ, որ զայն ի գործ կը դնէ իր Երեսփոխանական Ընդհանուր Ժողովով : Աւտի կանոն զրինք որ այն բարձրագոյն ժողովը որ հակող եւ համարառու է Ս. Աթոռոյ վարչական մարմնոյ, համարառու ըլլայ Ազգին գերագոյն Երեսփոխանական Ժողովոյ, եւ սոյն համարառութեան կատարումը կանոնաւորելու եւ դիւրացնելու համար Ահրզ յօդուածով այն ամեն կետերը խնամով շեշտեցինք որոց վրայ պիտի խօսի եւ պէտք է խօսի Միաբանութեան Ընդհանուր Ժողովոյ համարառու Տեղեկագիրը :

Այս կերպով Ազգային Ժողովը ամեն տարեկան պիտի տեղեկանայ Միաբանութեան անցելոյն եւ ապագային, եւ ի հարկէ անցելոյն վրայ իր գոնութեան կամ զժգոնութեան քուէն տալէ ետքը, ապագային համար եղած առաջարկութեանց, առաջադրութեանց, ենթադրութեանց եւ որոշմանց վրայ դիտողութիւն պիտի ընէ, առարկութիւն, հակառակարկութիւն պիտի ներկայէ, քննութիւն պիտի բանայ կամ ամբաստանութեան պիտի ենթարկէ : մէկ բառով իր հակողութեան եւ համարառութեան իրաւունքը պիտի գործադրէ, ազատութիւն ունենալով ի ձեռին նոյն չափով որով ազատութիւն տուած է Միաբանութեան իր գործերն ինքնին տնօրինելու :

Այս է ահա այն սկզբունքը որոյ վրայ պիտի դառնայ այսուհետեւ Ազգին եւ իր Միաբանութեան յարաբերութեանց առանցքը, եւ եթէ Ազգային Երեսփոխանական Ժողովն ջանհոգանալ ժամանակին իր համարառութեան իրաւամբ հակակշռել Միաբանական Ընդհանուր Ժողովոյ արարքը, նա ալ բաւական է ամեն ժամանակ իր հակողութեամբ հակակշռելու Ս. Աթոռոյ վարչական մարմնոյ գործողութիւնները, որով տեղի չլինար զեղծմանց եւ ամեն կողմի իրաւունք կապահովուին ապագային :

Բառ մ'ալ Միաբանական Ընդհանուր Ժողովոյ կարողութեան վրայ եւ վերջացնենք :

Միթէ Միաբանական Ընդհանուր Ժողովն

կարող պիտի ըլլա՞յ ըստ արժանեոյն իր պաշտօնը կատարել, եւ աչալուրջ հակողութեամբ համարառու հանդիսանալ իր վարչութեան :

Այս, վասն զի սոյն Ժողովոյ մէջ Միաբանութեան ոչ միայն ամեն կարողութիւնը ներկայացեալ են, այլ եւ ամեն շահի եւ կարծիք, եւ քիչ մ'ալ առաջ երթալով ամեն կիրք : Անկնարին է որ Միաբանութեան մը բոլոր անդամք համակարծիք, եւ բառին նշանակութեամբ Միաբան ըլլան : Անկարելի է նաեւ որ տարակարծիք եղողներն իրենց հակակարծիք եղողներուն շքեմ հակառակորդաց՝ արարքը քննելու եւ քննադատելու ձգտում եւ բերումն չունենան, մանաւանդ երբ սքքա ի պաշտօնի վարչութեան կը գտնուին : Եւ ըստ որում ամենուն շահը մէկ է, Արոռոյ պայծառութիւնը՝ որով ամենն ալ կ'օգտին եւ կը փառաւորին, ուստի բաւական է որ ամենքը մէկտեղ դան եւ կանոնաւոր տոննի մէջ կարծիքնին ազատօրէն յայտնելու եւ հակակարծիքնին քննադատելու եւ դատափետելու իրաւունք վայելեն, որպէս զի ամենայն ինչ ապահովուպէս վստահացուի իրենց հակողութեանն, մանաւանդ երբ իրենք ալ բարձրագոյն մարմնոյ մը հակողութեան ենթարկեալ, պատասխանատու են իրենց ամեն գործողութեանց :

Այս խորհրդածութեամբ վստահութիւն ունեցանք յանձնել Միաբանական Ընդհանուր Ժողովոյ ինչ որ միապետական նախապաշարմունք եւ նախկին Կանոնադրութիւնը խնայելու եւ զրացել էին նմա, եւ չենք մարանիր հաւատարմութեամբ որ վստահութեամբ պատուեալ եւ ազատութեամբ ճոխացեալ այս մարմինը պիտի ջանայ պատասխանել իր կոչման, եւ արժանապէս կատարէ մէկ կողմէ համարառութեան եւ միւս կողմէ համարառութեան պաշտօնը, որ Ս. Աթոռոյ բարեպետ վարչութեան բեւեռները կը կազմեն :

Լուսարարապետ

Հնաւանդ սովորութիւն է յերուսաղէմ որ Սրբոց Յակոբեանց Աթոռոյ ամենայն ա-

նօթք, զղեստք, զարդք եւ եկեղեցական գրեանք եւ կահք ու կարասիք, Աւանդատան մէջ կը պահուին, եւ բանային Լուսարարապետին կը յանձնուի, կամ աւելի ճիշդ խօսելով, Լուսարարապետի ընտրութեան ժամանակ Աւանդատան բանային Ս. Գլխաղբի այսինքն Ս. Յակոբայ գլուխն ամփոփուած գերեզմանի փոսին մէջ կը գրուի, եւ ընտրեալը անկէ իր ձեռքը կառնու, կուխտէ, եւ կը ըլլայ անկախ տնօրէն Աւանդատան : Իրմէ զատ մարդ չունի իշխանութիւն մանել այն տեղ ինք ինչ որ ուղէ զայն կը հանէ դուրս, զղեստ, զարդ եւն : Ի գործածութիւն եկեղեցեաց : ո՛չ ոք չունի իրաւունք նմա հրամայելու, եւ ինք ոչ ումեք է պատասխանատու, եւ իր պաշտօնը կը տեւէ մինչեւ ցմա՛ր :

Մեծ է Լուսարարապետի պաշտօնը, մանաւանդ որ ինչպէ՞ս Աւանդատան՝ նոյնպէ՞ս եւ եկեղեցեաց մէջ աստուածային պաշտաման նա է Տնօրէն եւ վերատեսուչ, եւ Միաբանութեան բոլոր եկեղեցական անդամք անոր իշխանութեանը ենթարկեալ են ի ժապին ժամակարգութեան :

Կան թէպէտ եկեղեցականաց պաշտօնավարութեան կարգ մը, եւ զղեստուց, անօթից եւն. համար աւանդական սովորութիւններ, որոց կը հետեւի Լուսարարապետը եւ միաբանք՝ մեծ մասամբ գիտակ սոյն կարգի եւ սովորութեանց, նախանձայոյց կը հսկեն անոնց պահպանութեանը վրայ, այնպէս որ եթէ եպիսկոպոս պատարագելու օրը պատարագը վարդապետի մը տրուի, կամ ամօթեայ ժամարարութեան կարգը այսինչին ըլլալով ուրիշ մը զրկուի անոր տեղ, եւ կամ այս ինչ տօնին այն ինչ շուրջառը կամ դաւաղանը գործածուելուն տեղ ուրիշներ հանուին Աւանդատունէն, շուրջ կտկի միաբանութեան մէջ եւ կերպով մը Լուսարարապետը կազդարարուի յաւանդապահութիւն, բայց ոչ ոք չունի իրաւունք նմա զիմադրելու, եւ ոչ համարառութիւն ընել մտաբերելու, զի զԼուսարարապետը հաշուով ինչ չընդունիր, եւ հաշիւ եւ համար տալու կանոնական տրամադրութեան մը կամ գէթ աւանդութիւն մը չկե-

նախնի զատ, անկախ անհաշիւ եւ անդրիմազրեկի իշխանութեան մասին ոչ միայն աւանդական տրամադրութիւն կայ միաբանից մըտքին մէջ, այլ եւ այնպէս մնալուն նախանձախնիքութիւն կը տիրէ զեռ այսօր մեծ մասին սրտին մէջ:

Այս տեսակ Լուսարարապետութիւն մը կամ նմանօրինակ պաշտօնավարութիւն չեմ կարծեր որ ուրիշ ազգաց մէջ, եւ նոյն իսկ մեր ազգին մէջ ուրիշ տեղ զանուի. եւ թէպէտ սա մերոնց բարոյական եւ բարեպաշտական զգացմանց վեհմտութեան եւ սրտի մաքրութեան պատկառելի նշան մ'է, եւ թէպէտ մինչեւ ցայսօր Լուսարարապետի մը կողմէն անհաւատարմութեան նշան մը չէ տեսնուեր, կամ գայթակղական գործ մը չէ պատահեր, բայց ըստ որում մարդ է Լուսարարապետը, կրնայ սխալիլ, կրնայ կորուսանել, բնական էր եւ բանական՝ որ թողլով եկեղեցական պաշտամանց վերատեսչութիւնը ինչպէս որ է, զէթ Աւանդատան տրնօրէնութեան մասին բարեփոխում մ'ընել մտարեկէնք, եւ ջանայինք լուսարարապետութիւնն ալ ուրիշ պաշտօններու նման պատասխանատուութեան ենթարկել, եւ այնպէս Ս. Աթոռոյ վարչական բոլոր պաշտօնները ներդաշնակութեան մէջ դնել:

Բայց ասոր ո՛չ ժամանակը եւ ո՛չ պարագայները ներդաշնակ չգտանք, ուստի պարտաւորեցանք բաւականանալ, եւ այն՝ բաւական յուզմանց տեղի տալով, 47 եւ 48րդ յօդուածներն սահմանելով, որոց առաջինը՝ անցելոյն կարգադրութեան հիմ մը ձգելու կը ծառայէ, եւ երկրորդը՝ ապագայն երաշխաւորելու կառաջնորդէ, եւ թողուցինք ժամանակին այս սերմունքը պտղաբերել, եւ միաբանից մտքին հետ Աւանդատան զոններն ալ բանալ. ըսել է որ բարեկարգութեան առաջին քայլն առինք, որ աւելի թանկագին է, եւ հիացանք:

Յարաբերութեանց Տեսուչ

Բէ՛ւ Ս. Աթոռը յարածամ յարաբերու-

թեան մէջ զանուած է եւ կը զանուի կառավարութեան տեղական, եւ երբեմն նաեւ Կեդրոնական պաշտօնակալաց հետ, Հիւպատոսաց եւ երբեմն նաեւ Դեսպանաց հետ, Արարատեան Մայր Աթոռոյ եւ Ազգային Կեդրոնական Վարչութեան հետ, Թեմական Հայազգի Ժողովրդոց, եւ բնակակից օտարազգի Քրիստոնէից հետ, յարաբերութիւնք՝ որ առաւել կամ նուազ կարեւորութիւն ունին, եւ երբեմն նաեւ դիւանագիտական փոփոխութիւն. բայց երբէք Ս. Աթոռն իւր յարաբերութեանց մասնաւոր կանոն կամ զէթ մասնաւոր Տեսուչ մը ունեցած չ'է, միշտ Պատրիարքը ներշնչած է, եւ իր փոխանորդը կամ թարգման տիտղոսը կրող վարդապետ մը՝ ի գործ դրած է այս յարաբերութիւնները, անշուշտ Ազգային սեփականութեանց անկորուստ եւ արժանապատուութեան բարձր պահուելուն տեսակէտով:

Մենք այս դրութիւնը բարեփոխել հարկ տեսանք, եւ յարաբերակոն փոփոխել խընդրոց մէջ անգիտութեան եւ անխոհմտութեան ճարակ չձգելու, եւ որ եւէ կողմի հետ զժողովեան, եւ կազ ու կաւոյ տեղի չթողու համար, նախ Տնօրինական Ս. Տեղեաց եւ այլ ուխտատեղեաց մէջ Ս. Աթոռոյ Ազգային իրաւունքը մանրամասնաբար ի գիր արձանագրուցանել տալով տպագրութեան յանձնեցինք (այս է բովանդակութիւն եւ այն ըսուած զըրբին ծագումը), եւ Ս. Աթոռոյ ամեն կողմերու հետ յարաբերութեանց սկզբնական պայմանները, եւ ի մասնաւորի Կեդրոնական Վարչութեան, եւ թեմական ժողովրդոց հետ ունեցած փոխադարձ իրաւանց եւ պարտեաց սահմանները զձեւելով, ամենուն տնօրինութիւնը պաշտօն յատկացուցինք Յարաբերութեանց տեսուչ անունով բարձր պաշտօնեայի մը որ Պատրիարքական ֆոխանորդութիւն ալ պիտի ընէ, զի այս ալ պարզապէս յարաբերական պաշտօն մ'է եւ որ վերոյիշեալ սկզբանց հետ տեւողութեամբ, եւ յարածամ Տնտ. խորհրդոյ խորհրդակցութեամբ պիտի վարէ իր պաշտօնը, ջանք ընելով միշտ նախազգոյ միջոցներով տեղի չձգել ի վերջոյ դրամական կամ մկանանց զօրութեան վատնուելուն, ինչպէս

յսճախ կը պատահի յերուսաղէմ, ոչ միայն մերոնց, այլ եւ կրթութեամբ, հարստութեամբ եւ աշխարհավարական ազդեցութեամբ մերինները դերազանցող օտարազգի հասարակութեանց մէջ:

Ելեւմտից Տեսուչ

Ելեւմտից Տեսուչութեան համար ալ միեւնոյն ամփոփումն ընել պարտաւորեցանք Վարչական ասպարիզին մէջ. Ս. Աթոռոյ Ելեւմտաք ճապաղ դրութեան մէջ էին. Ժողուեցինք, Դանձապետութիւնը Համարակալութեան զատեցինք, Համարակալութեան մասնաւոր Դիւան բացինք, եւ ամենայն ինչ կանխաւ սահմանելի Պիւտճէի կապելով, Ընդհանուր Տեսուչութիւնն յանձնեցինք Ելեւմտից Տեսուչ անունով բարձր Պաշտօնէի մը:

Պիւտճէն պատրաստելու աշխատութիւնը Տնօրէն Խորհրդոյ յանձնելով, ուր Ելեւմտից Տեսուչը իբր անդամ կը դործէ, վաւերացումը Միաբանական Ընդհ. Ժողովոյ թողուցինք, եւ ամենայն նախասահմանեալ ծախուց վճարումն Ելեւմտից Տեսչին հրամանատուութեան ենթարկելով, զնա ինքն ենթարկեցինք՝ պիւտճէն դուրս՝ տարին մինչեւ 36,000 զուրուշի ծախուց համար Տնօրէն Խորհրդոյ, եւ անկէ աւելի զուճարաց համար՝ Ընդհանուր Ժողովոյ հրամանատուութեան:

Ուսումնապետ

Հարկաւ Ս. Աթոռն պարտականութիւն ունի Ազգային Դաստիարակութեան մեծ գործոյն աջակցելու. Բայց ասոր համար կարողութիւն պէտք է զրամական եւ անձնական. Ս. Աթոռոյ եկամուտներն առ այժմ հազիւ կը բաւեն իր Միաբանական ուխտին աւուր պարէնն, եւ Տնօրինական Ս. տեղեաց եւ վանօրէից օր ըստ օրեայ անհրաժեշտ պիտոյքը մատակարարելու: Մարդ ալ բաւական չէ մնացեր Միաբանութեան մէջ, զի չ'իտքբաւորական դրութեամբ Կեղեցական հասցնելու եզանակը իրաւամբ

ջնջեր, բայց ժառանգաւորաց վարժարան անունով հիմնեալ հաստատութեանն Եկեղեցական չեն կրցեր շահիլ, եւ արդէն զանուածներն Հեաղհեալ ցրուելով, Միաբանից թիւը պարտուց անման հակադարձ համեմատութեամբ նուազեր եւ հասեր է այնպիսի վիճակի մը՝ որ Աթոռոյ Վարչութիւնը զժուարութիւն կը կրէ այսօր իր կարեւոր պաշտօններն վարելու բաւական Միաբան գտնելու, եւ ըստիպուած է զանոնք կուտակել սակաւաթիւ անձանց վրայ:

Այս վիճակին մէջ Ս. Աթոռն Ազգային դաստիարակութեան մեծ ծառայութիւն մը չկրնալ մատուցանելուն քաջ համոզուելով՝ պարտաւորեցանք բարեփոխութիւն մտցնել դաստիարակութեան վերաբերեալ վարչական ճիւղին մէջ, որպէս զի Ս. Աթոռն նախ ինքը զինք կ'ազդուրէ, եւ ապա հզօրեղապէս մատչի ազգային ընդհանրական դաստիարակութեան ընդհանուր ջանից մասնակցելու:

Այս նպատակաւ Կանոն սահմանեցինք որ 1. Ս. Աթոռն իր թեմական ժողովրդոց նախնական եւ ըստ տեղւոյն նաեւ երկրորդականով խառն դաստիարակութիւն տայ, միայն կարօտելոց՝ ձրի, եւ կարողութիւն ունեցողներէն զիւրամատչելի թոշակ ընդունելով. եւ 2. ժառանգաւորաց վարժարանի արդի երկար բայց անկատար ընթացքը ամփոփելով, եւ 16էն մինչ 18 տարեկան նախակրթեալ եւ եկեղեցականութեան յարմարութիւն եւ փոփաք ունեցող աշակերտներ ընտրանօք ընդունելով, եւ խնամով իբր Եկեղեցական դաստիարակելով, իրեն համար ուսեալ եւ կրթեալ Եկեղեցական Միաբաններ հասցունէ. եւ 3. Երբ իր եկամուտն հաւասարակուէ ծախուց իր կարողութեան չափով բարձրագոյն ուսմանց ընդհանուր վարժարան հիմնէ ի Պոլիս, ինչպէս ժամանակ մը Եւսկիւտարի ճեմարանը մատար Ս. Աթոռոյ ծախիւք հիմնուելով, անոր անունը կը կրէր « Ազգային ճեմարան Արբոյ Երուսաղէմ » եւ տարեկան 120,000 զըրուշի նպատակ կը վայելէր, եւ կամ ժամանակին պահանջմանցն համեմատ ի Հայաստան ի մեծն կամ ի փոքրն եւայլն:

Սոյն տրամադրութեամբք դաստիարակու-

թեան խնդիրը պարզելով, անոր վարչական բոլոր հոգը Աստուծոյ առջև անուշով բարձր պաշտօնակալի մը յանձնեցինք, որոյ խնամոց եւ վերատեսչութեան ենթարկեցինք նաեւ թանգարանը, տպարանը եւ լուսանկարը, վասն զի ասոնք ալ մինչեւ աստիճան մը դաստիարակութեան կը վերաբերին, եւ մենք Վարչական բոլոր գործերը Տեօրէն Իտրուրդը կազմող մեծ պաշտօնակալաց տեսչութեան ներքեւ անկողնելու գրութիւնը ընդունեցինք:

Թանգարան

Թանգարանին վրայ սա միայն յայտնել կ'ուզենք, որ թէեւ բարեբարաց նուէրներով դրամագլխտական, հնագլխտական, երկրարանական, բնագլխտական եւ բնական պատմութեան վերաբերեալ առարկայներով եւ բազմաթիւ ձեռագիր եւ տպեալ մատենաներով սոյն հաստատութիւնը ճոխացեր է, սակայն օգտակար ծառայութիւն մատուցանելու գործութեան մէջ չէ կրցեր գրուիլ. զի յիշեալ առարկայները զատ զատ տեղեր զետեղուեր, ոչ միայն ամենուրեւ մէկէն հսկող եւ օգտակար լինելուն հոյ ամենող տեսուչ մը գրուեր է, եւ ոչ զէթ մատենագրանը որոշեալ ժամանակներ բացուելով, հասարակաց ընթերցանութեան գործածուելուն խնամք տարուեր է:

Աւստի պարտաւորեցանք Յճրդ յօդուածը սահմանել, որպէս զի այս թանկագին թանգարանը միայն առ ի զարդ չպահուի, այլ Միաբանից եւ Ազգին դաստիարակութեան բարգաւաճմանը ծառայելու կերպով կարգադրուի:

Տպարան

Տպարանը որ ի սկզբան համրակութեան եւ վերջերք անխնայ անտեսութեան պատճառաւ մեծամեծ ծախքերու տեղի տուեր, բայց տպած գրքերուն, եւ ի մասնաւորի եկեղեցական գրեանց շնորհիւ Աթոռոյ փաստաբութեանը ծառայեր է, կարօտ էր սեղմիք կանոնի մը. որպէս զի մինչեւ վերջին ժամանակներս եղածին նման անօգուտ գրքեր կամ անխնայ կերպով տպուելով, ծախքը չհասնէր ի սկզբան պատճառաւ:

Նախներս եղածին նման անօգուտ գրքեր կամ անխնայ կերպով տպուելով, ծախքը չհասնէր ի սկզբան պատճառաւ: Գոյնք եւ Լատինք ալ ունին ժողովուրդ միեւնոյն ազբութ յառաջացած: Ասոնց մէջ վաղնջուց սովորութիւն մտած է իրենց ժողովրդոց ձրի բնակարան տալ, հաց բաժնել, ստակ բաշխել եւն, անշուշտ կրօնական արքանեակ շահելու կամ շահուածները պահելու գիտամար: Մերոնք ալ ասոնց օրինակին հետեւեր են, եւ կը շարունակեն կազն ի կազը հետեւիլ, կազն ի կազը կ'ըսեմ, զի Յոյնք եւ Լատինք մերոնց նայելով անհամեմատ շատ կուտան ինչ որ կուտան, մինչեւ անգամ իրենց ժողովրդոց մէջէն տան տէր եղած կան որ իրենց սեփական տան մէջ կը բնակին բայց տարեկան վարձքը վանքէն կառնուն: Մերոնք մինչեւ այս աստիճան չեն կրցեր կամ ստիպուեր են չկրնալ յառաջ երթալ եւ այսօր Ս. Աթոռոյ առ բնիկ ժողովուրդը ըրած նպատակն է՝ մեծ մասին ձրի, եւ մէկ մասին աննշան վարձքով բնակութեան տուն, մէկ քանիին օրական հոց, ամենուրեւ կողմէն Տէրութեան վճարելի պետեղիյի տուրքն ամբողջ, տարին անգամ մը ամենամեծ մասին դրամական նուէր (բարեկենդանի մտ մարդ գլուխ 40 զուրուշ) ամենուրեւ ձրի դպրոց, եւ գրեթէ ամենուրեւ ձրի բժիշկ եւ ձրի դեղ:

Լուսանկար

Լուսանկարի գործատուներ՝ եթէ արդէն հաստատուած չ'ըլլար, եւ եթէ ի սկզբան պատճառաւ ծախքը փոխարինելէն զատ այսօր Ս. Աթոռոյ փայլ, եւ փոքրիկ եկամուտ մ'ալ հայթայթելու վիճակի մէջ չի գտնուեր, չէինք հաստատեր բնաւ, քանզի գրեթէ օգտիցը հաւասարութեամբ անտեսութիւններէ պաշարեալ է: Աւստի ՍՅճրդ յօդուածով անտեսութիւններէ ազատ պահելու տրամադրութեամբ զայն պահել սահմանեցինք:

Տնտեսապետ

Տնտեսապետութեան մասին մասնաւոր բացատրելու բան չ'ունինք, միայն շեշտելու արժանի կը համարինք այն տրամադրութիւնը որով զեղարան, հիւանդարան, ինչպէս նաեւ մոմափանտութիւն, եւ խնամարկութիւն ձեռքացեալ միաբանից՝ Տնտեսապետին տեսչութեան յանձնուած է, որպէս զի ամենայնի հսկող եւ ամենեցուն համարաւոր, եւ միւս կողմէն ինքն ալ պատասխանատու մէկը գրուելու, եւ միմիայն անձն ըլլայ:

Կալուածապետ

Կալուածապետի առթիւ կ'ուզենք ուշադրութիւն հրաւիրել սա երկու կէտերուն վրայ. Ա. Քաղաքացի Ազգայնոց բնակութեան տուն տալ եւ Բ. սպարդիւն եւ հեռաւոր եւ տնտրնտեսելի կալուածները ծախել:

Ա.

Ս. Երուսաղէմի մէջ 400էն աւելի Ազգա-

յին ընտանիք կան: անշուշտ պանդխտութենէ եւ մասնակի գաղթականութենէ յառաջ եկած: Յոյնք եւ Լատինք ալ ունին ժողովուրդ միեւնոյն ազբութ յառաջացած: Ասոնց մէջ վաղնջուց սովորութիւն մտած է իրենց ժողովրդոց ձրի բնակարան տալ, հաց բաժնել, ստակ բաշխել եւն, անշուշտ կրօնական արքանեակ շահելու կամ շահուածները պահելու գիտամար: Մերոնք ալ ասոնց օրինակին հետեւեր են, եւ կը շարունակեն կազն ի կազը հետեւիլ, կազն ի կազը կ'ըսեմ, զի Յոյնք եւ Լատինք մերոնց նայելով անհամեմատ շատ կուտան ինչ որ կուտան, մինչեւ անգամ իրենց ժողովրդոց մէջէն տան տէր եղած կան որ իրենց սեփական տան մէջ կը բնակին բայց տարեկան վարձքը վանքէն կառնուն: Մերոնք մինչեւ այս աստիճան չեն կրցեր կամ ստիպուեր են չկրնալ յառաջ երթալ եւ այսօր Ս. Աթոռոյ առ բնիկ ժողովուրդը ըրած նպատակն է՝ մեծ մասին ձրի, եւ մէկ մասին աննշան վարձքով բնակութեան տուն, մէկ քանիին օրական հոց, ամենուրեւ կողմէն Տէրութեան վճարելի պետեղիյի տուրքն ամբողջ, տարին անգամ մը ամենամեծ մասին դրամական նուէր (բարեկենդանի մտ մարդ գլուխ 40 զուրուշ) ամենուրեւ ձրի դպրոց, եւ գրեթէ ամենուրեւ ձրի բժիշկ եւ ձրի դեղ:

Ասոնց ամենը միայն Երուսաղէմ բնակող երանելեաց համար չէ, Բեթղեմիցիք եւ Ս. Աթոռոյ վանք գտնուած բոլոր ուրիշ տեղերու բնակիչք՝ թիչ շատ սոյն բարեաց կը մասնակցին, կամ գոնէ իրենց եկեղեցին ու եկեղեցականները Ս. Աթոռը կը պահէ իւր ծախք, բաց ի Հոգեւոր ըսուած մեծամեծ շէնքերէն՝ որ գրեթէ ամեն տեղ իբր աղքատաց բնակարան բռնաբարուած են քաղաքացիներէն, եւ արդիւնք չը բերելէ զատ երբեմն նաեւ ծախք կը սպառնան Աթոռին:

Ժամանակը անշուշտ պիտի մաքրէ ասոնք եւ այս տեղերու ժողովուրդը պիտի մանեն Հայաստանի ու այլ ամեն տեղեաց Հայ-ժողովրդեան վիճակը՝ որ եկեղեցին կը չինեն, դպրոցնին կը հիմնեն, եկեղեցականնին եւ

դաստիարակինին կը պահեն, քիչ շատ նաեւ աղքատնին կը խնամեն եւ երբեմն ուրիշ տեղերու ալ օգնութիւն կը մատակարարեն: Բայց Երուսաղէմացի եւ այլ աթոռապետական ժողովուրդք դարերով ամեն բան Աթոռէն սպասելու սովորած, եւ բաց ի սակաւաթիւ պատուաւոր անձանց՝ գրեթէ ամենն ալ քաղաքակից օտար աղղաց փատ հրապուրանքէն աղատ մնալու շափ լուսաւորուած չըլլալով, չուզեցինք մէկէն ի մէկ եւ ամբողջովին սրբազրել այս տարօրինակ գրութիւնը, եւ բաւական համարեցինք 63 եւ 79 երորդ յօդուածոց տրամադրութիւնները իբր սերմունք բարեկարգութեան ձգել կանոնին մէջ, թողլով ժամանակին բեղմնաւորել զանոնք, եթէ ապառաժի վրայ չի ցանեցինք, որ դժբաղդարար շատ կը գտնուի Հրէաստանի լեբանց մէջ:

Եթէ 78րդ յօդուածի պարբերութիւնը որ կը հրամայէ « ձրի տուն բնակողներուն հետ ալ վճարող վարձակալաց նման քաղաքական օրինաց համեմատ պայմանագրութիւն կնքել » բացատրութեան կը կարօտի, կը պատասխանենք որ ասի պարզապէս արդիւնքիւ համար է անվարձ բնակողները 20, 30 տարի շարունակ բնակութեամբ նստած տուններուն վրայ սեպհականութեան իրաւունք վաստկելէ, եւ պահանջողութիւն ընելէ, ինչպէս որ պատահած է մինչեւ վերջին օրերս, եւ Ս. Աթոռը պարտաւորուած է դասական ծախքեր ընելով իր կալուածը գրեթէ կրկին անգամ ծախու առնելու:

Բ.

Գալով ապարդիւն կալուածները ծախելու խնդրոյն, անուրանալի է որ Ս. Աթոռն իրաւունք ունի զանոնք ծախելու եւ տեղը արդիւնաւոր կալուածներ հաստատելու, եւ կամ ըստ բերման ժամանակին պարտուց բերթեթեւեցնելով տոկոսեաց ծանրութենէն ազատելու: Բայց որ եւ է զեզժմանց առաջն աննելու համար մէկ քանի սեղմիք պարագայներ տրամադրել պատշաճ դատեցինք 83րդ Յօդուածով որ են « ամեն ծախք կնքելէն ետքը տա-

րեկան զէթ 3% արդիւնք չընտրող, եւ հե-
ռաւոր, եւ անտեսութիւնը զժուարին, կամ
անհնարին կալուածները միայն ծախելու ի-
րաւունք ունենալ. ի բաց անեայ անոնք՝ որ
չծախուելու պայմանաւ կտակեալ են Ս. Աթո-
սոյ ։

Սրդէն ծանուցած ենք որ սոյն տեսակ

կալուածական վաճառմանց խնդիրները Միա-
բանական Ընդհ. ժողովով պիտի վճուուին, կա-
լուածորուքիւն եւ պայմանք, եւ տարեկան հա-
մարատուութեամբ Ազգային Երեսփոխանական
ժողովոյ պիտի ծանուցուին ։ Այս ալ զեզ-
մանց արդեւիչ պարագայ մը կրնայ համարուիլ,
յերաչխաւորութիւն ազգային ։

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱՅԻ ԱՍԼԱՆԵԱՆ

Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ՄԱՍՆԱԻՈՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՔ

(ԻՐ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ 17, 18, 19, 20, 21, 22, 23 ԵՒ ՄԱՍՄԲ ԻՒԻՔ

48 ՅՕԴՈՒԱԾՈՅ ԱԶԳ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ)

Ա.

ԱՏՐԻԱՐԲ ՍՐԲՈՅ ԾԱԿՈՎԱԲԱՆՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Յօդ. 1. Ս. Երուսաղէմի Պատրիար-
քը Սրբոց Յակովբանց Առաքելական Ա-
թոսոյ ցկեանս գահակալն է, գլուխ հա-
մանուն միաբանութեան, Նախագահ Մի-
աբանական Ընդհանուր ժողովոյ եւ Տը-
նօրէն Խորհրդոյ եւ Գործադիր Վարչա-
կան օրոշմանց ։

Յօդ. 2. Ս. Երուսաղէմի Պատրիարքին
պարտաւորութիւնն է՝ Միաբանութեան
կանոնագրին ճշգիւ հետեւողութեամբ ։

Ա. կառավարել հայրաբար Միաբանա-
կան ուխտն Սրբոց Յակովբանց, եւ օր
աւուր բարեկարգութեամբ եւ դիտութ-
եամբք առաւել զարգացման հոգ տանիլ ։

Բ. Տնօրինական Ս. Տեղեաց եւ սյուխ-
տատեղեաց նկատմամբ ազգային սեփհա-
կանութեանց եւ արտօնութեանց անկո-
րուստ եւ պայծառ պահուելուն հսկել ։

Գ. Սրբոց Յակովբանց Աթոսոյ Թե-

մական ժողովրդեան Առաջնորդական խը-
նամբ տանիլ ։

Դ. Ս. Աթոսոյ սեփհական վանօրէից
եւ կալուածոց պահպանութեան եւ բար-
դաւաճման հոգ տանիլ, եւ

Ե. Սոյն հաստատութեանց շնորհիւ
եւ Ս. Աթոսոյ կարողութեան չափով Ազ-
գային դատարարութեան ծաւայմանն
օժանդակել ։

Յօդ. 3. — Պատրիարքն եթէ հակա-
ռակ վարուի Միաբանութեան կանոնա-
գրին, ամբաստանութեան ներքեւ կ'ընկնի ։

Ամբաստանութիւնը կրնայ Միաբա-
նութեան մէջ տեղի ունենալ եւ կը քըն-
նուի Միաբանութեան Ընդհանուր ժողո-
վոյ, եւ կամ Ազգային Երեսփոխանութեան
մէջ երեսան կ'ելնէ ։

Մի եւ միւս պարագայից մէջ Միա-
բանութեան Ընդհանուր ժողովոյ ամբաս-
տանական տեղեկագիրն կամ Երեսփոխա-
նական ամբաստանագիրն Ազգային ժո-
ղովոյ ատեանը կ'ելնէ, եւ անդ կը քըն-
նուի եւ վճիռ կ'ստանայ՝ կ. Պօլսոյ Պատ-
րիարքի ամբաստանութեան նկատմամբ
հաստատեալ կանոնաց համեմատ ։

Յօդ. 4. — Եթէ Ազգային Երեսփո-
խանական ժողովոյ վճիռով ամբաստանեալ
Պատրիարքը Ս. Աթոսէն հեռանալու դա-
տապարտուի, անմիջապէս Միաբանական
Ընդհանուր ժողովն Տեղակալութեան հա-
մար ընտրելուց յա-յա՛ կը պատրաստէ,
ըստ օրինակի Պատրիարքական ընտրել-
եաց (Յօդ. 7) եւ տեղեկագրութեամբ կը
ներկայէ Ազգային ժողովոյ՝ որ անոր մէ-
ջէն կ'ընտրէ զՏեղակալն բացարձակ ա-
ռաւելութեամբ քուէից, եւ տեղակալու-
թեան պաշտօնագրով կը յանձնէ նմա Ս.
Աթոսոյ Պատրիարքական իշխանութիւնը՝

մինչեւ ցնեցումն եւ վերահաստատութիւն
Պատրիարքին կամ մինչեւ ցմահ նորին ։

Յօդ. 5. — Երբ Պատրիարքի վախ-
ճանմամբ Ս. Աթոսը թափուր մնայ, Պատ-
րիարքական փոխանորդ յարարերու-
թեանց Տեսուչը՝ որ Պատրիարքի հիւան-
դութեան ժամանակ միայնակ կը փոխա-
նորդէ անոր պաշտօնին, անմիջապէս կը
հրաւիրէ Լուսարարապետն եւ Միաբանա-
կան Ընդհանուր ժողովոյ Ատենապետն
առ-ձառ-այ Յանյակոբէ կաղմել Պատրիար-
չական Փոխանորդութեան. եւ սա՛ Միաբա-
նական Ընդհանուր ժողով գումարել
փութալով, Պատրիարքական Տեղակալ
մ'ընտրել կուտայ բացարձակ առաւե-
լութեամբ քուէից եւ տեղեկագրութեամբ
կը ներկայէ զնա Ազգային Երեսփոխա-
նական ժողովոյ ։

Յօդ. 6. — Միաբանական Ընդհանուր
ժողովով ընտրեալ տեղակալը՝ մինչեւ իր
հաստատութեան պաշտօնագրոյն գալը Յդ
յօդուածոյ մէջ յիշեալ առժամեայ Յանձ-
նախմբին հետ իրր անդամ կը դործէ,
եւ երբ պաշտօնագիրն ստանայ, միայնակ
կ'սկսի վարել տեղակալութեան պաշտօնը՝
որ է նախագահել Պատրիարքի ընտրա-
կան գործողութեանց եւ մինչեւ ցգահա-
կալութիւն նորընտիր Պատրիարքի անոր
պաշտօն եւ պարտաւորութիւններն կատա-
րել ըստ կանոնագրի Միաբանութեան ։

Յօդ. 7. — Ս. Երուսաղէմի Առաքե-
լական Աթոսոյ Պատրիարքը Ազգային Ե-
րեսփոխանական ժողովով կ'ընտրուի ։
Միաբանութեան ներկայած ընտրելուց
մէջէն, որոց ցուցակը կը պատրաստուի
հետեւեալ կերպով ։

Նախ՝ Միաբանական Ընդհանուր ժո-
ղով կը գումարուի Միաբանութեան ա-

Բնիկ եկեղեցական անդամաց կէսէն գէթ մէկ աւելի թուով, և ընդ նախագահութեամբ Պատրիարքական տեղակալի, որ կը յիշեցնէ ժողովականաց Պատրիարքական ընտրելութեան հանգամանքը որ են.

Ա. Օրինաւոր անդամ գանուիլ Միաբանական ուխտին Սրբոց Յակովբեանց, այսինքն՝ Միաբանութեան անդամաց կարգըն ընդունուած, անունը մայր Տումարին մէջ արձանագրուած և ինքն Միաբանական կենաց մասնակից ըլլալ, և կամ եթէ միաբանական կեանքէ հրաժարած կամ Ս. Աթոռոյ թոյլտուութեամբ ազգային և ուրիշ պաշտօնի կոչուած է, խոստմնագրով անդամ մնացած ըլլալ Միաբանութեան, և շարունակել սոյն իրաւունքը վայելելու և որ և է պատճառաւ արտաքսուած չ'ըլլալ Միաբանական ուխտէն որոշմամբ Միաբանական Ընդհանուր ժողովոյ:

Բ. Երեսուն և հինգ տարին լըրացուցած ըլլալ:

Գ. Օսմանեան տէրութեան հպատակ գանուիլ:

Իւրաքանչիւր անդամ Ընդհանուր ժողովոյ քուէթով մը վրայ կը գրէ այն ամեն Միաբան Եպիսկոպոսաց և վարդապետաց անունները՝ որք վերոյիշեալ երէպոյ՝ աննէրն ունենալով հանդերձ, կրօնական, բարոյական և ուսումնական բարեմասնութեամբ ըստ իւր խղճի արժանի են Պատրիարքական Էզահը բարձրանալու:

Քուէհամար կը կատարուի սոյն քուէից և առաւելագոյն քուէ ստացողաց անուններէն քուէից առաւելութեան կարգաւ եօթն անձինք որոշուելով, առաւել

քին ցոյցով էլ կը պատրաստուի եօթնէքին ընտրելուց:

Ժողովականք երկրորդ անգամ քուէարկութեան կը հրաւիրուին՝ սոյն եօթնէքին ընտրելուց մէջէն երէպոյ՝ քուէից վրայ քուէնին ամփոփելու պայմանաւ, և

Քուէհամար կատարուելով, երէպոյ ցոյցով մը կը պատրաստուի երէքին ընտրելուց իւրաքանչիւրին ընդունուած քուէից առաւելութեան կարգաւ:

Եթէ պատահի որ սոյն քուէարկութեանց միջոցին, երկու անձանց հաւասար թուով քուէ ելնէ, վերջոյն կ'որոշուի ընտրելին յերկուսուց:

Վերոյիշեալ երկու ցուցակները որոց մին եօթնէքին ընտրելուց արժանաւորաց և միւսն երէքին ընտրելուց արժանաւորացնից, հանդերձ իւրաքանչիւր ընտրելոյ բարեմասնութիւնքն և արդիւնքն նկարագրող տեղեկագրով Ազգային Երեսփոխանական ժողովոյ կը զըրկուին՝ որ անոնց մէջէն կ'ընտրէ զՊատրիարքն միանուն քուէով և բացարձակ առաւելութեամբ քուէից:

Յօդ. 8. — Նորնաիր Պատրիարքը եթէ վարդապետ է, Միաբանական Ընդհանուր ժողովոյ վկայականով և Կ. Պօլսոյ Պատրիարքի յանձնարարութեամբ 'ի Ս. Էջմիածին կուղևորի, Եպիսկոպոսութեան աստիճան կ'ընդունի, և վերադարձին 'ի Կ. Պօլսոյ յատենի Երեսփոխանական Ազգային ժողովոյ ուխտ ընելով « Հաւատարիմ մնալ Տէրութեան, Ազգին և Սրբոյ Աթոռոյն Երուսաղէմի և հսկել անթերի գործադրութեան կանոնի Միաբանութեան Սրբոց Յակովբեանց » կ'ընդունի

կայսերական հրամանագիր և կը դառնայ 'ի Ս. Երուսաղէմ և կը գահակալէ Ս. Աթոռոյն:

Իսկ եթէ Եպիսկոպոս է, ընդունելով իր ընտրութեան և հաստատութեան պաշտօնագրերն, յատենի Միաբանական Ընդհանուր ժողովոյ կը կատարէ վերոյիշեալ ուխտը և կ'անցնի յԱթոռն Պատրիարքական:

Բ.

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՈՒԽՏԻՆ ՍՐԲՈՑ ԵԱԿՈՎԲԵԱՆՑ

Յօդ. 9. — Սրբոց Յակովբեանց Միաբանական ուխտին վարչութիւնն յանձնուած է Ս. Աթոռոյ Երուսաղէմի գահակալ Պատրիարքի նախագահութեամբ Տնօրէն Խորհրդոյ մը որ կը բաղկանայ Ս. Աթոռոյ մեծ պաշտօնականներէն որք են

1. Լուսարարապետ,
2. Յարարերութեանց տեսուչ որ և Պատրիարքական Փօխանորդ,
3. Ելեւմտից Տեսուչ
4. Ուսումնապետ
5. Տնտեսապետ և
6. Կալուածապետ:

Սոյն Խորհուրդը կ'ընտրուի Միաբանական Ընդհանուր ժողովէն և պատասխանատու է նմա, և սա առ Ազգային Երեսփոխանական ժողով:

Յօդ. 10. — Ամեն տարեկալ Միաբանական Ընդհանուր ժողովն Տնօրէն Խորհրդոյ համարատուութեան տեղեկագիրն և անցեալ և յաջորդ տարիներու Ելմտացոյցներն ընդունելով, ստուգելէն և վաւերացնելէն յետոյ՝ իր կողմէն հարաւորութեան փեղեկագիր կուղղէ առ Ազգային Երեսփոխանական ժողով, մասնաւոր խնամով նշանակելով 'ի նմա

Ս. Տարւոյն մէջ Միաբանական անդամաց ընդունելութեան, դանազան աստիճանի բարձրացման, վարձատրութեան, հրաժարման, արտաքսման և մահուան վերաբերեալ տնօրէնութիւններն:

Բ. Տարւոյն եւրօպայէլ Ելմտացոյցին նկատմամբ Ելեւմտից Կարգաւորութեան և կալուածական զննանց և վաճառմանց վերաբերեալ տնօրէնութիւնքն, և պարտուց վճարման նկատմամբ 'ի գործ դըրուած միջոցներն և արդիւնք նոցին:

Գ. Յաջորդ տարուան եւրօպայէլ Ելմտացոյցն և Ելեւմտից հաւասարակըշտութեան համար որոշուած միջոցներն (փոխառութիւն, հանդանակութիւն, կալուածոց վաճառումն, և այլն):

Դ. Միաբանական անդամաց ուսումնական յառաջդիմութեան և ընդհանրապէս Ազգային Գաստիարակութեան նըկատմամբ գործադրուած միջոցներն և արդիւնք նոցին:

Ե. Տնօրինական Ս. Տեղեաց և այլ ուխտատեղեաց մէջ Օտարաց հետ ընկերակցութիւն և առանցն ազգային սեփականութեանց և իրաւանց մասին պատահած նշանաւոր դէպքերն, և ասոնց նկատմամբ ընդ Ազգային Կեդրոնական վարչութեան ընդ տեղական կառավարութեան, ընդ Քրիստոնեայ օտար հասարակութիւնս, ընդ նախարարս Տէրութեան և ընդ այլ պաշտօնակալս տեղի ունեցած յարաբերութիւնք և արդիւնք նոցին:

Յօդ. 11. Ազգային ժողովն սոյն տեղեկագրի քննութեամբ տեղեկանալով Միաբանութեան վիճակին, անցելոյն վրայ




իր կամքը կը յայտնէ և ապագային համար
 դիտողութիւններ կընէ, փոփոխութիւն-
 ները կորոշէ, քննութիւններ կը վճռէ՝ եթէ
 հարկ տեսնէ, և Միաբանութիւնը սար-
 ափ համակերպիլ՝ եթէ չունի օրինաւոր
 փաստեր զնա համոզելու կամ զինքն ար-
 դարացունելու:

Յօդ. 12. Եթէ Միաբանութեան
 Համարատուութեան տեղեկագիրը ճիշդ-
 ատարեզլիսոյն՝ Մայիս 1. էն մինչև վերջ կամ
 առ առաւելն մինչև Յունիս վերջ Կ. Պօլիս
 չ'ըրկուի, Ազգային Ժողովը միանգամ
 ազդարարութիւն կ'ընէ և կրկին պայմա-
 նաժամ կորոշէ. և եթէ դարձեալ տեղե-
 կագիրն ընդունելու չ'յաջողի, անմիջա-
 պէս ամբաստանութեան կենթարկէ ըզ-

Պատրիարք Երուսաղէմի և ՂՏնօրէն Խոր-
 հուրդ, և պէտք եղած միջոցները ձեռք
 կառնու Ս. Աթոռոյ ելմտական վիճակն
 ապահովելու:

Եթէ ընդհակառակն՝ Համարատու-
 ութեան տեղեկագիրն ժամանակին հաս-
 նի՝ Ի Պօլիս, բայց Ազգային Ժողովը զայն
 քննութեան չ'ենթարկէ և Միաբանութ-
 եան չ'սլատասխանէ, Միաբանութիւնը
 կրկին խնդրագրով իր տեղեկագրին նը-
 կատառումն կը խնդրէ և եթէ դարձեալ
 անցսելի մնայ, սոյն խնդրագրին մատու-
 ցումէն ամիս մ'եւտքը՝ իր հաշիւները ըն-
 կալեալ և իրր այժմէն վաւերացեալ նկա-
 տելու իրաւունք կ'ստանայ և ըստ այնմ
 կը վարուի:





ՊԵՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԷՔ

1. Երեսփոխան Տօքմէօն Փափազեան Էֆէնտիի հրամարումն :
2. Գաւառական Տեղեկագրեր Ազդային դատարարական թեան փրճակին վրայ :
3. Թիֆլիզի Գայիանեան Հայ օրթորդաց Աւոււմարանի Տեսչութեան նաւաւը :
4. Երեսփոխան Ս. Փափազեան Էֆէնտիի առաջարկը Հայաստանի սոփուն նկատմամբ :
5. Նախկին Երեսփոխան Տ. Վահան Վարդապետի առաջարկն :
6. Ղալաթիոյ թաղեցւոց հանրագիրը :

ՅՐԱԿԱՐԳ

- Ա. Վաւերացումն կանոնագրի Ս. Երուսաղիմայ վանուց :
Նախաքննիչ գիւանք
կանոն Միաբանական Ուխտին Արքոց Յակոբեանց :
Բացառութիւն ի վերայ նորոյ կանոնի Միաբանական Ուխտին Արքոց
Յակոբեանց :

Գ. ի ն 2 11 112

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵՂԵՑՆԱԿԱՆ ՍԵՑՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԵՄՈՒՅ ՅԱՏԿԱՅԵԱԼ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի և Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ
եկեղեցւոյ բանկայը և Հայ գրավաճառաց քով :